Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION
Armenian Communities Department

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՄՆՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆՏԻՊ ԵՎ ՀԵՏՄԱՀՈՒ ՏՊԱԳՐՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԴ 891.981-Իսահակյան
ԳՄԴ 84 Հ7-5
Ի 755

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ
Ա.Վ.Իսահակյան (գլխավոր խմբագիր),
Լ. Զ. Անանյան, Ա. Գ. Ջաքարյան, Վ. Ա. Կիրակոսյան,
Ս. Բ. Հարությունյան, Ա. Վ. Մուշեղյան, Ս. Պ. Մուրադյան,
Ս. Ն. Սարինյան, Պ. Գ. Ստեփանյան, Ա. Մ. Վարդանյան

Բնագիրը հրատարակության պատրաստեց, հատորը կազմեց, վերջաբանը և ծանոթագրությունները գրեց Ավիկ Իսահակյանը: Հատորը կազմեցին, տարբերակների տեքստերը և բնագրային տարբերությունները պատրաստեցին Անահիտ Վարդանյանը և Շողեր Խաչատրյանը

Հատորի խմբագիր՝ Ա. Վ. Իսահակյան

Ի 755 Իսահակյան Ավետիք
Երկերի լիակատար ժողովածու, Հ. 2: Անտիպ և հետմահու տպագրված բանաստեղծություններ. – Եր.: «Գիտություն» հրատ., 2011, 627 էջ:

ՀՏԴ 891.981-Իսահակյան
ԳՄԴ 84 Հ7-5

ISBN 978-5-8080-0887-8

© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2011
© ՀՀ ԳԱԱ Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2011
© Ավետիք Իսահակյանի ընտանիք, 2011

ՎԱՂ ՇՐՋԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1888-1892

ՆՎԵՐ ՐԱՖՖՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Նորից գույժ մահվան քեզ, Մա՛յր-Հայրենիք,
Մեռավ քո որդի Ռաֆֆին վիպասան,
Հիշատակ թողեց անթիվ, անմահ գիրք
Եվ մտավ մութ, ցուրտ, խոնավ դամբարան:

Հայրի՛ր, ո՛վ տաղանդ, գրիչ առ ձեռքդ,
Գրե՛, դրոշմե՛, գովե՛ Հայաստան,
Հարգե՛ Հայ լեզուդ, սիրե՛ Հայ ազգդ,
Որ փառք ժառանգես Մեսրոպի նման:

Երկու ամսվա մեջ, ա՛խ, անգութ մահը
Խլեց մեզանից քեզ և Ծերենցին.
Արդյոք ի՞նչ շահեց քարասիրտ մահը,
Որ ձեզ տարավ, մեզ թողեց լալագին:

1888 ապրիլի 29
Ղազարապատ

* * *

Փլատակաց մեջ այն ո՞վ է նստած՝
Հուսատ դրութեամբ և տխուր դեմքով,
Կուրծքը հերարձակ, գույնը այլայլված,
Մռայլ աչերը լի արտասունքով.

Գլուխը խոնարհած, ձեռը ճակատին,
Շփոթ մտքերի օվկիանում սուզված,
Նայում է հուզված յուր շրջակայքին
Ավերակների ոգին մենակյաց:

Նորա ոտքի տակ ընկած ցիրուցան
Փառաց բեկորներ՝ սուր, նետ, տեգ, նիզակ,
Թագ, աշտե, դաշույն, սաղավարտ, վահան
Եվ արծվանիշ, գունատ դրոշակ:

Բայց ասա, խնդրեմ, ո՞վ է վշտաշատ
Այս գեղեցկուհին նազելի այնքան.
Ո՜հ, մի՞թե, ընկե՛ր, սա է հարազատ
Իմ այրի մայրը՝ Մայրըն Հայաստան:

Բա՛ց ինձ քո ծոցը՝ ծոցդ մայրական,
Գալիս է նժդեհ որդիդ տարագիր,
Տո՛ւր ինձ քո ծոցը մի հանգստարան,
Ինչպես որ իմ հարց, եղբարցը տվիր:

1889 մայիսի 23
Ս. Հառիճ

ՀԱՅՈՒՀՎՈ ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳԸ

Քնե՛, մանկիկ իմ գեղեցիկ,
Օր, օր, օր, իմ քաջ ձագիկ,
Քընե որդյակ իմ դու քնքույշ,
Օր, օր, օր, գետ իմ անույշ.
Հորդ ըսպանեց անգութ քուրդը,
Եղբորըդ՝ անխիղճ տաճիկը,
Իսկ դու - քո մորդ միակ հույս,
Օր, օր, օր, իմ աչաց լույս:
Իմ կաթի հետ կներշնչես
Քո մեջ ոգին վրեժխնդրության,
Իմ կաթի հետ կներշնչես
Քո մեջ ոգին ազատության:
Քնե, որդյակ իմ մի հատիկ,
Օր, օր, բալա՛ս, օր, օր, նանիկ:
Դեռ տակավին մի պատանի
Պիտի ազատ լինիս դու.
Եվ փոխանակ գրքի, գրչի,
Ձենք պիտ կրես մահացու:
Քնե՛, գառնիկ, իմ քաջ ձագիկ,
Օր, օր, բալաս, օր, օր, նանիկ:
Պիտ դյուցազն դեմքով լինիս,
Բայց արյունով, հոգով հայ.
Պիտ իսլամի դահիճ լինիս,
Բայց և անմեղ քրիստոնյա:
Քնե, անբիծ հրեշտակ քաղցրիկ,
Օր, օր...
Հայրենյաց համար մեռնել.
Այդ լինի քո բաղձանքը,
Զար թշնամուն ջարդել, փշրել.
Այդ լինի քո բերկրանքը:
Քնե, ջանի՛կ, հանգիստ, մեղմիկ...
Վրեժխնդրություն, ազատություն,

Դոքա լինին խոսքերըդ
Եվ ժառանգել անմահ անուն.
Այդ լինի քո խորհուրդըդ:

Քնե՛, իմ գեղ, իմ հերոսիկ...
Կգա օրը, դու այդ գիտես,
Ռազմի դաշտը երթալու,
Փրկել կրոն, ազգ, Հայաստան,
Եվ վրեժհան լինելու:
Քնե՛, ով քաջ զինվոր փոքրիկ:
Այն ժամանակ ես քեզ կըտամ
Սուր, հրացան և նիզակ,
Իմ պատկերը ես քեզ կըտամ
Անբախտ մորից իբր հիշատակ:
Քնե՛, գառնուկ, մինչդեռ փոքր ես...
Ասպանդակը ես կբռնիմ,
Երբ նստիս քո նժույգին:
Վերջին համբույր ես կդրոշմիմ
Քո լայնանիստ ճակատին,
Քնե՛, աղավնյակ իմ սիրունիկ,
Օր, օր, բալաս, օր, օր, նանիկ:
Քո փառավոր դատի համար
Ես կսպասեմ շատ օրեր,
Գործած քաջությանդ համար
Կուրախանամ շատ օրեր:
Քնե՛, կորյուն, իմ քաջ մարտիկ...
Բայց չերկնչիս, վեհանձ որդի,
Փողն հնչելիս ռազմական,
Վեհ հայրենյաց ոգուն արի
Կանչե՛ քաջիդ օգնական:
Քնե, հարազատ իմ մանկիկ...
Քաջալերվի՛ր ինքդ հայնժամ,
Որ պիտ չնչես ազատություն.
Արիացի՛ր ինքդ հայնժամ,

Որ պիտ լուծես վրեժխնդրություն:
Քնե, որդյակ իմ մի հատիկ,
Օր, օր, բալաս, օր, օր, նանիկ,
Բայց երբ լինիս մոտ օրհասիդ,
Շունչդ փչելիս վերջին,
Ա՛խ, չմոռնաս, իմ սիրուն գեղ,
Հիշել քո խեղճ մայրիկին:
Զարթնիր, որդյակդ իմ, այժմ.
Բավ է որքան քնար մեղմ:

1889 հոկտեմբերի 28
Ս. Էջմիածին

* * *

Ոսկի անուրջք... Շիրմի վերա
Նստած տեսա ես Նորան,
Ջերմ անձկութեամբ ձեռք մեկնեցի,
Բայց կորավ զերթ ուրվական...
Ահա դարձյալ երևեցավ
Ժպիտը դեմքի վերա.
Եվ օդային համբույր տալով՝
Մռայլ շիրմում սուզվեց Նա:
Սակայն թողեց շիրմի վերա
Մի դալկացած վարդ նվեր,
Առա վարդը, ուրախացա,
Բայց ափսո՜ս. սա երազ էր:

1889 դեկտեմբերի 21
Ս.Էջմիածին

ԵՐԿՈՒ ՀԱՄԲՈՒՅՐ

Երբ բացութեամբ երկնքի տակ
Դու, իմ գրկում տարածված,
Իբրև նշան սիրո միացման,
Տալիս էիր համբույր առ՝ջին:

Երբ փակ սենեկի հարկի տակ
Դու, քո մահվան մահճում պառկած,
Իբրև նշան սիրո բաժանման,
Տալիս էիր համբույր վերջին:

1889 դեկտեմբերի 23
Ս. Էջմիածին

ՀՈՒՅՍ
(Նմանողություն)

Թող փչե՛ ուժգին դառնաշունչ հյուսիս
Եվ բերե իր հետ անողոք ձմեռ,
Թող շուշան ձյունը ծածկե համասփյուռ
Թե՛ ջուր, թե՛ հովիտ, թե՛ դաշտ, թե՛ բլուր:
Դաշտը թո՛ղ զրկվի անասուններից,
Դալար ծառն էլ՝ խիտ տերևներից.
Եվ կենսապարգև ոսկի արևը
Թո՛ղ երկրին տա իր վերջին բարևը:
Եվ ինչքան կուզե՝ թո՛ղ ցուրտ ձմեռը
Բառնա մեր վրա իր ծանր բեռը,
Բայց մենք ունենք մի «Մխիթարիչ Հույս»,
Թե պիտ գարունը գա անտարակույս:

1890 Հունվարի 14
Ս. Էջմիածին

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

Ա.

Եվ պարզ գիշեր էր...
Լուսինն անխռով
Ծովում աստղազարդ
Լուսասփյուռ դեմքով
Լողում էր հանդարտ:
Եվ ճաճանչները
Նորա արծաթյա
Սփռվել էին
Մայր-երկրի վերա:
Գերեզմանային
Եվ խորհրդավոր
Լռություն խորին
Տիրած էր երկրին:
Միայն սոխակի
Դայլայլիկն վերջին
Խանգարեր երբեմն
Լռություն խորին:
Որը տարփալի
Վարդին սիրահար
Երգեց այս ողբը
Իր վարդի համար:
«Ո՛հ, աստվածակերտ
Ծաղիկ եդեմի,
Առարկա սիրույն
Թշվառ սոխակի,
Ծաղկանց թագուհի,
Գեղեցկի տիպար
Եվ զարդ եզակի
Կրծքի վշտահար:

Եվ բոսորագույն
Թերթերիդ սիրուն
Փայլին զերթ կուսի
Այտեր վառվռուն:
Սակայն ինձ ի՞նչ շահ,
Երբ ես չեմ կարող
Գեթ մի օր լինիլ
Զքնաղիդ տիրող»:
Եվ նորա ողբի
Թույլ արձագանքը
Տարավ զեփյուռի
Մեղմիկ հոսանքը:

Բ.

Անցավ աղջամուղջ,
Կարմրեց արևելք,
Հալածվեց մութը,
Շիջան վառ աստեղք:
Բացվեց արշալույս՝
Շքեղ տեսարան.
Ոսկեզօծ ամպեր
Զևակերպվեցան:
Ծագեց արևը՝
Լուսատու արփին –
Առ'ջի բարևը
Զոնեց Մասիսին:
Եվ արծաթափայլ
Կարկաչուն գետակ
Ցողեր դաշտորայք
Զրով սառնորակ:
Եվ մարգի վերան
Այն կանաչագեղ
Ցողը վաղորդյան

Սփռում էր բյուրեղ,
Իսկ այն պերճ մարգը,
Որպես կանաչ ծով,
Ծփում էր զեփ'ռի
Կուսական շնչով:

* * *

-Եվ ահա՛ հանկարծ...
Զեփյուռն հայրենի,
Տատանելով օդ,
Գգվեց ու փարեց
Կուրծքն իմ թավոտ:
Եվ մելամաղձոտ
Զայնով դողդոջուն
Շշնջաց ականջիս
«Նորանից» ողջույն:
Ես հարցրի նրանից.
«Ասա՛ ինձ, զեփյո՛ւռ,
Արդյոք «Նորանից»
Զունի՞ս դու մի «լուր»:
«Ցուր անկեղծ սիրով
«Նա» սիրում է քեզ».
Ասաց նա մեղմիկ
Եվ կորավ հեզիկ,
Եվ զով զեփյուռի
Դալուկ մրմնջյուն
Երկար հնչում էր
Ականջիս միջում:

1890 մայիսի 21
Ս. Էջմիածին

ՀՐԱՎԵՐ
Նվեր...

Ե՛կ, մրահոն կո՛ւյս փարելի,
Ուռենու տակ հովասուն.
Ե՛կ, փաղաքշե՛, իմ նազելի,
Հեգ սիրեկնիդ քաղցրասուն:
Ե՛կ, հանգչեցրո՛ւ իմ գլուխը
Կրծքիդ վերա գեղանի.
Եվ զովացրո՛ւ իմ երեսը
Ստինքիդ մեջ հոլանի:
Ե՛կ, տո՛ւր համբույր ինձ մեղրաբուխ,
Ջերմ կուսական, սրբազան.
Ե՛կ, տո՛ւր ինձ կյանք, իմ կենսաբուխ,
Ապրել քեզ հետ հավիտյան:
Եվ փոխարեն այդ բոլորի՝
Քեզ իբրև ձոն այս պսակ,
Որ հյուսել եմ ծիածանի
Վառ շողերից երկնառաք:

1890 հունիսի 5
Վաղարշապատ

ՀՈՒՇԻԿ
Նվեր...

Հիշո՞ւմ ես արդյոք,
Որ այն պարզ գիշեր
Արծարծվեց մեր մեջ
Փոխադարձ սուրբ սեր:
Հիշո՞ւմ ես արդյոք,
Որ մատռան տակին
Ուխտեցինք լինել
Ընկեր անմեկին:
Հիշո՞ւմ ես արդյոք,
Որ այն երեկո
Տվինք իրարու
Համբույրներ սիրո:
Հիշո՞ւմ ես արդյոք,
Որ դու անցյալ պահ
Երդվար՝ ասելով.
«Ես քոնն եմ մինչ մահ»:

1890 հունիսի 19
Կումայրի

ՆՎԵՐ...

Պարգևի՛ր ինձ, Հա՛յր Ապոլլոն,
Քո քնարը փղոսկեր,
Ես արդ կամիմ սրտիցս զգոն
Ցրվիլ թախիծ և վշտեր:

Կամիմ այլևըս չերգել նոցա,
Այլ տալ ընդմիշտ մոռացոն,
Միայն նոցա տեղ համեստ կուսիդ
Գողտրիկ կուրծքը մարմարիոն:

Կամիմ և ես վայելել միշտ
Զքնաղ կուսի սերն անկեղծ,
Եվ վանելով տանջանք ու վիշտ՝
Սրտումս պահել միշտ անեղծ:

1890 Հուլիսի 14
Կարս

ՆՎԵՐ...

Եվ պուրակում երեկ նստած,
Հրաբորբոք սիրով հուզված,
Արձակեցի սրտիցս թշվառ
Անկեղծ սիրույս կայծերը վառ:
Սակայն այսօր գետակի մոտ
Տեսա չքնաղ կույս մ՝անծանոթ,
Որի մատաղ, սուրբ սրտի մեջ
Գտա սիրույս կայծերն անշեջ:

1890 Հուլիսի 18
Արգինա

* * *

Թո՛ղ, հավերժահարս իմ անմեկին,
Անկեղծ խանդով ողջույն տամ.
Եվ վառ տենչով ու ջերմագին
Համբուրեմ քեզ գե՛թ մ՝անգամ
Թույլ տո՛ւր, հոգիս, բոպեմ՝ գոնյա՛
Գրկեմ գրգիռ գրկիս մեջ
Եվ իմ լքյալ կրծքի վերա
Օրորեմ քեզ հետս անվերջ:
Եվ տո՛ւր այժմ ձեռքդ փափուկ,
Սեղմեմ ուժգին իմ ափում
Եվ անջատման ձայնով դալուկ
Ասեմ հուզված՝ ցտեսություն:

1890 օգոստոսի 23
Ալեքսանդրապոլ

ԱՆՈՒՐՋ

I

Դալար պուրակի
Անձուկ անկյունում
Տխուր նոճու տակ
Հուսաբեկ, տրտում
Նստած միայնակ
Լուռ հիշում էի
Իմ անցյալ տիո
Մանկության անմեղ
Ոսկի ժամերի
Խաղերը չքեղ
Ու երգերն ազատ,
Եվ քաղցր անցյալի
Հիշատակները
Լրճացրրեցին իմ
Սեգ-հեգ աչքերը...
Նոքա չքացան,
Ինչպես պղպջակ
Եվ կամ ցնդվեցան,
Ինչպես ծուխ սևակ:

II

Նստած եմ դարձյալ
Միևնույն տեղում
Եվ անուրջ լքյալ
Սիրտս է նեղում,
Եվ ես հոգեհույզ
Թախծությամբ տաղտուկ

Նայում եմ անհույս
Իմ ներկան անշուք...
Եվ լի դառնությամբ
Ծանր ու թխպուտ
Մի սևաթույր ամպ
Խեղճիս մռայլոտ
Դեմքն սքողեց...
Եվ դառն ներկայի
Ժանտ պատկերները
Լրճացրեցին իմ
Սեգ-հեգ աչքերը...

III

Ահա՛ նա՝ ներկաս
Իմ դժբախտ կյանքի,
Տձև, սրտամաշ
Տեսքով ահռելի
Եվ դալուկ ծաղկով
Ողջունում է ինձ
Եվ համբուրելով
Դրոշմում է նա
Խավար կնիքը
Իմ ճակտի վերա
Եվ ճնշող, ստրուկ
Լուծն անարգական
Դնում է ուսիս
Եվ ստրկական
Կուռ շղթաներով
Լուռ ձեռք ու ոտքս
Կապոտում շուտով...
Եվ ես տեսնում եմ
Ինձ մութ բանտի մեջ
Հեծելով անվերջ.

Վա՜յ ինձ, կաշկանդված
Գերի եմ այստեղ...

IV

Բայց ո՛չ, տակավին
Վեհ ազատության
Կենսունակ ոգին
Կրում եմ իմ մեջ...
Եվ թո՛ղ երկնային
Վառ փարոսն անշեջ
Իմ անքակ ուխտին
Մեծ վկա լինի,
Որ ես պիտ ջանամ
Թոթափել լուծը,
Խորտակել շղթան...
Եվ հեզ լուսինը,
Ճեղքելով երկնի
Ամպազարդ կուրծքը,
Մութ արգելանի
Նեղ լուսամուտից
Հուշիկ նայելով,
Իր ճաճանչների
Կաթնագույն լուսով
Լուսավորում էր
Խեղճ ուխ<տ>աղրիս
Դեմքը անհամբեր,
Եվ խորհրդավոր
Մի նշան կարծես
Տալով իմ ուխտին՝
Նա անմիջապես
Սուզվեց մթագին
Անհուն եթերում,
Ծովում օդեղեն...

Եվ այժմ խորին
Գիշեր էր արդեն:

V

Անցան տարիներ:
Եվ ստրուկ կյանքը
Մեռցրեց իմ մեջ
Ազնիվ զգացմունքը
Ազնիվ մարդերի.
Եվ ես փոխվեցա
Երկչոտ, փոքրոգի
Անինքնաճանանչ,
Կասկածոտ, գոռոզ,
Անհաստատամիտ,
Խարդախ, ստախոս,
Կեղծ ու չարամիտ
Մարդակերպ գազան,
Եվ որովհետեւ
Ստրուկ ու անկամ
Կյանքը ինձ համար
Անդորր, անհոգ,
Քաղցր կթվար,
Ուստի մոռացա
Կատարել իմ հին
Երդված սուրբ ուխտը
Փրկվելու մասին
Ստրկությունից...

VI

Մի հրաշագեղ
Գիշեր զով ու հով
Փայլ եղջյուրն աղեղ,

Համեստ նազելով
Երկնակամարի
Վառ, աստեղնազարդ,
Անքույթ օվկիանում,
Գնում էր հանդարտ.
Եվ ահա դժգույն
Ու նախատական
Ժպիտը դեմքին՝
Դիտեց լուսամտով
Անազնիվ տեսքին
Ուխտադրուժիս
Եվ րոպեական
Արհամարհանքով
Նայեց իմ վերան,
Հեռացավ, գնաց...

VII

Եվ հանկարծ իսկույն
Հիշեցի անքակ
Ուխտը վաղեմի՝
Նեղ, սահմանափակ
Ստրուկ աշխարհի
Ժանտ կապանքներից
Ազատ ապրելու...
Եվ ահա ուժգին
Բաբախեց սիրտս,
Եվ ամբողջովին
Եռաց արյունս
Երակներիս մեջ.
Թնդաց վեհ հոգին
Սուրբ ազատության,
Եվ մի ներքին ձայն
Դրդեց ինձ փչրել

Կաշկանդող շղթան,
Անպատիվ լուծը
Խայթ ստրկության,
150 Եվ ես կատաղած,
Ձերթ վայրագ գազան,
Գցեցի լուծը,
Փշրեցի շղթան
Եվ խորտակեցի
155 Ճնշող ու մաշող
Ջար արգելանի
Դուռը մշտագոց...

VIII

Ելա տենչալի
Լույս աշխարհ դեպի...
160 Եվ անկախ երկրում
Ես անհագաբար
Շնչեցի ազատ
Օդը փրկարար
Եվ ազատության
165 Վայրում հարազատ
Սկսեցի ապրել,
Գործել անվհատ,
Սիրել ու սիրվել
Անկեղծ, անարատ
170 Եվ այնուհետև
Վսեմ ու ազնիվ
Հատկություններով
Օժտվեցա ես.
-Ե՛վ այն օրվանից
175 Մաքուր սիրով ես
Սիրեցի անբիծ
Ազատությունը.

-Ե՛վ այն օրվանից
Կանգնեցի անսուտ
180 Ջերմ երկրպագու
Անկերտ ու աննյութ
Նորա պատկերին,
Այն մեծ կոչմանը,
Բարձր սկզբունքին...
185 -Ե՛վ այն օրվանից
Իմ վեհ, սրբազան
Նշանաբանը
Եղավ միմիայն
Ազատությունը.
190 -Ե՛վ այն օրվանից
Ես նվիրեցի
Ազատամտիս
Քնարն անկաշառ՝
Ազատությունը
195 Երգելու համար...

IX

-Բայց, ավա՜ղ, հանկարծ
Սառույց, մահաշունչ
Հյուսիսեն անգութ
Փչեց երեսիս
200 Ծեր շնչով ու ցուրտ
Իր սառն հոսանքը...
Եվ ահ ու դողով
Ես սթափվեցա
Ու <ենթադրեցի,>
205 Որ անուրջ է սա...
Եվ խորհրդավոր
Ոսկի անուրջի
Ոսկի անցքերը

Լճացրեցին իմ
Սեգ-հեգ աչքերը...
-Նոքա չքացան,
Ինչպես պղպջակ,
Եվ կամ ցնդվեցան,
Ինչպես ծուխ սևակ...

1890 սեպտեմբերի 12
Ս. Էջմիածին

ԱՌԱՋԻՆ ՎԻՇՏԸ

Երբ որ տեսնում ես՝
Խավար ու անքույթ
Փակ սենեկի մեջ
Նստած անձանձրույթ,
Թախծադեմ, տխուր
Եվ խռովահույզ
Սիրո օվկիանում
Տենչատանջ մի կույս
Թափում է անվերջ
Ջերմ սիրո ժխտման
Վառ կայլակները
Մարգարտանման,
Հեգ և հերարձակ
Կրծքին բրաբիոն
Հայտնելով լռիկ
Անկեղծ քանի՛ոն
Իր խաբված սիրո
Թախիծը ծածուկ,
Ցայնժամ իմացիր,
Որ դա է ստույգ
«Առաջին վիշտը
Կուսական սրտի»:

1890 սեպտեմբերի 21
Ս. Էջմիածին

ՃԳՆԱԺԱՄԻ ՀՐԱԺԵՇՏ

Օրհասական, որպես կարապ
Սիրո ծովում փրփրաղեզ,
Վառ տենչանքի սրտով հրատապ
Երգում եմ ես սրտակեզ
5 Արի ինձ մոտ, իմ նազելի,
Դիր գլուխս քո կրծքին,
Որ տենչադող և հեշտալի
Տամ Տիրոջը իմ հոգին:
Առ այս վարդը, իմ հրեշտակ,
10 Քո պոետից ավաղիկ...
Սիրո վերջին այս հիշատակ
Պահի՛ր ծոցում քո գողտրիկ:
Ա՛ռ այս վարդը և ամեն ժամ
Հիշի՛ր երգչիս վաղամեռ,
15 Դե՛հ, մի համբույր հետին անգամ,
Մնաք բարև, կույս ու սեր:
Կմամռոտի և իմ շիրիմ,
Բայց չմոռնաս, սիրուն կույս,
Որ դուն ունես նորա տակին
20 Մեռած ընկեր, սեր և հույս:

1890 սեպտեմբերի 23
Ս. Էջմիածին

* * *

Աշունը եկավ... Մերկացավ անտառ,
Անպաճույճ քողով ծածկվեց բլուր,
Թոշնեցավ վարդը, դադրեց տենչավառ
Զվառ սոխակի երգն ախորժալուր:
5 Սակայն, սիրելիս, քեզ համար ի՞նչ հոգ
Ցրտաբեր, տաղտուկ աշունն անհաճո,
Մինչ մանուկ սրտում քո սիրաբորբոք
Դեռ նոր է ծաղկում գարունը սիրո:
Եվ պերճ ժպիտը կուսիդ մեղրակաթ
10 Դեռ նոր է խաղում շրթունքիդ մեղույշ,
Խոստանալով ինձ ճոնել խանդակաթ՝
Սիրով ապրելու նվիրական հույս:
Եվ կարմրավույն վարդը խնկաբույր
Դեռ նոր է փթթում այտերիդ վերա՝
15 Պարգևելով ինձ կուսական համբույր
Անկեղծիկ սիրույդ իբր առհավատչյա:
Եվ ես սիրահար քեզ, յա՛ր սիրալիր,
Կհնչեցնեմ, ինչպես խեղճ սոխակ,
Երգչիս յոթնաղի քնարն երկնաձիր
20 Երգելու գեղդ, աննման հրեշտակ:
Միայն, օրիորդ, անմեկին ընկեր,
Թո՛ղ հանգչեցնեմ նազելույդ պատկան
Գլուխս հոգնած անվիշտ, փղոսկեր
Երկնացող կրծքիդ մեջ երանական:

1890 սեպտեմբերի 26
Ս. Էջմիածին

* * *

Պատռեց երկրի կուրծքը առույգ
Ահեղ շանթը անողոք,
Պատռեց երգչիս կուրծքը նազուկ
Սիրույդ կայծը անբորբոք:
Բոցոտ շանթը երկնազդեցիկ
Հանգչեց երկրում առանց հետ,
-Սակայն սիրույդ կայծը փոքրիկ
Սրտումս մնաց վա՜ռ, հավետ

1890 հոկտեմբերի 4
Ս. Էջմիածին

ՀՈՎՎՈՒՀԻՆ

Ականակիտ և ձկնավետ
Գետի ափին ծաղկալի
Արածում էր խայտաբղետ
Անմեղ հոտը գառների:
Զմրուխտ ափին նստած տխուր
Հայ հովվուհին մտահույզ
Գեղգեղում էր հրաշալուր
Իր սրինգը լեռնասույզ:
Նորա տեսքը չքնաղագեղ,
Ալ շրթունքը մեղրածին
Եվ հասակը նոճիագեղ
Խիստ թովիչ էր այդ ժամին:
Եվ ոտքի տակ գալարվում էր
Ջինջ հայելին բնության,
Որի մեջը ցոլացել էր
Նորա դեմքը կուսական:
Նա երգում էր մի սիրահար
Սրտաճմլիկ երգ տրտում,
Եվ անքանակ աղի գոհար,
Ե՛վ թափում էր, և՛ երգում:
«Ես մի կույս եմ՝ մի հովիվ կույս,
Զուրկ վայելքից կինաեղծ,
Զունիմ նեցուկ, չունիմ և հույս,
Բայց սիրտ՝մ ունիմ անտխեղծ:
Ես ատում եմ ստրուկ կյանքի
Վայելչություն մահաբեր,
Շռայլություն ճոխ սեղանի,
Վավաշ, հարուստ, ցոփ ընկեր:
Ես ատում եմ թուլամորթի
Սերն ու հույսը կախարդիչ,

Հրապույրներ վաշխառուի,
Գարշ համբույրը արբուցիչ:
Ես ատում եմ ոճրագործի
Հացն ու ջուրը արյունոտ.
Ընկեր դառնալ տարփածուի
Համարում եմ ինձ ամոթ:
Բայց սիրում եմ մերկ ու ազատ
Պարզ բնության զավակին,
Հյուղն ու հացը նորա աղքատ,
Սերը անկեղծ, անմեկին:
Ես սիրում եմ ազատորդու
Մեղր համբույրը՝ սակայն բիրտ,
Եվ լծակից միշտ լինելու
Կտամ նորան իմ կյանք, սիրտ:
Ես մի կույս եմ՝ մի հովիվ կույս,
Զուրկ աշխարքի խնջույքից,
Բայց երջանիկ եմ անտար՝կույս՝
Որ ազատ եմ և անբիծ»:

1890 հոկտեմբերի 6
Ս. Էջմիածին

* * *

Երբեք երգչիս չեն գրավում
Թագ, գայիսոն, գահ շքեղ,
Ոսկի, արծաթ, գանձ անհատնում
Եվ ծիրանի վառ, գունեղ:
Երբեք երգչիս չեն գրավում
Ազգ ու աշխարհ բազմացեղ,
Հանգիստ կենցաղ ճոխ, անպատում
Եվ ապարանք փառահեղ:
Միայն կուսիդ միշտ անկեղծիկ
Սիրող սիրտը կենսածին.
Աքանչ գեղդ չնաշխարհիկ
Եվ համբույրդ կաթոգին:

1890 հոկտեմբերի 7
Ս. Էջմիածին

* * *

Երանի նրան, ով գիտե՝
Զոհվում է հայրենիքի համար:

Ա՛խ, հո՛ւր, փայլա՛կ, շա՞նթ իմ գլխուն,
Դե՛հ, հեզ զեփյուռ մեղմասյուք,
Շուտ սլացի՛ր «Նորա» մոտ դուն,
Տա՛ր այս դույժը տրտմասուգ:
Ասա՛ «Նորան». «Ես դրժեցի
Մեր հին ուխտը սրբազան.
Առ համբույրս, իմ նազելի՛,
Հրաժեշտիս հավիտյան:
Ես սիրեցի քո փոխանակ
Հայ քույրերիս տանջված,
Հայրենիքիս անփառունակ
Եվ եղբարցս ճնշված:
Եվ ցանկալի ազատության
Մեռավ միջոցը հայի,
Արյունռուշտ, նվիրական
Ռազմի դաշտը արնալ<ի>.
Այժմ հայրենյաց սիրո համար
Անկա մարտում դժնդակ.
Ա՛յս, իմ քուրի՛կ, ազատության
Ուխտս էր միակ իմ անքակ»:

1890 հոկտեմբերի 14
Ս. Էջմիածին

ԻՄ ԸՆԿԵՐ Ե. ՀԻՇԱՏԱԿԻՆ

«Ո՞հ, մահ, որպես դառն է հիշատակ քո»:
Գիրք էկղես., <գլխ. ա. համ. ա>

Այս ի՞նչ տեսարան, այս ի՞նչ հողակույտ,
Անշուք, անհեթեթ ու արտոսրազոծ:
Մի՞թե սորա տակ հանգչում է անքույթ
Խունկ ոսկերտիքը հեզ Երեմիայիս՝
Անգին ընկերիս...

Շանթ, որոտ, փայլակ, կայծակ մահառիթ
Ձեզ միայն, անսիրտ, պարկյանք անողոք,
Ինչո՞ւ կտրեցիք դեռ ծաղկափթիթ
Հեգ պատանեկի թելը կենսակիր
Կյանքի հուսաղիր:

Անցկացած տիոց, ա՜խ, օրհնյալ օրեր.
Հիշո՞ւմ ես, եղբայր ուսումնածարավ,
Երբ մենք ուխտեցինք լինել ջերմ ընկեր,
Սիրել ազգ, լեզու, սիրել Հայ-աշխարհ
Եվ լինել սատար:

Ա՜խ, անգութ Աստված, անողորմ երկինք,
Ի՞նչ սահմանեցիք. հանդուգն վճիռ:
Ողբացե՛ք, ծնո՛ղք, լացի՛ր, հայրենիք,
Այլևս չկա Երեմիան սիրուն,
Հույսը շատերուն...

Դու, որ հալածված ճակատագրեն,
Բայց եռուն կյանքի լիահույս հոգով
Անդուլ բախեցիր անխիղճ, անօրեն
Կուրացած բախտի դուռը անդեղև,
Ո՜հ, հույսդ՝ ի դերև...

Դու, որ տանջված սովից-ծարավից,
Բայց ուշիմ, ազատ, վեհ, ազնիվ հոգով
Անվերջ բախեցիր գոռ, անկարեկից,
Ժլատ մեծատան դուռն անագորույն.
Դարձյալ ապարդյուն:

Դու, որ անգոսնած տխմար ամբոխեն,
Բայց զեղուն, մաքուր, սիրահույս հոգով
Անխոնջ բախեցիր լուռ, անկեղծորեն
Սիրո դուռը, բայց կույսից այլահաճ
Եղար մերժված,

Այժմ հուսահատ, աղքատ, սիրազուրկ
Դիմեցիր շուտով հալածված մարդու
Միակ ապաստան՝ ի մայրենի գիրկ...
Գրկեց երկիրը թշվառիդ անճար
Եվ հանգստացա՛ր...

Հանգի՛ստ ոսկերքիդ, իմ վշտատոչոր,
Եղկելի ընկեր, քո հիշատակը
Անջինջ կմնա սրտումս, անդորը.
Ննջիր դու հավերժ շիրմում տխրատես.
Անմահություն քեզ...

1890 հոկտեմբերի 27
Ս. Էջմիածին

ՆՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ

Կուզե՞ս տեսնել ջինջ, թռչնալից
Երկնակամար կապուտակ,
Անուշ գետե՛ր, զով, ձկնալից
-Գնա՛ շուտով իմ Շիրա՛կ:

Կուզե՞ս տեսնել սրբանվեր
Վանք-վանորայք ավերակ,
Կոթո՛ղ, արձա՞ն, սուրբ շիրիմնե՛ր
-Գնա՛ շուտով իմ Շիրա՛կ:

Կուզե՞ս տեսնել բերրի, առատ,
Ատոք, դալար դաշտորայք,
Փարթամ մարգեր մախմռապատ,
-Գնա՛ շուտով իմ Շիրա՛կ:

Կուզե՞ս տեսնել հեզիկ կուսին,
Սիրահամբույր, գեղունակ,
Առույգ, արի պատանեկին.
-Գնա՛ շուտով իմ Շիրա՛կ:

1890 նոյեմբերի 3
Ս. Էջմիածին

ՆՎԵՐ

Եվ Ման-Տաշի երանավետ
Եղեմ ձորում ծաղկալի,
Թավիշ ափին կանաչավետ,
Կարկաչահոս զով ուղխի՝
Այնտեղ, ուր ցողը վաղորդյան
Տարածում էր մարգարիտ,
Ուր աղբյուրը անուշահամ
Գոհար ցայտում էր վճիտ.
Մենք թևանցուկ, զվարթադեմ,
Զառ ծաղկունքով զարդարված,
Ուրախ, կայտառ և սիգաճեմ
Ճեմում էինք, ո՜հ, անդարձ:
Շուշան կուրծքդ պսակեցի
Ալ վարդերով քաղցրաբույր
Եվ բերկրանքով դրոշմեցի
Մի կուսական ջերմ համբույր:
Ի՜նչ հրճվանք, խինդ անսահման
Վայելեցինք մենք այնտեղ՝
Մոռցած վիշտ, ողբ, թախիծ, կական,
Մոռցած աղի վառ բյուրեղ:
Հանկարծ թնդաց դրախտավայր
Ման-Տաշ ձորը ծաղկավառ,
Եկավ ինձ մոտ երգիչահայր
Ապոլոնը լուսափառ:
«Առ քնարըս, իբրև զեղուն
Սրտիդ թարգման, պատանյա՛կ,
Երգի՛ր անվախ՝ «Ազատություն»,
«Սեր» և «Գեղոն», «Գործուն կյանք»:
Այս ասելով՝ Հայր-Ապոլոն
Տվեց երգչիս նորակոչ
Իր յոթնաղի և երկնաձոն
Քնարը պերճ, ոսկեզօծ:
Եվ խփեցի ոգևորված
Նուրբ լարերին ոսկեհեր.
Եվ նա հնչեց քաղցրավաչ՝
«Ազատություն, Կյանք, Գեղոն, Սեր»:
-«Ազատություն, Կյանք, Գեղոն, Սեր».-
Արագածը կրկնեց,
«Ազատություն, Կյանք, Գեղոն, Սեր».-
Մեր սրտերում դրոշմվեց:

1890 նոյեմբերի 9
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ

Իմ վառ մանկության ոսկի երազներ,
Պայծառ ցնորքներ չքացան անհետ.
Եվ մեղմահնչյուն տավղիս ոսկեհեր
Լարերը ազատ կտրվեցին <անհետ>:
Իսկ այժմ ընկած մահվան ցուրտ
մահճում,
Տալիս եմ ողջույնն հրաժեշտիս գունատ,
Եվ վերջին անգամ տավղիս բեկբեկուն
Լարերին ժանգոտ խփում եմ հուսատ:
Ա՛խ... ես վաստակած առօրեական
Կյանքի հոգսերից, մաշող վշտերից
Դիմում եմ իմ վայրը հավերժ հանգստյան՝
Թողնելով կյանք, սեր, մոռացած ողբ, թախիծ:
Ո՛հ, կանհետանա - կգա ժամանակ,
Իմ հող մարմինը մայր-երկրի ծոցում,
Բայց ավաղներիս անմահ հիշատակ
Անջինջ կմնա քո ընկեր-սրտում:

1890 դեկտեմբերի 9
Ս. Էջմիածին

ՆՎԵՐ...

Սիրույդ սուրը անագորույն
Պատռեց կուրծքըս սիրակեզ.
Բացեց սրտիս մեջ զգայուն
Վերքեր անբույժ, աղեկեզ:
Սիրույդ վերքերն հրաբորբոք
Կրծին սիրտս վշտահար.
Ինչո՞ւ, ինչո՞ւ, կո՛ւյս անողոք,
Զոհիդ չուտով մոռացար:

1891 փետրվարի 9
Ս. Էջմիածին

ՎԱՐԴ ՍԻՐՈՒՀՎՈ ՇԻՐՄԻՑ

Այն վառ վարդն եմ, վարդը անցուկ՝
Սիրո փառաց օրերի:
Այն հեզ վարդն եմ, վարդը դալուկ՝
Շիջած սիրո արցունքի:
Այն պերճ վարդն եմ, որ սիրավառ
Ապերջանիկ պատանին
Ջոնեց ժպտով կուսի թշվառ
Ցաված կուրծքին կաթոգին:
Այն ալ վարդն եմ, որ անջատման
Աղի շիթով ցողվեցա,
Այն, որ անբախտ վաղաթառամ
Սիրուհվո հետ թաղվեցա:
Մեռած վարդն եմ, որ պատանին
Տենչատոչոր և անհույս
Արտասունքով սիրո ծեգին
Ինձ կյանք տվեց կրկնաբույս:
Հարուցած վարդն եմ, որ կուսական
Մոռցած շիրմից մամռախիտ
Մրրկահույզ հողմը դաժան
Պոկեց, տարավ դաշտ, հովիտ:
Այս հեզ վարդն եմ, վարդը ծերուկ՝
Անանց վշտի ենթակա,
Որ ծովածուփ երգչիդ մանուկ
Կրծքի վերա բազմեցա:

1891 փետրվարի 13
Ս. Էջմիածին

ՆՎԵՐ...

Վեհ, վսեմ, ազնիվ գաղափարներով
Զինված, տոգորված բոլորանվեր՝
Իր աստվածակիր հոգու ուժերով
Եկավ նա աշխարհ, աշխարհ մեղսասեր:
Նա ազնիվ սրտով քարոզեց անվախ
Գաղափարները անձնազոհության,
[Սիրո, ճշմարտի]. խորտակեց խարդախ
Ոգին փողապաշտ ստրուկ մարդկության:
Անարգեց զազիր, ստոր կրքերի
Խնկարկու մարդկանց, մտրակեց գոռոզ
Եսը դիվական. տապալեց կեղծի,
Ստի, խավարի և չարի որդվոց:
Բայց նրան նախատեց և մատնեց ի մահ
Մոլեռանդ, տխմար ամբոխը դաժան.
Ո՜հ, դո՜ւ իդեալի հալածված սուրբ զոհ,
Քեզ ապաստարան՝ անձուկ գերեզման:
– –
– Հանգի՛ստ ոսկերքիդ, պատանի՛ վեհանձ,
Մարդկանց փրկեցիր՝ անձդ զոհելով.
Տե՛ս՝ նոր սերունդը քո սուրբ նշխարաց
Երկրպագու է՛... Հանգի՛ր անվրդով...

1891 մարտի 4
Ս. Էջմիածին

ՆՎԵՐ

Սիրի՛ր երգչիս անբիծ սրտով,
Ով հեզաբան կո՛ւյս աչեղ,
Փայփայի՛ր ինձ ազնիվ սիրով,
Հոգի անկեղծ ու անմեղ:
Սիրի՛ր ազնի՛վ, սիրի՛ր մաքո՛ւր,
Իմ դառն վշտիս հրեշտակ,
Սիրի՛ր, գուցե զոհիդ տխուր
Հանդիսանաս փրկանակ:
Սիրի՛ր հավերժ, գուցե անհուն
Վշտի ծովում խեղդվիմ...
Ա՜խ... չմոռնաս, կույս սիրասուն,
Այց ելնելու իմ շիրիմ:

1891 մարտի 16
Գյումրի

* * *

Ես գոհ ժպտով իմ վաղեմի
Գգված կուսից գեղանի
Ընդունեցի մի ցողազարդ,
Գեղեցկանազ, բյուրեղ վարդ:
Քրքջրելով տեսա կարմիր
Վարդի մեջը որդ զազիր...
Մի՞թե նորա քնքուշ կրծքում
Մահաշունչ որդն է կենում:
Արդյո՞ք կուրծքը այս կուսական,
Որին պաշտում եմ անքուն,
Ջունի՞ յուր մեջ չարանախանձ
Որդ սիրախաբ, ուխտազանց:

1891 մարտի 22
Կումայրի

* * *

Շանթաձիգ ամպեր, ամպեր սևաթույր
Փլվեցան բարձրից ահեղամռունչ.
Գոյացավ հեղեղ մի բազմափրփուր,
Հեղեղ մեծագոչ և աղետաշունչ:
Ողողեց սրտեր, մարգեր ծաղկավառ,
Սրբեց ու տարավ աղբ ու գեչ նեխած,
Մաքրեց դաշտերից այն մնասակար
Զար միջատներին, անհագ գազանաց:
Բայց ինչո՞ւ հեղեղ մի աշխարհավեր
Հուր ալիքներով չի մաքրում դաժան,
Կեղծ, ոճրագործ, նենգ, կրքոտ, եսասեր,
Շահամոլ, խարդախ, դահիճ մարդկության:

1891 մարտի 23
Գյումրի

ՀԵՌՈՒ...

Հեռո՛ւ ինձնից, դու մահաբեր
Ոսկեզօծ կուռք մահալի,
Հեռո՛ւ, «Ես»՝ ախտ աշխարհավեր,
Հեռո՛ւ, կրքեր պժգալի:
Հեռո՛ւ աչքես, դիմա՛կ չինծու
Բարեպաշտոն մարդկության,
Հեռո՛ւ, աղի՛ճ՝ լիրբ տարփածու,
Հեռո՛ւ, կեղծ Սեր Աստղկան:
Հեռո՛ւ, խավա՛ր, նենգ, սուտ որդի,
Հեռո՛ւ, շղթայք կուռ, զազիր,
Հեռո՛ւ, համբույր դժմիտ Հուդի,
Ստրկության գարշ, ժպիրհ:
Հեռո՛ւ ինձնից, նախանձի օձ,
Հեռո՛ւ, մտքեր չարախոս,
Հեռո՛ւ, հեռո՛ւ. իմ վշտակոծ
Սիրտս դարձրիք տարտարոս:

1891 մարտի 28
Գյումրի

* * *

Ա՛խ, նազելի՛ս, դու չգիտես
Ոճիրները մարդկության,
Չես ճանաչիլ, թե նա ինչպես
Դև-դահիճ է ու դաժան:
Նա պիտ լինի ճշմարտասեր,
Անկեղծ, ազնիվ, ողորմած,
Համեստ, վեհանձ, անշահասեր,
Սանձած կրքով, եսատյաց:
Այն ժամանակ աստվածային
Այս աշխարհը կլինի
Որպես եդեմ, իմ անմեկին,
Փարթամ, առատ, ճոխ, բերրի:
Բայց դարձրել է մարդկությունը
Նրան զազիր աղբարան,
Եվ ի՞նչ, ինքըն էլ նորա մեջը
Եղել է որդ չարության:

1891 մարտի 30
Կումայրի

* * *

"Ах ты доля, моя доля,
Доля горькая моя".

Վիշտս փունջ է արտասվալից՝
Հյուսված անգութ մարդկության
Արյունածոր ոճիրներից –
Ոճիրներից դիվական:
Տե՛ս այս խամրած վարդը դժգույն,
Օ՛, որքա՞ն է վշտացած,
Սա թարգմանն է պարկեշտասուն
Կուսի պատվին անարգված:
Այս մեխակը, իմ անձկալի՛,
Որքա՞ն դալուկ ու հյուծված,
Հայտարարն է աղքատ որբի՝
Վաշխառուից կեղեքված:
Տե՛ս, տե՛ս, հոգյա՛կ, այս շուշանը՝
Ինչպե՛ս թոշնած ու հուսհատ,
Սա պատկերն է ճշմարտության
Վեհանձ զոհին անվհատ:
Նայի՛ր, սե՛ր իմ, այս հասմիկը
Ինչ հանգիստ է, բայց գունատ,
Սա տիպարն է անկեղծության
Նահատակին անվհատ:
Տե՛ս, խնդրում եմ, այս նարդոսը
Ինչ պայծառ է, արնալից.
Սա ներկված է ազատության
Խնկարկուի արյունից:
-Ողջ մարդկության այս ոճրաշատ
Դժոխային կրքերից
Հյուսված վիշտը, որ միալար
Սրտումս է դառնալից,
Գիտեմ, մի օր, իմ նազելի՛,
Որպես դագաղ մահակիր,
Ինձ ընդգրկած պիտի տանի
Բարի, անվիշտ մի երկիր...

1891 ապրիլի 1, Ալեքսանդրապոլ

* * *

Երբ լինում եմ առանձնացած
Գեղ կուսի հետ պուրակում,
Համբույրներով նրա մկրտված.
Ինչո՞ւ Աստծուն չեմ հիշում:
Երբ նստած եմ շռայլության
Ճոխ սեղանը անպատում,
Վառ նեկտարով ոգևորված.
Ինչո՞ւ Աստծուն չեմ հիշում:
Երբ լինում եմ ես հղփության
Փարթամ, չքեղ դահլիճում,
Գոհար-ոսկու մեջ ընկղմած.
Ինչո՞ւ Աստծուն չեմ հիշում:
Բայց երբ լինում եմ կորստյան
Ալեկոծված օվկիանում,
Եվ նավս արդեն մոտ խորտակման.
Ինչո՞ւ Աստծուն եմ հիշում:

1891 ապրիլի 4
Գյումրի

* * *

Ես չունիմ կամք, չունիմ հավատ,
Ես չունիմ հույս. չեմ կարում
Թուլամորթի հոգով վհատ
Տանել խաչիս ծանրություն:

Ես ստրուկ եմ, հոգով ստրուկ՝
Նեխած ճահճում տգիտության-
Տո՛ւր ինձ կամք, ույժ, զորեղ բազուկ,
Տո՛ւր ինձ խարիսխ փրկության:

-Այն ժամանակ իմ աննկուն
Ձեռքերովս երկաթյա
Ես հոգեկան ստրկության
Կխորտակեմ բանտ, շղթա:

Ես կփշրիմ իմ սեգ ճակտից
Գարշ կնիքը խավարի,
Ես կազատվիմ արգելանից
Բիրտ բռնության ու կեղծի:

-Այն ժամանակ և՛ անխարդախ,
Իմ լուսամիտ փայլուն խաչ,
Սիրով կրած ուսիս՝ անվախ
Ես կդիմեմ դեպ առաջ:

1891 ապրիլի 6
Ալեքսանդրապոլ

ՕՐԱԳԻՐ...

«Душа моя мрачна...Скорей...»

Байрон.

Լի է սիրտս վսեմ, մաքուր
Զգացմունքով վեհ, ազնիվ,
Իմ քնարը, նազելիս, տուր՝
Երգեր երգեմ բազմաթիվ:
5 Բայց ճնշում է սիրտս զեղուն
Մի խորին վիշտ հոգեկան.
Այս ի՞նչ պատկեր, չար մարդկություն,
Կեղծ, նենգ հոգի՛ք, ե՛ս դաժան:
Կուզեք խեղդել ձայնը խրղճիս,
10 Ո՛վ դուք, դևեր բռնակալ,
Հնչի՛ր, քնար, թո՛ղ ճշմարտիս,
Հոգ չէ, խաղերն չարչար:
Հնչի՛ր անվախ, որ մարդկություն
Տեսնի իր բյուր ոճիրներ,
15 Իր շահամոլ գարշ հատկություն,
Իր կրքերի խեղճ զոհեր:
Թո՛ղ դրախտի մեղմ ձայներով
Քո անկաշառ արձագանք
Դյութե մարդկանց՝ ներշնչելով
20 Խեղճ, անկեղծ սիրտ, սեր և կամք:

1891 ապրիլի 6
Կումայրի

ԵՍ ՈՒՆԵԻ

Ես ունեի մի վարդ կարմիր
Թավ պուրակում գեղաշուք,
Բայց խորշակը անկարեկիր
Զորցուց նորան վաղանցուկ:
5 Ես ունեի մի անբստգյուտ
Սիրանվեր սիրուհի,
Սակայն գնաց նա շուտափույթ
Դեպ աշխարհը ստվերի:
Ես ունեի մի մեղրածոր
10 Սառն աղբյուրակ ժայռի տակ,
Բայց ցամքեցուց նորան բոլոր
Մղձուկ տոթը դժնդակ:
Ես ունեի մի սիրտ անվիշտ՝
Եռուն պայծառ ըղձերով,
15 Սակայն մարդիկ չար, ամբարիշտ
Դարձրին նորան վշտի ծով:

1891 ապրիլի 11
Ալեքսանդրապոլ

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ...

Դու կարող ես բռնի ույժով
Տիրել երկրին ամենայն
Եվ անհատակ, ճոխ գանձերով
Ցամքեցնել ծով, օվկիան:
Դու կարող ես կամքի ույժով
Գյուղ ու քաղաք մարդաշատ
Բերրի դաշտեր, անտառներ զով
Դարձնել չոր անապատ:
Բայց չես կարող բռնի ույժով,
Ո՛չ գանձերով անհատնում,
Ո՛չ երկաթե անհաղթ կամքով
Տիրել սրտիս զգայուն:

1891 ապրիլի 16
Արգինա

* * *

Դուք, մոլար կյանք<ի> հլու ստրուկներ,
Դուք, շվայտության մեղսալից որդեր,
Ինչո՛ւ ձեր լպիրշ շնչով ախտավոր
Նսեմացնում եք ջահը լուսավոր:
Դուք, որդիներ անառակության,
Դուք, լպիրշ գորտեր ճահճի ապական,
Ինչո՛ւ ձեր կյանքի պագչոտ խորհրդով
Հանգչեցնում եք եռանդ ու գորով:
Դուք, գարշ ստության դև փաստաբաններ,
Դուք, զրկողության վարպետորդիներ,
Ինչո՛ւ ձեր անգութ սրտով չարության
Մեռցնում եք խիղճ, բանականություն:
Դուք կպատժվեք. երկինքը արդար
Կտեղա ձեր վրա չանթեր անհամար,
Եվ այն ժամանակ, մարդիկ չարակամ,
Ձեր անկումն արդար լացեք լռելյայն:

1891 ապրիլի 24
Գյումրի

ՕՐԱԳԻՐ

Բիրտ-բռնակալ ձմեռն անցավ-
Ճնշող լուծը վերացավ.
Փայլեց երկինք և վառ արև,
Մանուկ գարո՛ւն, քեզ բարև...
Ողջունեցին՝ լինենք բերրի
Արտասունքով բերկրանքի.
Գալդ ախորժ, կենսապարգև,
Առույգ-գարո՛ւն, քեզ բարև:
Քեզ այց եկան քաղցրանվագ
Թռչունները երփներանգ,
Փթթաց ծաղիկ, ծառ ու տերև,
Փարթամ գարո՛ւն, քեզ բարև:
Ջանձիր դուլը խոր քուն մտավ,
Աչխույժ, եռանդ - արթնացավ,
Օրհնեց Աստված, տեղաց անձրև,
Զվարթ գարո՛ւն, քեզ բարև:
Եկավ գարուն, փորեց չիրիմ
Տանջանքների մարդկային,
Եկավ գարուն - ինձ ի՞նչ բերավ.
Նոր տանջանքներ, նոր վիշտ, ցավ:
Եկավ գարուն, մայր բնություն
Ժպտաց ուրախ, պարտսուն.
Եկավ գարուն, սիրտս փղձուկ
Ցայտեց արյուն-արտասուք:

1891 ապրիլի 24
Ալեքսանդրապոլ

* * *

Առավոտյան ստվերարկու
Աշտարակի կիսավեր
Տակին նստած նվագածու
Կույրը անուշ երգում էր:
Նա երգում էր ոգևորված
Վարդ ու սոխակ սիրահար,
Նա երգում էր լացակումած
Սիրտ սիրախաբ, վշտահար:
Եվ սիրուհուս հեզ աչերում
Ցոլաց արցունք տարփանքի,
Եվ իմ վշտոտ, հեգ աչերում
Ցոլաց արցունք տանջանքի:

1891 ապրիլի 25
Ալեքսանդրապոլ

* * *

Լուռ, մեղմասահ և կաշկանդված
Ստրուկ գետը անհատակ
Մռնչում էր ծանրաբեռնած
Նավերի տակ անքանակ:
Հուզվեց գետը. էլ չհամբերեց
Կուռ նավերի ճնշումին,
Ահեղագոչ ալիք ծնեց
Եվ խորտակեց նավերին:
Բայց ե՞րբ, արդյոք, իմ թախծալից
Սիրտս քնքուշ, ցավագար
Կխորտակե դառնակսկիծ
Սև վշտերս անհամար:

1891 ապրիլի 25
Գյումրի

* * *

Խեղճ սոխակը ամեն գիշեր,
Վարդի սիրուց բորբոքված,
Վառ կարոտով գեղգեղում էր
Նորա դեմքը քնեած:
Նա խնդրում էր լուռ արցունքով
Սիրո համբույր մեղրածուծ,
Նա մերժվեց. թռավ չուտով
Զգայազուրկ սիրուհուց:
Սակայն վարդը՝ նենգ սիրուհին,
Սիրաբողբոջ յուր ծոցում
Եվ սիրում է լպիրշ որդին,
Մնուցանում, համբուրում:

1891 մայիսի 3
Կումայրի

* * *

Վառ լուսինը արծաթագույն
Մեղմ սահում էր կապուտակ.
Եթերային օվկիանոսում
Այնքան թովիչ, գեղունակ:
Ահա՛ ամպեր, շանթեր ահեղ
Ճնշին նրան դառնապես,
Բայց անվհատ կրծքով ուժեղ
Հաղթեց-պրծավ պարզերես:
Եվ ավելի իր լուսասփյուռ
Ճաճանչները վառվռուն
Անկեղծ սիրո համբույրներ լուռ
Ցոնում են քաջերուն:

1891 մայիսի 5
Ալեքսանդրապոլ

ՕՐԱԳԻՐ...

Հորիզոնս ամպածածուկ,
Օրս մռայլ ու ծմակ,
Մթնոլորտս հեղձամղձուկ
Եվ դալուկ իմ արեգակ:
Սիրտս տխուր և հուսահատ,
Լուռ օրորան վշտերիս,
Խաչս ծանր, հոգիս վհատ,
Կամքս ստրուկ կրքերիս:
Մի ցող, մի ցող, ցող կենսական,
Ցող դրախտից երկնավանդ
Բերեք, ցողեք հավերժական
Մաշված կուրծքս կիսաքանդ:
Ցոլա՛, ցոլա՛, իմ արշալույս,
Բախե՛, սիրտ իմ սիրազնիվ,
Խայտա՛ եռանդ, սեր, խրախույս,
Ծաղկի՛ր կյանքիս գոռ կռիվ:
Հասի՛ր, բախտիս նորոգ գարուն,
Փթթա՛, սիրույս վառ ծաղիկ,
Ինձ սեր տածիր, կույս զգայուն,
Հնչի՛ր քնարս դայլայլիկ:

1891 մայիսի 12
Ալեքսանդրապոլ

ՆՎԵՐ... ՕՐԱԳԻՐ...

Քնքուշ սիրտս, կույս անմեկին,
Մի քնար է վշտակեզ,
Եկ, զարկ նորա նուրբ լարերին,
Որ տա հնչյուն նա պես-պես:
Որ հառաչե տանջանք, մրմունջ
Իմ սիրախաբ, սին կյանքի,
Լուռ արտույտե անբույժ և մունջ
Խոր թախիծը իմ սրտի,
Եվ գեղգեղե զգացմունքով
Անկեղծ սիրո վառ երգեր,
Որ հյուսել եմ քո անունով՝
Վաստակելու քեզնից սեր.
Արի, լսիր ցաված սրտիս
Ավյունները քաղցրալուր,
Որ խղճալով սիրես երգչիս,
Իմ նազելի, ո՞ւր ես, ո՞ւր:

1891 հունիսի 6
Ղազարապատ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՕՐԱԳԻՐ...

Լուսնյակ գիշեր... Մռայլադեմ
Ուռենու տակ գեղանի
Ես մտահույզ, լուռ նստած եմ՝
Ձեռքս դրած ծնոտիս:

Եվ ուռենու մեղմ սոսափյուն
Սիրտըս հուզում է խորին,
Արթնացնում հիշողություն
Իմ անցյալից քաղցրագին:

Եվ հիշեցի իմ վաղանցուկ
Մանկությունը կատաղի,
Որ նույն տարի՝ ես դեռ մանուկ,
Մատղաշ ուռին տնկեցի:

Ես հիշեցի այն վառ գիշեր,
Երբ տոգորված տենչանքով,
Մենք ուխտեցինք լինել ընկեր,
Ապրել հավերժ, սուրբ սիրով:

Եվ զգում եմ՝ այն ծառն հիմա,
Որ հնչում էր ինձ օրոր,
Մի օր կընի չիրմիս վերա
Ստվերարկու սգավոր:

1891 հունիսի 24
Ալեքսանդրապոլ

* * *

Զվարթ գիշեր... Խորին ձորում
Ես նստած եմ մամռախիտ
Ժայռի վերա և լուռ նայում
Դեպ երկինքը ջինջ, վճիտ:

Այնտեղ բարձրում լուսածիծաղ
Նազնազում է լուսնյակը,
Եվ ցոլում են, երգում ուրախ
Անհոգ, պայծառ աստղերը:

Այստեղ ցածրում հուզված սրտով
Հորձուտ ուղխը փըրփըրադեզ
Զարնվում է մռնչալով
Քարափներին լերկ ու վեհ:

Սակավ հեռու, մռայլադեմ,
Խառնաշփոթ լճակում
Կայտառ ձկները սուզվում՝են,
Կոհակները օրորում:

Նույնպես և իմ դեմքն անզգա
Վառ ժպիտն է ծաղկում միշտ,
Եվ հոգնատանջ սիրտս անխնա
Հուզում, մաշում դառըն վիշտ:

1891 հունիսի 30
Հառիճ

ՕՐԱԳԻՐ...

Անզոր հոգուս մռայլ ժամում
Ես երգեցի երգ տխուր
Եվ աչքերիցս ցայտեց ցոլուն
Արտասունքի ջինջ աղբյուր:
Եվ զեփյուռը զվարթ, ամբրոս
Կրկնեց երգչիս մելոդիան,
Արցունքներս առատահոս
Բուսցրին ուռին թախծության:
Անցան օրեր. ինձ մահու զարկ
Տվին պարկյանք անողոք,
Շիջավ կյանքիս վառ արեգակ,
Հանգչեց տրտունջ, ողբ, մորմոք:
Ես ննջեցի. իմ թաց շիրիմ
Գրկեց մամուռ թավշահեր,
Եվ արցունքիս դուստրը՝ ուռին,
Ջոնեց նորան զով ստվեր:
Ես լսեցի սրտիս վշտոտ
Բխած երգը վաղեմի,
Մեղմ զեփյուռը մելամաղձոտ
Երգեց հուզված, տխրալի:

1891 օգոստոսի 18
Ալեքսանդրապոլ

ԱՂՈԹՔ ԱՍՏՎԱԾԱԾՆԱ ՊԱՏԿԵՐԻ ԱՌՋԵՎ

Խոլ խավար է իմ ժանտ հոգին,
Կուրծքս՝ դժոխք չարակամ.
Կենդանացրու ինձ վերստին,
Աստվածածին կույս Մարիամ:
Լցրու սիրտն իմ տարտարոս
Անկեղծ սիրո ջերմությամբ
Եվ աչքերիցս առատահոս
Կորզե արցունք սուրբ զղջմամբ:
Սիրտս մաքրիր, ազնվացրու
Զգացմունքներս անհամար.
Տուր ինձ շնորհք աղոթելու,
Կարեկցելու անդադար
Արշալույսի ծագման ժամին
Ես, սլացած եթերում,
Երգեմ վսեմ հիմն սրտաբուխ
Ոգիների պերճ հույլքում:
Երգեմ փառքդ անճառելի,
Գթող սիրտդ փրկարար,
Անբծությունդ սքանչելի,
Գեղեցկության վեհ տիպար:

1891 օգոստոսի 18
Ալեքսանդրապոլ

* * *

«Душа моя мрачна...Скорей...»

Առ քնարդ, մատաղ պոետ,
Խփիր նորա լարերին
Եվ հնչեցրու երանավետ
Իմ սիրած այն մեղեդին:

Այն մեղեդին, որ միալար
Վիշտ է երգում և տանջանք,
Որ զգայուն մարդկանց համար
Լույս պատկերի, կռիվ, կյանք:

Այն, որ զինված կխորտակե
Դաժան կուռքը մամոնի,
Որ զզվանքով կարհամարհե
Սին վայելքը աշխարհի:

Այն, որ ազնիվ երգչիդ համար
Կվաստակե փշահյուս
Պսակ անշուք, բայց մեծափառ
Հռչակ հավերժ, աննմուշ:

1891 օգոստոսի 21
Ալեքսանդրապոլ

ՆՎԵՐ...
ՕՐԱԳԻՐ...

Ես ի՞նչ երգեմ, երբ հեգ երգչիս
Մելոդիական երգերում
Միայն ավեր, լքյալ սրտիս
Հառաչներն են հնչվում:

Երբ տառապյալ, մռայլ Մուսաս՝
Քողված ամպով թախծության,
Թելադրում է ինձ հանապազ
Երգել վիշտը դառնության:

Ես ի՞նչ երգեմ, երբ ոսկեսիմ
Իմ քընարն է մատնված
Միշտ երգելու տանջանք, չիրիմ
Եվ սրտակեզ ողբ ու լաց:

Ո՛չ, չեմ կարող, սիրող ընկեր,
Երգել կյանքի քաղցրություն,
Երգել զեփյուռ, համբույր և սեր,
Ծաղկավառ կուրծք և գարուն:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, աչագեղ կույս,
Հեռո՛ւ, դյութիչ վառ նեկտար,
Խորտակված կուրծք, ո՛հ, կուրծք անհույս,
Երգիր միայն, իմ քնար:

1891 օգոստոսի 25
Ալեքսանդրապոլ

ՕՐԱԳԻՐ...

Սիրո հրեշտակ, քո ջերմ սրտում
Տեսա մի կայծ սիրավառ.
Տուր ուրեմն քաղցրահնչյուն
Իմ քնարը ոսկելար:
Որ այն սիրո թույլ ու նսեմ
Կայծը քնքուշ սրտիդ մեջ
Բորբոքելով հարուցանեմ
Լափող հրդեհ - սեր անշեջ:
Տուր, որ անհույս կարեկցական
Ավաղներով տխրալի
Դյութեմ, հուզեմ քո կուսական
Մաքուր սիրտը ըղձալի,
Տուր, որ կորզեմ գերող, վճիտ
Աչերիցդ գեղանի
Ցոլուն բյուրեղ, ջինջ մարգարիտ՝
Լուռ թարգմանը սրտերի:
Արցունքներդ թո՛ղ ոռոգի
Մատաղ կուրծքդ փղոսկեր,
Որ այնտեղից առատ բուսնի
Անուշահոտ, ալ վարդեր:
Որ ցողազարդ այդ վարդերից
Հյուսեմ մի փունջ գեղունակ,
Անցնեն օրեր, խեղճ պոետից
Մնա կուսիդ հիշատակ:
Որ դալկահար այդ վարդերից
Վշտոտ երգչից վաղամեռ
Հյուսես պսակ արտասվալից՝
Շիրմիս վերա ինձ նվեր:

1891 օգոստոս
Վաղարշապատ

* * *

Լուռ գիշեր էր, պայծա՛ռ, խաղա՛ղ...
Զառ պուրակում քաղցրաբույր
Նստած էի ես մտազբաղ,
Բուռն հուզմունքի անձնատուր:
Եվ ինձ իբրև ստվերարկու,
Իբրև կախարդ հովանի,
Հանդիսացել էին երկու
Գեղեցկակազմ ուռենի:
Ամոլ ուռիք, սիրողաբար
Օրորվելով քաղցրապես,
Ողջագուրում էին իրար
Գրկախառնվում տենչակեզ:
Սիրո ժամին միմյանց ձոնում
Անկեղծ համբույր խանդակաթ
Եվ բերկրանքի արցունք սահուն
Բարձրից ցողում իմ ճակատ:
Գողտրիկ լուսինն արծաթագույն
Ժպտում էր, զերթ փայլածու,
Եվ փայփայում կարկաչ առուն
Արմատները ուռենու:
Նոքա իրար կրծքում անդորը
Նիրհում էին մեղմաշարժ.
Զով զեփյուռը երգում օրոր
Նինջը սփռում իր շղարշ:
Նայում էի ես գեղաշուք
Այս պատկերը սիրանվեր.
Ո՛հ, երնեկ ձեզ, որ գիտեք դուք
Ազատ սիրել և սիրվել:

1891 սեպտեմբերի 8
Վաղարշապատ

ՆՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ

Եթե տեսնես մի թախծալի
Գունատ, անհույս, ցավագար,
Մելամաղձոտ, հեգ պատանի.
Դժբախտս եմ վշտահար:
Եթե տեսնես հպարտ երգչին՝
Քարկոծված կույր ամբոխեն
Եվ ուշաթափ ընկած գետին.
Այն ես եմ, ես - մարգարեն:
Եթե քնարն իմ բեկբեկուն
Կրծքիս սեղմած երգում եմ
Օրհասական տխուր ողջույն.
Այն ճգնաժամս է դժխեմ:
Եթե հյուծված, արյունավառ
Մարմնիս տիրե ցուրտ սարսուռ,
Սրտիս բախյուն հանգչի իսպառ.
Այն վախճանս է մշտալուռ:
Եթե տեսնես մեռելաշուք,
Արտասվաթոր ուռու տակ
Մի հողակույտ մամռոտ, անշուք.
Այն շիրիմս է տխրունակ:
Եթե մեկը մաշված սրտով
Մռայլ ժամին գիշերվա
Թրջե շիրիմս ջերմ արցունքով.
Ա՛խ, իմ սիրած կույսն է նա:

1891 սեպտեմբերի 9
Վաղարշապատ

* * *

Տաղտուկ ցնորք, հեռո՛ւ ինձնից,
Դժմիտ կասկած, չքացիր.
Հավատում եմ ես քեզ նորից,
Ով կուսական սիրտ անծիր:
Հավատում եմ, կույս անմոռաց,
Քո հայացքին հեզհամբույր,
Քո վառ կրծքին, ուր կա գաղած
Սիրտ մտերիմ, կենսաբույր
Կուզես՝ երգչիս ատիր անհուն,
Ով անողորմ դիցուհի,
Բայց սիրում եմ ես քեզ, սիրում,
Սերն է խորհուրդը կյանքի:

1891 սեպտեմբերի 10
Վաղարշապատ

* * *

Ոսկենշույլ արշալուսին
Աղբյուրն հնչեց մեղմ խոխոջ,
Սուլեց զեփյուռն՝ այն թովչուհին,
Վարդը բացեց վառ բողբոջ:
Կույսն այցելեց քնաթաթախ
Վճիտ աղբյուրն մեղրաբուխ.
Զովացրուց երեսն շարմաղ,
Ցողազարդեց իր գլուխ
Գեղատեսիլ կույսն ու աղբյուր
Սիրին, սիրվին ջերմագին,
Եվ կարմրաթուշ վարդն ու զեփյուռ
Գգվին, գգվին կաթոգին:

1891 սեպտեմբերի 12
Վաղարշապատ

* * *

Ես լալիս եմ... Թող արցունքս,
Որպես կայծեր հրրաշեկ,
Այրե, կիզե ճնշված սիրտս՝
Սառն ու անհույս վշտաբեկ:
Թող ներշնչե կենդանության
Շող ու նշույլ սրտիս մեջ.
Որպես հրաբուխ ժայթքին, եռան
Զգացմունքներս վառ, անշեջ:
Որ ջերմությամբ սիրեմ անհուն
Անսեր մարդկանց չարակամ,
Անգամ զոհվիլ՝ ի բարվոքում
Նենգ աշխարհի չզլանամ:
Որ հավատով կարեկցաբար
Լամ, աղոթեմ, սգամ միշտ,
Զար մարդերի խղճի համար
Կեղծ մարդկության ամբարիշտ:
Որ սիրտս ուզե բուռն ույժերով
Խավարի դեմ տալ կռիվ,
Որ նա ապրի հիացմունքով,
Սիրե անխոնջ վեհ, ազնիվ:
Որ տոգորված ճշմարտության
Անհաղթ տենչով բարձրանա
Դեպ զոհվելու, սիրո օրրան
Լուսաճաճանչ Գողգոթա:

1891 սեպտեմբերի 20
Վաղարշապատ

ՕՐԱԳԻՐ...

"Я жить хочу, я жизнь люблю".

Կուզեմ ապրել, կուզեմ և կյանք,
Սակայն ինչո՞ւ... լռում եմ.
Ի՞նչ է կյանքը - սոսկ արձագանք.
Հեռո՛ւ, հեռո՛ւ, մահ դժխեմ:
Բայց ի՞նչ. մի՞թե արժե ապրել,
Ապրել հուսով, տանջանքով,
Ուր իմ առաջ կա անարգել
Ոչնչության դառն ծով:
Եվ ի՞նչ. կյանքը չունի՞ միթե
Մի նպատա՛կ սուրբ, վսեմ,
Մի նպատակ, ո՛ւր ես գոնե
Դիմեմ սիրով աննսեմ:

1891 սեպտեմբերի 22
Վաղարշապատ

[ՕՐ<ԻՈՐԴ>-Ի ՏՈՆԻ ԱՌԹԻՎ]

Ինչ բերկրանքով քաղցրամրմունջ
Կայլակում ես դու, աղբյուր,
Ինչ մանկական երգ անմռունչ
Գեղգեղում ես հրաշալուր:
Արդյոք գիտե՞ս վշտատոչոր
Սրտիս գաղտնի հեծեծանք
Եվ տեսե՞լ ես արյունածոր
Վերքիս կսկիծ, տառապանք:
Բայց, ա՜խ, ինչո՞ւ սիրտս մռայլ
Կարկաչներովդ չես սփոփում.
Խորին վերքս քո պերճափայլ
Ցողերովդ չես բուժում:
Մի՞թե, աղբյուր, դու չես ուզում
Լինել երգչիս կարեկից,
Լռի՛ր, աղբյուր... Արի, սիրուն,
Կույս կենսատու, կույս անբիծ:
Արի, լեզվիդ մեղմ հրապույր
Թող ամոքե վիշտս անանց
Եվ սիրատանջ կարոտ համբույր
Բուժե վերքս զգացմանց:

1891 սեպտեմբերի 24
Վաղարշապատ

(Հ-ՅԱՆԻ ԱԼԲՈՄՈՒՄ)
Նվեր...

Ես տեսնում եմ քո հոգեզմայլ
Զքնաղ դեմքը բազմահոգ,
Որի վերա վիշտը մռայլ,
Պսակել է լաց, մորմոք:
Թափանցում եմ քո կրակոտ
Կրծքի խորքը ըղձալի,
Ուր կա տանջանք, կիրք ու կա<րոտ>,
Ուր կա և կյանք ցանկալի:
Եվ ջերմությամբ քեզ սիրում եմ,
Ոգևորված իդեալով,
Անմխիթար սրտումս արդեն
Զգում եմ սեր, սուրբ գորով:

1891 հոկտեմբերի 4
Վաղարշապատ

* * *

Արևն հանգչեց իր մոր գրկում,
Վարդը ծածկեց ալ բողբոջ,
Գեղջուկ կույսը շտապեց տուն,
Լռեց աղբյուրն իր խոխոջ.
Ժիր մշակը հոգնած մարմնին
Տվեց հանգիստ անխափան,
Աղքատ որբը պատի տակին
Հոգսը մատնեց մոռացման:
Նիրհեց գազան, ճուկն ու թռչուն,
Լուռ մրափեց ահեղ ծով,
Քնո հրեշտակ ողջ բնության
Դյութեց անուշ օրորով:
-Բայց ինչո՞ւ է ջերմ արցունքս
Այրում այտերս ու ցողում,
Եվ հուզվելով ջարդված կուրծքս՝
Քունն աչերս չի փարում:

1891 հոկտեմբերի 7
Վաղարշապատ

ՕՐԱԳԻՐ...

Որպես երազ նազելաշուք,
Որպես անուրջ և ցնորք,
Քեզ, ով սիրուն, անմեղ մանուկ,
Ես սիրեցի վաղ՝օրոք:
Ես ուզեցա քո աչերում
Տեսնել արցունք գեղեցիկ
Եվ քո անբիծ սրբարանում
Հրդեհն սիրույն անդրանիկ:
Ես խաբվեցա. անկարեկիր
Սրտումդ անհոգ՝ ցուրտ ու սառ
Չի մաքառում այն երկնակիր
Փոթորիկը սիրավառ.
Բայց ես դարձյալ քեզ սիրում եմ
Վեհ հավատով լուսավառ,
Հուսալով, որ սիրո եղեմ
Կպատրաստես ինձ համար:

1891 հոկտեմբերի 10
Վաղարշապատ

* * *

«Մենք ապրում ենք հույսով»:

Գյոթե

Երբ մանգաղը դառն օրհասի
Շտապում <է> քաղելու
Կյանքիս վարձը ոսկեծղի.
-Դեռ հույս ունիմ ծաղկելու:
Երբ խեղդվում եմ ալեծածան
Վեր օվկիանում չարահույզ
Եվ իմ արևն՝ մոտ խավարման.
-Դեռ ծագելու ունիմ հույս:
Երբ ինկած եմ ես վիրավոր
Ռազմի դաշտում, քուն խորին
Կուզե տիրել իմ սիրտն անդորր.
-Դեռ կռվելու հույս ունիմ:
Եվ ո՞վ կուզե լսել բողոք
Կույսի խոստում և տագնապ,
Քանի որ սև մահն անողոք
Կուզե գերել ինձ շտապ:
- Տեսա՞ր արդյոք՝ ի՞նչ է հույսը
Պատրանք, ցնորք խաբուսիկ,
Համբերության աղոտ լույսը
Մեր զգացմանց նենգ դատրիկ.
Սակայն հուսա՛, նազելի կո՛ւյս,
Հույսն է կյանքի ստնտուն.
Հույսն է տալիս մեզ խրախույս
Մեզ եռանդ, սեր շողշողուն:
Դեպ մաքառման գոռ ասպարեզ
Լարված ուժով կռվելու,
Դեպ տանջանքի ունայն հանդես
Աննպատակ ապրելու:

1891 հոկտեմբերի 11
Վաղարշապատ

* * *

«Զիս ի քոյ մտաց
Մի արկցես ի բաց...»

Ես գնում եմ... Թող արցունքով
Դառն անջատման, սիրուն կույս,
Ցողեմ կուրծքդ՝ ներշնչելով
Անթառամ սեր, պայծառ հույս:
Ա՛ռ հիշատակ այս վարդենի
Զվարթ փունջը հոգեզմայլ.
Որ բուսցրել եմ իմ աչերի
Գոհարներով մաքրափայլ:
Ես գնում եմ... Հայրենիքի
Պարտքն է մղում ինձ սիրով
Մահվան հանդես, ուր կա փառքի
Պսակ՝ ցողված արյունով:
Մնաս բարև, իմ սևաչյա,
Բայց չմոռնաս քո երդչին.
Գուցե արյան դաշտում ընկա՝
Իմ վեհ կոչման մտերիմ:
Սակայն հիշիր, հիշիր անվերջ,
Ինձ համար լաց անդադրում,
Միշտ վառ պահիր իմ սերն անշեջ
Եվ հիշատակն քո սրտում:

1891 հոկտեմբերի 11
Վաղարշապատ

ՕՐԱԳԻՐ

Ես աղոթում եմ... Եվ իմ աչերից
Գլորվում են ցած զղջման արցունքներ.
Եվ իմ վրդովված դալկահար դեմքից
Ջքանում է մի հուսահատ ստվեր:

Ոգևորվում եմ հույսի բուրմունքով,
Երկնային ժպիտ ծաղկում է դեմքիս,
Ուզում եմ ապրել, ապրել անխռով՝
Խաբված դիմակից աշխարհի անմիտ:

Եվ ես դրոշը փայլուն հավատով
Պարզում եմ կյանքի մրրկի դիմաց,
Որքա՜ն տանջվում եմ, որքա՜ն ինքնագով
Թռիչք եմ գործում կորստյան առաջ:

Ես ընկա՛... ի՜նչ փույթ. դուք դեռ ապրում եք
Նույն վառ հավատով... և ի՜նչ անտարբեր
Դառն ոչնչության լռիկ նայում եք
Խավար անդունդը անհուն, անեզր:

1891 հոկտեմբերի 18
Վաղարշապատ

* * *

Քեզ չեմ ճոնում, քո՛ւյր - իմ ընկեր,
Ոսկի, գոհար մեծագանձ,
Միայն երգչիս քնարն ավեր,
Լաց ու մրմունջ զգացմանց,
Որ թախծությանդ մռայլ ժամին
Թերթես կյանքիս տրտունջներ,
Որ արցունքով կողկողագին
Բուժես սրտիս բյուր վշտեր:

<1891 հոկտեմբերի 18
Վաղարշապատ>

ՕՐԱԳԻՐ...

Քեզ պիտ սիրեմ, կո՛ւյս աննման,
Բայց իմ սերը քեզ համար
Չէ վառ աղբյուր երջանկության
Եվ հրճվանքի սիրափար:
Դու իմ սիրո պտուղներից
Պիտ ճաշակես միմիայն՝
Արցունք, զրկանք, վիշտ ու թախիծ
Եվ պիտ ողբաս լռելյայն:
-Ա՛խ, ինձ սիրի՛ր, թերևս սրտիս
Գոհարներից անհամար
Գոնե մեկը միայն գտնիս
Վշտոտ սրտիդ մխիթար:
Բայց զգաստ կա՛ց. կյանքի ահեղ
Փոթորիկը ահռելի
Գուցե կրծքումդ շուշանագեղ
Թափե թույնը կասկածի...
Տե՛ս, չխաբվի՛ս, նույն հաստատուն,
Նույն անարատ հավատով
Սիրիր կյանքի դժգոհ որդուն,
Որ ապրում է տանջանքով:

1891 հոկտեմբերի 19
Վաղարշապատ

* * *

Դարձյալ արցունք սրտիս խորքից
Ցոլաց իմ հեզ աչերում,
Դարձյալ կրծքիս բեկորներից
Հեկեկանք է դուրս թռչում:

Սակայն, քուրիկ, իզո՛ւր տանջանք.
Դու չես կարող իմ անհույս
Ջարդված սրտին տալ սփոփանք
Եվ հարության ցող ու լույս:

Ինձ համար չեն երջանկության
Վառ ժամերը զգվասեր,
Վիշտն է օժիտ ինձ հավիտյան,
Վիշտ մրմնջում սիրտս ավեր:

Ո՛չ, նազելիս, ես չեմ ուզում
Հանգիստ գտնել քո կրծքին,
Միայն շիրմում, մռայլ շիրմում...
-Ահա՛ օրրան իմ մարմնին:

1891 հոկտեմբերի 20
Վաղարշապատ

* * *

I

Օրհնյա՛լ գիշեր... Փետրի նման
Մեր մակույկը երերուն
Ծփծփում էր ալեծածան
Զքնաղագեղ լճակում:

Ուր զգվանքը կոհակների,
Համբուրելով մակույկին,
Դարձած որպես գոհար փոշի,
Որպես շիթեր թարմագին

Ցողում էին հրահոսուն
Այրվող կուրծքը սիրանուշ
Եվ սիրուհուս մեղմածածան
Փունջ-ծամերը գեղահյուս...

Ուր աստղերը որպես ծաղկունք
Փթթում էին ու ժպտում,
Եվ [խանդակաթ] սուրբ զգացմունք
Վառում սերը իմ սրտում:

Եվ հիշո՞ւմ ես, անգին ընկե՛ր,
Ինչ երգերով թախծալի
Քեզ հայտնեցի երջանկաբեր
Մաքուր սերը իմ սրտի:

Ա՛խ, հիշո՞ւմ ես, որ անվախճան
Սիրել երգչիս երդվար,
Դեռ զգում եմ առհավատչյան
Մանուկ սիրույդ բոցավառ:

II

Դիմակն այրվեց... խաբված սիրտ
Վերջալույսը թրթռուն
Հանգչեց իսպառ այս երեկո...
Հոգուս խավար է տիրում:

Օ՛, ջինջ լճակ, իմ անցավոր
Թշվառ սիրույս լուռ վկա,
Բացի՛ր գիրկդ, իմ վշտահար
Սիրտն ու հոգին քեզ ընծա:

Շո՛ւտ. տանջված, հոգնած մարմնիս
Հանգստություն անվրդով...
Նենգ սիրուհուս տո՛ւր ավետիս,
Որ թոշնեցա ես չուտով:

Կանցնին օրեր... ինձ կմոռնաս,
Ո՛վ կույս սրտիս սիրակեզ.
Նոր սիրեկնիդ հետ հանապազ
Պերճ լճակը կայցելես...

Եվ ի՞նչ. գուցե մի օր իմ դին,
Քո կարոտով տոչորված,
Դիպչեր շքեղ ձեր մակույկին,
Ա՛խ, չսարսիս, իմ սիրած...

Միայն այս անգամ, վերջին անգամ
Դու կարեկցի՛ր իմ վերա,
Լա՛ց, արտասվի՛ր. և հավիտյան
Քեզ կներեմ, հավատա՛:

1891 հոկտեմբերի 23
Վաղարշապատ

* * *

Լռիր, քնար... Քո լարերից
Այսուհետև չլսեմ
Գարուն, սոխակ, վարդ բուրալից,
Սեր ու վայելք, վառ եղեմ:

Ես չեմ ուզում կյանքի
Արյունաներկ արշալույս.
Գրավչություն նենգ աշխարհի...
Կուզիմ տանջանք իմ հոգույս...

Կուզիմ այրող արցունք,
Լքյալ սրտի հառաչներ,
Կուզիմ զրկանք, հուզմունք,
Վիշտ ու կսկիծ մահաբեր:

1891 հոկտեմբերի 24
Ղազարապատ

ՓՈՔՐԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(†1891. հուլիսի 12)

Ա՜խ, ա՛յս վարդը նորափթիթ
Միջօրեին մայիսյան
Ցողերի հետ կյանքի ժպիտ
Տվեց տոթին հավիտյան:

Նույնպես և դու արշալույսին,
Բերկրազվարճ իմ մանկիկ,
Անմեղ հոգիդ հրեշտակին
Տվիր նվեր սիրունիկ:

Երանի քեզ, չքնա՛ղ մանուկ,
Որ չտեսար վիշտ ու լաց...
Ես ապրում եմ, [տե՛ս] ի՜նչ ծերուկ...
Ի՜նչ տանջանքի մատնված...

1891 հոկտեմբերի 26
Վաղարշապատ

ՕՐԱԳԻՐ...

Ես լսեցի մի երգ ուրախ,
Զվարթ սրտի արձագանք,
Գողտրիկ նվագ, ուր խինդ, ծիծաղ
Ծաղկում էին սեր, գգվանք:

5 Այս երգն անուշ, կախարդական
Վառեց խանդը իմ սրտի
Հեգ կրծքիցս, և այս անգամ
Ցայտեց թոթվանք բերկրանքի:

Ա՛խ, հիշում եմ, կար ոսկեդար,
10 Որ ես անվիշտ, ես անհոգ,
Երգում էի երգ սիրավառ,
Երգ անտրտունջ, անմորմոք:

1891 հոկտեմբերի 26
Վաղարշապատ

* * *

Ես հյուսեցի քո անունով
Մանուկ սիրո բյուր երգեր
Եվ իմ տենչի արցունքներով
Բուսցրի չքնաղ ծաղիկներ:

5 Ես բերեցի սեր հուսալով,
Երգս ու փունջս քեզ նվեր.
Բայց դու, անգութ, անկեղծ սրտով
Ջեղար հավերժ ինձ ընկեր:

Ես տանջվեցի դաժան վշտից,
10 Անհույս, անսեր ապրեցա,
Բայց դու դարձյալ անկարեկից,
Դարձյալ անփույթ, անզգա:

1891 հոկտեմբերի 31
Վաղարշապատ

* * *

Հորձուտ գետի դալար ափում
Մատաղ ուռին լալիս էր
Եվ ապահով հանգիստ հայցում
Վես փոթորկից անվեհեր:

5 Եվ ես, ո՛վ կույս, տես, առաջիդ
Ծունր դրած խնդրում եմ
Գթոտ հայացք, քաղցր ժպիտ,
Սիրո գարուն, կյանք, եղեմ:

1891 հոկտեմբերի 31
Վաղարշապատ

* * *

Խեղճ ծաղիկը ժայռի կրծքին,
Վառ արևից տոչորված,
Աչերն հառել դեպի երկնին,
Խնդրում շիթեր արտասվաց:

5 Նաև սիրտըս, այրված վշտի
Գոռ հրդեհից բոցավառ,
Աղերսում է, իմ նազելի՛,
Սիրույդ արցունքն հովարար:

1891 հոկտեմբերի 31
Վաղարշապատ

ՕՐԱԳԻՐ...

Ես հիվանդ եմ, սիրուն մանուկ,
Ես հեծում եմ դառնագին,
Որպես ծաղիկ՝ ես վաղանցուկ,
Ավա՜ղ, պիտի թառամիմ:

5 Արի՛, հոգյա՛կ, ճոխ արցունքով
Թացի՛ր կուրծքս վշտահար,
Համբույր վերջին սիրագորով
Տո՛ւր ինձ՝ վարդիս դալկահար:

Տե՛ս, չմոռնաս այց ելնելու
10 Տխուր շիրմիս, [իմ քու]րի՛կ,
Եվ կրծքիս տեղը ցողելու
Մամուռներս գեղեցիկ:

1891 նոյեմբերի 1
Վարդեսի ավան

* * *

Մի՛ կաշառվիր, մանուկ սիրուն,
Պատիր կյանքի կեղծ փայլից,
Օ՜, մի՛ հուսալ երջանկություն
Գտնել նրա գգվանքից:

5 Վարդը անուշ, վարդը չքնաղ,
Ա՜խ, տես՝ կրծքում ալվալա
Որդն է գեռում, փուշը խարդախ
Ձեռքդ ծակում անխնա:

Կյանքը չքեղ ունի ծրար.
10 Պատռի՛ր և տե՛ս. ի՞նչ զարմանք,
Նա վիշտ, տանջանք է մեզ համար,
Նա արտասուք, նա զրկանք:

Կգա խավար, մռայլ գիշեր,
Շուրջդ անկյանք, ավերակ,
15 Կգա օրհաս, տաղտուկ ձմեռ,
Կթառամին վարդ-սոխակ:

Կգա օրը, տխուր վախճան,
Ոչնչություն ամեն տեղ,
Եվ կլռեն, ա՜խ, հավիտյան
20 Սերն ու լույսը հզորեղ:

1891 նոյեմբերի 7
Վաղարշապատ

* * *

Վրդովմունքի պղտոր ծովում
Ծլփծլփում է սիրտս ավեր.
Հոգու թուլմունք, խղճի խայթում.
Տանջում է ինձ մի ստվեր...

Ցայտի՛ր, արցո՛ւնք, ծփփանքիդ հետ
Թող հեգ սիրտս դուրս ցատկե,
Թող հայացքս նսեմանա,
Հեռո՛ւ, ստվեր, սև ստվեր:

Ցողի՛ր արցունք կուրծքս ցաված,
Թո՛ղ զովանա նա այսպես...
Ինչ հանգիստ եմ, ինչ խաղաղած,
Ա՛խ, արտասունք, ինչ քաղցր ես...

1891 նոյեմբերի 11
Վաղարշապատ

ԸՆԿԵՐԻՆ

Ես լալիս եմ, ես հեծեծում
Ինչ տանջանքի անձնատուր,
Ես անհույս եմ, հույս չեմ ուզում,
Ա՛խ, ընկեր իմ, ո՞ւր ես, ո՞ւր:

Արի՛, ցողի՛ր տանջված կուրծքս
Ջինջ ու անուշ արցունքով,
Թող շողշողա մանուկ կյանքս՝
Մխիթարված քո սիրով:

1891 նոյեմբերի 11
Վաղարշապատ

ՕՐԱԳԻՐ...

Կամ տո՛ւր, ընկե՛ր, սուրը փայլուն,
Կուրծքս պատռեմ կարեվեր,
Որ արյունս հոսե անհուն,
Ցողե մեղսոտ կուրծքս ավեր:

Թո՛ղ նա հոսե, թո՛ղ նա ցողե,
Գուցե նորա հորդառատ,
Վառ չիթերը սիրտս մաքրե,
Սրբե բծերն ու արատ:

Կամ, ընկե՛ր իմ, տո՛ւր ինձ հզոր
Հավատ ու հույս, սեր, զորով.
Տո՛ւր, որ տեսնեմ կյանքն ախտավոր
Ես անքնին աչերով:

Լինի խավա՛ր, անվերջ խավա՛ր,
Որ նրանում խարխափենք,
Որ մենք կեղծենք, զրկենք իրար,
Բռնաբարենք, սպանենք:

1891 նոյեմբերի 15
Վաղարշապատ

ՕՐԱԳԻՐ...

Ինձ մի՛ սիրիր, անմե՛ղ մանկիկ,
Ես քո սիրուն չեմ արժան,
Դու մաքուր ես, դու գեղեցիկ,
Ա՜խ, ես կրքոտ, ես դաժան:
Ինձ կարեկցիր, սիրո՛ւն մանուկ,
Ես լալիս եմ, ես զղջում,
Ես թշվառ եմ, ա՜խ, ես ստրուկ
Գարշ կրքերին անպատում:
Ինձ մի՛ սիրիր, ես արժան չեմ,
Բայց թո՛ղ ազնիվ ուժերով
Քեզ, ով անբիծ ոգի վսեմ,
Սիրեմ պայծառ հավատով:

1891 նոյեմբերի 15
Վաղարշապատ

* * *

Լուռ գիշեր է, օդը մաքուր,
Շուրջդ խաղաղ ու անդորր,
Ջինջ եթերում աստղն ու եղջյուր
Տալիս երկրին քուն, օրոր:

5 Եվ նիրհում է ողջ բնություն,
Ծով ու ցամաք ընդգրկած,
Ջարն ու բարին մտած խոր քուն,
Վիշտն ու ոճիր մոռացած:

Բայց տե՛ս, ընկե՛ր, սիրո՛ւն ընկեր,
10 Հեռու ժայռի կատարին
Երերում է նսեմ ստվեր...
Ո՞վ է մռայլ այդ ոգին...

Նա ծնկաչոք, բազկատարած
Աչերն հառել դեպ այնտեղ,
15 Ուր ոգիները սրբակյաց
Ներշնչում են սեր անմեղ:

Նա լալիս է, և արցունքը,
Դառն արցունքը մեղքերի,
Որպես կայծեր այրում կուրծքը
20 Եվ մամուռը ծեր ժայռի:

Նա լալիս է, խղճի խայթում
Տանջում սիրտը բազմամեղ.
Կյանքի գնով երկնից հայցում
Ձղջո՛ւմ, ղղջո՛ւմ հզորեղ:

25 «Մնաք բարև, արև, գարուն», -
Մրմնջում էր նա այսպես...

«Մնաք բարև, երջանկություն,
Սիրո հրեշտակ քաղցրակեզ»:

Նա հեծկլտում, աղոթում է
30 Այնպես տխուր, վշտահար...
Ա՜խ, սիրելի՛ս, ա՜խ, նա մի՞թե
Կյանք չէ ուզում իր համար:

«Ես չեմ կարող սեր ճաշակել,
Սերը սուրբ է ու մաքուր,
35 Ես՝ պժգալի, չար առավել
Գարշ կրքերի անձնատուր:

Շունչս զազիր, նա թունալից,
Նա ժանտախտ է վարակող,
Կույսն անարատ, կույսը անբիծ,
40 Ա՜խ... ես սիրել չեմ կարող:

Ինձ մի՛ խղճաք, մի՛ կարեկցեք,
Ինձ մի՛ հիշիր, իմ ընկեր,
Ես թո՛ղ կորչեմ, ջնջվեմ երնեկ,
Մնաք բարև, կյանք և սեր...»

45 Ձորը թնդաց, սուլեց քամին,
Կանգնած է ժայռն իր տեղում,
Էլ չի ճնշում նորան ոգին,
Դարձյալ կախարդ լռություն:

Լուռ գիշեր է, օդը մաքուր,
50 Շուրջդ խաղաղ ու անդորր...

1891 նոյեմբերի 16
Վաղարշապատ

ՄԱՐԴԿԱՆՑ
ՕՐԱԳԻՐ...

Ես տանջվում եմ, ես վշտակոծ,
Գեթ կարեկցեք ինձ վերա,
Սիրտս այրվում է որպես հնոց.
Ա՛խ, դուք սառույց, անզգա:

Ես լալիս եմ - իմ անսպառ
Արտասուքը վառվռուն,
Օ՛, չար մարդիկ, նա ձեզ համար
Սոսկ հաճույք է պատճառում:

Սիրտս ավերակ, սիրտս անապատ,
Ա՛խ, ինձ տվեք պաշտելու
Մի սուրբ, անբիծ, մի անարատ
Հոգի վսեմ, կենսատու:

Տվեք հավատ, հզոր հավատ՝
Ծով ու ցամաք տիրելու:
Տվեք կամք, սեր, հույս անվհատ,
Ինձ իրավունք՝ ապրելու:

1891 նոյեմբերի 17
<Վաղարշապատ>

ՕՐԱԳԻՐ...

Անմխիթար, անհույս սրտիս
Նուրբ լարերին տխրաձայն,
Իմ նազելի, էլ չդիպչիս,
Թո՛ղ նա լռե հավիտյան:

Ես պիտ երգեմ այսուհետև
Մի նոր կյանքի արշալույս
Ես պիտ սիրեմ կյանքն հարատև,
Երջանկություն, խինդ հոգույս:

Այս ցնորք էր. ես նույն թշվառ,
Նույն անբախտն եմ հալածված.
Նույն հուսահատ, նույն վշտահար
Կյանքի ստրուկն անձնուրաց:

1891 նոյեմբերի 17
Վաղարշապատ

* * *

[Դաշտը չքե՛ղ ու ոսկեգեղ,
Դաշտն ոսկեզօծ, ծփծփուն
Խոստանում է քրտնքի տեղ
Արդար վաստակ գյուղացուն:

Սիրտս մաքուր, սիրտս ոսկեհույս,
Սիրտս ըղձերով գեղեցիկ
Խոստանում է մատաղ հոգուս
Սիրո երգող փոթորիկ:]

1891 նոյեմբեր
Ս. Էջմիածին

* * *

Մեռած սիրո շիրմի քարը,
Ա՜խ, շատ ծանր է, նազելի՛,
Վերցնես երնեկ, ես չեմ ուզում
Մեռած սերս ճնշվի:

Թո՛ղ վշտերը [մարած կյանքիս]
Ծաղկին նորա փոխարեն.
[Որպես] վարդեր գրկեն շիրմիս
Հողաթումբը տխրաղեմ:

Թո՛ղ վարդերը չհրապուրեն
Սիրակարոտ սոխակին,
Զէ՞ որ միայն քեզ համար են,
Վշտատոչոր ընկեր իմ:

Որ լուսնյակի շողերի հետ
Տխուր շիրիմս այցելես,
Որ զեփյուռի գգվանքի հետ
Իմ վարդերը սփոփես:

Որ վաղորդյան ցողերի տեղ
Փայլեն նրանց թերթերում
Քո արցունքը՝ որպես բյուրեղ,
Որպես անձրև հովասուն:

1891 դեկտեմբերի 1
Ս. Էջմիածին

* * *

Ա՛խ, ընկեր իմ, ի՞նչ ես պտրում
Իմ անապատ կրծքի տակ.
Սիրո եղե՞մ, բախտի գարո՞ւն,
Թե՞ գոյության հաղթանակ:

5 Ասա՛, արդյոք ե՞րբ ես տեսել
Փչի սրտում գոհարներ.
Ա՛խ, նազելիս, ե՞րբ ես լսել
Ագռավներից նվագներ:

Հանգիստ թո՛ղ իմ հիվանդ կուրծքը,
10 Ուր որ միայն պիտ գտնիս
Ցնորքներիս սառն աճյունը,
Բեկորները հույսերիս:

1891 դեկտեմբերի 3
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ...

Ա՛խ, վաղուց է՝ իմ քնարը
Բողոք, անեծք չէ երգել,
Սիրած կույսիս աչերիցը
Վշտի վարդեր չէ քաղել:

5 Ինձ ի՞նչ միթե: Ծով ու ցամաք
Թող բռնկվեն, որոտան.
Ես թշվառ եմ, ես՝ միայնակ,
Սիրտս՝ մռայլ գերեզման:

Ա՛խ, դիցուհի, տե՛ս, հանգչում է
10 Մատաղ սրտիս բուրվառը...
Թալուկ կայծեր... Օ՛... մի բոպե.
Ահա՛ և ձեր աճյունը:

Գիտե՞ս արդյոք, որ զեփյուռից
Թույլ կայծերը կարթնանան...
15 Դե՛, շնչի՛ր իմ կրծքում նորից,
Ո՛վ կույս, շունչդ կենսական:

1891 դեկտեմբերի 8
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ...

Իմ արցունքների կաթիլը մաքուր
Փայլում է, ընկեր, դագաղիդ վրա...
Նա քեզ չի ճնշե, թեև նա տխուր,
Սակայն կգգվե կուրծքդ անզգա:

Ո՛չ, նա կծծվի կրծքիդ խորշերում,
Կայցելե սրտիդ վայրը խղճալի...
Ուր նա կցողե վարդերը դժգույն
Խորտակված հույսի, սիրո և վշտի:

Եվ ես կքաղեմ, կհյուսեմ պսակ,
Նոցանով կուրծքդ պճնազարդելու,
Ա՜խ, նրանք դարձյալ որպես հաղթանակ
Քո նվիրական ցավագար հոգու

Կարթնանան, ընկեր: Նոքա անթառամ
Առհավատչյա են քո վեհ ըղձերին.
Օ՜, երգի՛ր, քնար, երգի՛ր հավիտյան
Սիրո, գեղեցկի անմահ դյուցազնին:

1891 դեկտեմբերի 13
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ...

Բոցակեզ հոգիս կյանքի խավարում
Մոռցավ շավիղը սրբազան լույսի.
-Ես միայնակ եմ, անհույս ու տրտում,
-Փչրվեց ջահը իմ վառ հույսերի:

Ես հառաչում եմ... վշտահար սրտիս
Խո՛ւլ հեկեկանքը ոչ ոք չի լսում.
Եվ մեղմ շիթերը ջերմ արցունքներիս,
Ազատ ցայտելով, ցնդում են օդում:

-Ահա՛ լսում եմ մի ձայն սիրասուն.
Ի՞նչ - մի՞թե լույսի ավետիք չէ սա...
Ես խրախուսված հառաջ եմ դիմում.
Եվ ի՞նչ է կյանքը - հույսերի շղթա:

1891 դեկտեմբերի 20
<Ս. Էջմիածին>

* * *

Լռի՛ր, երգի՛չ, քո մեղեդին՝
Որպես սլաք թունավոր,
Թափանցում է իմ տխրագին
Սրտիս խորքը վիրավոր:

Ես չեմ ուզում իմ հեգ սրտում
Նորից վառել սրբազան
Կայծը սիրո. ես չեմ ուզում
Կռիվ անմիտ գոյության

Թող խավարվի իմ շողշողուն
Արշալույսը լուսավառ.
Ես ուզում եմ ցնդվել օդում
Որպես հյուլե մի թշվառ:

1891 դեկտեմբերի 22
<Ս. Էջմիածին>

* * *

Երբ ես սլացած ոսկի եթերում
Տեսնում եմ բարձրից երկիրը նսեմ.
Սիրտս ճնշվում է, հոգիս տանջվում,
Եվ հուսահատված ես լուռ լալիս եմ:
Թո՛ղ արցունքներս աղբյուրներ լինին,
Հառաչին անվերջ դժգոհ մեղեդիք,
Մրմնջին անեծք, անեծք վշտագին
Թե՛ դեպի Աստված, կյանքը և մարդիկ:
Մարդիկ ստրուկ են չնչին կրքերի,
Հիմար ու տհաս, անգութ, եսասեր.
Կյանքը թռիչք է, նպատակ չունի...
Օ՛, դարձյա՛լ արցունք, դարձյա՛լ
կնճիռներ:

1891 դեկտեմբերի 26
<Ս. Էջմիածին>

ՕՐԱԳԻՐ...

Շուրջս խավար ու սառցածով,
Շուրջս ավեր ու քաոս.
Ես դիմում եմ վառ հավատով
Դեպի հեռուն այն փարոս:

Իմ դիմացը խոնարհվում են
Խոչընդոտներն ահավոր,
Ես հաղթեցի... հասա արդեն
Վառ փարոսին լուսավոր:

Ո՞ւր է փարոսն, ես տեսնում եմ
Անուշ կույսի մի պատկեր՝
Ձեռքին բռնած մի աննսեմ,
Լուսաճաճանչ վառ լապտեր.

Ողջունեցի: Կույսը սիրուն
Շշնջում է ականջիս.
«Սիրիր, կյանքի անապատում
Սերն է միակ օազիս»:

1891 դեկտեմբերի 27
Ս. Էջմիածին

* * *

Արտասվի՛ր, հոգյա՛կ, ես էլ կարտասվիմ,
Թող մեր արցունքը, որպես ջինջ ցողեր,
Վերանա երկինք, ուր մարդկանց ոգին
Ծաղկում-շնչում է անմեղություն, սեր:
Եվ երկնից որպես անձրև մեզ վրա
Սրսկե շիթեր մխիթարության,
Հալածված զոհին, թշվառին հույս տա,
Նվիրե պսա՛կ-պսա՛կ անթառամ
Նրան, որ բախտը չէ ժպտել երբեք,
Նրան, որ կյանքը տանջանք է միայն:
Օ՜, թող նա, որպես կայծեր հրաշեկ,
Բռնկե հուրը սուրբ երանության:
Ա՜խ, մարդիկ չա՜տ են տանջվում անխնա,
Կարո՛տ են, կարո՛տ ջերմ սփոփանքի.
Արտասվինք, ընկե՛ր, և ինձ հավատա՛,
Որ զուր չի հոսե մեր գետն արցունքի:

1891
Ս. Էջմիածին

* * *

Աղոթի՛ր, հոգյա՛կ, քանի քո սրտում
Եռում է թույնը հուսահատության,
Աղոթի՛ր, քանի քո հեզ աչերում
Ցոլում են արցունք վշտի ու անկման:
Աղոթի՛ր անվերջ, գիշեր ու ցերեկ.
Ջարը կընկճվի - լույսը հաղթող է,
Աղոթի՛ր, այո՛, սիրտդ վշտաբեկ
Կյանքի մռայլը թերևս ցրվե:
«Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ» - Հավատա՛, հոգի՛ս,
Կյանքի դիմակը կայրես աղոթքով.
Եվ վառ գույներով կյանքը կտեսնիս,
Կուրծքդ կշնչե ապրելու տենչով:
Չէ՞ որ աղոթքն է հոգեզմայլություն
Սրբազան կյանքի, երկնային կյանքի...
-Ա՛խ, ինչո՞ւ կյանքը չէ արբեցումն
Մաքուր, անվրդով հիացմունքների:

1891
Ս. Էջմիածին

* * *

Ծփա՛, սի՛րտ իմ, հուզմունքների
Մրրիկներից անողոք,
Փչրի՛ր, ջարդի՛ր նեղլիկ կուրծքս -
Կուրծքս բանտ է ու դժոխք:
Պատռի՛ր կուրծքս, շուտ խորտակի՛ր
Կապանքները մահերգու,
Թռի՛ր, սի՛րտ իմ, եթերն անծիր,
Թռի՛ր հեռո՛ւ, շատ հեռո՛ւ:
Թռի՛ր այնտեղ, ուր լուսավառ
Բյուրեղներն են առկայծում,
Ուր կապուտակ շղարշ պայծառ
Գեղատարած սփռվում:
Թռի՛ր այնտեղ, ուր ոսկեծին
Հոգնած արևն է հանգչում,
Ուր ծիածանն - Աստծո գոտին,
Երկրի մեջքը շղթայում:
Թռի՛ր այնտեղ, ուր փրփրաղեզ
Վայրագ ծովն է մռնչում,
Ուր կատաղի ալիքները
Ժայռի կուրծքը լվանում:

1891
Ս. Էջմիածին

(ԱԼԲՈՄՈՒՄ)

Ես տեսնում եմ քո լուսափայլ
Զքնաղ դեմքը բազմահոգ,
Ուր վառ սիրո վիշտը մռայլ
Պսակել է լաց, մորմոք:
Թափանցում եմ քո կրակոտ
Կրծքի խորքը ըղձալի,
Ուր կա տանջանք, սեր ու կարոտ,
Ուր կա և կյանք ցանկալի:
-Եվ ջերմությամբ քեզ սիրում եմ,
Ոգևորված հույսերով.-
Անմխիթար սրտումս արդեն
Զգում եմ սեր, սուրբ գորով:

<1891-1892>

ՕՐԱԳԻՐ...

Դարձյալ «Նոր տարի»... Խորին կնճիռներ
Ահա դիզվեցան մռայլ ճակատիս...
Ո՞ւր է «Հին տարին»... Ասա՛, իմ ընկեր,
Ինչո՞ւ է տանջվում ծերունի հոգիս...

Մի՞թե տանջանքով պիտ հյուսեմ պսակ,
Պսա՛կ՝ նզովված կյանքի փշերից,
Պսա՛կ, որ լինի վշտիս հաղթանակ...
Ինչո՞ւ եմ ապրում... և ինչո՞ւ նորից

Ուզում եմ ապրել: Կուրծքս հեծում է...
Զքնաղ հույսերով էլ չի բաբախում,
Ցոլացե՛ք, արցո՛ւնք, արցո՛ւնք, դուք գոնե
Եղեք դեպ կյանքը անեծք չարաթույն...

Հեռացե՛ք, մտքե՛ր, օձե՛ր թունալի...
Հերիք է խայթեք կուրծքս վշտակեզ...
Շիջավ «Հին տարին»... Երնեկ, նազելի...
Առանց տանջանքի, ա՛խ, մարեմ և ես...

1892 Հունվարի 3
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ...

Նազելի ընկեր, խորագին ակոս
Թո՛ղ ձևակերպվի ճակատիս վրա,
Մաքրափայլ արցունք, արցունք հորդահոս
Թո՛ղ իմ աչերում փայլե ու ցոլա:
Այն խոր ակոսն է՝ մի չքնաղ հովիտ
Տխուր վշտերիս վառ ծաղիկների,
Ուր և արցունքս՝ որպես զվարթ շիթ
[Կայտառ] աղբյուրի, իմ թշվառ սրտի
Խորքերից բխած, ցողում է նոցա.
Թո՛ղ ցողե անվերջ... Նոքա վառ ծաղկունք
Կլինին պսակ, որ իբրև ընծա
Քեզ պիտի բերեմ՝ սիրո զգացմունք
Զարթեցնելու կրծքիդ եղեմում,
Եվ թո՛ղ, սիրուն կո՛ւյս, իմ սիրտն ու հոգին,
Իմ հույսն ու սերը՝ որպես սրբություն,
Քո սրբարանում հավիտյան ապրին...
Թո՛ղ, հոգյակ, ես քեզ սիրեմ ու տանջվիմ.
Կյանքը տանջանք է... թո՛ղ վշտի հովիտ,
Աչերի գոհար գոյանան կրկին,
Եվ թող ինձ գգվե միայն մռայլ վիշտ:

1892 հունվարի 8
Ս. Էջմիածին

* * *

Բախտի աստղը այս երեկո
Ժպտաց մռայլ ճակատիս,
Ես ուրախ եմ, այժմ սիրո,
Հույսի տաճար է հոգիս:

Բռնած կյանքի խաչն ու դրոշ,
Կուրծքս ազատ շնչելով՝
Ես դիմում եմ դեպի որոշ
Նավահանգիստս ապահով:

Ահա մրրի՛կ... իմ առագաստ,
Հաղթի՛ր ոգուն չարաբաստ,
Հառաչե՛, նա՛վ, բայց և ահա՛
Սցիլա ու Խարիբդա:

1892 հունվարի 12
Բլուր

[ՕՐԱԳԻՐ]

Գոնե մի թռիչք, և ահա՛ բախտի
Ահեղ օվկիանում ընկած եմ միայն,
Եվ ալիքները տանում են ինձի...
Հանդունդն թռիչք. գուցե՛ւ կորստյան:
Դե, մնաս բարև, ով անջատված սեր.
Ա՜խ, ես գնում եմ, ո՞ւր - այդ չգիտեմ.
Գոռ ուղիներից հարցրու, իմ ընկեր,
-Դեպի ցուրտ հյուսիս՝ երկիր տխրադեմ:
Հյուսիս, ուր արևն հանգչում է շուտով,
Ուր արշալույսը գունատ ու հիվանդ
Դողդոջում է սոսկ... ա՜խ, ի՞նչ տագնապով
Մարում է հոգուս խանդը արգավանդ.
-Կսահեն տարիք, կգաս ցուրտ հյուսիս,
Կապույտ լճակի սիզավետ ափին,
Կանաչների տակ թաղված <կգտնիս>
Գետնին հավասար մի մոռցած շիրիմ:
Գիտցի՛ր, այն ես եմ, ես, որի հոգին
Քո սրտում ապրած՝ քեզ հույս է շիջում,
Որ անամպ երկրից քեզ հետ միասին
Թռչում է այստեղ՝ հանգստյան ծոցում:

1892 Հունվարի 14
Ս. Էջմիածին

* * *

Ի՞նչ է սիրտս - մի ապառաժ,
Մի տարտարոս սոսկալի,
Օձ ու կարիճ, ահեղ վարազ
Վխտում այնտեղ ամեհի:

Ո՞ւր սրբազան ոսկի եթեր,
Վեհ մտքերիս վառ ծաղկունք,
Ո՞ւր ըղձերիս բյուրեղ աստղեր,
Մաքուր սրտիս բուռն հուզմունք...

Մի՞թե հանգավ սիրո զգացմունք,
Խանդ ու ավյուն ու եռա՜նդ,
Մի՞թե ցամքավ այրող արցունք,
Ո՞ւր վիշտ. տանջանք երկնավանդ:

Կյանքի թույն ու սառնամանիք
Սիրտս դարձրին ավերակ...
Ես հաղթեցի: Օ՛... մի թռիչք,
Ահա անդունդն անհատակ:

Նորից արև. կյանքը չքեղ
Ողջունում է ձեզ, մարդիկ...
Դուք էլ սառաք, դուք էլ այստեղ.
Նզովք կյանքը խաբուսիկ:

1892 Հունվարի 17
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ

Զէ՛, ես չեմ ժպտում, իմ ժպտից մինչդեռ
Մի դժգոհության կայծ է փլփլում.
Կյանքը ժպիտ չէ՛, հավատա՛, ընկեր.
Սուտ է. թող մարդի՛կ, մարդի՛կ զվարթուն
Պերճ ծիածանի չքնաղ գույներով
Կյանքն էլ տեսնեն - դարձյալ ապարդյուն:
Նայի՛ր, ի՞նչ մշուշ, մռայլ, սառցածով,
Անապատի մեջ ի՞նչ զազիր հեշտանք
Անձնատուր են լոկ շնչել անխռով...
Ապիրատ մարդի՛կ, մի՞թե չեք կարող
Լա՛լ և աղոթե՛լ, կռվե՛լ և տանջվե՛լ
Ոգևորության բարձր սավառնող
Թևերի վրա, ասացեք, սակայն,
Գոնե չե՞ք կարող գաղափարների
Մաքուր հոսանքում կորչել հավիտյան:

1892 հունվարի 18
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ...

Դու գիտե՞ս արդյո՛ք, թե հոգիս որքա՜ն
Այժմ տոգորվում է անկեղծ սիրով
Դեպ մարդկությունը - այդ թշվառական
Լքյալ սերունդը. ա՜խ, որքա՜ն գորով
Տածում եմ մարդկանց. մի՞թե, նազելիս,
Մխիթարանքի կարոտ մարդկության
Վշտերի համար թաքցրած չունիս
Սփոփանքի ձայն, աչերի ծորան:
Ինչքա՜ն էլ լինին մարդիկ դև-դահիճ,
Ջար ու զզվելի, օ՜, սիրիր նրանց:
Կգա ժամանակ, պժգալի ճահիճ
Չի լինի կյանքը, գեղեցիկ մարդկանց
Վսեմ գործերով ծլած-զարդարված
Կլինի աշխարհն. չէ՛, սիրի՛ր մարդկանց՝
Ապագա լույսի փայլով շլացած...
-Մարդիկ կարոտ են սիրո զգացմանց:

1892
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ...

Ուզում եմ երգել, բայց ո՛չ վառ երկինք,
Նազելի գեփյուռ, պայծառ արշալույս.
Ո՛չ արդար վաստակ, հորդահոս քրտինք,
Ո՛չ սրտի հուզմունք, տանջանք, սեր և հույս:

Զէ՞ որ իմ երգը՝ որպես մի դաժան,
Զարահույզ մրրիկ, պիտ չորացնե
Վարդի բողբոջը, կուսի սիրարժան
Անմեղ ժպիտը... Թողեք, որ գոնե
Աղոթեմ, բայց ո՞ւմ. լռի՛ր, իմ քնա՛ր,
Քեզ չէ վիճակված ապրել այս կյանքում,
Լռիր, թող դժոխք լինի քեզ համար
Անմիտ աշխարհը, և սիրտս տրտում՝
Մռայլ գերեզման... Զէ. հավատացի՛ր
Կործանման ձայնին - կա ոչնչություն...
Կա ավեր, անշեն վիճակ երկնածիր...
Եվ ի՞նչ - դա է մեր սոսկ երջանկություն:

1892 փետրվարի 4
Ս. Էջմիածին

ՆՎԵՐ

Ես չեմ ուզում, կո՛ւյս նազելի,
Դեմքիդ շողա վշտի ցող,
Մի՞թե զվարթ շատրվանի
Բյուրեղները չեն կարող

Որպես աստղեր փայլել անշեջ
Լուսապայծառ, վառ դեմքիդ.
Մի՛ լաց, հոգյակ, մի՛, որ անվերջ
Ժպիտ ծաղկի շրթունքիդ:

Սակայն, քուրի՛կ, թո՛ղ տանջվեմ ես,
Կուրծքս պատռեն հառաչներ...
Ես չեմ կարող ապրել այսպես,
Կյանքն է խարդախ մի ստվեր:

1892 փետրվարի 6
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ...

Դարձյա՛լ գարուն, բայց վշտահար
Սիրտս սառույց է անհուն...
Ա՜խ, ե՞րբ կհալչի, որ ջերմ գոհար
Փայլե իմ չոր աչերում:

5 Դարձյալ գարուն, վառ ծիածան
Շողաց լեռան գագաթին.
Բայց ի՞նչ, խորին կնճիռ միայն
Ակոս ձգեց իմ ճակտին:

Դարձյա՛լ գարուն, վարդը բացվեց
10 Կանաչազգեստ պուրակում,
Սակայն վիշտը՝ որպես մի ցեց,
Օ՜, ծաղկում է իմ սրտում:

Դարձյա՛լ գարուն, վարդի փեսան
Երգեց անուշ գեղգեղանք.
15 Դարձյա՛լ գարուն, անե՛ծք գարնան.
Կուրծքս պատռեց հառաչանք:

1892 փետրվարի 8
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ...

Պիտի աղոթեմ, հավատամ անվերջ,
Բայց ո՞ւմ, ասացեք, ե՞ս - ես չգիտեմ.
Ա՜խ... արցունքներիս ջերմ ծփանքի մեջ
Գոնե թո՛ղ հանգչի բոցը կասկածի...

5 Ասա՛, ո՞վ ահեղ մռայլը սփռեց,
Ո՞վ վառեց ջահը անհուն երկնքում,
Ո՞վ ծաղիկներին բույր ու գույն տվեց.
-Նա: «Ի՞նչ, մի՞թե Նա, Նա, որը չկա...»:

Տգետ մարդկություն, ինքնախաբության
10 Հիացմունքի մեջ որ արբեցած ես,
Օ՜, հիասթափվի՛ր, ուսի՛ր բնության
Գաղտնիքը խորին: Չկա հավատ, հույս...

1892 փետրվարի 20
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ...

Ոսկի արևը հիասքանչ գարնան
Անամպ երկնքից ժպտում է կարծես.
Կապույտ երկինքը մաքո՛ւր, անսահմա՛ն
Հոգեզմայլության բացում է հանդես:

Խոխոջ առուներ՝ կյանք առած նորից,
Բյուր նրվագներով ուշք են կախարդում.
Հոգեշունչ ներբող զվարթ սրտերից
Դեպ քեզ է թռչում, մայր մեր բնություն:

Բայց ես - ես լուռ եմ: Ինչո՞ւ իմ մշուշ,
Սառցապատ սրտում նորոգ հարության
Մի ցող չկաթեց... Ինչո՞ւ, թո՛ղ մի փուշ,
Այո՛, թեպետև հավիտենական
Զէության մատնող սիրտս չծակեց...
Կյանքը կնճիռ է... Մի՞թե չեմ լուծում...
Ես մոլորվում եմ. ես ցնորվեցա...
Ես կյանք չեմ ուզում, ես մահ չեմ ուզում...

1892 փետրվարի 22
Ս. Էջմիածին

ՕՐԱԳԻՐ...

Անմխիթար սիրտս, ո՛վ կույս,
Երբ բացում եմ քո առաջ,
Երբ տեսնում ես վերքս անբույժ,
Լսում իմ լացն ու հառաչ,
Քո աչերում, երնե՛կ երգչիս,
Վշտի ցողեր են շողում
Եվ արձագանքն հեծկլտանքիս
Սրտիդ խորքում մրմնջում:
Կարեկցությանդ կաթիլներից
Ամոքվում է իմ վիշտը.
Օրհնյալ լինի՛ս, քուրիկ անբիծ,
Որ բուժում ես իմ վերքը:
Եվ կրում եմ հուսադրությամբ
Ծանր խաչը իմ կյանքի,
Եվ լալիս եմ, ժպտում անամպ...
Կյանքը տանջանք թող լինի...

1892 փետրվարի 28
<Ս. Էջմիածին>

* * *

Բյուր հույսերով ես բերեցի
Մաքուր սիրտս քեզ նվեր,
Որ դու այնտեղ, կո՛ւյս սիրելի,
Վառես սիրո վառ լապտեր:

Ես լացեցի և արցունքով
Վարդի կուրծքը թացեցի,
Որ հեգ սրտիս նա բուրմունքով
Լինի զգվանք գեղանի:

Սակայն ի՜նչ ժանտ ճակատագիր
Վիճակվել էր թշվառիս...
Դո՛ւ, աչագեղ, դո՛ւ փչրեցիր
Մարգարիտը հույսերիս:

Դո՛ւ և տոթը. ա՜խ, նա, դաժան,
Զորցուց վարդիս նազանի,
Որ արցունքս քաղցրածորան
Ծծե ինքը զգվելի...

1892 փետրվարի 29
<Ս. Էջմիածին>

ՕՐԱԳԻՐ...

Որպես դժոխք աշխարհավեր
Ալեկոծվում է սիրտս,
Հուսատության վառ կայծակներ
Կիզում են սեգ աչերս:

Երջանկություն, սեր, հույս - երբե՜ք,
Երբե՜ք չկա ինձ համար.
Գոնե մի ցող... ո՛չ, վշտաբեկ
Սիրտս չունի մխիթար:

Վշտիս ընկեր, լսի՛ր գոնե
Հեգ կարապիդ խոլ երգը,
Մնաս բարև... ա՜խ, շատ ծանր է
Ցաված սրտիս խոր վերքը:

1892 փետրվարի 29
<Ս. Էջմիածին>

* * *

Քնո աշխարհում ես երազ տեսա.
Վարդն ինձ խոստացավ, երնեկ թշվառի՜ս.
Սեր, վայելք, հրճվանք, հանգիստ եղեմա.
Մի պայծառ ժպիտ ծաղկեց աչերիս:

5 Ես երազ տեսա. խաղաղ գիշեր էր,
Աստղերի ցոլքերն ասում են երգչիս.
«Բարձրացի՛ր եթերն, եղի՛ր մեզ ընկեր
Եվ կանմահանաս, հավիտյան կապրիս»:

Ես երազ տեսա. մութ արգելանում
10 Լսվում էր ծանր շղթայի շաչյուն...
Եղբա՛յրս էր այնտեղ... հեռացե՛ք, խոստմունք,
Չէ՛, ես սիրում եմ սուրբ ազատություն...

<1892 փետրվար
Ս. Էջմիածին>

ՕՐԱԳԻՐ...

Դու ի՞նչ գիտես, թե իմ սրտում
Ինչ կան պահված քեզ համար,
Այնտեղ արցունք, վիշտ ու տրտունջ,
Այնտեղ աստղեր անհամար:

5 Նա երկինք է առանց Աստծու,
Հա՛մ ցամաք է, հա՛մ օվկիան,
Այնտե՛ղ, ո՛վ կույս, դո՛ւ եղիր, դո՛ւ
Աստված անմահ հավիտյան:

-Ա՛խ, ի՞նչ, մի՞թե դու չես ուզում
10 Արցունք ու վիշտ - սիրո փունջ.
Հեռո՛ւ, թող նա՛ լինի անհուն
Դատարկություն, լաց, մրմունջ:

1892 մարտի 5
<Ս. Էջմիածին>

ՕՐԱԳԻՐ...

Զէ՛, չմոռնաս, Բեատրիչէ,
Իմ հառաչանք, իմ վշտեր,
Սակայն հիշի՛ր երգչիս՝ որպես
Մի ուրվական, մի ստվեր:

Մի ուրվական, որի գրկից
Շնչում էիր սեր-բուրմունք,
Մի թույլ ստվեր, որի սրտում
Քաղում էիր հույս-ծաղկունք:

Եվ ո՞վ գիտե - կանցնին օրեր,
Կգա գարուն ու շուշան,
Եվ կմոռնաս արցունք ու սեր,
Կգա ձմեռ ու բորան:

Կգա օրհաս, մեռի՛ր, ով կույս,
Խիղճդ տանջե քո հոգին,
Ես ապրում եմ - անսեր, անհույս.
Երգում, լալիս վշտագին:

1892 մարտի 11
<Ս. Էջմիածին>

* * *

Ես չեմ կասկածում: Մի՞թե կրծքիդ տակ
Ինձանից գաղտնի կա ուրիշ աշխարհ,
Ուր չթափառե իմ սիրատենչակ,
Նսեմ ստվերը: Հավատով պայծառ
Ես քեզ եմ սիրում, ընկեր սիրելի՛,
Ընկե՛ր, նայի՛ր ինձ... Օ՛, որքա՜ն մաքուր
Հայացք ու լճակ... Զէ, չեմ կասկածի...
-Սակայն ո՞վ գիտե, հանդարտիկ լերան
Կրծքում ինչե՞ր կան - դժո՛խք, բո՛վ և հո՛ւր.
Ասա՛. և ինչո՞ւ, ինչո՞ւ չես բանում
Սիրտդ իմ առաջ:
Զէ, դո՛ւ չգիտես,
Ի՞նչ է վիշտ, տանջանք... Ա՛խ, եթե՛, եթե՛
Դո՛ւ գիտենայիր, քուրիկ սիրակեզ,
Ինձ կսիրեիր - բայց էլի գոնե
Աչերի ծորան, քնարի մրմունջ
Կփարատեի՛ր - Զէ, չեմ կասկածում:

1892 ապրիլի 10
Ալեքսանդրապոլ

* * *

Ընկե՛ր, մի ասա՛ - մի՞թե կարող ես
Բռնանալ սրտիս - չսիրել երբեք.
Ա՛խ, չէ՛, վշտակիր սրտերի համար
Սերն է միմիայն աննենգ, մխիթար:
-Ինչո՞ւ չսիրել... օ՛, գիտե՞ս՝ արդյոք
Ինչ կա կուսական անմեղ հայացքում -
Երկնային ցողե՛ր, ցողե՛ր, որ միայն
Կայծեր են հույսի, ոգևորության:
Լռած քնարին ո՞վ կուտա լեզու,
Խորտակված կրծքին՝ ոսկեզօծ սյուներ:
-Նա՛, որի համար խաչ են բարձրանում.
Ասա՛, նազելիս, սա չէ՞ սրբություն,
Էլ ի՞նչ կա կյանքում սրանից վսեմ.
Չէ՛, պետք է սիրել - և ես սիրում եմ:

1892 ապրիլի 12
Ալեքսանդրապոլ

* * *

Տաղտուկ ցնորքներ, ի՞նչ եք խռնվում
Հոգնած գլխումս. մի՞թե կարող եք
Կաշկանդել միտքս - նորեն երկնքում
Լցնել աստվածներ:- Չեք կարող երբեք:

Երկինքն ինձ համար դատարկ է արդեն,
Սրտիս պես մռայլ, տխուր անապատ,
Մի՞թե կարող եք սրտումս նորեն
Վառել, բորբոքել աննկուն հավատ:

-Ես տանջվում եմ. ես ի՞նչ եմ ուզում-
Ապրե՞լ, թե՞ մեռնել... ախր գիտեմ ես,
Կուրծքս հեծում է, կուրծքս խորտակվում,
Ես կյանք չեմ ուզում, ես մահ չեմ ուզում:

1892 մայիսի 16
Ալեքսանդրապոլ

* * *

Քանի կասկածը դեռ չէ վարակել
Սրբազան սիրո շիթերից ցողված
Կուսական խորշը խորտակված սրտիս,
Ես երջանիկ եմ - Զէ՞ որ համակված
Բռնակալ վշտից՝ իմ սիրտն ու հոգին
Դեռ վառ հավատով կարող է սիրել
Քեզ, իմ մխիթար ընկեր անմեկին:
Քանի աչերումս այրող արցունքներ
Կարող են ջնջել անխիղճ կասկածի
Ավերիչ թույնը, քանի անստվեր
Զքնաղ ցնորքներ մեր կյանքը ունի,
Ես քեզ կսիրեմ. թո՛ղ տանջանք, հուզմունք
Բռնանան սրտիս - ես քեզ կսիրեմ:

1892 մայիսի 16
Ալեքսանդրապոլ

* * *

Հոգուս լարերը էլ չեն մրմնջում
Հուսափայլ սիրո չքնաղ մեղեդիք,
Բոցավառ աչերս էլ չեն դուրս ցայտում
Բուռն հուզմունքների շանթ ու արհավիրք:

Սրտիս վաղեմի փայփայած պատկերն
Որպես օդեղեն ամրոց չքացավ.
Մո՛տ է վերջալույս. դողդոջուն ստվերն
Դառնաշունչ մահվան շուրջս փռվեցավ:

Երկինքն աստղերով մթնեցավ գլխիս,
Եվ որպես փոշի՝ դժբախտ անունս
Երկրից ջնջվեցավ -Ա՛խ, դարդե՛ր, ցավե՛ր,
Արդյոք ինձ հանգիստ չե՞ք տա շիրմումս:

1892 մայիսի 17
Ալեքսանդրապոլ

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՐՈՒՄ
(X<ի> պատկերի դիմաց)

Ինձ չճանչեցի՛ր, ընկեր նազելի,
Իմ մաքուր սերը անհոգ դիմակով
Քեզ ողջունելիս մատնեցիր ծաղրի:
Ես լսում էի... Քո հայացքներով
5 *Ես մխիթարված կյանքով շնչեցի*
Այն պայծառ հույսով՝ գուցե իմ սրտում
Մագե արշալույս երջանիկ բախտի:

Վիշտս թաքցրի՝ որպես յուր կրծքում
Շուշանը՝ որդին: Ա՜խ, անգին ընկե՛ր,
10 *Ընկատեցի՞ր իմ ջերմ արցունքը՝*
Որպես լուանյակի դողդոջուն շողեր
Ամպերի տակից - իմ աննենգ սիրո
Անհոգ դիմակից՝ հալված վազելիս.
Ընկատեցի՞ր ժպտի հետ մռայլ
15 *Թախիծը տխուր կամ խոցված սրտիս*
Խուլ հառաչանքը... Ինձ չճանչեցի՛ր...

1892 մայիսի 22
Ալեքսանդրապոլ

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՐՈՒՄ
(X<ի> հասցեին)

Սիրուն կուրծքդ էր եղբորդ համար
Միակ դրախտն գեղեցիկ,
Ուր լիակուրծք շնչում էի
Բուրմունք կյանքի երջանիկ:

5 *Սիրուն կուրծքդ էր ցնորքներիս,*
Երազներիս օրորան,
Միակ սյունն էր դժբախտ կյանքիս,
Վառ ըղձերիս պատվանդան:

Սիրտդ նենգեց - կուրծքդ դարձավ
10 *Խավար դժոխք դիվական,*
Ես էլ մեռա - կուրծքդ դարձավ
Բյուր հույսերիս գերեզման:

1892 մայիսի 25
Ալեքսանդրապոլ

* * *

Արդյոք լսե՞լ ես վաստակած հոգով
Անուշ օրորը վսեմ բնության.
Ուր աստղն ու ծաղիկ՝ ամենն իր լեզվով
Ուշքդ են կախարդում:
Հիասքանչ հովիտ - չքնա՛ղ օրորան,
Աստղոտ երկինքը, ուր լույս է ծորում,
Վեհանձ լեռները վերևից հսկում,
Առուն մրմնջում, կայտառ զեփյուռը
Կուսական շնչով արտը ծածանում,
Ծառը տատանում, բյուրեղիկ կուրծքդ
Շոյում, գուրգուրում:
Եվ այրի միջից նիրհող գառների
Շշնջյունների հետ ականջդ գգվում
Տխուր մեղեդին սիրավառ հովվի,
Որ սերն է երգում կարոտած յարի.
Ներդաշնակ օրոր՝ չքեղ օրրանում,
Ուր գեղ բնությունն անդորր է քնում...
Եվ հոգիդ դյութված հափշտակությամբ՝
Դո՛ւ էլ ննջե՞լ ես՝ վիշտդ մոռացած -
Նազելի վիշտդ, ընկե՛ր անմոռաց:

1892
Հառիճ

* * *

Անուշ վայրե՛ր, մնաք բարև -
Խավարեցավ իմ արև:
Կանաչ բլո՛ւր, ավեր մատո՛ւռ,
Ալվան-ալվան ծաղիկնե՛ր,
Մամռոտ ժայռե՛ր, զուլալ աղբյո՛ւր,
Սիրտս ու հոգիս ձեզ նվեր -
Սիրտս ու հոգիս. իմ քուրիկիս
Սուրբ շիրիմն է ձեր ծոցում -
Սուրբ շիրիմը ցնորքներիս
Ցողի՛ր, աղբյո՛ւր կարկաչուն:
Անուշ վայրե՛ր, մնաք բարև -
Խավարեցավ իմ արև:

1892
Ալեքսանդրապոլ

* * *

Սիրի՛ր թշվառիս...
Զարատանջ վիշտը տիրել է հոգիս –
Ես խարխափում եմ:
Ինչո՞ւ ծիածան
Զքնաղ հույսերի չեղավ երկնքում.
Ինչո՞ւ հիացման
Շքեղ անուրջներ ցնդվեցին օդում...
Սիրելի՛ ընկեր,
Ընկեր դավաճան, քո հայացքներում
Դարձյալ գտնում եմ կյանքի շատրվան.
Թող որ ցողերից
Սիրտս զովանա, հոգիս թարմանա.
Թող դարձյալ ձգտեմ - ձգտեմ անսահման.
Ա՜խ, ինձ չես սիրում. –
Ես հոգով ընկա...

1892
Ալեքսանդրապոլ

ՆՎԵՐ
ՍԻՐԵԼԻ ՔՈՒՅՐ-ՇՈՒՇԻԿԻՆ
ԻՐ ԵՂԲԱՅՐ-ԱՎԵՏԻՔԻՑ

Երբ սրտամաշ վշտի ժամում
Լիճ են լինում աչերս,
Երբ տանջանքի ահեղ բովում
Խորտակվում է հեգ սիրտս –
Քո սուրբ սերն էր, որպես երկնի
Սփոփարար հրեշտակ,
Ցաված սրտումս վառում էլի
Դեռ ապրելու ջերմ փափագ:

Բայց ուրացա՛ր ինձ, նազելի՛,
Վիշտը ճնշեց իմ կուրծքը.
Մարեց սերը, մարեց կյանքի
Վառ ցանկության կրակը:
Եվ դո՛ւ անհոգ, որպես թռչնիկ,
Շիրմիս վերա ճախրում ես.
Արդյոք անգութ, անվիշտ քուրի՛կ,
Խեղճ եղբորդ հիշո՞ւմ ես...

<1892>

ՊԱՏԱՆՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԸ
(Ալեգորիա Շուշիկի «Կույսի գերեզմանը»-ին)

Սարի ստորոտում, լայնաբաց դաշտում,
Ծաղիկների մեջ կար մի գերեզման.
Անդ պատանին էր տանջված հանգչում,
Պատանին բարի, հրեշտականման:

Խոնավ ու տխուր այս մռայլ շիրմում
Ննջում էր «Նրա» սիրտը չանթահար.
Ծաղիկե պսակ մտատանջ գլխուն,
Կրծքին հանգչում էր փնջիկ դալկահար:

Հանգիստ էր, խաղա՜ղ բոլոր բնություն,
«Նրա» ուրվականն էր միայն թափառում,
Ահեղ վրեժի հույսը դեռ սրտում
Պատերազմ կելներ մահվան աշխարհում:

-Ո՞վ կելներ «Նրա» դիմաց պատերազմ,
-Ո՞վ մթության մեջ կտեսներ «Նրան»:
Անգութ աղջկա միակ սառը սիրտ
Փախչում էր արագ՝ խղճից հալածված:

-Անցնում են ժամե՛ր, օրե՛ր, տարինե՛ր.
Բայց ուրվականը դեռ թափառում է,
Խղճահար սիրտը թշվառ աղջկա
Դեռ <չուներ> հանգիստ հարվածից «Նրա»:

<1892>

1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

Մենակ ապրեցա, որքան տանջվեցի,
Որքան լացեցի, քույր իմ, քեզ համար,
Իմ արցունքները քեզ նվեր բերի,
Քեզ նվեր բերի սիրտս վշտահար:

Հոգուս երգերը լցված, տոգորված
Քո սիրով էին դիպչում քնարիս,
Աղերսում էին՝ եղիր ողորմած,
Եղիր ինձ ընկեր, սիրիր թշվառիս:

Բայց ցաված սիրտս չսիրվեց երբեք,
Զզգաց զովություն սիրո ցողերի,
Եվ սիրո արտից՝ կուսական սրտից,
Չքաղեց ծաղիկ՝ բուրմունք հույսերի:

Եվ ես չքացա, որպես բույրն օդում,
Որպես ջինջ շողը մռայլ գիշերում,
Սակայն թողեցի քեզ նվեր, քույր իմ,
Սրտի երգ ու վերք և մամռոտ շիրիմ:

1893 փետրվարի 27
Ալեքսանդրապոլ

* * *

Ես ուզեցա լալեն քաղեմ,
Չոր կոճրն էլ ձեռս չընկավ.
Շա՛տ ուզեցա թուշդ պաչեմ.
Արմուկդ էլ ձեռս չընկավ...
Ա՛խ, ուզեցա ոտքդ պագեմ,
Բերանս ոտացդ հո՛ղն էլ չընկավ...

1893 մայիսի 8
Ղազարապատ

* * *

[Ինչ սիրուն ես, գարնան վարդ ես,
Ա՜խ, նազանի, նազ աղջիկ.
Դուն տեղովդ ինձի դարդ ես,
Ջանիդ մեռնիմ, ջան ծաղի՛կ:

Կաքավի պես շորոր կուգաս,
Դարդես խաբար հեչ չունիս.
Քու կարոտով էրվա, վառվա.
Ինչ ուրախ ես, գո՛ւթ չունիս:

Ինձ որ սիրես, ես թև կառնեմ,
Անէղթ, հզոր կդառնամ.
Մով երկինքը վար կբերեմ,
Ոտներիդ տակ, նազիկ ջա՛ն...]:

1893 մայիսի 8
Ալեքսանդրապոլ

* * *

[Թո՛ղ անծայր ծովը եռա, փրփրի,
Թխպոտ երկինքը կայծակներ շա՛ղ տա,
Եվ թող փարոսը մշուշում թաղվի,
Փրկարար ափը աչքիս չերևա –
Ջեմ հուսահատվի. –
-Ջէ՞ որ դուք միայն,
Վսեմ իդեալներ,
Կուսական հոգու
Նվիրական սեր,
Ջէ՞ որ դո՛ւք միայն, երկնային ուժե՛ր,
Ինձ սուր եք տալիս անհաղթ կռվելո՛ւ,
Ինձ թև եք տալիս անխոնջ թռչելու,
Ինձ հույս եք տալիս անվերջ տոկալու...]:

1893 օգոստոսի 7
Վիեննա

* * *

[- Ա՛խ, մարալս, ա՛խ, ո՞ւր գնաց,
Բարով եկաք, ճամփորդնե՛ր,
Ես ձեր գալած ճամփին մեռնիմ.
Ցարիս յարաբ չե՞ք տեսեր:
«Վա՛յ, խե՛ղճ տղա, քու մարալդ
Գելը տարավ, մարդ-գելը»:
Ցարիս ծամերն ծովի նման
Ալին-ծալին կուտային.
Էնոր աչերն ծո՛վ-ծըվան
Փելք կուտային արևին:
Էնոր ձենը քաղցր ու անուշ
Բլբուլի հետ կկանչեր.
Ա՛խ, մարալս, վա՛խ, մարալս
Գելը, մարդ-գե՞լն է տարեր.-
-Ա՛խ, մարալս, վա՛խ, մարալս
Մարդը, գել-մարդն է տարեր...]:

1893 սեպտեմբերի 3
Պրագա

ՆՎԵՐ ՏԻԿԻՆ Շ.<-ԻՆ>

Ինչպես անցյալի տխուր ավերակ
Կամ ճոխ պսակի թոշնած ծաղիկներ,
Ինչպես մանկության աղոտ հիշատակ
Կամ մոռցած երգի նսեմ հնչյուններ,
Հիշիր ինձ, քույրիկ, ա՛խ, անուշ քույրիկ,
Հիշիր, թե ինչպես ես քեզ սիրեցի,
Անքուն գիշերներ մենակ ու լռիկ,
Քո կյանքի համար ջերմ աղոթեցի...
Հիշիր, թե ինչպես իմ տանջանքներից
Քո քաղցր անունով երգեր փնջեցի,
Վառ ծիածանը ամպերի մեջքից
Խլեցի, բերի քեզ համար գոտի...
Հիշիր, թե ինչպես իմ արցունքներից
Պսակ փնջեցի, քույրիկ, քեզ համար,
Աստղիկ ու լուսնյակ քեզ զարդեր բերի,
Քեզ նվեր բերի սիրտս վշտահար...

1893 սեպտեմբերի 21
Լայպցիգ

* * *

Հովը փչում է լեռների լանջից,
Հեռու խրճիթից ճրագը շողում -
Անտառին կախարդ զրույց են ասում:
Սակայն անտառը ականջ չի դնում,
Նա վեհ ծփանքով շաչում է միայն:
Լուսինն ու աստղեր ամպի ծալքերից,
Հովվի սրինգն էլ անուշ ձայնակից -
Անտառին մեղմիկ օրոր են երգում:
Բայց նա - այդ հսկան, շաչում է ուժգին.
Մոռանալ-ներել նա չի ցանկանում:
Առուն խշշում է թփերի ծոցից.
Գաղտուկ խորշերից ծղրիդը ծղրում.
Անտառին չքնաղ երազ են հյուսում:
Բայց նա լալիս է տխուր հույզերով,
Հոգու վերքերից մորմոքներ երգում:
«Աղոթքի բույրը երկինք չի հասնում.
Ջինջ սիրտը կարբի կասկածի թույնով.
Կյանքի վառ երգը կլոռ շրթնում,
Սիրո ժպիտը կթոշնե շուտով:
Օ՛, ես տանջվում եմ, տանջանքս է հուժկու,
Ա՛խ, մենք բոլոր<ս> վաղն ենք մարելու...»:

1893 թ.
Oberlong, Գերմանիա

ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐԻՍ

Բնության խորքից դեպի կյանք ելանք,
Եվ կյանքը, ընկե՛ր, մեզ համար հիմա
Բեռ է ու տանջանք:
Բայց մեր շուրջն ընդմիշտ ամբոխը հսկա
Ապրում է, ապրում՝ քամելով երկրից
Սոսկ հաց ու հաճույք:
Եվ մենք օտար ենք այդ մեծ ամբոխին,
Ա՛խ, նրա հոգին փոքր է ու ստոր,
Վեհություն չունի:
Դու էլ ես ինձ պես - այդ ամբոխի մեջ,
Այդ անապատում արմավենու պես
Մենակ ու տխուր:
Ա՛խ, անգին ընկեր, իրար սրտի մեջ
Եվ իրար հոգով եկ սուզվենք, ապրենք
Ամբոխի վրա:
Թո՛ղ մեր ստվերը փռվի նրա վրա,
Բայց մենք թափառենք անհունության մեջ,
Հավերժության մեջ:
Եվ ժամանակի ու տարածության
Գաղտնիքը քննենք, զգանք, հասկանանք
Մեծ տիեզերքն ու մեզ:
Եվ մեռնենք այն վառ, ջինջ աստղերու հետ,
Ընկեր իմ, ընկե՛ր...

<1893>

* * *

Եղեգների մռայլ խորքից
Վայրի բադը դուրս ելավ,
Ինձի տեսավ - մեկեն ճահճից
Քարփին թռավ ու թառավ:

<1893>

* * *

Ես կյանք գրկեցի,
Եվ մի քայլ չանցած՝
Իմ վերջալույսը
Աչքիս երևաց.
Ես ետ եմ նայում –
Ահա մի անվերջ
Խուլ տարածություն
Ձգվեց ու ձգվեց.
Մի մեծ ու հսկա
Լուռ տարածություն,
Ուր սահման չկա,
Ուր քանի անգամ
Ծերուկ երկիրը
Միշտ աննպատակ
Անցավ ու դարձավ,
Ուր իմ խեղճ կյանքը՝
Լի երազներով,
Կայծակի նման
Վառվեց ու անցավ...

<1893>

* * *

Լեզվակն անուշ երգ կհնչե.
Հնչյուն-թևեր երգն ունի,
Որ մինչ անափ տիեզերքի
Հեռու ափը կթռչի:

Իսկ ամեհի քարե-զանգը
Մոր է տալիս վեհ երգին,
Եվ շա՜տ բիրտ է ձորի ձայնը՝
Նման գոչյուն-հեղեղին:

Ահա հուզվեց ոսկե-լեզուն
Դիպավ զանգի ժեռ-կրծքին
Եվ ղողանջեց խորն ու սիրուն
Հանդես կոչեց աշխարհին:

Լավ ուշք դրեք, լուսի՜ն, աստղի՜կ -
Մովե՛ր, լռե՛ք - երգ կասեմ.
Շուրջս եկեք, ոգի, մարդիկ -
Ես մեծ-ոգի լեզուն եմ:

Տիեզերքը, դյութված քնով,
Խոր կնիրհե բյուր դարե՛ր,
Իսկ ժեռ զանգը յուր խուլ ձայնով
Օրոր կասե բյուր դարե՛ր:

Իսկ ես ո՞վ եմ. ես եմ անշեջ
Վառ-երազը քնի մեջ.
Զարթնի՛ր քնեդ, մեծ տիեզերք,
Երազդ ահա՛ համարձակ
Երգ կհնչե՝ հոգին խոր վերք -
Եվ դու լռի՛ր, ժեռ-զանգակ:

<1893
Գերմանիա>

* * *

Շուշա՜ն ծաղիկ, քու բողբոջում
Մաքուր սիրտս դրեցի.
Սուրբ ըղձերով սիրտս զեղուն,
Սիրտս քնքո՜ւշ, նազելի՛:

Ես սիրեցի քու բողբոջում
Սիրտս՝ սիրով սրբազան -
Այն հավատով, թե սիրում եմ
Ես քու սիրտը, Շուշան ջա՜ն:

1894 մայիսի 21
Լայպցիգ

* * *

Սիրտս լի՜ճ էր - ջինջ ու լռիկ,
Գարնան հովով կծփար
Դու մոտկցա՛ր, սիրուն աղջիկ,
Ու սրտիս մեջ նայեցա՛ր...

Երկու կայծեր քու աչերից,
Սև աչերից ցատկեցին,
Երկու կայծեր ընկան սիրտս,
Անդորը լիճը հուզեցին...

Դո՛ւ հեռացար բուրմունքի պես,
Սիրտս տաքցավ կայծերով,
Փրփուր տվեց, ալիք ծնեց,
Սիրտս հուզվեց կայծերով...

1894 դեկտեմբերի 9
Լայպցիգ

* * *

Սև՛ վշտերը մշուշի պես
Ցաված սիրտս պատել են,
Կնճիռները ամպերի պես
Ճակտիս վրա դիզվել են...

Աշուղ, սազդ ա՛ռ ու երգի՛ր -
Երգը երկնի զեփյուռն է,
Աշուղ, երգի՛ր - թող նա սրտիս
Ամպն ու մշուշը ցրրե:

1894 դեկտեմբերի 9
Լայպցիգ

* * *

Ես ձեզ ատում եմ, ամենքիդ ատում,
Անչափ, անսահման ատում եմ ես ձեզ.
Ա՛խ, ո՞ւմ չար ձեռքը իմ սիրող սրտում
Վառեց դժոխքը այս ատելության...
Ա՛խ, սիրտըս սիրո անհուն օվկիանն էր.
Եվ սիրում էի, ամենքիդ սիրում...

<1893 - 1895>

* * *

Ի՞նչ,- սեր մուրալու նորի՞ց թափառեմ՞
Բախելով մեռած սրտերը մարդկան.
Ո՛չ, մարգարեի ես երազ ունեմ՝
Կթռնեմ խրոխտ բարձունքը խոկման.
Եվ արծվի պես կապրեմ մեկուսի՝
Աշխարհից, երգից ու սիրուց թափուր. –
Ո՞վ կհասկանա տենչերս երկնի
Եվ ցնորքներս ճոխ, ոսկեփրփուր:

<1895>

* * *

Ա՛խ, ես ինչքա՜ն բախտավոր եմ,
Որ քեզ ճամփիս պատահա,
Քո ժպիտից դարձա նորեն
Ուրախ, աշխույժ երեխա...

Իմ սրտի մեջ ինչքա՜ն սեր կա.
Տարիք անցավ - չցամքավ:

<1890-ական թթ. առաջին կես>

* * *

Դարդի սարը սրտիս վրա
Մտել էի մահի քուն:
Ե՛լ, ազիզ ջան, Ալափչայի
Ուռիները ծաղկել են.
Ուռիներից ճյուղք եմ բերել,
Քեզի իրենց մոտ կանչում են:

<1890-ական թթ. առաջին կես>

* * *

Բախտի ուրուրը ետևես է ընկել,
Իմ անուշ քույրիկ,
Եվ փախչում եմ կյանքի
Ափերը հեռու.
Գլխիս են թափվում տերևներն աշնան,
Իմ քնքուշ քույրիկ,
Զոր տերևները քայլերս են ծածկում-
Ճամփեքս հեռու:
Իմ հոգում մարան վառ երազներիս
Աստղերը բոլոր:

Ա՛խ, շուշան ձեռքդ ինձ հետ չի կանչում
Ճամփեքից մոլոր,
Ո՞ւր տանեմ սիրտս՝ խոցված քո սիրով -
Քո ծով կարոտով...

<1890-ական թթ. առաջին կես>

* * *

Հեզ ու տխուր, սև աչերից
Մի ցող կաթեց սրտիս մեջ.
Վա՜խ, թույն ուներ արցունքը էն,
Ու խոց փորեց սրտիս մեջ:

Ու ման կուգամ աշխարհն ամեն,
Կուզեմ սրտիս դեղ-դարման.
Ինձի կըսե աշխարհն ամեն,-
Թույնն է թույնին դեղ-դարման:

Հազար երնեկ մի գութ ընկներ
Սիրունիկիս սիրտը ժեռ.
Սիրտս բանար ու վրեն լար.-
Թույնն է թույնին դեղ ու ճար...

1896 մարտի 18
Թիֆլիս

* * *

[Եվ երբ սառը ձյունով ծածկվին
Ողջ աշխարհը - հող ու ծով.
Փչե, ոռնա անզուսպ քամին
Լռած երկրի երեսով.
Բոլոր չքնաղ կանայք մեռնին,
Ծաղիկներն էլ չորանան.-
Եվ միայն մարդիկ - մարդիկ միա՛յն
Ցիր-ցան ապրին սառցի մեջ -
Օ՛, ես այն պահ, միայն այն պահ
Կուզեմ մեռնել, և պաղ քամին
Վրես փչե ու ոռնա...]:

1896 դեկտեմբերի 13
Երևան

* * *

Դուք ինձ ասում եք - «Տոկա՛լ սովորիր,
Եվ կյանքի խաչը լուռ, անտրտունջ տար.
Եվ սուրբ օրենքների սեղանի առաջ
Դու խոնարհ սրտով ծունր խոնարհիր...»:
Դուք հնությանն եք անհուն հավատում
Եվ նրա անվամբ դուք կամենում եք
Ինձ լռեցնել - ձեր կյանքից տալ ինձ.
Օ՛, ես չեմ ուզում ձեր անմիտ կյանքը,
Ձեր սրբությունը վաղուց բոց չունի:
Ես թևեր ունիմ, կրթունիմ ահա,
Մութն անապատը փռվեց ոտքիս տակ...
Բուռն մրրկի երգերը վայրագ
Ես կուզեմ լսել:
Եվ թող իմ սրտում մրրկի նման
Զայրույթս շաչե, կամքս դղրդա.
Ես կուզեմ ժպտալ վայրենի ժպտով,
Ես կուզեմ լինել կատաղի Ոգի՝
Կայծակե սուրը ձեռքումս բռնած,
Ես կուզեմ կրծքիցս փնչել հողմ-կրակ,
Ես կուզեմ՝ կյանքը նիրհե ոտքիս տակ...

1897
Ալեքսանդրապոլ

ՏՂԱՅԻ ՏԱՂԸ

Ցար, հոնքերդ զույգ թևեր են
Հրաշք-հավքի դրախտի.
Սիրտս թռավ քու թևերով
Լույս-երկինքներն հեքիաթի:

Թևերդ առար սրտես հիմի
Ու զարկեցիր ինձ գետին,
Ինչ ոտքի տակ չար որսկանի
Սրտեն զարկված աղավնին:

Հիմի կասես. կորի՛, գընա՛,
Ա՛խ, ո՞ւր չքվիմ, ո՞ւր երթամ.
Էս խոր վերքը քեզնեն առա,
Դեղի համար ո՞ւմ երթամ:

*<1897 նոյեմբեր
Ալեքսանդրապոլ>*

* * *

Գիշերն եկավ, աստղերն ելան,
Լուսնակն ո՞ւր է, դուրս չի գա.
-Ձեռքս ծոցիս ինձի թողի՛ր,
Ո՞ւր գնացիր, Շուշան ջան,
Ճարս կտրիր, ճամփես կապիր,
Սիրտս կոտրիր, Շուշի՛կ ջան...

Լուսնակն ելավ ու բոլորավ,
Ամպերու մեջ մոլորավ...
-Աչքս՝ արցունք, սիրտս՝ տխո՛ւր.
Տատրակս ո՞ւր տարար, ուրո՛ւր...

*1898 Հունվարի 29
Ղազարապատ*

* * *

Սիրտս ցողված քնքուշ թախծով
Ես քեզ անհուն կսիրեմ,
Սիրտս վառված մաքուր սիրով
Վերաղ այնպե՜ս կթախծեմ:

Բայց և՛ սերս, և՛ թախիծս
Երբեք դու չես հասկանա...

1898 փետրվարի 9

* * *

Ընկե՛ր իմ, ընկե՛ր, մի՛ ասա այդպես,
Ես չեմ մեղավոր, որ իմ շրթունքից
Չի փայլում ցոլքը երջանիկ հոգու:
Ես չեմ մեղավոր, որ իմ աչերից
Անեծքի այրող շիթեր են հոսում.
Նայի՛ր իմ կրծքին. օ՜, մի ականջ դիր-
Խուլ հեծկլտանքներ, մրմունջ դառնագին.
Ահա՛, իմ սիրտը - ավեր անապատ.
Ասա՛, կարո՞ղ է աշխարհը նորեն
Վարդի գույներով խաբե, կախարդե
Իմ սիրտն ու հոգին...
Ինքնախաբության գեթ ստվեր չկա,
Որ սիրտս ու հոգիս կյանքը մոռանա.
Մոռանա կյանքը՝ անմիտ ու տաղտուկ,
Մոռանա կյանքը՝ արյուն վրդովող...

<1898 փետրվարի 9>

* * *

[Արևի տակ, ծովի ափին
Ես խորհում եմ ու խոկում.
Եվ լսելով ծովի գոչին,-
Ծովն զգում եմ իմ հոգում:

Ես զգում եմ.- բնությունը
Ջունի ո՛չ կյանք, ո՛չ հոգի.
Նա մեռած է, ինչպես ծովը.
-Դիա՛կ, դիա՛կ վիթխարի:

Ես զգում եմ.- ես եմ ոգին,
Իմ հոգիս է խորն, անհուն,
Իմ հոգումն է բնությունը
Եվ կամենում, և զգում.
Ես եմ ոգին մեծ-բնության.
Ես եմ խորհում ու զգում...

Եվ զգում եմ, սիրում աշխարհն,-
Ինչ որ, ինչ որ կա մեջը.
Տիեզերքը - անհուն, անծայր,
Եվ կնոջ ջերմ մարմինը...]

1898 մայիսի 16
Օդեսա

* * *

[Դուման սարից ջո՛ւր կուգա,
Աղբուրն անո՛ւշ, դո՛ւր կուգա...
- Է՛յ ջա՛ն... երգա խոր սրտես
Աղբուրի պես դուրս կուգա:

Աղբուրն զվարթ կըմնջա,
Քարփեն ձորը վար կերթա.
Էն մենձ, անտակ քարայրը
Անուշ ձենին ձեն կուտա:

-Երգա կուլա՛, կըխնդա,
Ամեն մարդու մոտ կերթա...
Ա՛խ, սրտալի խոր երգիս
Սիրտ մ'էլ, սիրտ մ'էլ ձեն չի տա...]

1898 օգոստոսի 7
Օդեսա

Ա. <Մ.-Ի> ՀԻՇԱՏԱԿԻՆ

Իմ անգին ընկեր, մեռար, մեռար դո՛ւ,
Զինվոր դաշտի մեջ, մեզնից շա՛տ հեռու,
Ընկար դու մենակ, անոք, անընկեր.
Ա՛խ, ոչ ոք չկար, որ վերջին անգամ
Շունչդ ներշնչեր, հայացքդ խլեր,
Փակեր աչքերդ, ընկեր սրբազան:

Մի սիրտ, մի վեհ սիրտ հավիտյան լռեց,
Քո վսեմ սիրտը - վեհ, նվիրական.
Ա՛խ, հողմերն, ընկեր, բուռն մռնչյունով
Վերջին մրմունջներդ խլեցին, տարան
Եվ ձյունի շերտեր վրադ դիզեցին...
Ո՞ւր է շիրիմդ քո տանջված մարմնիդ,
Ո՞ւր է, որ ընկնիմ
Այդ նվիրական հանգստյան վրա
Եվ լամ, անվերջ լամ, ընկեր, ընկեր իմ:
Չկա շիրիմդ.- վայրի գազաններ
Քո սուրբ նշխարներն տարել, թաղել են
Հեռու դաշտերում, մթին ձորերում...
Եվ դու հալվել ես ողջ բնության մեջ,
Քո պաշտած երկրում, որ շիրիմդ եղավ,
Սակայն այն երկրում, որը սիրեցիր,
Որին զոհ բերիր քո վսեմ կյանքը,
Այդ արնոտ երկրում, այն վայրերի մեջ,
Խեղճ ժողովրդի լացի, վշտի մեջ
Քո ձայնն եմ լսում, ես քեզ եմ տեսնում.
Եվ հոգիս լցված քո նվիրական
Սուրբ հիշատակով՝ ես ծունր եմ դնում
Այդ երկրի առաջ, ժողովրդի առաջ
Եվ համբուրում եմ - քեզ եմ համբուրում:

1898
Օդեսա

* * *

Ամպերն ընկան ծովի վրեն,
Հազար բերնով ջուր խմին,
Թռավ որորն խոլո՛ր ծովեն,
Մվաց, նստավ թուխ քարփին:

-Ես էլ քեզ պես, տխո՛ւր որոր,
Աչերս արցունք ու անքուն.
Կթափառեմ ոլոր-մոլոր
Կյանքի հեռո՛ւ ափերում...

1898

* * *

Քար գցեցիր, ծառիս դիպավ. –
Ծառեն հավքերն ո՞ւր թռան.
Ծաղիկ կյանքիս խաս օրերը,
Ա՛խ, ո՞ւր թռան,- զո՛ւր կորան:

Սարի սիրուն, նազիկ բլբուլն,
Ա՛խ, բա՛խտ, իմս էր, ու՞ր կորավ.
Բաղի թառլան, անուշ բլբուլն,
Է՛յ, բա՛խտ, իմս էր, ո՞ւր թռավ:

<1898>

[ԻՄ ՎԵՀՈՒԹՅՈՒՆԸ]

[Ո՞վ ես դու, ով կույս - չքնա՛ղ, նազելի՛.
Քեզ չեմ ճանաչում, բայց սիրում եմ քեզ. –
Քեզ՝ որպես բարձր, մի վսեմ Ոգի,
Այնպես երկյուղած ես պաշտում եմ քեզ...

Դու մի տաճար ես լուռ ու ամայի.
Այնտեղ կառուցի ես մի սուրբ սեղան,
Գահ կատարյալի, վեհ գաղափարի
Ջերմ երկրպագման:

Եվ գահի վրա դրեցի սիրտս՝
Որպես վեհ իդեալ, Աստված սուրբ, անբիծ,
Եվ ես պաշտեցի սի՛րտս, սուրբ սի՛րտս-
Պաշտեցի ինքս ինձ.

Եվ այնպես, ինչպես մարդկային Ոգին
Ամայի երկնում կառուց սուրբ սեղան,
Ստեղծեց Աստծուն և պաշտեց նրան,
Պաշտեց ինքն իրան - Ոգուն Մարդկության:]

1899 մարտի 14
Ալեքսանդրապոլ

ՀԻՆ ԳՐՎԱԾՔՆԵՐԻՑ

Գլուխդ՝ վեր, ճակատդ՝ բաց,
Վեհանձ կանգնիր մարդկանց մեջ.
Կամքդ՝ ազատ, ճակատդ՝ բաց,
Հպարտ գնա կյանքի մեջ:

Շա՛տ ամոթ է, չէ՞ որ մարդ ես,
Որ հարուստի ոտքի ներքև
Սողաս, դողաս սողունի պես,
Միշտ վե՛հ նայիր, միշտ վերև:

Չէ՞ որ ամեն բանից առաջ
Դու քո գլխիդ իշխանն ես,
Իշխան էլ կա՛ց, մարդկանց առաջ
Գլուխդ իսկի չըծռես:

Նշան չունի՝ աղքատ մարդ ես,
Չէ՞ որ խոզերն են միշտ կուշտ,
Հերիք է, որ հոգով լինես
Հպարտ, ազատ ու հարուստ...

1899 Հունիս
Սարիղամիշ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԱՆԳ
(Նրա ողողանջները)

Եվ գիտեմ, գիտեմ, կյանքն է անցավոր,
Աշխարհը՝ ունայն, վայելքը՝ վաղանց,
Եվ մարդիկ՝ չնչին, և կգա մի օր,
Կցնդի երկիրն անհուն ծավալում:
Ինչո՞ւ ենք ապրում և կուզենք ապրել,
Ի՞նչ խաղ էր դառն, ի՞նչ ծաղր էր դաժան,
Որ աշխարհ եկանք ու պիտի գնանք...
Օ՜, կուզեմ փշրել երկինք ու երկիր,
Ստեղծող ուժից լինել վրեժխնդիր.
Բայց ես անզոր եմ, և հոգիս լքյալ,
Եվ դժնյա մտքեր, և անհույս, մռայլ...
Բայց նորից ահա, լսում եմ ահա
Ղողանջը զանգի տիեզերական,
Եվ թրթռում է հոգիս հիասքանչ,
Իմ էության մեջ երգեր են վառվում,
Երգեր թեավոր, վեհ, վսեմական.
Եվ ես ճախրում եմ, ես ծավալվում եմ,
Տեսնում եմ ահա խորախոր գաղտնիք,
Խոկման անդունդներ, ուժ գերահրաշ,
Որով զգում եմ և ըմբռնում եմ,
Թե տիեզերքն է մի անվերջ երազ,
Շքեղ, հոգեզմայլ մի անմահ անուրջ,
Եվ գերահրաշ մի անանց ցնորք...
Եվ ես բովանդակ ոգված ու շնչված
Տիեզերական անճառ ցնորքով,
Եվ որն իմ հոգում դարձած հրեղեն
Մի վսեմ ցնորք մարգարեական,
Ուզում եմ երգել, ուզում եմ սիրել,
Ընդգրկել հոգումս աշխարհ և մարդիկ
Եվ ոգի դարձած հեռուներ թռնել
Եվ հավերժ խորհել, և հավերժ ապրել...

<1899> Հուլիսի 19

* * *

Դուն հոգիս ես, հոգիս կուզես,
Զէ - չըսեմ, հանեմ, տամ քեզ...
Վախնամ թե՝ աչերս ուզես,
Էլ ինչո՞վ աչեմ քեզ:

1899, հոկտեմբերի 21
Բաքու

* * *

Անմահական գինի ես, յա՛ր,
Քովդ նստողն կըհարբի.
Ես որ մանկուց հարբած էի,
Հիմի որ... խելքս կորցրի:

1899 հոկտեմբերի 21
Բաքու

* * *

Ազիզ յար ջան, քեզի մատաղ,
Ես քու ծնող մորն էլ մատաղ.
Որ քեզ բերեց, ինձի գցեց
Էս դարդի մեջ, քեզի մատաղ:

<1899>

* * *

Խոր քնիս մեջ երազ տեսա,
Անուշ-անուշ կուլայի.
Երազիս մեջ յարիս տեսա,
Անուշ-անուշ կուլայի:
Կարոտ յարս ծաղկունանց մեջ
Սարի շուքում քներ էր.
Ազիզ գլուխն ձեռներուս մեջ,
Վարդն երեսին քներ էր:
Զուլալ առուն կըքրքչար,
Կթռվռար մանկան պես,
Զրույց կասեր յարիս համար,
Կպարծենար մանկան պես:
Զրույց կասեր քարփի մասին,
Ուրտից գվարթ թռել էր.
Ու ոսկեծամ փերու մասին,
Որ իր գրկում զովցել էր:
Մարալների մասին կասեր,
Որ ննջել են իր ափում,
Յարիս համար զրույց կասեր
Առուն զուլալ, կարկաչուն:
Նշխուն հավքեր, ծաղիկ-ծաղկունք
Սեր կառնեին, կուտային.
Միաբերան, հազար բերան
Սիրո երգեր կերգեին:
Ու բլբուլի ձենն առա,
Անուշ-անուշ կուլայի,
Սիրած յարիս սրտի վրա
Անուշ-անուշ կուլայի:

<1899>

* * *

[Քու տնակդ բաղի միջին,
Գետի ափին է ընկած.
Հաստ պատերը բաղիդ չորս դին,
Դուռը ամուր պինդ փակած:

Դուն երկու հատ ծառա ունիս. –
Մեկը - սպիտակ, մեկը - սև.
Երկու հատ էլ գամփռ ունիս՝
Կապած դռանդ, տանդ առջև:

Մեկ օր ոտքդ ընկա, ասի -
«Խանո՛ւմ, թո՛ղ ինձ՝ բաղդ գամ.
Վերքիս համար դեղապըտի
Թուփ ու տերև քիչ ման գամ»:

Մենձ հերսդ ելավ, դուն, խանում ջա՛ն,
Ոտքդ գետին զարկեցի՛ր.
Ծառաներդ էլ վրես թափան,
Թևես բռնին, դուրս արին:

Մեկ էլ գիշեր - կես գիշերին
Պատեն թռա բաղիդ մեջ.
Միս գցեցի գամփռներիդ,
Որ իմ վրես չհաչան հեչ:

Ու սուս ու փուս եկա քովդ,
Քնած էիր մշշալեն.
Ցոլք կուտային ալ-թշերդ,
Վարդեր քաղի թշերեդ:

Աչքդ բացիր առավոտուն,
Տեսար մատնիք քու մատին,
Շո՛ւտ հասկացար բանը, խանում,
Հերսդ իջավ էս հեղին:

Տեսա՞ր, խանում, չէիր թողնում
Թուփ ու տերև քաղեի.
Բայց թշերեդ նշխուն, սիրուն
Ալ-վարդերը քաղեցի. –
Խանո՛ւմ, նազերո՛վ,
Անուշ նազերո՛վ.
Աչերդ, խանո՛ւմ,
Մովե՛ր ծով-ծրվան,
Ջա՛ն, գյոզալ խանում,
Մազերդ աբրշում...:]

<1899>

ԻՄ ՄԱՆՈՒԿ ԸՆԿԵՐ

Որքան հեռանում եմ քեզնից,
Այնքան մոտիկ եմ զգում ինձ քեզ:
Երբ քաղցր անունդ
Հնչում է հոգուս մեջ,
Արյունս լցվում է կրակով,
Եվ սիրտս՝ ոգևորությամբ, թևերով:
Երբ աչքերս գոցում եմ,
Քեզ եմ տեսնում հոգուս մեջ,
Երբ բաց եմ անում,
Քեզ տեսնում եմ ողջ բնության մեջ:
Քո անունը շրթներիս,
Եվ պատկերդ հոգուս մեջ՝
Թափառեցի սար ու քար:

<1890-ական թթ. երկրորդ կես>

* * *

Դու պսակ կերթաս յարիդ հետ քո նոր,
Իմ անգին քուրիկ, բարով վայելես.
Ես էլ յար ունիմ հեռու, հեռավոր,
Նոր սիրուս հիմի զուգված կերթամ տես:

Սև ձիս կընստեմ, սև աղջամուղջին
Ասպապս կապած՝ կերթամ յարիս մոտ,
Իմ սերս հիմի դաշտերի միջին
Ինձի կսպասե՝ սիրտը ծով-կարոտ:

Էհե՜յ, փոթորանքն է իմ հարսը,
Հրեղեն գրկում մեռնելու կերթամ....

<1890-ական թթ. երկրորդ կես>

* * *

Դու մի՛ հավատա, թանկագին ընկեր,
Ամբոխի սիրուն դու մի՛ հավատա,
Անդարձ, անհողդողդ դու քայլե՛ առաջ,
Բոլոր փորձանքին և արհավիրքին
Դու վեհ ճակտով գրո՛հ տուր, գնա՛<...>
.....
Եվ հրաշագործ քո խոսքը արդար
Ուղղում էր բոլոր մեջքերը կոտրած,
Խավար աչքերը հուրհրում էին
Շքեղ, ոսկեբիբ աստղերի նման.
Եվ թինդ էր հանում կրքերը բոլոր,
Եվ ճակատները արևով վառվում,
Թույլ բազուկները բռունցք էր կոփում,
Եվ թույլ ոտքերը ասես երկաթե
Սյուների նման հողն էին դոփում
Եվ նրանց դալար աչքերի առաջ
Դյութում էր հեռվում մի նոր հորիզոն,
Ուր մարդն էր ազատ, անլուծ, անշղթա,
Թշնամին՝ ընկեր, և հացը՝ արդար.
Եվ որոտընդոստ, իրեն ափերից
Շղթայազերծ, արշավող ծովերի նման
Շարժվում էր ամբոխը քո ետևից դեպի լուսեղեն
Այն ազատավառ հորիզոնները...

<1890-ական թթ. երկրորդ կես>

* * *

Ա՛խ, դեպի քեզ վրեժ ունիմ,
Ախր ինչո՞ւ, ա՛յ անգութ,
Սիրտս դարձրիր լուռ գերեզման
Տխուր-տրտում, սև ու մութ:

Թո՛ղ, թո՛ղ սիրտդ քցցեմ, քցցեմ,
Դուն գնացիր - իմ գարունս էլ
Հետդ տարար...

<1890-ական թթ. երկրորդ կես>

* * *

...Ու աչերս հառած աստղին՝
Երկնի կյանքը կդիտեմ.
Ու ականջս տված ծովին՝
Երկրի երգը կլսեմ.
Ու խո՜ր կզգամ - չկա անցյալ,
Չկա ներկա, ապագա,
Չկա սիրել, լալ ու հուսալ,
Չկա կյանք, ու չկա մահ...

<1890-ական թթ. երկրորդ կես>

* * *

Սրտումս խորունկ վշտեր կան.
Մայրիկ, մի՛ քրքրիր նրանց.
Դու քո արցունքով չես կարող բուժել,
Իսկ ջերմ աղոթքդ վաղուց ուժ չունի:
Դու մի՛ հարցրու վշտերիս պատճառը.
Մայրիկ, չես կարող դու նրանց ջնջել,
Մի՞թե կարող ես երկիրը ջնջել,
Երկինքը ջնջել - աշխարքը ջնջել...

<1890-ական թթ. երկրորդ կես>

* * *

Լայնալիք ծովում - հզոր, ծըփծըփուն,
Ալիքն ալիքին ասաց մի անգամ.
Ե՛կ ընկեր լինենք, սիրով անմեկին,
Մեր ազատության համար մարտնչենք,-
Սլանանք, ուր որ մեր կամքը կուզե՝
Ազատ, ինքնավար, հպարտ, ինքնակամ,

Ուրիշի կամքին ունկն չդրած՝
Դեպի աստղերը համարձակ ցայտենք.
Փոթորկի խորքը ընկնենք միասին -
Հուզվենք, շառաչենք և հորձանքի տանք:

Լուռ գիշերվա մեջ՝ լուսնի շողի տակ,
Մեր կայլակները մեղմիկ թավալենք
Եվ երազելով նիրհենք:

Ազատ-համարձակ, հախուռն ու անվախ՝
Լայնալիք ծովում չափենք, չափչփենք.
Եվ խիզախորեն ջախենք-ջախջախենք
Սառցի կապանքներն, որ մեր կամքերը
Կաշկանդել կուզեն:

Վառ արշալույսին լազուր մշուշում
Դեպի վարդ-ամպերն վազենք միասին -
Դեպի վառ արևն ոսկի սանդուխտով
Ծովից դեպի արևն թռնենք միասին
Եվ ազատության երգը հրեղեն
Խրոխտ կրծքերով երգենք, ընկեր իմ:

Եվ սեգ ժայռերը փշրենք, խորտակենք,
Երբ մեր ճախրանքին պատնեշ կլինեն.
Եվ ազատության վեհ հաղթանակով
Մայր-ափի վրա հանգչենք միասին:

Լայնալիք ծովում ալիքն ալիքին
Գրկած սլացան՝ հզոր, անմեկին...

<1890-ական թթ. երկրորդ կես>

1900-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

Ո՞վ կտա ինձ ուժ՝ հզոր ու ահեղ
Անմահ վրեժիս հագուրդի համար.-
Հրեղեն բազուկ՝ անխոնջ փշրելու
Թշնամիներիս՝ վայրագ ու գազան.

Խոցված, հոշոտված սուրբ հայրենիքիս
Ընտիր որդիներն - արծիվներն արի -
Ոգու թևերով կռիվ սլացան
Հոգիներն երազ վեհ ազատության...

Հայրենի դաշտեր, հայրենի սարեր,
[Սրտի] արյունով նրանք կօծեն ձեզ.-
Բա՛ց քո այրերը, ժայռերդ ցցի՛ր -
Ստոր թշնամուն նետի՛ր [մեր] առաջ...

Թշնամին չկա, թշնամին վախկոտ
Փախուստ է տվել...
Բայց երախտամոռ, թշնամուց դաժան՝
Դահճից վատթար բարեկամն ահա -
<.....>

Քարացած հոգով, ստրուկ, լրբենի,
Անվերջ դարերի թուքը երեսին՝
Քրիստոնեի զազիր դրոշի տակ
Հարվածում է մեզ, մեր հողի վերա
Մեր սուրբ արյունն է ոթում...
Դարերի անեծք, անարգանքի թուք
Ձեր պոռնիկ ճակտին, գարշելի<...>...

Զարթնի՛ր, հայություն, անհուն, անսահման
Զայրույթով, թույնով հուզվի՛ր, գալարվի՛ր
Եվ խելակորույս, և գլխապատառ
Բևեռից բևեռ բազուկդ ուղղի՛ր,
Ջախի՛ր, ջախջախի՛ր թագեր ու գահեր
Եվ անվախ ընկի՛ր նորանց փլատակների տակ...

<1900> հուլիսի 10

* * *

Դու աղբյուրի պես կարկաչում էիր
Իմ ցնորքների շքեղ աշխարհում.
Դու զարուն էիր՝ վարդի բուրմունքով
Եվ հնչյուն էիր աստղերի սրտից –
Ես քեզ պաշտեցի՝ ցնորք պաշտեցի-
Հոգուս նվիրական ցնորքը պաշտեցի...
Բայց դու ինձ չհասկացար...

Նորից վերցնե՞մ ցուպս թափառական՝
Բախելու անզգա սրտերը ամուր.
-Ո՛չ, մարգարեի ես երազ ունիմ.
Թռչեմ լեռների խրոխտ գագաթները
Եվ արծվի նման ապրեմ միայնակ,
Աշխարհի երգից ու սիրուց թափուր...
Ո՞վ կհասկանա իմ վեհ տենչերը,
Եվ ցնորքներս ո՞վ կարող է զգալ...

1902 հուլիսի 19
Կարս

* * *

Ես սիրեցի և այրվեցի
Եվ սիրեցի այրվելով.
Է՛լ մի երգե, քնքուշ բլբուլ,
Հանգա, մարա սիրելով...

Ես տանջվեցի և քամվեցի
Եվ տանջվելով չորացա.
Է՛լ մի երգե, քնքուշ բլբուլ,
Ես տանջվելով քար դառա...

<1902,
Բալախանի>

* * *

Ես կերթամ, ճամփես սև է,
Սև գիշեր է, ձիս սև է.
Ա՜յ խալխ, էս ի՞նչ զուլում է.
Ես ջահել եմ, սիրտս սև է:

Արազ եմ, Քուռին կարոտցած,
Բլբուլ եմ, վարդին կարոտցած,
Ես ղարիբ եմ էս սարերում՝
Անուշ լեզվի կարոտցած:

Գետը ծովեն խոր չի լինի,
Ծովն իմ սրտեն խոր չի լինի,
Ինչ ցավ ու իղձ կա սրտիս մեջ,
Մի աշխարհ է՝ ասել չի լինի:

<1902
Բալախանի>

* * *

Ողջ երկինքը սառն ու փայլուն՝
Մեռած մարդու աչքի պես.
Անկյանք ու լուռ ինձ է նայում
Մեռած մարդու աչքի պես:

<1902
Բալախանի>

* * *

Ձեր օրենքները ձեր սրտերի պես
Նեղ են ու անձուկ - ժեռ-կաղապարներ.
Նրանց մեջ հոգիս չի կարող հավքել:
Ձեր օրենքների, ձեր սրտերի մեջ -
Օ՜, ես կպայթեմ և ինչպես կայծակ
Ես կշանթեմ ձեզ և վեր կճախրեմ
Դեպի բարձունքը նոր, ազատ կյանքի,
Ուր ես է անսանձ, վսեմ, անիշխան
Եվ դեպի խորքը խորհուրդներով լի
Գերսքանչ զանգի տիեզերական:

<1902>

* * *

Վաղուց էր նիրհած, հիասթափ Ոգիս
Չէր շնչել բույրը վեհ գեղեցկության,
Նորից թև տվիր ոգևորության.
Քու վիթի չքնաղ աչերը անուշ
Ոսկի անուրջներ հոգումս վառին,
Եվ ճաճանչները քու սրտի քնքուշ
Վսեմ, սուրբ սիրո հրապույրը բերին:
Ինչո՞ւ է սիրտս բախում, նազելիս,
Բյուր հիացքներով լցվում եմ նորից,
Դյութական երգեր խնկում է հոգիս.
Նորից ճախրում եմ եթերում պայծառ
Եվ արտասվում եմ այնպես երջանիկ,
Որ մեռնել կուզեմ աշխարհի համար...

1903 փետրվարի 17
Բաքու

* * *

< ... > ըմբռնելի,
< ... > մեջ իմ եսն, իմ ոգիս,
Զգում է, խորհում որպես եզակի
Միակն իրական իմ եսն, իմ ոգիս:

Ես խորն զգում եմ, որ ամենայն իր
Միայն իմ ոգով գոյություն ունի.
Որ ամենայն իր սուտ է ու պատիր՝
Իմ եսից բացի, իմ ոգուց բացի:

Իմ եսը իրոք, արդարև միայն
Տարածության մեջ կյանք ու նյութ ունի.
Տիեզերքը մեզ թվում է սակայն,
Նա երևույթ է, գոյություն չունի:

Ես խորն զգում եմ <...>
Եվ ժամանակը, աշխար<հը >
Իմ ոգուց, եսից ծնունդ են առել,
Այն, ինչ որ ես չեմ,- չկա բնավին:

Ես խորն զգում եմ, որ անհուն, անմահ
Տարածությունը գաղափար է սոսկ.
Իմ եսն է խորհում, և ապրում է նա,
Իսկ տիեզերքը երազ է, ցնորք...

II

Ոգիս այրվում է հազար արևով.
Ես ույժ եմ,- հզոր, անիմանալի...
Փոքր են ինձ համար և երկինք, և ծով,
Ես մեծ եմ, ոգիս, ոգիս՝ վիթխարի:

Իմ սրտի խորքից ծնունդ են առնում
Մեծ ուղիները բարվո և չարի.
Կամքիս սլաքը ուղիղ է թռնում, -
Եվ նա է չափը բարվո և չարի:

Ամբոխն է չնչին, անոգի, անկար.
Ես կամիմ տիրել, իշխել մարդկության
Եվ լինեմ աստված աշխարհ<ի> համար
Եվ կամքս՝ օրենք, և խոսքս՝ պատգամ:

Տիեզերք կուզեմ, կուզեմ ես նրան
Հասնել և անցնել եզերքից այն կողմ.
Ժամանակից դուրս և տարածության
Թափառել թափով, ինչպես ոգե-հողմ,
Եվ կուզեմ ապրել անմահ, հավիտյան
Ժամանակից դուրս և տարածության:

III

Դարերի խոսքը ես ասել կուզեմ,
Ոգիս բարբառն է տիեզերական
Խոհերս վսեմ, վշտերս վսեմ
Եվ իմ օրենքի սկիզբն ու վախճան:

Ոգիս ազատ է մարդկանց կարգերից
Եվ անկաղապար ազատ, անսահման,
Դարերի վերա, դարերի խորքից
Ձայնս պիտ հնչե մարգարեական...

1903

* * *

Ինչպես աղբյուրը մաքուր, կարկաչուն
Անցնում է մեռած քարերի միջով.-
Թող խոսքդ լինի այդպես ջինջ, հնչուն,
Թափանցե, անցնի ամբոխի սրտով.
Թող խոսքդ լինի հզոր և ուժգին՝
Բխած քո մռայլ հոգու խորքերից. –
Մենք կհավատանք քո անկեղծ խոսքին,
Եվ մենք շարքերով կգանք քո հետքից:

1903

* * *

Քեզ երազելով՝ ես ճամփա ընկա.
Անուշ շշունջով, ներող <պաչերով>.
Գիշերը աստղոտ, զուլալ, լուսնկա,
Եվ հեռվում փայլուն մշուշի նուրբ ծով

Լեռները հպարտ, հախուռն հորձանքով
Շարվել են շուրջս - այնպես լուռ, լազուր,
Գարունն է բուրում այնտեղ վարդերով,
Ու կարկաչում են ակներ ու աղբյուր...

Աստղերն են երգում սրտիս խորքերում,
Հոգիս լցվում է գարնան բույրերով –
Քնքուշ կարոտով կուրծքս է զարկում –
Եվ արտասվում եմ քեզ երազելով...

<1903,
Ղազարապատ>

2-II

* * *

Էյ վա՜խ, անցան օրերս, անցան,
Առանց արև օրերս անցան. –
Սրտիս խորքից ա՜խ քերելով. –
Դալար կյանքիս օրերն անցան...

<1903>

* * *

Դարդը սրտիս՝ կյանքս եմ մաշում,
Ու [ծով] դարդիս չափ չկա.
Մոլորվեր եմ ծով աշխարհում,
Ոչ ճար ունեմ, ոչ ճամփա...
Սարի հովին դարդս կուտամ,
Հովը անուշ չի տանի.
Դարդս ծանր է, դարդս՝ դառն,
Հովը անուժ չի տանի:
Դարդս կուլամ ու աստղերուն
Մեկիկ-մեկիկ կպատմեմ.
Խոր ցավ կզգան էնոնք բարձրում,
Բայց վերեն վա՜ր... ի՜նչ անեն...
Ա՜խ, աշխարհում [ծով] մարդկանց մեջ
Գիտեմ, դեղ կա իմ դարդին,
Բայց ես մարդկանց ինչպե՞ս ասեմ.
Դարդս մարդիկ տվեցին...

<1903>

* * *

Էս աշխարհում մենակ եմ
Ու ղարիբ եմ ու հիվանդ.
Ա՛խ, տեղ ու դեղ չունեմ
Ու ղարիբ եմ ու հիվանդ:

<1903>

* * *

«Ճշմարտությունը խոսի՛ր այս աշխարհի հզորների առջև»:

Ջենդ-Ավեստա

Ճշմարտությունը մի հատ է միայն,
Եվ նա իմ մեջն է - անոթն եմ նորա.
Լեզվակը զանգի տիեզերական
Իմ մեջն է հնչում - բարբառն է նորա:
Մոլորության մեջ սուզված են մարդիկ,
Եվ ստության մեջ աշխարհն է նիրհում-
Դո՛ւրս եկ, մարգարե, դու լույսի մարտիկ,
Դու արդարության քարոզ աննկուն:
Հրեղեն խոսքով, ինչպես սուր սայրի,
Կանգնի՛ր աշխարհիս հզորի առաջ,
Թող բռնակալի ճակատը այրի
Սուրբ ճշմարտության բոցով աննվաճ:
Եվ արիասիրտ, և ձայնով խրոխտ
Գեղեցկի, բարվո պատգամներն ասա՛
Եվ մի՛ երկնչիր, անկի՛ր անհողդողդ
Կատարելության մեծ շավղի վերա...

1904 հունվարի 31

* * *

«Նույնիսկ խավար Սիրիմանը վերջը պիտի հալվի լույսի մեջ»:

Ֆիրդուսի

Սրտերը մարդկանց ապառաժ ու քար
Գուլ պատնեշներով շուրջս են կանգնած.
Եվ քարայրի պես՝ երկինքը խավար
Մանր ու հեղձիչ կրծքիս է չոքած.
Եվ որ մեռելի բաց-պաղ աչքի պես
Համր սարսափով իմ սրտի դիմաց
Աշխարհն է ընկել - /խոլ, մռայլատես/.
Եվ բյուրալեզու չարիքն է ահեղ
Բռունցքով երկաթ իշխում ամեն տեղ:
Բայց աչքը հոգուս տեսնում է մի լույս
Հեռո՛ւ, հեռավոր ափերում վայրի...

Դեռ սեր կա իմ մեջ, հավատ և վառ հույս,
Կթռչեմ այնտեղ, թող սիրտս այրի
Լույսով հրեղեն... /բայց ծանր է ուղիս
Դժխեմ, խոլ-խավար. /ոտներս՝ տկար/
Եվ արյունոտված փշերից դաժան,
Բայց ծարավ, նոթի, անքուն, վաստակած,
Եվ կուրծքս տապից, որպես մի իժից
Խայթված ուժգին՝ խեղդվում է հիմա.
Առա՛ջ, անհողդողդ և գոտեպնդվի՛ր-
Դեռ սեր կա քո մեջ և հավատ, և հույս:
Թե էության մեջ բացարձակ, անմահ
Խավարը վերջույն լույս պիտի դառնա...

1904 փետրվարի 4

* * *

Աչքերս՝ պղտոր, աչքերս՝ խավար
Եվ թառամած են, պատած մշուշով.
Իմ հոգու խորքում կա մի մեծ աշխարհ.
Եվ անջատված է մի անջրպետով
Իմ հոգին դրսի, ունայն աշխարհից:
Թեև նայում եմ շուրջս ամեն օր,
Լսում եմ թեև ամեն մի շշուկ,
Բայց հոգիս իրոք ոչինչ չի տեսնում,
Բայց հոգիս իրոք ոչինչ չի լսում.-
Աչքերս՝ պղտոր, աչքերս՝ խավար՝
Անցնում եմ հսկա ամբոխի միջով,
Բայց կույր եմ կարծես, բայց խուլ եմ կարծես...

Աշխարհի տաղտուկ եռումին անմասն
Եվ անունկնդիր ռամիկ ձայներին՝
Իմ հոգուս խորքում մի ամբողջ աշխարհ
Կրում եմ մարդկանցից անտես ու գաղտնի:
Արևն իմ հոգում ուրիշ փայլ ունի,
Աստղերը ուրիշ երգ <են> ինձ բուրում,
Աշխարհն ինձ համար երազ է թվում՝
Եվ չա՜տ անհեթեթ գործերը մարդկանց.
Իմաստ չեմ տեսնում մարդկանց կյանքի մեջ. -
Եվ չեմ հասկանում մտքերը մարդկանց...

Իմ հոգուս խորքում կա մի մեծ աշխարհ՝
Միակն իրական և հավերժական,
Կատարելագույնն այլ աշխարհների...
Մեծ տիեզերքն է իմ հոգու միջով
Խոսում, բարբառում,
Եվ կամքս նրա կամքն է հզորեղ...

1904 փետրվար-մարտ
Նոր Նախիջևան

ԱՐԱՋԻ ԾՆՈՒՆԴԸ

Գիտե՞ք դուք արդյոք, տեսե՞լ եք արդյոք
Բյուրակներ սիրուն, սարերը ալմա՛ստ.
Է՛յ, անուշ սարեր, ամեն մի քարից
Աղբյուր է բխում, ամեն մի թփից
5 Բլբուլ է խոսում.
Երկինքը չունի այնքան շա՛տ աստղունք,
Ինչքան Բինգյոլը՝ նշխուն ծաղկունանք,
Շողերն ու ցողերն շրթունքի վերա՝
Հազար ծաղկունանք, հազար ծաղկունանք:

10 Ով խմե ջրեն ակն աղբյուրների,
Նորեն կյանք կառնի...

1904 փետրվար-մարտ
Նոր Նախիջևան

* * *

Մի մարալ աղջի՛կ...
Աչքերը ծովի պես խորունկ,
Աչքերը սերի պես անուշ.
Մազերը թավիշ գիշերվա նման
5 Փռվում էին ու ծփծփում
Թիկունքի վերա...
Բոյը՝ թելիկ-մելիկ,
Շրթունքները՝ շարմաղ,
Կարոտի պես ծարավ-պապակ՝
10 Սիրո գարուն համբույրներին...

1904 փետրվար-մարտ
Նոր Նախիջևան

* * *

Ցուրտ է ու ձմեռ.-
Ու դումման սարից քամին կարշավե
Պաղ ու բքաբեր...
Ա՜խ, ինչպես սարի ծաղկունքն անուշ
Ծածկվան ձյունի տակ,
Ինչպես անտառի
Շավիղը դալար թաղվեց ու կորավ
Զորցած ու դեղին տերևների տակ...
Այնպես էլ կորավ զվարթությունս.
Զվարթությունս, ա՜խ, անդարձ կորավ...

1904 ապրիլի 30
Մոսկվա

* * *

Երազիս տեսա, որ մոռացության
ժայռոտ ափերում
Ես ընկած էի զարկված, ջարդված.
Վաղուց էր, թե նոր՝ ես այդ չգիտեմ-
Մի օր էր անցել, թե անթիվ դարեր՝
Ես այդ չգիտեմ, չեմ կարող գիտնալ...
Շուրջս ունայն,- ոչինչ չէր շարժվում՝
Ոչ զեփյուռ շնչում, օդը երերում,
Եվ չոր ու ցամաք - անբույս ու անջուր,
Անսահման անդորր, անհուն լռություն:
Միայն հոգիս էր զգում ու շարժվում,
Եվ զգում էի շարժումը հոգուս...
Բայց և չարի գաղափարն արդեն
Մոռացված վաղուց. կյանքի և մահվան
Սահմանն անցած.- հոգիս ծավալված
Տարածության պես - և ընկած էի
Զարկված ու ջարդված ժայռոտ ափերում...
Աշխարհից, կյանքից չչուկ չեմ լսում.
Բայց հոգուս խորքով մեկ-մեկ անցնում են
Վաղուց, ա՜խ, վաղուց ծանոթ ու սիրած
Դեմքեր ու վայրեր:

1904 ապրիլի 30
Մոսկվա

* * *

Մանուկ օրերից բախտի ետևից
Ես շա՜տ շրջեցի, անդուլ շրջեցի.-
Լիուլի կյանքի անուշ երազով
Հոգիս տոչորված, հոգիս տոգորված. -
Բայց խոր վշտեր ու վերքեր միայն ստացա:

1904 մայիսի 1
Մոսկվա

* * *

Մարդկանց ժպիտին դու մի՛ հավատա,
Անուշ խոսքերին դու մի՛ հավատա,
Ա՛յ դու մաքուր սիրտ, մինչև ե՞րբ, ասա՛,
Հազար փորձերից դու չխրատվիս:
Անուշ խոսքերը թույն են ու դաշույն.
Սիրտդ են ծակում, հավատդ խեղդում,
Հեռո՛ւ մարդկանցից, վեհ մտերմության
Եվ անկեղծության նրանք չեն արժանի:
Այս կեղծ ու պատիր, չինծու աշխարհում
Դու մենակ ապրիր,- և հազարի մեջ,
Եվ բյուրերի մեջ որոնիր մեկին,
Որը քեզ սիրել, հասկանալ, պաշտել,
Որը քեզ համար մեռնել ուզենա:
Խայթի՛ր ամենքին, ծաղրի՛ր անխնա.
Թո՛ղ որ ամենքը քեզ, քեզ չսիրեն.
Օրենքդ լինի - միշտ զզվանք տածել
Դեպի ուղղակի քեզ սիրողներին.
Շատերի սերը,- սերերը չնչին.
Օրենքդ լինի - ապրել մեն-մենակ՝
Ամենքից ատված և մեկից պաշտված:

1904 մայիսի 1
Մոսկվա

* * *

Վիշտս ծանր է, սրտիս վերքը՝ անդարման,
Մեր սարերի կռունկի աչք աղբյուրներ.
Կացե՛ք, կացե՛ք, արցունքներս ձեզի տամ,
Տարեք ձեզ հետ, տարեք տվեք Արազին:
Մեր ձորերով, մեր դաշտերով, հողերով
Թող Արազը դարդս տանի ծովերին,
Թող ծովերը վիշտս պատմեն աշխարհին:

Վիշտս մեծ է, վերքը սրտիս՝ անդարման,
Մեր դաշտերի օրոր-շորոր զով հովեր.
Կացե՛ք, կացե՛ք, մրմունջներս ձեզի տամ,
Տարեք ձեզ հետ, տարեք տվեք Մասիսին,
Մեր սարերով, մեր ծովերով, ամպերով
Թո՛ղ Մասիսը դարդս հասցնե աստղերին,
Ու աստղերը վիշտս պատմեն աշխարհին:

1904 մայիսի 4
Մոսկվա

* * *

Սև արծիվն ահա գլխիս վերայով
Թափ տվեց թևերն, անցավ, սլացավ
Լեռնագագաթից լեռնագագաթներ...
Այս հեղձամղձուկ, այս մռայլ հովտում
Ես տառապում եմ և՛ տիվ, և՛ գիշեր.
Օտար եմ այստեղ, մոլոր ու շվար.-
Իմ հայրենիքը լազուրն է պայծառ,
Եվ ընկերներս - արծիվն ու ամպեր...
Փչրի՛ր շղթաներդ, իմ ազատ ոգի.
Եվ արհամարհիր կինն ու հոտն-համայնք. -
Ճախրի՛ր, սլացի՛ր լեռները վայրի...
Եվ հետ մի՛ նայիր և մի՛ ափսոսիր -
Դու ի՞նչ ես թողնում զարշահոտ հովտում. -
Ամբոխը այնտեղ կուրացած կրքով
Ուրիշի շրթնից պատառն է խլում.
Ամբոխը այնտեղ վավաշ հայացքով
Կուսական շրթնում ատամն է խրում.-
Կուսական շրթո՛ւնք - արժե՞ հավատալ:
Եվ կինն ի՞նչ է որ - անսիրտ, անհոգի
Դև արյունարբուշտ, որ յոթն երախով
Ողջ ուղն ու ծուծը ծծում է մարդու...
Ի՞նչ կա կնոջ մեջ - ստոր կրքերի
Դիվական ճահիճ, զազրելի հաճույք,
Կա՞ արդյոք երկրում ուրիշ մի գազան
Եվ հոգեվաճառ, նյութապաշտ, դաժան, -
Քան կինը՝ չքնաղ զանգվածն այս մսի...

...Թռի՛ր, սլացի՛ր, իմ ազատ ոգի,
Լեռնագագաթից լեռնագագաթներ, -

Մարգարեական դու ցնորք ունիս. –
Բազմի՛ր ժայռեղեն գահույքի վերա՝
Մռայլ ճակատդ պուրպուր ամպերում՝

Երազի՛ր միայն ցնորքդ վսեմ...
Քո սերը լինի աստղերն հեռավոր
Եվ տիեզերքի ափերն անեզր.

Քո սերը լինի անմահությունը քո
աստվածության,
Արարիչ մտքի, –
Քո աստվածությունն - քո սերը լինի...
Իմ ազատ ոգի:

1904 մայիսի 16
Մոսկվա

ՆԱՊՈԼԵՈՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԻ ԱՌԱՋ

Մեծին Կեսարի վեհ դամբարանի
Մարմարիոն եզրին
Կանգնած եմ ահա,
Ինչպես ահավոր անդունդի ափին.
Այս ի՞նչ է սակայն - գո՞ւբ է առյուծի,
Թե՞ մի այլ աշխարհ՝ մի գերբընական.-
Եվ գրանիտյա ժայռեղեն գրկում
Հանգչում է մեծը բոլոր քաջերից.
Հանգչում է այնտեղ
Փոթորիկն ահեղ,
Երկիրը ցնցող:

Նորա ոտների, պատվանդանի տակ
Հլու և պարտված, ընկած են ընկճված
Ազգեր, աշխարհներ.
Անապատների բազմհազարամյա
Խրոխտ բուրգերն են խոնարհվել այնտեղ.
Եվ Լիբանանի մայրիներն ազատ,
Ասպետ Սպանիան, Իտալիան շքեղ,
Դանուբ և Էլբա, ծովերից ծովեր,
Եվ Ռուսաստանը լայն, անծայրածիր...

Կանգնած ակնապիշ, մտասույզ, լռիկ՝
Նայում եմ անվերջ և չեմ հասկանում.
Այս գրանիտյա հեղձուկ նկուղում
Այդ դո՞ւ ես հանգչում, ով դու հրաբուխ,
Մեծ օրենսդիր և միահեծան
Դու իմպերատոր ամբողջ աշխարհի:
Մի՞թե մեռել ես, մեռնում են ինչպես
Այս մահկանացու մարդիկ անհամար.
Ո՛չ, նիրհ ես մտել դարևոր քնով՝

Հոգիդ ընդգրկած ահեղ երազներ.
Սուրբ հայրենիքդ ազգերի ջահն էր,
Առաջամարտիկ, նախակարապետ,
Այժմ պարտված, այժմ անարգված
Դաժան, բռնակալ, խոլ Տևտոններից.
Տե՛ս, աշխարհներդ կապանքների տակ
Ջնչին և տմարդ թագերի ներքո.
Տե՛ս, քո ազգերը, ժողովուրդը քո
Քեզ են ձայնարկում, քեզ են աղերսում.
Զարթիր վեհ քնից, հասիր օգնության,
Ո՛վ դու գերամարդ, անմահ Նապոլեոն,
Դու աստվածային հզոր խարազան...

Եվ սակայն արդյոք օրը պիտի գա՞,
Երբ գալլիական աքաղաղը վեհ
Նորից թափահարե թևերը հսկա
Եվ հուժկու ձայնով քունը վրդովե
Թմրող մարդկության.
Ձայն տա աշխարհին՝
Ընդդեմ բռնության, չարին և ստին,
Եվ ստրկության, կեղեքման ընդդեմ
Սրբազան ռազմի զարթոնը երգե.
Հոգեմաշ խավարն հալածող լույսի,
Վեհ առավոտին, նոր արշալույսի
Գալուստն հռչակե,
Եվ եղբայրության և ազատության
Մեծ օրն ավետե....

1904 մայիսի 16
Մոսկվա

* * *

Դու սիրուն էիր, գեղեցիկ էիր,
Աչերդ խորունկ, աչերդ անուշ,
Ուր քո պայծառ հոգիդ էր այրվում –
Քո քնքուշ հոգին, քո արի հոգին,
Որից բխում էր ջինջ աղբյուրի պես
Հոգեշունչ երգեր, երկնային երգեր...
Բայց հիմա չկաս...
Ձքնաղ, ոսկեվառ երազի նման
Անցար, չքացար, մի՞թե չքացար...
Ո՛չ, ո՛չ, նազելիս, անկարելի է.
Դու դեռ ապրում ես հայոց աշխարհում,
Այն արյունաներկ, նվիրական աշխարհում,
Եվ դարձյալ սիրուն, դարձյալ գեղեցիկ
Շրջում ես հայոց բյուրեղ լեռներում
Ու նորից քո սրբազան սրտից
Երգում ես երգեր՝ հրաշալի, վսեմ...
Եվ մենք ամենքս լսում ենք քեզ,
Լսում ենք քեզ ու չենք տեսնում:

<1904
Մոսկվա>

* * *

Վեհ ընկերներս կռվի դաշտ թռան՝
Զոհ տալով իրենց սրբազան հոգին,
Իսկ մյուսները մեկ-մեկ հեռացան
Եվ կյանքի ճամփով քաշվան, գնացին:

Օր օրի վրա փակվում են իմ դեմ
Սրտեր ու դռներ՝ վաղեմի սիրած.
Ա՜խ, մնաց մենակ սիրտը մայրենի-
Մի մաշված ծերուկ, մի սիրտ տրորված...

Ո՞ւր գնեմ դարդոտ իմ չոր գլուխս -
Կյանքի մրրկով զարնված թռչուն.-
Ուրիշի նման բույն չշինեցիր
Եվ հիմա անտեր ու որբ մնացիր:

Ո՞ւր ուղղեմ հոգնած քայլերս հիմա -
Մեջքիս պես կոտրավ ցուպս պանդխտի,
Հավատս հանգավ, ուժ, կորով չկա -
Չկա թռիչքը առնական սրտի...

Փշոտ ճանապարհ, ժեռոտ ճանապարհ,
Տար ինձ անապատ հեռո՜ւ, ամայի՜.-
Ու անապատում թո՜ղ մնամ մենակ՝
Տխուր փայլփլող, ինչպես մի կրակ:

Ամեն կողմերի հողմերի դիմաց՝
Այսօր կամ վաղը մարող մի կրակ,
-Փշո՜տ ճանապարհ, ժեռո՜տ ճանապարհ,
Տար ինձ անապատ հեռավո՜ր, օտա՜ր...

1904 հունիսի 30
Բաքու

* * *

Սիրտս՝ դարդի ծով, սիրտս՝ վիրավոր-
Ծանր կհևա քար արցունքի տակ -
Գլուխս առնեմ, ընկնեմ սար ու ձոր.-
Իմ չոր գլուխս՝ աշխարհում մենակ...

Թափառեմ խոլոր ու մտամոլոր.
Է՜յ գիտի, անուշ սարեր ու ձորեր.
Արցունքս թափեմ, թրջեմ սար ու քոլ.

Մենակ թափառեմ աշխարհը բոլոր՝
Արտասունք թափեմ, թրջեմ սար ու ձոր...
Ա՜խ, ես լավ գիտեմ՝ արցունքից բացի
Մաքուր բան չկա էս աշխարհի մեջ...

<1904 հոկտեմբեր
Թիֆլիս>

* * *

Այրվում եմ ես արևի պես,
Հուր ու կրակ եմ անչեջ.
Թող գրկիդ մեջ հոգիս տամ ես,
Սերը քամեմ հոգուդ մեջ:

1904

* * *

Ջինջ ծովակի մեջ կա մի լուռ կղզի,
Մենավոր, անդորր ժայռեղեն մի գահ.
Ուր քաղցր հնչում է ղողանջը զանգի
Եվ փռվում մեղսոտ աշխարհի վերա:

Եվ լուռ կղզու մեջ կա նվիրական
Հինավուրց քարայր, մի վեհ սրբավայր:
Այնտեղ պիտ գնամ - լամ, քավեմ, ողբամ
Հոգիս մեղավոր և բազմաչարչար:

Եվ պիտի ծեծեմ կուրծքս քարերին,
Եվ պիտի հեծեմ - ցնորքս անբիծ,
Եվ պիտի գտնեմ սերը երկնային,
Որ հոգիս այրե և մաքրե նորից...

<1904>

* * *

Լսում եմ որոշ՝ անուշ հնչյուններ
Սիրած երգերի, քնքուշ խոսքերի...
Բայց կարոտանքի, բայց <վիրավորանքի>
Եվ ոչ մի տենչանք հոգիս չի հուզում.
Եվ գոհ եմ անհուն, որ տարածության
Նման ծավալված՝ ես կյանք չեմ ուզում,
Ես մահ չեմ ուզում...
Եվ ինչո՞ւ ուզել՝ ինչ կար աշխարհում.
Ես խոր սիրելուց մեռել եմ արդեն
Եվ բուռն ատելուց զզվել եմ սաստիկ,
Անզոր վրեժից վաստակել անչափ...
Եվ գոհ եմ անհուն, որ մոռացության
Ժայռոտ ափերում ընկած եմ ջարդված,
Եվ որ հիասքանչ անհունություն է
Հոգիս զարդարում, հոգիս համբուրում...

<1904>

* * *

Խոր վշտերի մեջ լեզու չունեցա –
Հայտնել աշխարհքին տենչանքս անշեջ.
Սրտիս արցունքը լալ չկարողացա,
Քարացավ, մնաց տխուր կրծքիս մեջ:

Խորին վշտերով ես թափառեցի՝
Նոր հմայքների աշխարհ գտնելու,
Նոր ցնորքներու հույսով շնչեցի,
Եվ աչքս՝ կարոտ սիրո բույրերու:

Եվ ամենուրեք չոր ու անհամբույր,
Աշխարհը՝ տաղտուկ, աշխարհը՝ ունայն,
Եվ տարեցտարի արցունքը սրտիս
Շիրմի քարի պես ծանրացավ միայն:

<1904>

* * *

Ավա՜ղ, ցնդվեց, ինչպես երազանք
Հավատս մաքուր՝ մարդիկը դեպի.-
Իմ սուրբ արցունքներ, իմ վեհ տառապանք –
Իզո՞ւր թափվեցիք, իզո՞ւր տոկացի. –
Շատերի նման ես նյութի համար
Գլուխ չբերի ոտների ներքև,
Իմ խոսքս ազատ, ճակատս պայծառ –
Ես այրվեցի սրբության առջև.
Օտար ու պանդուխտ ճամփորդի նման
Հայրենիքիս մեջ անտուն մնացի –
Գլուխս դրի չոր քարի վրան –
Աչքս չգցի ուրիշի հացի...
Եվ դորա համար ես ամենից շա՜տ
Կրեցի տանջանք ու դառն հալածանք.
Եվ դորա համար մնացի աղքատ –
Եվ ցուպը ձեռիս՝ հավիտյան մենակ...
Դուք՝ բարձրագլուխ հայրենի լեռներ,
Ձեզ մոտն եմ գալիս, ճանաչո՞ւմ եք ինձ.
Ես հպարտություն ձեզնից եմ սորվեր,
Արծիվներիդ հետ բույն տվեցիք ինձ...

<1905> հունվարի 16

* * *

Հոգիս թռչում է մոլոր ու խոտոր
Ճանապարհներով, և չգիտեմ - ո՞ւր.
Աշխարհի ուղին մեծ է <ու> ստոր,
Որով հոսում է նենգ ու անմաքուր
Ոհմակը մարդկանց կեղծ ու հանցավոր:
Դաժան փշերից և արյունոտան
Ոտներս տկար - և կուրծքս տապից
Խեղդվում է հիմա...
Ա՜խ, անապական
Լեցուն աղբյուրի թովչանքն եմ ուզում -
Ժպիտը աստղի հեռավոր, պայծառ.
Եվ նիրհել, մեռնել երկնքի խորքում
Անմահ, բացարձակ էության համար...

<1905> հունվարի 16

* * *

Դու ինձ սիրում ես. քու մաքուր հոգին՝
Աստղերի շքեղ շողերից հյուսված,
Աղամանդի պես սուր ու խստագին,
Կանգնել ես մեղսոտ աշխարհի դիմաց...

Եվ չես սասանվում. մեղքի օվկիաններ
Բախվում են քնքուշ կրծքիդ - ետ դառնում.
Նույնիսկ չեն այդպես անդորր-անվեհեր
Գրանիտից մռայլ ափերն աննկուն...

Ես քեզ սիրում եմ. և սիրես ահա՛
Նվեր եմ բերում ձեռներիդ պայծառ,
Մաքրիր, արտասվիր իմ սրտի վերա -
Եվ սրբագործիր վեհության համար...

Ասա՛, և գնամ աշխարհից պոկեմ
Սերմը չարության.
Ասա՛, և թռնեմ երկնքից խլեմ
Լույսն անմահության...

<1905> հունվարի 16

<ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ>

Դու կանգնել էիր՝ ճակատդ պայծառ,
Ժայռի պես ամուր, անխորտակելի.
Շուրջդ ծփում էր հոգնած ու խավար
Հոծ բազմությունը տառապողների,
Որոնց մեջքերը կարիքն էր փշրել,
Որոնց աչքերում վիշտն էր կարկամել...

Եվ խոսքդ հզոր քո ազնիվ սրտից,
Եվ խոսքդ արդար բխում էր խրոխտ,
Մե՛րթ շառաչում էր վես, որոտալից,
Եվ ծառանում էր հուժկու, անհողդողդ
Զարկված ու զրկված հազարների հետ՝
Ընդդեմ բռնության և կեղեքումի:

Մե՛րթ լաց էր լինում հարազատի պես
Եվ պատգամում էր քո խոսքը հզոր
Սուրբ ազատություն, և սուրբ իրավունք,
Եվ արդարություն, և եղբայրություն:

Եվ փռում էր արշալույսի պես
Ողջ լքվածների, խեղճերի գլխին,
Եվ հրդեհում էր քո խոսքը հզոր
Բոլոր սրտերը անհույս ու տխուր...

<1905>

* * *

Աղջի՛կ նազելի, աղջի՛կ գեղեցիկ,
Ինչպես արտուտը արևին կարոտ,-
Թռչում է սիրտս-
Պայծառ ու գարուն աչերիդ կարոտ-
Մի՛ դիպչիր սրտիս, արյուն չմնաց.
Սիրուց մեռնում եմ...
Գարուն չմնաց:

<1905>

* * *

Ո՛վ ազատություն, աշխարհի արև,
Ոգիներն ամեն՝ ըմբոստ ու հզոր՝
Թիթեռների պես՝ վեհ, սավառնաթև
Ճախրում են, սուզվում քո մեջ սիրավառ:
Եվ բորբոքում են հուրդ նորենոր-
Իրենց այրումով՝ ոգիներն հզոր...
Աշխարհի արև, ո՛վ ազատություն,
Քեզնով է շնչում մարդկությունն ամեն-

Քեզնով է կյանքը ծաղկում, ստեղծվում -
Եվ փառք հավիտյան հզոր ու վսեմ
Վեհ ոգիներին, որոնք պահում են
Անշիջանելի արեգակը վառ...
Իրենց այրումով՝ անվերջ ու անմահ...

<1905>

* * *

Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի
Իժերը բոլոր թափեցին իմ մեջ
Իրենց թույները ցասման, վրեժի,
Թույները կիզող թափեցին իմ մեջ...

Այսքան տառապա՜նք, անարդարությո՛ւն,
Մարտիրոսացան սրբազան շարքեր,
Արյան հեղեղներ, նահատակություն՝
Մի ազգի բաժին - հազար տարիներ:

Մարդկության կողմից դարերով նյութված
Էլ սահման չկա մեր համբերության,
Էլ անուն չկա մեր տառապանաց...
Մեր գերմարդկային, մեր գերբնական:

Քար է մարդկության խիղճը լրբենի.
Աղբ ու կղկղանք՝ ազգերը բոլոր.
Վաճառված, դահիճ և պոռնկորդի
Եվ խոզեր, բոզեր՝ մարդիկը բոլոր...

Է՛լ քար չմնաց այս աշխարհի մեջ,
Որ չողողվեր մեր սուրբ արյունով,
Էլ նշույլ չմնաց այս լիրբ մարդկանց մեջ,
Որ չհղփանար մեր սուրբ արյունով...

Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի
Իժերը բոլոր թափեցին իմ մեջ
Իրենց թույները ցասման, վրեժի,
Եվ սիրտս է եռում վրեժով անչեջ...

Դու, մոխրրի վրա նստած ժողովուրդ՝
Հոշոտված մանկանց դու՝ խելագար հայր, -
Էլ ի՞նչդ մնաց, ի՞նչ պիտ կորցնես.-
Ինչպե՞ս պիտ չափես զրկանքդ անծայր...

Դուրս եկ, դո՛ւ վագր, դո՛ւ չղթայազերծ,
Աստված ու երկինք ոտաց տակ տալով,
Խփի՛ր, հարվածի՛ր, ջախի՛ր, ջախջախի՛ր,
Զինված ռումբերով, թույնով, կայծակով:

Պայթի՛ր, հոշոտի՛ր, խփի՛ր, ջախջախի՛ր
Բոլորին, որոնք մարդու են նման
Երկինքը փուլ տուր, աստղերը մարիր -
Փշրի՛ր աշխարհը մի ճվի նման:

Քար քարի վրա, թո՛ղ բան չըմնա -
Փշրի՛ր գանգերը, և թող չանսատակ
Լինին բոլորը, և դու նրանց հետ-
Ընկի՛ր աշխարհի փլատակների տակ...

<1905>

ՎԵ՛Ր ԿԱՑ, ԺՈՂՈՎՈՒՐԴ

Նորից խռնվում են մթագին ամպեր
Մեր արյունավառ լեռների վերա.
Եվ ագռավները՝ տխուր, բոթաբեր,
Տե՛ս, հավաքվում են, կռավում ահա,-
5 Իմ սո՛ւրբ հայրենիք, մի՞թե չես լսում
Խուլ մռնչյունը այն հորդաների,
Մղում է որոնց այն արյունասուն
Տեր-միապետը բյուր զնդանների,
Կախաղանների, արյան ծովերի,
10 Որ ազատությունն խեղդել է ուզում...

Ո՛վ հայ ժողովուրդ, ո՛վ դու դարևոր
Ազատամարտի վսեմ արյան մեջ
Մկրտված զինվո՛ր -
Ինչո՞ւ ես ճնշում զայրույթդ անշեջ,
15 Որ մրրկում է հոչոտված հոգիդ. -
Հերի՛ք, համբերես - քո արտն ու արոր
Մոխիր դարձրեցին և մանուկներիդ
Սրի հանեցին և անարգեցին
Սրբություններդ, պատիվդ բոլոր...

20 Տե՛ս, աչքիդ առաջ և՛ հռհռում են,
Ե՛վ հղփանում են դահիճներդ ստոր...

-Վե՛ր կաց, ժողովո՛ւրդ, վե՛ր կաց միահամուռ,
Եթե սիրտ ունիս, եթե չես ստոր.
Եթե զազիր չես դահիճներիդ պես:
25 Վե՛հ ազատության դրոշը կարմիր
Բարձրաց<ր>ու հպարտ լեռներիդ վերա.
Եվ արդարադատ քո սուրը հանի՛ր.

Գրոհ տուր լպիրշ թշնամուդ վերա.
Հորիզոններից մինչև հորիզոն
30 Եվ փոթորկաշունչ զայրույթով, ըմբո՛ստ
Փչրի՛ր, խորտակի՛ր գահ ու գայիսոն,

Մի անգամ մեռիր, քան հազար անգամ
Կամ եղի՛ր ազատ, հզոր, ինքնիշխան,
Կամ ընկի՛ր հպարտ, ճեռքովդ ավերակ
35 Բռնապետության բեկորների տակ:

< 1900-ական թթ. առաջին կես>

* * *

Նա սուրբ է, բարձր, ամենքից վսեմ,
Եվ ստրուկներիս փրկության համար
Ցուր հազար սրտով բռնության ընդդեմ
Կռվեց ու ընկավ ամենքիս համար:

5 Նա վեհ է, բարձր, ամենքից վսեմ.
Լույսի, ճշմարտի, գեղեցկի համար
Ցուր հազար կյանքով չարիքի ընդդեմ
Կռվեց ու ընկավ աշխարհի համար:

Ո՞վ գիտե, հիմա սուրբ փոշին նորա
10 Ուրտե՞ղ է հանգչում՝ ո՞ր դաշտում, սարում.
Բայց զվարթ ապրեք, սեր ու ընկերներ,
Ձեր անդորր կյանքը նա չի խանգարում:

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Նույն դաշտերը՝ դալար, անդորր –
Լուսնկայի շողի տակ –
Նույն ժայռերը լուռ ու խոլոռ –
Եվ ջինջ առուն նրանց տակ...

5 Երազ դարձած անուշ օրե՛ր –
Այստեղ, <այստեղ> - գրկիս մեջ
Համբուրեցի նրան քնքուշ
Համբույրներով վառ, անշեջ...

Ա՛խ, նա գնա՛ց ու մոռացավ,
10 Իսկ ես հիմա բութ ու ծեր –
Նույն հին աստղունք շողշողալեն
Նայում են ինձ անտարբեր...

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Վարդերի մեջ մատաղ գարնան
Համբույրները հալվում են.
Գիտե՞ս արդյոք - սիրտս, ինչքա՜ն
Վշտով անհույս, տխուր եմ:

5 Ես մի թռչուն՝ սիրով ծարավ,
Կյանքի թույնը խմեցի,
Երազներս հողմ<ը> տարավ.
Անթև, կոտրած մնացի:

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Սրտես կուց-կուց արուն կուգա -
Ջեմ դիմանա էս ծով դարդին -
Ծիծեռ-ծաղկով գարուն կուգա...
Ճար չի անե իմ ծով դարդին:

5 Աշխարհն աչքիս սև է դառել -
Արևն ինձի մլար ու մութ է.
Սիրտս աշխարհում դև է դառել
Սերն ընկերի կեղծ ու սուտ է...

Իմ դուշմընի թուրն է ազիզ,
10 Քան թե սերը ընկերների,
Զարկ սրտիս մեջ թուրդ, ազիզ,
Էլ չմնամ սիրուն գերի...

Հեռու՛, զազիր բարկ ու կրակ -
Ջրքվի, քեզի աչք չտեսնի -
15 Սերդ թաղիր փշերի տակ -
Մեռիր՝ քեզի մարդ չտեսնի...

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Ուրուրն ելավ մեգի միջից,
Նստեց խոժոռ ջրերին.
Կուրծքը զարկեց, թռավ նորից,
Մվաց, նստավ լերկ ժայռին:

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Մեր տանիքի մի անկյունում
Միծեռնակը չինեց մի բուն:
Մեջը ածեց երկու ձվիկ -
Երկու սիրուն պստիկ ճուտիկ:
Ճուտիկները ասին. - ծի՛կ, ծի՛կ,
Մեզ կսիրե՞ս, անուշ մայրի՛կ:

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Անգութ աղջիկ, թշնամու պես
Խոր խոցեցիր մատաղ հոգիս,
Ոչ կհանես թուրդ սրտես,
Ոչ ճար կանես մորմոք վերքիս:

Քակի՛ր ձեռքես սիրուդ շղթան,
Ծուփ-ծուփ ծովեր երթամ, կորիմ.
Ցավս հովին ու ծովին տամ,
Երկրեերկիր անդարձ կորիմ:

Սիրտս ու աշխարհ՝ բոց ու կրակ,
Ուրտեղ կերթամ, չունիմ դադար,
Ա՛խ, գելերին լինիմ ճարակ,
Սերեդ-թրեդ գտնիմ մի ճար:

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Ես սիրեցի, սիրեցի քեզ
Եվ այրվեցի սիրակեզ.
Անհուն վշտից իմ տենչանքիս
Դարձավ մոխիր իմ հոգիս:

Դարձավ մոխիր, և ցուրտ քամին
Հառաչանքիս առավ տարավ -
Ցանեց մոխիրս քո ճամփուդ վրա,
Ուր դու դրիր ոտքդ անգութ
Քո նոր սիրով երջանիկ...

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Քո սիրտը այրիր, որ նրա լույսով
Խավարը վանես և ճամփա բանաս –
Ամբոխը կգա և թշնամու պես
Կտապալե քեզ, կխողխողե քեզ,
Եվ քո նվիրական դիակի վրայով
Կընթանա դեպի հորիզոնն ազատ.
Եվ երբ նա հասնի
Ազատ ափերին,
Նա հետ կնայե և կհիշե քեզ,
Եվ ծունր կչոքե <քո> նշխարքի առաջ:

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Մայր-երկիր, կարոտ եմ քեզի,
Կուրծքս հողին կարոտ է –
Գրկեմ երկիրն - ողջ երկիրը,
Սեղմեմ սրտիս, համբուրեմ
Ծովերի հսկա շրթունքն
Ու վառ աստղերի աչերը:

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Ա՛խ, թե շա՛տ ապրես, շա՛տ սև պիտ տեսնես.
Մեկ-մեկ պիտ թաղես սիրելիներիդ,
Մենակ պիտ մնաս, որբ ու անընկեր,
Վերադ դուռը բացող մեկը չլինի...
Ա՛խ, թե քիչ ապրես, կարոտ պիտ մնաս
Սիրո երազին, սարի մարալին,
Գարնան վարդերը վերադ պիտ բուսնին,
Բայց վարդ ու գարնան կարոտ պիտ մնաս:
Մեկը պիտ չլինի՝ վերադ դուռ բանա...

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Ա՛խ, մինչև վախճանը համաշխարհային
Դեռ շատ տանջանք կա աշխարհի բաժին.
Ամեն կենդանի ծնվում է իզուր
Ցավով, տանջանքով ապրելու մի օր,
Եվ անդարձ-հավերժ մեռնելու համար
Եվ անօգնական, անճար, ապիկար
Կենդանի կյանքը մի բոց է անզոր
Դողդողուն ընկած ահեղ ու հզոր
Հողմերի առջև սոսկալի մահվան
Եվ պիտի մարի՝ այրելով իրան...

Պատրանք է ունայն՝ սեր, երգ ու ոգի՝
Վարդե երազներ, գործեր սխրալի –
Ամեն ինչ ունայն՝ պատրանք է սակայն,
Եվ մահն է ստույգ, իրական միայն՝
Եվ ամենազոր, անմահ, հավիտյան
Համաշխարհային տեր միահեծան...

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Բյուր և բյուր անգամ նրզովում եմ քեզ,
Դո՛ւ, սոսկումների, վշտի տիեզերք.
Եվ կործանում եմ, և խորտակում եմ
Աստղերդ բոլոր, արևներդ ամեն:
Ողջ տիեզերքդ կործանում եմ ես,
Փշրում ու մանրում,
Եվ տիեզերական բեկորներիդ տակ
Թո՛ղ ընկնեմ և ես...

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Մով երկնքից պայծառ գարնան
Հավքերն անուշ սեր կերգեն.
Տխուր կուլան զանգերը թաղման.
Ինձ թաղելու կտանեն:

Կարծես լսեցի հեռու տեղերեն
Մեկը անունս տվեց ու լացեց –
Կարծես մոտեցավ խոր հեկեկալեն,
Ու քնքուշ ձեռքով վերքերս բացեց...

Պայծառ երկնքից ոսկեղեն գարնան
Արտուտներն անուշ սեր կրգուրգուրեն.
Տխրագին կուլան զանգերը թաղման
Ու ինձ թաղելու կտանեն...

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Ձեր շարքերի մեջ, կտրիճ ընկերներ,
Կանգնած եմ՝ հոգիս հիացքով վառված.
Դեպի կռվի դաշտ ազատ, անվեհեր
Գնում եք, թռնում փոթորիկ դառած:

5 Դուք, ժողովրդի ազնիվ զավակներ,
Սուրբ ազատության հուրն է ձեր սրտում,
Վառե՛ք, բորբոքե՛ք քարեր ու սրտեր
Ձեր կյանքով շնչող մայր-հայրենիքում:

Ձեր հրացանը վրեժով լցրեք,
10 Ջարդեք ու փշրեք նեմարդ թշնամուն,
Ու մահը ձեզնից հեռու կփախնի՝
Փախնի, կգտնի նեմարդ թշնամուն:

Սլացե՛ք առա՛ջ, և ետ մի նայեք,
Մենք ենք ձեզ նայում, չէ թե դուք մեզի.
15 Կռվե՛ք քաջի պես, քաջի պես ընկեք,
Կեցցե՛ ձեր մահը, որ կյանք կծնի:

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Գարունն եկավ կարմիր ու զառ
Վարդը բացվավ սարերու,
Վարդ ու բլբուլ կարոտավառ –
Նորեն գտան իրարու:

5 Ցեղահ յարս ալ ձին հեծավ,
Առավ մոսինն ու գնաց,
Ընկերներով, անուշ երգով-
Արծիվս ելավ ու գնաց:

Սարի վրա էն ամպը չէ,
10 Ահա զարգանդ որոտաց.
Էն ամպի մեջ կայծակ<ը> չէ,
Հուր-հրեղեն որոտաց:

Էյ ջա՜ն, հա ջա՜ն, դուշմընի դեմ
Ամպ ու կայծակ թափվեցին,
15 Էն իմ յարն էր ընկերներով
Հուր ու կրակ թափեցին...

Ա՜խ, երազով հերիք մնամ,
Երթամ, ընկնեմ կռվի մեջ,
Երթամ, կռվեմ իմ յարի հետ,
20 Մեռնեմ յարիս գրկի մեջ...

1906 հունվարի 8
<Ալեքսանդրապոլ>

* * *

Ա՛խ, ո՛չ մի արծիվ չի մնում
Իրեն թռիչքի բարձունքի վրա-
Ամեն ինչ դեպի մահն է ընկղմում,
Մշտնջենավոր ո՛չ մի բան չկա...

5 Ամեն օր կյանքը փոխվում է մահի -
Ամեն օր կամաց մեռել ենք դառնում.
Ա՛խ, կուզենայի հավիտյան լայի
Աշխարհի բախտը անհույս ու խավար...

Մեր համբույրների վարդերը պայծառ,
10 Մեր երազների գարունը չքնաղ
Ամեն ժամ թոշնում, թոռմում են, ավա՛ղ-
Ամեն օր լույսը դառնում է խավար...

Ես մահն եմ ատում և սիրուց կյանքի
Ես մահն եմ գրկում՝ կյանքը ատելով...
15 Այս ցավի տունը - աշխարհը լացի
Կուզեի փշրել, քանդել իր հիմքով:

Եվ նրա դաժան, մռայլ, չարաթույն
Բեկորների տակ թո՛ղ ընկնեմ անահ:

<1906> դեկտեմբերի 24

* * *

Ինձի համար շատունց, վաղունց
Սև գերեզման կա փորած,
Ծովի խորքում, թե լեռներում
Մութ գերեզման կար փորած:

5 Քարավանը իմ օրերի
Իմ վշտերով ծանր բեռնած,
Տխուր զանգերի ղողանջով
Կերթա հոգնած
Դեպի լռիկ իջևան,
10 Ուր պիտի հավերժ, անլույս գիշերեմ...

<1906>

* * *

Հպարտ նայում ես լուսեղեն հեռուն,
Այնտեղ տեսնում ես չքնաղ արշալույս,
Ազատ ժողովուրդ, ազատ հայրենիք,
Որ քեզ են կանչում, և ահա՛, ահա՛
Թռչում է հոգիս՝ ազա՛տ, սլացի՛կ...
Ա՛խ, հե՛գ հայրենիք, դու ծնվիս պիտի
Քո ընտիրների գերեզմաններից.
Եվ վառ արևը վերադ պիտի բացվի
Կախաղանների վսեմ բարձունքից...

<1907>

* * *

Սիրտ իմ, ինչո՞ւ հին դարդիդ հետ
Անհույս նստեր, դառը կուլաս -
Տե՛ս, բախտն եկավ վառ սիրո հետ
Հագած, կապած ալ ու ատլաս:

Ծոխ քարվանը բախտի, սիրո
Եկավ անցավ իմ առջևով,
Լիք-լիք բեռնած հազարներու
Երջանկությամբ, վայելքներով:

Հազարներու անչափ սիրուց
Աղքատի - փայ, վա՛յ ինձ չհասավ,
Հազարներու ոտաց փոշուց
Հողը մենակ գլխուս իջավ...

Է՛յ - վա՛խ, զառբաբ հագած կանցնին
Բախտավորներն իմ առջևից.
Հողը գլխուս... տանս չեմքին
Նստեր կուլամ բախտի ետքից...

1908 ապրիլի 27
Ղազարապատ

ՍԱՔՈՅԻ ԳԵՂԵՑԻԿ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայրենի հողի լեռներու խիզախ
Ըմբոստ, սանձարձակ մրրիկներն հզոր
Հովվի ականջիդ հնչեցին շատ վաղ
Վեհ ազատության երգերն ահավոր:
Կանուխ թողեցիր եզներն ու գութան.
Եվ մրրկալից գլուխդ առար,
Քու բազմաչարչար եղբոր փրկության
Այն ազատաշունչ լեռներն ընկար:
Սուրբ իրավունքի, արդար գայրույթի
Դրոշակը ձեռքիդ թռչում էիր դուն.
Օգնության կերթար բազուկդ երկաթի,
Ով որ հեծում էր, ով բռնաբարվում:
Եվ ազատախոս քու սազը անուշ
Լույս էր շավաղում մութ զնդաններում,
Ժպիտ էր ծաղկում, բողբոջում էր հույս,
Ուր որ հասնում էր նժույգդ սիրուն:
Օրհասի առաջ, կուռ զնդաններում
Կրծքիդ չկախվեց գլուխդ երբեք,
Եվ ազատախոս ծով սրտիդ լեզուն՝
Սազդ մեղմանուշ չստեց երբեք,
Շատերի նման դու շահիդ համար
Գլուխ չբերիր ուրիշի առջև,
Այն լեռներու պես ճակատդ պայծառ,
Երբեք չիջավ ոտների ներքև:
Դո՜ւ, ազատության զինվոր աննկուն,
Թիկունքդ չտեսավ թշնամին երբեք.
Գլուխդ դրիր չոր քարի վրան,
Աչք չգցիր ուրիշի հացին,
Երբ շուրջդ չնչին ու ստոր մարդիկ
Հոխորտում էին ստով ու կեղտով,

Դու, զուլալ աղբյուր, դու՝ ոսկի աստղիկ,
Հեզ ժպտում էիր բարի աչքերով:
Դու սիրուն էիր, ինչպես արշալույս,
Եվ աչերիդ մեջ՝ հավատ մանկական.
Քու սիրտը՝ սիրող, մաքուր ու քնքուշ,
Դու երազն էիր սուրբ ազատության:
Եվ մի՞թե մեռար, իմ անգին ընկեր,
Մեռնում են ինչպես մարդիկ անհամար.
Ո՛չ, դու չես մեռնի, ո՛չ, դու չես մեռել,
Ինչպես չի մեռնում սերն ու գաղափար:
Դու միշտ ապրում ես քու ժողովրդյան
Արյունոտ հոգում, ինչպես վառ երազ.
Ինչպես արշալույս վեհ ազատության.
Շքեղ, անարատ, անմահ կմնաս...

<1908>

* * *

Նազուկ լուսնի մեղմ շիթերը ծորեցին,
Հովը սիրուն ծաղկունանց մեջ թաք կացավ.
-Ահ, լսեցի, ծաղկունքն անուշ երգեցին,
Մի ջինջ վերհուշ սրտիս միջով հեզ անցավ:

Հույսերս ամեն դարձան պատրանք խաբուսիկ,
Սերս քնքուշ ծաղկի նման թառամեց.
-Ապրում էի, ինչպես անտուն մուրացիկ.
Ննջած սրտիս հուշերն <այդ> ո՞վ հուզեց...

Ստվերները ձորերն ի վայր սահեցին,
Խոռոչներում, այրերի մեջ պահ մտան -
Անտես, անհայտ ո՞ւր գնացիք, ստվերներ,-
Իմ ընկերներ, իմ երազներ, իմ սուրբ սեր:

<1908>

* * *

Ամեն բան պատճառ ունի,
Բայց տիեզերքը պատճառ չունի,
Ամեն բան վերջ ունի,
Բայց տիեզերքը վերջ չունի:

<1908>

* * *

Տեսնում եմ մորս երկաթե ճողերի ետևից,
Արցունք է թափում.
Օ՛, մի լաց, մայր իմ, թող չտեսնի
Մեր թշնամին լացը մայրերի -
Թող չուրախանա նա:

Մի լաց, ես արծիվ եմ վանդակի մեջ,
Ազատության հուրն է իմ կրծքում -
Կգա օրը - թափ կտամ թևերս,
Կփշրեմ շղթա ու փականք,
Եվ թող իմանան թշնամիներս,
Թե որքա՜ն ծանր է արցունքը մի մոր:

<1908>

* * *

Բաշերն ալեծուփ, բաշերն հողմակոծ
Անափ դաշտերով նժույգս է թռչում,
Եվ սմբակները բխում են հուր-բոց,
Դաշտերն են թնդում, վախ առած փախչում:

Ազատամարտի հրդեհից կգամ,
Ուր կուրծքն եմ ճեղքել թշնամու դժխեմ.
Դրոշն է ձեռքիս վեհ ազատության
Եվ հաղթանակի երգերով վսեմ:

Արյուն է ծորում սրես ոխերիմ.
Դրոշն է ծփում ոսկե ամպերում -
Ջար բռունցքի տակ հեծող աշխարհին
Նոր գարունների համբավն եմ բերում:

Նժույգս է թռչում բաշերն հողմակոծ,
Եվ շառաչում են սանձ ու ասպանդակ,
Զրահս է շաչում, բխում հուր ու բոց,
Ձիլ շառաչում են սանձ ու ասպանդակ:

Այս շղթաներն են շառաչում ոտքիս,
Օ՛, թռիր, նժույգ, այս քարե պարկից,
Այս մռայլ բանտի կամարն է կրծքիս,
Մի կանգնիր, նժույգ, սլացիր արագ...

1909 հուլիսի 25
Ղազարապատ

* * *

Ստվերներն ընկան իրարու վրա
Ու փաթաթվեցին լուռ ստվերներով
Ծառերը <ասին> - դուռդ բաց արա.
Ես՝ մի մութ ալիք պղտոր աչերով.
Շեմքդ եմ ընկել...

Գալիս եմ ահա կյանքի մեծ ծովից,
Ուր փոթորիկներ անցան իմ գլխով,
Գալիս եմ ահեղ ճակատամարտից
Եվ սիրտս լիքը, լիքը թույնի ծով:

Սին է և ունայն աշխարհը համայն,
Հանճարն՝ անհարգի, գաղափարն՝ անզոր,
Ընկեր-բարեկամ պատրանք է միայն,
Նյութը՝ տիրական, ամբոխը՝ հզոր...

Քո սիրո ահեղ կրակների մեջ
Ես կուզեմ այրվիմ ու մոխիր դառնամ:

<1909 հուլիսի 29>

* * *

Ա՛խ, ո՞ր քարի տակ, ո՞վ գիտե, որտե՞ղ,
Ննջում է հիմի նրա սիրելին.
Ծաղկունքը վայրի, անուշ ու չքեղ
Բուրում են, թոչնում անհայտ չիրիմին:

<1909>

* * *

Ամեն ինչ ունայն պատրանք է սակայն,
Եվ մահն է ստույգ իրական միայն,
Եվ ամենազոր, անմահ, հավիտյան,
Տիեզերական տեր միահեծան:

<1900-ական թթ. երկրորդ կես>

* * *

Ու քար կսղմեմ տառապած սրտիս,
Կերթամ հեռուներն անհայտ, անճամփա.

Էլ ինչքան կանչես, լաս ու մորմոքիս,
Էլ հետ չեմ դառնա, էլ հետ չեմ դառնա:

5 *Էլ օջախիդ մեջ կրակ չի վառվի –*
Եվ ցուրտը կգա՝ անվերջ կմտնի,

Թեկուզ գլուխդ զարնիս քար քոռի,
Էլ ինձ չես գտնի, էլ ինձ չես գտնի:

<1900-ական թթ. երկրորդ կես>

* * *

Շրջում էի լուռ զարնան դաշտերով,
Հավքերի ամպը գլխիս վրայով
Անցավ ճախրելով և երգեց քնքուշ,
Ու սիրտս լցվեց հուշերով անուշ:
Իմ վառ սերերը աստղերի նման
Իրար ետևից շողալով անցան,
Ինչքան սիրեցի, ինչքան լաց եղա -
Հոգուս երկինքը դատարկ է հիմա:
Բարուն ու սիրուն էլ չեմ հավատում,
Սորվեցի զզվել ու ատել մարդուն -
Ժպիտն երկնքի՝ ինձ համար խավար,
Հայացքը կույսի համր է ինձ համար:
Գարո՛ւն, քո պայծառ համբույրով մաքուր
Գուրգուրիր սիրտս վիրավոր, տխուր.
Եվ մոռացության մամուռով դալար
Վերքերս գոցի՛ր, գարուն սիրավառ...

<1900-ական թթ. երկրորդ կես>

* * *

Ա՛խ, ես չեմ խոսում մարդկանց հետ երբեք,
Ես խոսք եմ ուղղում աստղերին երկնի.
Վայրագ է մարդը, մանկամորթ, տեսե՛ք,
Դահիճ, դահճապետ, կիրթ թե վայրենի...

Հոգիս խելագար, խոլական ուրուր,
Խենթ մրրկում է արյուններով լի
Անդունդի վրա - հարազատներիս.
Ո՞ւր նայեմ, ասե՛ք, ո՞ւր նայեմ, ո՞ւր...

<1900-ական թթ. երկրորդ կես>

* * *

Անհունության մեջ մռայլ, անսահման
Ինչպես իմ հոգին մռայլ, անսահման –
Հողե այս կույտը - երկիրը թշվառ –
Որ աննպատակ անդուլ, անդադար –
Որպես կույր թռչուն անդունդի վրա՝
Ուր է թափառում, ուր է թռչում նա
Եվ ուր է տանում իր կրծքին կպած
Իրեն ապավեն, իր բախտին ընկած
Մարդ ու անասուն, ամեն արարած:
Դու մոլոր ու կույր, դու թշվառ թռչուն,
Գիտեմ վաղ թե ուշ, դու մահն ես տանում
Այս չեն աշխարքը՝ կյանքով, ցավով լիք՝
Որպես մի երգի մեղմ ու հեզ ալիք,
Որ պիտի հալվի անհունության մեջ՝
Որպես մի երազ, որ դեռ չծնվեց...

<1900-ական թթ. երկրորդ կես>

1910-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

Դուռը ափ առած՝ կրծեծե քամին
Ու շեմքիս վրա կատղած կըհաչե.
-Դուն իմ ոսոխն ես, դաժան թշնամին,
Դուն ինձ մի՛ հիշիր, դուն ինձ մի՛ կանչե:

Խորունկ վերքիցս արյուն է կաթում,
Դու սոսկ քրոջ պես խղճում ես վրաս. –
Ատում եմ ես քեզ և հազար ատում,
Գնա՛, հեռացի՛ր ու երբեք չըգաս...

Հավիտյան կուլամ քու շեմքի վրա,
Հավերժ կերազեմ քու վերադարձին. –
Հեռո՛ւ, մի՛ տեսնիր իմ վիշտը անմահ,
Դուն իմ ոսոխն ես, դուն իմ թշնամին...

<1911
Կ. Պոլիս>

* * *

Անուշ-անուշ քրքջալով՝
Աղջիկները դաշտի միջին
Քաղում էին շող մատներով
Ոսկի նարգիս դաշտի միջին:

Մատաղ սիրտս կոտրեց, անցավ
Էն աղջիկը ոսկի մազով,
Անհոգ խաղով կոտրեց անցավ,
Անուշ-անուշ քրքջալով:

1912 Հունիսի 1
Կ. Պոլիս

* * *

Հողից են մարդ ու կնիկ,
Ու թագավոր, գանձ ու գահ.
Հողը առավ հողերուն.
Մի կըպեք էդքան ագահ
5 Հող աշխարքի խաղերուն,
Կյանքն է երազ, վերջը՝ մահ:

<1912>

* * *

Ես քեզ սիրեցի աստղերի սիրով,
Խնկեցի քո մոտ իմ այրվող հոգին,
Բայց դու մոտեցար պագչոտ խորհրդով
Իմ սուրբ շրթունքիս, դու, գարշելի կին:

5 Ես բաց արեցի սիրտս երկնի դեմ
Եվ երազեցի անապակ սիրո,
Որ բարձրից իջներ, ողողեր սիրտս
Սուրբ հիացքներով թևավոր սիրո...

<1910-ական թթ. առաջին կես>

* * *

Իմ քնքուշ դարդս խոցված սրտիս մեջ
Բարուր եմ արել, որ անուշ քնի,
Ու արցունքներս, մոր կաթի տեղակ,
Տալիս եմ նրան, որ հանգիստ քնի:

Քնքուշ երգերով, իմ ջինջ երգերով
Նանիկ եմ ասում, որ անուշ քնի,
Եվ սար ու ձորեր միշտ թափառելով՝
Օրորում եմ ես, որ հանգիստ քնի:

<1910-ական թթ. առաջին կես>

* * *

Մի՛ հավատա մարդու խոսքին.
Լեզուն սիրտը չի բանում.
Ամեն բանի չափն է ոսկին
Գինն է, գիտցիր, ամենուն...

Դու ճախրում ես երկրից վերև,
Արևի տակ շողշողուն
Ու չես տեսնում ոտքիդ ներքև
Գարշն ու զազիրն աշխարհքում...

Ամեն բանի գինն է ոսկին,
Փակ են սրտեր ու դռներ,
Ցուրտ է, բորան - վա՛յ քեզ, թիթեռ,
Դուն կսառչիս պատի տակ...

<1910-ական թթ. առաջին կես >

* * *

Խաղաղ, լուռ գիշեր է.
Ես ու դու՝ մի հոգի,
Ծառերի տակ նստել ենք–
Մութն ու անդորը գիշեր է:
Ա՜խ, դու, ինչպես այն վառ աստղը,
Լույս ես տալիս գիշերը –
Տխուր հոգուս, մռայլ հոգուս
Լույս ես տալիս, մի լույս...
Օ՜, եղիր միշտ այն աստղի պես
Մաքուր և սուրբ
Եվ անմատչելի:

<1910-ական թթ. առաջին կես>

* * *

Կանցնի ու կերթա
Մարդկությունը ողջ,
Ինչպես ամպերի
Ստվերներ դողդոջ –
Որ երկրի վրա՝
Կսահեն՝ առանց
Հետք մի թողնելու –

Սիրի՛ր, միայն սիրի՛ր,
Սիրի՛ր, մոռանաս <...>

<1915-1920 թթ.>

* * *

Գիտեմ՝ լցված է սիրտդ արցունքով,
Եվ դու կուզես լալ, չես կարող սակայն.
Գարունն է ծաղկել հազար պչրանքով,
Գարունն է ծաղկել քո շիրմի վրա...
Հոգիս վառված է քո անուշ հոգով,
Ամեն տեղ ես քո ստվերն եմ տեսնում,
Թե հովն է հևում սաղարթների մեջ,
Քո ձայնն եմ լսում, քո ձայնը անուշ, թովիչ:
Ամեն տեղ ես քո ստվերն եմ տեսնում,
Հետս քայլում ես մեր դաշտերի վրա,
Ու ետ եմ դառնում, որ խոսեմ քեզ հետ,
Ու չեմ գտնում քեզ, մի՞թե մնացիր ետ
Կամ թե թաք կացար թփերի ետև.
Ուզում եմ քեզ բան ասել,
Որ մինչև այսօր մոռացա ասել.
Մի խոսք ծանրացել է սրտիս վրա,
Ո՛ւր ես, ո՛ւր, լսի՛ր, լսի՛ր, սիրելի՛ս...

<1916>

* * *

Գիշեր է մթին.
Շնչում է քամին,
Տխուր սոսափում
Ծառերի գլխին.
Նա ունայնության
Շունչն է ասես՝
Անհույս ու մռայլ
Հեծում է այսպես...
Դժբախտ է մարդը –
Եվ ուրիշ ոչինչ-
Կյանքը խոցի պես՝
Ջնչին, ողբալի,
Ոչինչ ավելի...

<1916-1919>

* * *

[Մի օր կգա, ամեն մի չունչ, մարդ-արարած
կմեռնին,
Իրենց դարդերն հետներն առած՝ հավիտյանս
կհանգչին. -
Բայց աշխարհը միշտ կմնա, ո՛չ մահ ունի, ո՛չ
ծնունդ,
Ո՛չ վերջ ունի և ո՛չ սկիզբ, ո՛չ ծայր ունի, ո՛չ
սահման....]

5 [Ու ինձ համար էս աշխարհը ծանր երազ կերևա.
Անմիտ երազ ու անմիտ խաղ, հրեշային մի
հրաշք.-
Ինչո՞ւ ծնան արև-աստղեր, ինչո՞ւ ծնան ու
հանգան,
Ինչո՞ւ ծնան մարդ ու տենչանք, սեր ու երգեր ու
հանգան...]

Ա՛խ, լալ կուզեմ, երգել տխուր ու թափառել սար
ու քար.
10 Անտակ դարդս մոռանալու ո՛չ հնար կա և ո՛չ
ճար...
Ու քարեղեն արուն արցունք սրտիս խորքեն
թափեմ, լամ.
Ու թափառեմ խելակորույս, սիրտս արնոտ, սար
ու քար...

<1916-1920>

* * *

Էս աստղոտ գիշերիս ինձ պարտեզ՝
Ծաղիկներիս նայելու.-
Շուշան, սմբուլ, մանուշակ, նարգիս
Մեղմիկ, գլխակոր քուն էին մտել:

5 Մենակ վարդերս՝ վառ-վառ բողբոջով
Փարթամ թերթերը շքեղ տարածած.-
Հիացմունքով երկինք էին նայում
Ու զառ աստղերին
Խորհրդավոր շշնջում. -

10 Եվ ես իմացա նրանց զրույցները՝
Այնպես անուշ ու նազելի. -
Բայց ես չեմ ասի այս մարդկանց.
Մարդիկ չար են ու անզգա...

<1916-1920>

* * *

Մաղում է անձրև
Սրտամաշ, տրտում.
Անձրև ու անձրև
Դանդաղ, անդադրում...

5 Ա՛խ, հիմի, հիմի,
Ինչ ցուրտ է ու թաց
Մութում քու շիրմի,
Իմ սրտիս սիրած...

Ու աչնան մեգում
10 Կանգնել եմ անհույս,
Անհույս հեկեկում
Անունդ անուշ...

1917 մարտի 6
Ժնև

* * *

Գիշերը եկավ.
Ցերեկի խժդուժ
Ձայները մեռան:
Լռության թևը
5 Իջել է անդորը
Թե՛ ճանապարհի,
Թե՛ դաշտի վրա
Սակայն մի հոգոց՝
Խորունկ ու ծանր,
10 Ձգվում է անդուլ
Մի անհայտ կրծքից -
Բնության խորքից:

<1917>

* * *

Դու հեռավոր, մեկուսի աստղ,
Ինչպե՜ս բախտավոր ես դու,
Դու, որ մենակության մեջ
Պայծառ ես ու չքնաղ:
Իսկ ես ինչո՞ւ, ինչո՞ւ
Մռայլ եմ ու տխուր ու սև
Մենակության մեջ,
Իսկ դու մենակության մեջ
Բախտավոր ես, պայծառ...

<1918-1920>

* * *

Իմ տխուր սրտում գիշեր ու ցերեկ
Մի տխուր թռչուն՝ թևերը բեկ-բեկ,
Վայում է, երգում, արտասունք թափում
Իմ ավեր սրտում գիշեր ու ցերեկ:

Նա սուգն է ողբում իմ ընկերներիս,
Որ մեռան, կորան...
Իմ երազների կորուստն է լալիս:

Եվ անվերջ, անվերջ - գիշեր ու ցերեկ
Մի տխուր թռչուն երգում է...
Եվ ո՛չ մի զարուն չկա ու չի գա
Մխիթարելու նրան...
Ա՛խ, նա իմ սիրտն է սգավոր...

<1918-1920>

* * *

Երբ մանուկ էի, նստած պատի տակ
Մեր ջրաղացի,
Մի կույր աչուղի երգը լսեցի,

Թե ինչպես մի տղա
Սիրում է եղել մի աղջկա.
Անհույս սիրով. տարինե՛ր, տարինե՛ր.
Կարոտ նրա տեսքին ու սիրուն՝
Կարոտով ախ է քաշել.
Ու սրտից կրակ է բխել դուրս
Ու վառել պատանուն, մոխիր դարձրել:

Երբ լսեցի, լաց եղա,
Ասես, իմ բախտը նախատեսա.
Ես էլ սիրեցի իմ անշուք կյանքի մեջ,
Սիրեցի անհույս, տարինե՛ր, տարինե՛ր.
Սիրեցի ու ախ քաշեցի, սիրում եմ ու ախ քաշում,
Ու ամեն անգամ կրակ է ելնում
Իմ սրտից... Ու ինձ այրում,
Ու մոխիր դարձնում...

15 սեպտեմբերի 19 <19>,
Բեռլին

* * *

Օտար աշխարհում ստրուկ ու գերի՝
Թառամեց, անցավ իմ կյանքը մատաղ:
Ա՛խ, ո՛չ մայր տեսա, ո՛չ սեր ընկերի,
Սրտիս մեջ՝ արցունք, աչքիս՝ սուտ ծիծաղ:

Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ, թռցրու ինձ քեզ հետ,
Տա՛ր իմ հայրենի երկիրն հեռավոր,
Մեր արևի տակ, ա՛խ, գոնե մեկ օր
Շունչ առնեմ ազատ, մեռնեմ բախտավոր:

<1919-1920>

* * *

Իմ սիրուն մանկիկ, ննջում ես մուշ-մուշ,
Բարձին ցան ու ցիր մազերդ քնքուշ,
Ոսկի ժպիտ է խաղում շրթունքիդ,
Ոսկե երազ է համբուրում հոգիդ:

<1910-ական թթ. երկրորդ կես>

* * *

Հրճվում է սիրտս, երբ նայում եմ քեզ,
Որ մի շքեղ հրաշքի պես ծաղկում ես
Օրեցօր, հայացքդ լցվում է իմաստով,
Եվ հոգի է առնում մարմինդ քնքուշ:

Թոթովում ես արդեն մայրենի քաղցր լեզվով
Եվ սիրում ես խոսել թռչունների և
Ծաղիկների հետ, և տենչում ես անհամբեր,
Եվ ձգտում ես անհամբեր՝
Փոքրիկ ձեռներդ պարզած դեպի աշխարհը՝
Գրկել, տիրել, վայելել նրան - աշխարքն այս
Շուրջ հրապուրել...

Սակայն ցավում է սիրտս, տրտմում սաստիկ,
Երբ նայում եմ աշխարքին - այս չար ու դաժան,
Արյունալից - այս մահաղեղ աշխարքին...

<1910-ական թթ. երկրորդ կես>

* * *

Այս հովը մեղմիկ,
Որ քնքշաբար
Շոյում է, գգվում
Մազերըդ հիմա,
Զէ՞ գալիս արդյոք
Մեր հայրենիքի
Արյունոտ դաշտերից...

<1910-ական թթ. երկրորդ կես>

* * *

Սիրտս վիրավոր,
Սերս մենավոր
Խորին գիշերին
Սենեկումս աղոտ
Ես լաց եմ լինում.
Ա՜խ, սիրտս կարոտ
Լույսի և հույսի՝
Ես դեգերում եմ
Եվ խոր տառապում
Մարդկային անսեր
Խոլ անապատում
Անոք, անընկեր.
Արտասվել կուզեմ
Ծովերով մռայլ,
Թափառել կուզեմ
Լեռները մռայլ...

<1910-ական թթ. երկրորդ կես>

* * *

Հին օրերից
Եկավ մի վիշտ,
Ընկերացավ սրտիս հետ միշտ.
Եվ քայլում ենք իրարու հետ
Ամեն ուղի և արահետ.
Եվ սիրում ենք իրար այնպես,
Որ չենք ուզում իրար լքել -
Սիրտը ու ես...

<1910-ական թթ. երկրորդ կես>

* * *

-Է՛յ, աշնան տերևներ, մեռած
Ընկած ոտքի տակ,
Ի՞նչ էիք, ի՞նչ դարձաք.
Արևի տակ շողացիք,
Անձրևի տակ դողացիք,
Հովերի հետ խաղացիք,
Հավքերի հետ երգեցիք...

<1910-ական թթ. երկրորդ կես>

* * *

Դուրսը գիշեր է աշնան,
Տխուր, խավար լռություն,
Պայծառ արև է գարնան
Ու հրճվանք՝ իմ սրտում:

<1910-ական թթ. երկրորդ կես>
Ժնև

1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԱՆՈՒՇ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ասին՝ գնացող մեկը կա Մոսկվա,
Ու քեզ մի նամակ գրել ուզեցա.
Առաջին էջը նոր էի սկսած,
Որ հյուրեր եկան, ու կիսատ մնաց:
Բայց երբ առավոտ թերթը ձեռք<ս> առա,
Քո մահվան բոթը սոսկումով տեսա...
Կսկծից սիրտս այրվեց շանթահար,
Մի՞թե իրավ է, մի՞թե դու մեռար:

Ա՛խ, ինչքա՜ն բաներ կուզեի ասել,
Զէ՞ որ վաղուց է՝ քեզ չէի տեսել...
Այդ ո՞վ հանդգնեց, հանճարդ չքեղ,
Հանգցնել ոգուդ աստղերը բյուրեղ.
Զգացումների դո՛ւ լույս-շատրվան,
Դու, ոսկե հեքիաթ, երազ դյութական,
Մի՞թե դու չկաս, մի՞թե դու մեռար,
Անմահ գեղեցկի իշխան սիրահար:

Ինչո՞ւ է ծագում արևը կրկին.
Ինձ ծաղր է թվում, և՛ տաղտուկ, և՛ սին.
Ամեն ինչ՝ ունայն...
Ընկեր իմ անգին,
Իմ վաղուց սիրած հոգի մտերիմ...
Ո՛չ, դու չես մեռել, քո գիրքը ահա՝
Հրաշք երգերդ՝ իմ կրծքի վրա,
Կարդում եմ անդուլ և մարգարտաշար
Քո սուրբ տողերից լսում անդադար
Ձայնդ անուշիկ, և պատկերդ հեզ
Առջևս է կանգնում, համբուրում եմ քեզ -

Խորունկ կարոտով... Բայց ասա՛, ինչո՞ւ
Այդպես շտապով հեռանում ես դու,
Ա՛խ, ասա՛, ե՞րբ ես դուն ինձ մոտ գալու,
Մի՞թե իրարու էլ չենք տեսնելու...
-«Կյա՜նք, տխուր Հովիտ՝ Հավիտյան լալու...»

1920 մարտի 19
Ժնև

* * *

Բախտն ինձ անջատեց հայրենի երկրից,
Քո՛ւյր իմ սիրելի, հեռացա քեզնից:
Գիշեր է, լուսնյակ, պանդուխտ եմ տխուր,
Շրջում եմ մենակ դաշտերում թափուր,
Շրջում եմ անհույս հայրենի օրհնած
Ճանապարհներից հեռու-հեռացած...
Քո՛ւյր իմ, աչերդ հավերժ փակվեցին
Անհուն կարոտով իմ վերադարձին:
Երբ ամեն անգամ բախտն անագորույն
Հարվածում էր ինձ - քեզ էր հարվածում.
Ա՜խ, քույր իմ անգին, չկաս դու հիմա,
Քո սիրտն էր մենակ ցավում իմ վերա:

<1920>

* * *

Էս աշխարքը էրկու օր է,
Մեկը - կարմիր, մեկը - սև.
Կարմիրդ, ով մարդ, անցավ, գնաց,
Մնացածը սև է, սև....

<1920>

***

Կես գիշեր է... կարկուտի պես
Ժամի զանգերը տվին...
Անցավ հին տարին ծխի պես՝
Եկավ, եկավ Նոր տարին...

Ցուրտ էր դուրսը - պայծառ գիշեր՝
Անթիվ աստեղք մույգ երկնում
Շողում էին - երգում երգեր,
Որ քամին ինձ էր բերում...

Մեր տանջված փոքր ընկերը
Մեր, ալեզարդ երկիրը
Էլի դարձյալ չրջան առավ՝
Իր օրենքին մտերիմ,
Համբերատար, լուռումունջ
Էլի դարձյալ նա ոտ դրեց
Վաղուց ծանոթ մութ ուղին,
Որ անհամար դարերից հետ
Ոտք էր դրել մտերիմ:

Առանց ճանձրույթ նա անցնում է
Անթիվ, անթիվ ճանապարհ.
Որ էլի գա, նույն օրը գա,
Էլի անցնի ճանապարհ:

Նա չի հոգնում, նա չի քնում,
Նա հիմար է ու անմիտ
Նա նպատակ չունի գլխում,
Նա սիրտ չունի իր գրկում:

<1920, դեկտեմբեր>

* * *

Մեր թշնամին, հին բորենին,
Կողոպուտով, արյուններով,
Կուշտ հղփացած՝
Ծաղր է անում արդարության,
Ծափ է տալիս ու հրճվում:

Սուտ է, չկա, լիրբ խոսքեր են՝
Ճշմարտություն, արդարություն
Եվ իրավունք, Սեր ու գորով,
Դատախազները վաճառված,
Դատավորները աչառու -
Ոճրագործի լծակիցներ,
Իշխանների սատուրդներ,
Եվ սատկել է, սատկել վաղուց՝
Խիղճը մարդու...

Ես չեմ ողբում, ես չեմ լալիս...
Ես ոռնում եմ երկինքն ի վեր,
Ես ոռնում եմ խենթ ու խելառ
Ու խոլական...
Աղբյուրները թո՛ղ թույն բխեն,
Մահվան սերմեր լինեն ամեն
Մել ու ծաղիկ,
Օվկիանները թո՛ղ դառնան
Օձի լեղի, օձի լեղի:

Հուր, փոթորիկ, մրրիկ լինեմ,
Վիշապ-քամի, հողմ սասանիչ -
Հրով լիզեմ աշխարհն ամեն,
Խուժեմ ամեն տուն-ապարանք՝

Հանգցնեմ բոլոր լույս ու ճրագ,
Մարեմ հույսը բոլոր-բոլոր
Սրտերի մեջ.
Եվ ամենի – կրծքին նստեմ,
Ինչպես ահեղ, խոլ մղձավանջ,

Հանգցնեմ բոլոր աստղ ու արև՝
Ու շաղախեմ իրարու հետ –
Բյուր արևներ, ծիր-կաթիններ –
Տիեզերքի ծայրերն իրար –
Խավար, խավար, խավար լինի –
Եվ թոհ ու բոհ, և թոհ ու բոհ...

31 դեկտեմբերի, 1920, ժընև,
Գիշերվա ժամը 12-1, տարվա վերջին խոհեր:
Հայաստանը խորհրդային:
Հայ բոլշևիկները...

* * *

Սերերս քնքուշ
Դարձեր են ցավեր.
Սիրածներս անուշ՝
Երազ ու ստվեր...

Իմ ապրած կյանքից
Մնաց հանց մրուր
Սրտիս մի թախիծ
Անհույս ու տխուր:

Մանկության արև,
Ա՛խ, նորեն ծագի՛ր
Իմ գլխի վերև,
Մանկության արև...

<1921>

46 ՏԱՐԵԼԻՑԻՍ

Խոսք եմ խոսում իմ հոգու մեջ, հյուսիսային արևի հետ,
Դո՛ւ, որ բևեռն ես երկնքի և չեղ նավին լույս-կարապետ,
Որ վարում ես պարսն աստղերի և թռչում ես արագաոտ.
Անհուններից անբավելի, անհունների մեջ անծանոթ -
Այն վայրկյանին, երբ ծնվեցի, շողդ ծորեց անդունդի մեջ,
Եվ հասավ ինձ, երբ բոլորեց տարիս քառասունը վեց...

<1921, հոկտեմբեր
Վենետիկ>

* * *

Ասա՛ մեզ, Եվրոպ, ո՞ւր ես շտապում՞
Ձեռներդ ներկած հայի արյունով.
Դու հոշոտեցիր Սուրբ Հայաստանը,
Այժմ ո՞ւր ես փախչում արնոտ ձեռներով:

Քո խիղճը երբեք չխայթվեց, Եվրոպ,
Փշրելով գանգեր բյուրավոր հայի.
Անառակ Եվրոպ, բարբարոս Եվրոպ,
Անեծք սերնդիդ՝ անեծք դարերի...

Դեպի ծովերն ես շտապում հիմա,
Որպեսզի լվաս ձեռներդ արնոտ.
Ծովերը փոքր են, օվկիանը՝ չնչին,
Որ մաքրեն խիղճդ - խիղճդ արյունոտ...

Հանցանքդ մեծ է - և ավելի շուտ
Ծովերն ու օվկիան արյուն կդառնան
Ձեռներիդ արնով, հայի արնով.
Անեծք քեզ, Եվրո՛պ, անեծք հավիտյան:

<1921>

* * *

Նստել եմ մենակ ծովի բերանը,
Ու միտք եմ անում աշխարհի բանը:

Շնչում է ծովը խորունկ շառաչով,
Միշտ նոր, միշտ այսպես անհուն դարերով

5 Եվ բյուր ազգերի հողե ականջին
Շնչել է այսպես, տվել շառաչին,

Ես էլ լսում եմ մռունչը նորա,
Որ ինձ ինձանից հեռացնում է ահա

Եվ ուշքս ու միտքս տանում է, ցրում
10 Խուլ մոռացության հեռու ափերում:

Իմ ետը չկա, ոչինչ չեմ զգում-
Չկա ժամանակ ու տարածություն...

<1921>

* * *

Իմ հազար սիրած հայրենի դաշտում,
Ազատ Մասիսի գլխից դարիվար
Լուսնի շողերը հալած արծաթի
Նման կհոսին ու կտարածվին դաշտերի վրա:

5 Եվ այս ծղրիդը, որ գիշերն անքուն
Կխոսի անդուլ,
Սա նույն իր երգը իր հրճվանքի
Հնչել է նույնպես լուսնյակ գիշերին,
Երբ շողերն հալած արծաթի նման
10 Մասիսի կատարից վայր կհոսեին
Հին Ուրարտուի մարդկանց ականջին՝
Իրենց հազար սիրած հայրենիքում:
Վաղը նա պիտի իր հավերժական
Երգը հնչեցնե նոր ազգերի համար,
15 Որոնք արծաթաշող Մասիսի ոտների ներքո
Պիտի լսեն այս երգը
Իրենց հազար սիրած հայրենիքում.
Թե՞ դարձյալ քեզ համար,
Իմ մորս անուշ լեզվով
20 Խոսող իմ ազնիվ ժողովուրդ:

<1922-1925 թթ.
Վենետիկ>

ՏԽՐՈՒԹՅՈՒՆ

Միշտ տխուր, գիտակցության օրվանից մինչև այսօր
տխուր,
Կարծես մեկը մի քարով կոտրել-փշրել է սիրտս.
Միշտ տխուր, անսփոփ, մշտատև, մշտախավար.
Միշտ երկյուղի մեջ գալիք վայրկյանի համար...

<1920-ական թթ. առաջին կես>

* * *

Ես լուռ գիշերին անհույս լացեցի
Անապատի մեջ անդորր, ամայի -
Եվ վառ աստղերին սիրտս բացեցի,
Դիմեցի նրանց, ինչպես վկայի...
Աստղե՛ր, ամպի պես օրերս անցան՝
Ճշմարտությունը միշտ երազելով.
Ծով-ցամաք անցա՝ գտնելու նրան -
Կյանքս վատնեցի՝ նրան փնտրելով...
Ինչո՞ւ է եռում կյանքը ամեն տեղ,
Ինչո՞ւ եք շողում, աստղե՛ր; երկնքում -
Ինչո՞ւ է շաչում օվկիանը ահեղ,
Ճշմարտությունը ինչո՞ւ եմ փնտրում:
Անե՛ծք բնության, նրա գոյության,
Որ իրեն անհուն անմտության մեջ
Վերքն է տվել մեզ բանականության,
Հոգի է դրել հյուլեներիս մեջ...
Անեզր ու անծիր տարածության մեջ
Փոշի եմ չնչին և մահվան գերի,
Բայց հոգիս վեհ է, տարածությունից մեծ,
Միակ կշեռքն է տիեզերքի,
Նրա արժեքի, նրա էության
Եվ օրենքների, և նպատակի...
Եվ ես ասում եմ՝ թո՛ղ հավերժ կորչի
Այս տիեզերքը անգթությունների -
Կյանքը ամեն տեղ թո՛ղ մեռնի, հանգչի
Տիեզերական անզգա հավիտենականությունը...
Եվ կյանքը չարժե իրեն ճգտումին,
Պտուղը չարժե մեր աշխատանքին,
Ճշմարտությունը չարժե, որ մարդս տանջվի,
Եվ կյանքը չարժե ուրիշի կյանքին,
Աշխարհը չարժե, որ հոգին ապրի...

<1920-ական թթ. առաջին կես>

* * *

Ո՞վ է իջնում նուրբ քողերով
Շուրջը դյութում ու թովում.
Շուշան կրծքով, լույս կողերով
Լուռ ջրերը վրդովում

5 Եվ լողում է շղարշ հագին
Հյուսած լուսնի շողերով,
Մազերն արձակ՝ ցոլցլագին,
Աղամանդյա ցողերով:

Ո՞վ է աղոտ լույսերի հետ
10 Ծաղիկները համբուրում,
Երազի պես ցնդում անհետ
Մշուշային փրփրրում:

Ո՞վ է անդորը գիշերն այս հով
Այսպես դյութում ու թովում.
15 Շուշան կրծքով, լույս թևերով
Նիրհած գետը վրդովում:

<1920-ական թթ. առաջին կես>

* * *

Հրեշ բռնակալ, թաթերդ զգի՛ր.
Դուն վաղ ես ներկեր արյունով հայի-
Հայրենիքը մեր արյան ծով կապեր.
Ափերից Կասպյան մինչ Մարմարիայի:

5 Եվ տարար, հրեշ, թաթերդ արնոտ
Հեռավոր երկրի օվկիանոսը մեծ -
Որ լվանայիր թաթերդ ա<ր>նոտ -
Բայց զայրույթն արդար գլխիդ հարվածեց:

Եվ վերքը մեջքիդ՝ փախար դու երկչոտ՝
10 Անարգված, պոռնիկ, լիրբ արյունախում-
Նորից խրեցիր թաթերդ արնոտ
Դարեր տառապած մեր սուրբ սրտերում:

Եվ քեզ հավասար, քեզ նման ստոր,
Լկտի, գարշելի թաթարը դաժան
15 Նորից ներկեցիք արյունով մեր սուրբ
Մեր նվիրական, խաչված Հայաստան....

Եվ աչքերիդ մեջ՝ բոզի արտասունք,
Եվ շրթունքներիդ՝ խոսքերդ պագչոտ...
Ո՞ւր պիտի գնաս, դարերի նողկա՜նք,
20 Ո՞ւր պիտի թաքցնես թաթերդ արնոտ:

Հավիտյան անեծք, հավիտյան նզովք,
Թուք ու նախատինք ձեր լիրբ ճակատին.
Գայլերի ոհմակ, խժերի ծնունդ,
Դարերի թուքը՝ ձեր հիշատակին...

<1920-ական թթ. առաջին կես>

* * *

Տարիներ հետո դարձա Հայրենիք.
Աշուն էր անդորը դեղին դաշտերում:
Սարերի գլխին նոր ձյուն էր իջել.
Արագիլները ճահիճների շուրջ
Հավաքվել էին չրվելու համար:
Գնում եմ մենակ մեր գյուղը խղճուկ.
Ահա մեր դռան բարդիները հին,
Լուռ օրորելով կատարները մերկ,
Հեռվից քայլ առ քայլ մոտենում են ինձ:
Մեր տունը, ավա՜ղ, ավեր է հիմա,
Ավեր-ավերակ ջրաղացը մեր,
Մի վայրկյանի մեջ տարերքը դաժան
Ջարկել, չի թողել քար քարի վրա:

Նստում եմ տխուր մեր ավեր դռան
Այն սալաքարին, ուր նստում էին
Հայրը ու մայրը մեղմ երեկոյին:
Նստել եմ մենակ, ես հիմա արդեն
Մենակ եմ, - չկան սիրելիներս,
Եղբայրներ, քույրեր - բոլորը չկան:
Նայում եմ մեր տան լուռ բեկորներին -
Անցել է անդարձ, ամեն ինչ անցել,
Եվ ես էլ հիմա - ծեր եմ արդեն ես:

<1926
Ղազարապատ>

ՄՈՐՍ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԱՇՆԱՆԸ

Հա՜մբ, լո՜ւռ գերեզմաններ,
Մոխրացած կյանքեր,
Մորս գերեզմանը՝
Մի չնչին հողաթումբ,
Վրան մի դեղին, չորացած բույս,
Որ դողում էր բարակ քամուց:
Մի դեղին, չոր խոտ...
Կարծես սրտիցս է բուսել.
Չեմ կարող մոռանալ նրան,
Աչքերիս առաջն է նա.
Միշտ, միշտ:
Դողում է, երերում...
Ու կանչում է ինձ,
Կանչում է ինձ. ինձ է կանչում,
Իր մոտ, այս կտոր հողի մոտ,
Որ ամենաթանկ հողն է, մի բուռ հողը
Ողջ հողագնդի վրա,
Կանչում է ինձ այնտեղ.
Այնտեղ կարող է հոգիս
Հանգիստ գտնել.
Խաղաղիլ...

<1926>

* * *

Պայքար, մաքառում՝ դաժան, անհաշտ,
Ամենուր, ամեն ժամ արցունք, տառապանք,
Ցավ, խոշտանգություն ամենուր, ամեն ժամ հավերժ,
Պատերազմ, պատերազմ՝ ահեղ, սոսկալի, անսկիզբ, անվերջ,
Արյուն, արյուն, արյուն՝ տիեզերքը մինչև առանցքը
Թաթախված արյան մեջ, արյան մեջ, արյան մեջ:

Գոյության կռիվ՝ կյանքի համար մահ,
Գոյության կռիվ ողջ տիեզերքում:
Իմ վիշտ, իմ թախիծ, մի՛շտ արթուն, մի՛շտ խոցող,
Իմ կյանքի օրերից մթին, թանձր դիզվար իմ հոգում:
Իմ հուշերից ծորող թույն դառնագին –
Իրերից, աշխարհից, աստղերից հեղեղվող
Ծանրություն՝ ճնշող, խորտակող իմ հոգին:

Դժոխք է տիեզերքս, դժոխք է իմ հոգին,
Ես ինչպե՞ս փախչեմ տիեզերքից, իմ հոգուց,
Ո՞ւր փախչեմ տիեզերքից, ամենուր տիեզերք,
Ո՞ւր փախչեմ ինձնից - ամենուր իմ հոգին:
Ինչպե՞ս ազատվեմ, ազատվեմ, ազատվեմ...

<1926-1930>

* * *

Իմ կյանքը լուռ անցավ,
Լուռ անցավ ու զուր անցավ,
Հարյուր տարվա կյանքս
Մի ժամվա պես անցավ:

<1926-1930>

* * *

Դուրսը գիշեր,
Դուրսը լուսնակ,
Մեռելի աչքի պես
Սառել է վրես...

Դուրսը գիշեր,
Հազար հուշեր...
Ի՞նչ մնաց ինձ
Ապրած կյանքից:

Միայն դառնահամ
Իմ բերանում-
Միայն զղջում, խոնջանք,
Հիասթափում:

Վեհ գաղափարներ
Եվ հայրենիք...
Միայն պղծած խոսքեր
Եվ արյան ճապաղիք...

Ու ետ եմ նայում-
Մեռած հույսեր ու կոտրած թևեր.
Առաջ եմ նայում,
Անհայտություն, մահու ստվեր...

Մեռելի աչքի պես
Լուսինը սառել է վրես,
Եվ սիրտս էլ նրա պես <...>

<1926-1930 թթ.>

* * *

Այս կյանքը անցավ
Սխալներով լի,
Ջարդվեց, փշրվեց,
Մոլոր ուղիներով գնաց.
Հիմարությամբ միշտ գնաց.
Կուզենայի նորից ապրել -
Որպեսզի կարողանայի
Լինել բախտավոր
Եվ իմաստուն:

<1926-1930>

* * *

Ա՛խ, մեր կյանքը ունայն խաղ է ու երազ,
Խելքը չէղներ՝ ո՛չ իմանաս, ո՛չ էլ լաս:
Վերքիս վրա աչխարքը աղ կմաղե,
Ամեն մեռնող ինձ իրեն հետ կթաղե:

<1926-1930>

* * *

Երեկոյան երկար ստվերներ
Կամաց-կամաց տարածվեցին,
Թեթև հովը շարժեց ծառեր,
Բարձրանում է բարակ փոշին...

5 *Երեկոյան ստվերներն երկար*
Տատանվում են շարժուն, շարժուն,
Տերևների միջից դալար
Կարմիր արևն ոսկի է ցրում...

<1926-1930>

* * *

Մահս մոտ է, մոտիկ է այնքան,
Որ հեռու անտառից
Գիշերվա ժամին
Լսում եմ անվերջ
Քամու բերանից
Խոր սոսափյունը
Այն ծերուկ կաղնու,
Որից պիտ չինեն
Զորս տախտակները
Իմ դագաղի...

<1928
Երևան>

* * *

Մահս առաջս է կանգնած,
Արագ քայլերով մոտենում է ինձ:
Գիտեմ, որ շուտով պիտի փշրե ինձ-
Եվ զզզզե, խառնե ինձ
Տարերքի հետ,
Եվ պիտի անցնեն, ինչպես անցել են
Հազար տարիներ և հազար դարեր,
Առանց ինձ, պիտի անցնեն միլիոն դարեր
Եվ հավիտյան, առանց ինձ:
Կանգնիր, ետ դարձիր, դարեր, ժամանակ,
Ես նորից եմ ուզում ապրել,
Ես չեմ հաշտվում բնության հետ,
Նրա օրենքների հետ դաժան...
Բայց պիտի հոսի ժամանակը,
Եվ լեռները դաշտ պիտի դառնան,
Եվ դաշտերը՝ ծով,
Եվ ծովերը՝ սառույց,
Եվ երկիրը պիտի փշրվի...
Եվ ես էլ չեմ լինիլ...
Աստղերը պիտի շրջին տարածության մեջ,
Ուր պիտի թափառե փոշիս,
Եվ աստղերը պիտի հանգչեն,
Պիտի փոշիանան,
Եվ նորից պիտի հունցվեն ու
Նորից վառվեն ու չողան, անմիտ ու
Աննպատակ, ընկած մի հոսանքի մեջ.
Եվ ես չկամ, առանց ինձ...

<1928>

* * *

Դու իմ սիրուն աղավնի,
Երնեկ քեզ պես լինեի,
Թևերս արձակ ու ազատ
Թռչեի սար, դար ու դաշտ,
Արեգակի շողերում,
Ծաղիկների ցողերում
Թռվռայի, լողայի
Ու միշտ քեզ հետ լինեի...

<1920-ական թթ. երկրորդ կես>

* * *

Վերջին չայ, վերջին չայ,
Աներոջ տան վերջին չայ,
Որքան քաղցր ես, որքան դառն ես,
Աներոջ տան վերջին չայ:

Բաժակներն այն առաջին՝
Լցված քնքուշ քո ձեռքով,
Հիմա լցված են նրանք
Սրտիս անհույս արցունքով:

Այնպես գոհ ու երջանիկ
Նստած էինք փեչքի մոտ,
Դուրսը ցուրտ էր, փոթորիկ,
Մեր սրտերում՝ վառ կարոտ:

Եվ չայնիկը լեփ-լեցուն
Եռ էր գալիս սրտիս պես,
Անուշ չայն էի խմում
Եվ սրտագին գրկում քեզ:

Անցավ սերը բովանդակ,
Եկավ կասկած ու տագնապ,
Իջավ ճակտիս հիասթափ
Մի օր չայնիկը դարտակ:

< 1920-ական թթ. երկրորդ կես>

* * *

Զմրուխտեղեն թասերի մեջ,
Ինչպես ոսկի գինիներ,
Կշողշողան ու կուտան պեծ
Ակն-աղբյուրներ, լճակներ:

<1920-ական թթ. երկրորդ կես>

* * *

Մի թռչուն ելավ ծովից,
Հարցումն արավ աշխարհից.
Եթե մեռնելու էի,
Էլ ինչո՞ւ ծնա մորից:

<1920-ական թթ. երկրորդ կես>

* * *

Հազար սիրտ ունեմ, միայն մի լեզու,
Արար-աշխարհին ինչպե՞ս ինձ հայտնեմ.

Հազար ցավ ունեմ, միայն մի լեզու,
Արար-աշխարհին վիշտս ո՞նց երգեմ.

5 Հազար իղձ ունեմ, միայն մի լեզու,
Արար-աշխարհին տենչս ո՞նց ասեմ...

<1920-ական թթ. երկրորդ կես>

* * *

Խորտակված են իմ բերկրության
Սանդուխները արդեն վաղուց,
Մահն է հավերժ, կյանքը՝ վայրկյան
Աշխարհն ամեն՝ ունայն զրույց:

5 Ու լսում եմ հայրենիքիս
Եկեղեցու զանգը տրտում,
Կաթիլ-կաթիլ արցունքի պես
Ցավ է մաղվում իմ որբ սրտում...

Հետ եմ նայում մտքով տխուր՝
Միայն մեռած, կոտրած թևեր...
10 Եվ քայլերս ծածկում է լուռ
Միայն մահի դեղին ստվեր...

<1920-ական թթ. երկրորդ կես>

* * *

Ա՛խ, այնպես մեղմագին, անդորրիկ
Հնչում էր այն երգը հայրենի,
Այնպես խոր, և ազատ, և քաղցրիկ
Հնչում էր խորքերում իմ սրտի...
Եվ ինձի թվում էր, թե այնտեղ,
Ա՛խ, մայրիկս էր օրոր ինձ ասում,
Եվ երգն էր թախծալից, սիրազեղ,
Հայրենի մեղեդին անխնդում:

<1920-ական թթ. երկրորդ կես>

* * *

Մի ոսկե թռչուն անցավ երգելով
Իմ հոգու խորքից,
Ա՛խ, ձայնը նրա այնպես հոգեթով՝
Լավ ծանոթ էր ինձ:

Ա՛խ, ձայնը նրա լազուր երազներ
Շնորհեց հոգուս...
Քեզ հազար ողջույն, իմ սուրբ, իմ նոր սեր,
Նորոգ արշալույս...

<1920-ական թթ. երկրորդ կես>

1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

Եվ այնուհետև մեր կյանքի ծառից
Թափվում են մեկ-մեկ մեր տենչերը վառ.
Անցնում են անդարձ սերը ծաղկալից
Եվ համբույրների գարունը պայծառ:

<1930-ական թթ. առաջին կես>

* * *

Կուզեի հիմա լինեի հեռու,
Ա՜խ, ինչպես կուզեմ լինել հեռու
Այս մեծ քաղաքի տենդոտ ժխորից,
Շահերի, կրքերի պայքարից հեռու,
Այս անտես լծից, որ ճնշում է
Ուսերս [գետին]...
Լինեի հայրենի լեռան լանջին.
Դեզերի միջին, ժայռերի ստորոտին,
Վրանս զարկեի կարկաչուն,
Սառնորակ գետակի ափին
Բուրալից հովը ճակատս զգվեր,
Եվ ցողը պարուրեր ինձ,
Երբ գիշերը գար,
Աստղերը օրորեին ինձ,
Եվ նիրհեի կապույտ
Երազների մեջ:

<1930-ական թթ. առաջին կես>

* * *

Թույն եմ շնչում ես ամեն օր
Օտար երկրում.
Մենակ, անոք վիշտս եմ կրում
Տարին բոլոր:

5 Եվ ամեն ինչ տհաճ ու խորթ
Սրտիս համար,
Ամեն ինչի հոգիս օտար
Եվ անհաղորդ:

< 1930-ական թթ. առաջին կես>

* * *

Զգիտեմ, ինչպե՞ս տարիներն անցան
Արագ, սրաթև.
Երեխաները մեծ մարդիկ դարձան,
Եվ ծերացա ես:

5 Օրերս անցան ծուխի պես թեթև,
Բայց նրանց հետքը ծանր բեռի պես
Կոտրում է մեջքս:

Նստել եմ հիմա օջախիս առաջ,
Կտրում եմ նորից իմ ուղին անցած,-
10 Հույսեր ու տենչեր, երազներ միայն՝
Անցած իմ ուղին:

Ոսկե գավաթներ կյանքի լիությամբ,
Առանց դիպչելու շրթունքիս, անցան.
Ունայն մի գավաթ մնաց իմ կյանքին:
15 Հանգչում է հուրը իմ օջախիս մեջ,
Եվ մութն է իջնում դանդաղ ու տրտում,
Իմ ցուրտ սենյակում և իմ ճեք սրտում:

1935 ապրիլ

* * *

Հեռանամ, փախչեմ անկայան,
Հեռանամ ինքս ինձնից –
Իմ խոհերից, հուշերից, վշտերից -
Այս երկրից, այս տեղերից հեռանամ,
Շարժումից և նյութից փախչեմ -
Ժամանակից փախչեմ, հեռանամ -
Տիեզերքից, տիեզերքից փախչեմ
Եվ զգամ հավիտյան,
Որ փախչում եմ, հեռանում
Ժամանակից, ժամանակից դուրս -
Տիեզերքից, տիեզերքից դուրս:

1937

* * *

Բնությունն երբեք չի նայում ետ,
Ու չի կորչում ոչինչ անհետ.
Ինչ մեր որդոց պարտք ենք տալիս,
Նրանք դարձնում են այնուհետ
Սերունդներին իրենց գալիք:
Շա՛տ տուր, որպեսզի երբ գնաս,
Տվածիդ մեջ երկար մնաս:
Բնությունն երբեք չի նայում ետ,
Ու չի կորչում ոչինչ անհետ:

1937

ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՏՆԱԿՈՒՄ

Սարի սովոր արծիվն, ինչպես վանդակում,
Ապրել ես դու այս ցած ու նեղ տնակում.
Ու սեգ հայացքդ կարոտով վառվռուն
Նետել ես դեպ անհաս Կազբեկը հեռու:

Քո դարն էլ մութ՝ տնակիդ պես, նեղ էր քեզ,
Եվ դու հայացքդ ու տենչերդ հրկեզ
Գլխի վրայով շրջապատիդ տաղտկալի
Նետել ես դեպ հեռու դարերը գալիք:

1937

* * *

Լույս հանճարի օրերը կարճ
Երկար դարեր են տևում.
Եվ վայրկյանները վաղանցիկ
Դեպի հավերժ են թևում.
Դեպի գալիքն է նա ճախրում
Գլխի վրայով ներկայի.
Թողնում անձուկ ու գետնաքարշ
Շրջապատն իր հետևում:

1937

ՍԵՎԱՆ

Զքնաղ Սևան, անմահ ջրեր՝
Զրհեղեղից մնացած,
Պատմում եք ինձ անթիվ հուշեր՝
Դարերի մեջ անմոռաց:

Դարեր, դարեր, հազար դարեր,
Ամեն մի ժամ, ամեն վայրկյան,
Զարկվում եք, ծեծվում անդուլ
Ձեր ափերին հավիտյան...

Լսում եմ ձեր մրմունջին,
Եվ տանում եք իմ հոգին
Դեպի անցյալն անհիշատակ,
Դեպի գալիքն դարերի:

Եվ միացնում եք, խառնում
Անհունին ու հավերժին...
Զմրուխտ ջրեր, լազուր ջրեր՝
Զրհեղեղից մնացած...

<1937, 22 օգոստոս>

* * *

Արդյո՞ք եղել եմ ես ջահել,
Սիրե՞լ եմ արդյոք, երազել,
<Միայնակ> թափառել.
Լաց եղել սիրո խանդից-
Անցել են արդեն տարիներ,
Խամրել է ամեն ինչ.
Շուտով կջնջվեմ և ես:

Անցել են անվերջ դարեր,
Եկել են ու գնացել սերունդներ,
Անցել են ու երգել, երազել-
Մոռացել են ու մոռացվել.
Հող են դարձել և ջնջվել անհետ:

Պիտի գան դարեր, դարեր.
Բյուր, բյուրավոր, անվերջ:
Սերունդներ պիտի գան,
Ապրեն, տանջվեն և
Իջնեն գերեզման:

Եվ պիտի մոռացվի ամեն ինչ,
Եվ երկիրն էլ պիտի մարի,
Եվ արևը, և Ծիր կաթինը-
Ունայնություն ունայնությանց:

<1930-ական թթ. երկրորդ կես>

1940-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

Սրտումս սիրո
Ծով է մրրկում.
Եվ սերը սիրտս
Այրում ու մրկում:
Աշխարհներ անհուն,
Հեռուներն ամեն
Արևները վառ,
Աստղերն հրեղեն
Գրկել եմ ուզում.
Կսկուծ համբուրեմ.
Արևները վառ,
Աստղերն հրեղեն
Համբուրեմ ուժգին,
Որ շրթունքս այրվեն:

<1940-ական թթ.>

* * *

Ճիշտ է խոսքը մեր հինավուրց բանաստեղծի,
Թե արյունը՝ մեկտեղ թափված հանուն գործի,
Զոդող կապ է սրտերն իրար, ազգերն իրար,
Մահից հզոր, արևի պես հավերժ ու վառ:

<1940-ական թթ.>

* * *

Հոգնած քայլերով մտել եմ անտառ.
Նստել եմ մենակ մթին անտառում
Ու միտք եմ անում աշխարհի բանը,
Ականջ եմ դնում անտառի խոր շառաչին,
Որ այսպես շառաչել է սերունդների վրա.
Լսում եմ ուշով, և շառաչը
Ինձնից հեռացնում է ինձ.
Մտքերս տանում, ցրում է հեռուն՝
Մոռացության ափերն հեռավոր,
Հալվել է ներկան, չկա ժամանակ.
Ձեմ զգում ես ինձ, ես անգո, անէակ.
Ձկա ժամանակ...

<1940-ական թթ.>

* * *

Եվ ո՞վ կուտա ինձ արցունք գետերով՝
Լալու կորուստը տարաբախտ ազգիս,
Եվ վիշտս մեծ է՝ որպես անծիր ծով՝
Բայց արցունք չկա չորցած աչքերիս...

Եվ բիրտ ազգերի, և ստրկության
Ճիրանների մեջ տանջված դարերով
Իմ ժողովուրդը հանուն սրբության,
Հանուն հավատքի մարտիրոսվելով.-

Իմ սուրբ Հայաստան, նահատակ աշխարհ,
Հարևան, օտար ազգերի նման
Դու չկռվեցիր շահ, նյութի համար,
Այլ գաղափարի, հանուն վեհության...

1940, օգոստոսի 19
Սևան

* * *

Հրամանները միշտ իջնում են վերևից,
Պատ ու կտուր միշտ քանդում են վերևից,
Թե որ կուզես տունդ պահել մաս-մաքուր, -
Սանդուղքները լվանում են վերևից:

1940
Երևան

ԳՈՎՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Գովելի ես, իմ Հայաստան,
Երգում եմ քո ծաղկած ուղին.
Հե՛յ, աշուղներ, գրեք դաստան,
Հասել է մեզ խինդն ու բարին:

Ծաղկեց դաշտը Արարատյան,
Դալար մնա Հար-Հավիտյան.
Դառն օրերը էլ մեզ չկան,
Խփենք մենք մեր սազի լարին:

Շքեղ ես դու, Մայր Հայաստան,
Հայելի է լիճըդ Սևան.
Ձրերը քո պաղ, քչքչան,
Թիկն <ե>ս տվել Մասիս սարին:

Ես երգում եմ քեզ, Հայաստան,
Առատ ու լի Հանդ-Հանդաստան,
Ծաղկած պարտեզ, բար-<բուրաստան,>
Անմեռ մնաս անթիվ դարեր:

<1943>

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԸ

Վարդավառ է, վարդերի տոն, վարդագեղ.
Մեր պապերի նվիրական վարդի օր.
Տղա, աղջիկ, պա՛ր բռնեցեք, երգեցեք,
Վարդավառ է, վարդերի տոն, վարդևոր:

Տղա, աղջիկ, իրար վրա ջո՛ւր ցողե՛ք,
Մեր կարկաչուն աղբյուրներից վարդաջուր,
Լուսափետուր աղավնիներ բա՛ց թողեք,
Թռցրեցե՛ք աղավնիներ ոսկեթույր:

Հե՛յ, լուսաթև աղավնիներ, գնացե՛ք,
Դավիթ Բեկից, մեր քաջերից լուր բերեք,
Ծափին տալով, թևին տալով ե՛տ եկեք,
Վարդավառ է, բարի, ուրախ լո՛ւր բերեք:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ.

Է՛յ, եղբայրներ, Է՛յ քույրիկներ, լսեցեք,
Դավիթ Բեկը իր քաջերով հայկազուն
Զարկեց, ջարդեց մեր թշնամո՛ւն, թշնամո՛ւն,
Է՛յ, լսեցե՛ք, ուրախացե՛ք, ցնծացե՛ք:

<1943
Երևան>

ՆԱԽԵՐԳ

Ո՛վ անմահ Սյունիք, դարեր պատեցին
Քո սարն ու ձորը խոլ-խավար ամպեր,
Մթին չանթերով, խուլ որոտմունքով
Ծանր ու սև ամպեր, մռայլ, մահաբեր:

Քո ժողովուրդը արդար ու աննենգ,
Դարեր հարկ տվեց բռնակալներին,
Բայց հացի վերջին պատառը նրանք
Հեգ մանուկներիդ ձեռքից խլեցին:

Հուսահատ անվերջ տառապանքներից
Խեղճ ժողովուրդը մանուկներիդ հետ
Խարույկների մեջ նետեցին իրենց՝
Խոշտանգումներից փրկվելու համար:

Բայց չմոխրացավ քո ըմբոստ ոգին,
Ինչպես Վահագնը բոցերի միջից՝
Դուրս ելավ անկեղ մի սեգ պատանի՝
Քո ազատության դյուցազնը անբիծ:

Ո՛վ անմահ Սյունիք, դարեր պատեցին
Քո սարն ու ձորը խոլ-խավար ամպեր,
Բայց վաղը պիտի մռայլը ճեղքի
Սուրբ ըմբոստության չանթն ազատաբեր:

<1943
Երևան>

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Սյունյաց աշխարհն այսօր վառված վրեժով՝
Մերկացրել է ազատության սուրը հին.
Ելե՛ք, հայեր, մի մարդու պես, մի սրտով
Թռեք, հասեք ու միացեք քաջերին:

Դանակն արդեն հասել է մեր ոսկորին,
Օրն է եկել հայրենիքի փրկության,
Մի՛ խնայեք ձեր կյանքերը վեհ գործին,
Ժամը հնչեց բռնակալի կործանման:

Մեր պապերը այս սուրբ հողը դարերով
Գոռ շահերից, խանից առաջ վարել են,
Վաղն էլ խանի ջարդված գահի վրայով
Պիտի վարեք հաղթանակով հավիտյան:

<1943
Երևան>

* * *

Ով Սուրբ Վարդան Մամիկոնյան,
Հավերժացած անմահ փառքով,
Շիրմիդ առաջ նվիրական
Երդվում եմ բոլոր հոգով-հավատով՝
Կուզեմ մինչև շունչս վերջին
Թափեմ արյունըս բոցավառ
Իմ տառապած ժողովրդի
Ազատության գործի համար:
Ջարդեմ, փշրեմ չար թշնամուն,
Արև ծագի ազատության,
Մեր սուրբ երկրից հավերժ ջնջեմ
Պիղծ թշնամու լուծն ու շղթան.
Երդվում եմ կռվել, մեռնել
Քաջերիդ պես դյուցազնական,
Որ արժանի լինիմ դասվել
Նրանց շարքում, ո՛վ մեծ Վարդան:

<1943>

ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԴՈՒՄԸ

Քո չիրմիդ առաջ, ով սուրբ նահատակ,
Մենք՝ ժողովուրդս, երդվում ենք ահա,
Որ Դավիթ Բեկի դրոշակի տակ
Կռվենք անձնուրաց, կռվենք մինչև մահ:

Քո չիրմիդ առաջ, ով անմահ Վարդան,
Մենք՝ ժողովուրդս, երդվում ենք նորից,
Որ հավատարիմ մնանք մեր ուխտին,
Զարկենք թշնամուն, վանենք մեր երկրից:

Մեկ մարդու նման կանգնած ենք պատրաստ,
Ձիերը՝ թամբած, թրերը՝ սրած,
Օրհնիր մեր երթը, ով սուրբ զորապետ,
Երդվում ենք մեռնել ի սեր Հայրենյաց:

<1943
Երևան>

* * *

Իրերը բոլոր մեկը մյուսի դեմ -
Ամենքն ամենքի դեմ - Հավիտյան կռիվ,
Կոտորած և ջարդ, որբեր՝ բյուր ու բյուր,
Քաղց, սով, մերկ ու ցուրտ, վերք ու խոցեր,
Դահիճներ, զոհեր, ոճիրներ անհուն,
Ջարուիթյուն, բռնութիյուն, զրկանքներ անգութ,
Տառապանք, տանջանք - անհույս, անվախճան.
Գոյութիյան կռիվ - օրենք անհեղլի,
Դաժան մարդկութիյուն, բնութիյուն դաժան:

Իմ սիրտ, իմ խեղճ սիրտ -
Այս ամենքը, ամենքն այս, ամենքը բոլոր -
Անցնում են քո միջով, խոցում են քեզ անբույժ,
Եվ չկա փրկութիյուն, փրկութիյուն բոլորին:

Եվ անկարող ես, անկարող բացարձակ,
Ջես կարող փրկել տիեզերքը չարիքից -
Ջես կարող փոխել օրենքն արյունոտ,
Ջես կարող փրկել և քեզ տանջանքից:

<1943>

ՀԻՄՆ

Մեր ժողովուրդը գութանով իր հին
Հերկել է դարեր հողն Հայրենիքի,
Ոսոխների դեմ՝ սուրը միշտ ձեռքին
Պայքար է մղել սուրբ իրավունքի:

Մենք լույս ենք կերտել ապառաժներից
Բռնության ծանրը շղթաների մեջ,
Պահել ենք, սակայն, մեր ազատ ոգին
Եվ ապագայի մեր հավատն անշեջ:

Լենինը վառեց աստղը նոր կյանքի
Եվ լույսերի մեջ առավ մեր ուղին.
Ստալինը տվեց մարմին իրական
Մեր ազատության դարավոր տենչին:

Մենք լույս ենք կերտել ապառաժներից,
Կերտում ենք հիմա քո շքեղ ներկան.
Ապրի՛ր, Հայաստան, բարձրացի՛ր փառքով,
Փչրել ենք արդեն բռնության շղթան:

Զինված դաշինքով ժողովուրդների՝
Նայում ենք վստահ մեր ապագային.
Զինված գիտությամբ և արվեստներով՝
Կհաղթենք բոլոր խոչընդոտներին:

Մենք լույս ենք կերտել ապառաժներից,
Կերտում ենք հիմա քո ազատ ներկան.
Ապրի՛ր, Հայաստան, ծաղկի՛ր հավիտյան,
Կռում ենք ամուր քո մեծ ապագան:

1944 փետրվարի 23
Երևան

ՄԵՐ ՍՊԱՆՎԱԾ ԴԻՑՈՒՀԻՆ

Մեր Հայրենի սեգ լեռների
Կանաչ գրկում անուշաբույր
Սպանեցին, հոշոտեցին
Մեր ոսկեհեր, կապուտաչյա
Գեղեցկուհուն հոգեհատոր:

Ավա՜ղ, էլ չենք տեսնելու մենք
Զքնաղ դեմքը աստղաժպիտ
Մեր նազելի գեղեցկուհու.
Ավա՜ղ, էլ չենք լսելու մենք
Ձայնը քաղցր, լուսակարկաչ
Մեր սիրելի գեղեցկուհու:

Եվ երբ մի օր գնանք այցի
Գեղեցկուհուն մեր նազելի
Սեգ լեռների կանաչ գրկում,
Ուր մորթեցին, հոշոտեցին
Մեր սիրուհուն հոգեհատոր,
Պիտ կուրանան աչքերը մեր,
Երբ փոխարեն մեր դիցուհու
Կապուտաչյա, լուսակարկաչ,
Տեսնենք ժայռեր, ծերպեր մթին՝
Կարիճների, օձերի բույն
Մեր Հայրենի սեգ լեռների
Հրատոչոր, մեռած գրկում:

1948 հուլիսի 25
Նոր Բայազետ

* * *

Միտքս թեև շատ թափառեց այս աշխարհում,
Բայց մազն ինչ է, հերկեցի էլ, բան չհասկացա.
Իմ մտքի մեջ բյուր արևներ են շողշողում,
Բայց և այնպես կազմն աթոմի ես չիմացա:

1948

* * *

Հավերժություն, անհունություն անսահման,
Տիեզերքներ, տիեզերքներ անհամար,
Ուր ծնվում են Մեր կաթիններ անհամար,
Ուր մեռնում են Մեր կաթիններ անհամար.
Անդուլ ծնվող, անդուլ մեռնող
Մեր կաթիններ անհամար:
Տիեզերքներ, տիեզերքներ անվախճան,
Ողջը, սակայն, անմիտ, ունայն, անիմաստ,
Ոչնչություն՝ աննպատակ, անիմաստ:

1949 մայիսի 20

1950-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

1

Քո տողերը
Միշտ ցողել են
Որբ ու տրտում
Իմ բաց սրտում
Մտերմություն
Ու ջերմություն
Բորբ կրքերդ,
Կյանքի սերդ
Ուժն են վարար
Ու կենարար
Գարնան բնության,
Պատանության:

2

Խոր հույզերից հորդ ու ահեղ
Պայթեց կյանքիդ անոթը նեղ,
Թոչնեց ծաղիկն հրաշալի՝
Դեռ չծնված սերմը գալիք:

<1952, Պյատիգորսկ>

* * *

Երբ դեռ չէի ես տեսել քեզ,
Պայծառ էի գարունքվա պես. –
Երբ տեսա քեզ,
Հոգիս մթնեց ամպրոպի պես:

Հեռու, հեռու գնացի ես,
Ուր շաչում է հողմը վայրագ,
Ու լաց եղա հողմերի մեջ,
Լաց եղա ես, որ տեսա քեզ:

<1950-ական թթ. առաջին կես>

* * *

Գնա՛ց, գնա՛ց,
Սիրելիս գնա՛ց.
Էլ մի՛ որոնեք,
Մի՛ փնտրեք.
Հրաշալի էր նա,
Գեղեցիկ էր նա.
Նրա պես սիրուն
Էլ ո՞վ կունենա...

<1950-ական թթ. առաջին կես>

* * *

Օրերս շքեղ կորան Հավիտյան,
Բայց ժամանակից հզոր, զորագին
Սոսկ մի վայրկյանը քո կախարդ գրկում
Կվերադարձնե կորուստս անգին:

<1950-ական թթ. առաջին կես>

* * *

Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել
Զինվոր հասարակ,
Հայության բոլոր ոսոխների դեմ կռվեի անդուլ
Անիի հզոր պարիսպների տակ:
Եվ հուր վրեժով
Զարկեի դարե՛ր, զարկեի դարե՛ր,
Եվ բյուր վերքերով
Ընկնեի վսեմ պարիսպների տակ.
Սիրտս խաղաղվեր, հանգչեի հավերժ
Անիի անմահ պարիսպների տակ...

1955 թ. դեկտեմբերի 12
Երևան

ՇՈՊԵՆԻ ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳԸ

Մի շքեղ, սիրուն երիտասարդի
Թաղման թափորն էր.
Սգանվագը հնչում էր տխուր.
Գնում էինք լուռ,
Դանդաղ, մտազբաղ,
Եվ նվագի մեջ լսվում էր կարծես
Հուսաբեկ ձայնը թշվառ տղայի.-
«Լացե՛ք իմ վրա,
Լացե՛ք ձեր վրա.
Ողբանք միասին
Մարդկության վրա,
Որ կա և չկա...»:

1956
Երևան

* * *

Դուրսը բուք է խիստ, գիշեր, ցուրտ ձմեռ.
Շքեղ դահլիճում ջերմ ու լուսավառ,
Պարում են, երգում, կատակում զվարթ,
Բայց դո՛ւ, ընկեր իմ, պառկել ես անզարդ,
Ծանր հողի տակ,
Քաղաքի եզրում,
Եվ բուքն է հիմա ձյունաթաղ դաշտում
Քաղցած գայլի պես
Քո գերեզմանի վրա կաղկանձում...

1956, դեկտեմբերի 10
Երևան

* * *

Կուզեի լիներ կյանքը Հավիտյան
Եվ միշտ մանուկ ու դալար.
Կուզեի լիներ սերը անվախճան –
Եվ երգը հնչեր սրտից մաքուր.-
Կուզեի չլիներ տոփանք ու հեշտանք.
Սերը լիներ մաքուր սրբություն-
Կուզեի երգել անվերջ,
Անվերջ խորհել, հավերժ երազել.
Կուզեի... ա՜խ, հավերժ ապրել կուզեի:

<1950-ական թթ. երկրորդ կես>

* * *

Մենք տիեզերքում, տիեզերքի չափ,
Հատուկ, սեփական զանձ ունենք անբավ.
Սակայն բյուր ավա՜ղ, այդ զանձն անսահման
Մերը չէ բնավ, մահինն է դաժան:

<1957, հուլիս
Երևան>

* * *

Մենք ապրում ենք մահվան դժխեմ
Այս աշխարհում,
Որովհետև չենք հավատում,
Թե երբևէ պիտի մեռնենք,
Սակայն կյանքը, չգիտենք որ,
Հետաձգված մահ է միայն:

1957 հուլիսի 23

* * *

Մարդու տենչանքն է՝ հավիտյան ապրել
Եվ Աստված լինել տիեզերաշեն,
Ամենակարող, ամենահզոր
Եվ ամենագետ:

1957 օգոստոս

* * *

Ինձ սիրեիր որպես թե
Լինեի մեռած.
Անունս հնչեր քեզ՝
Հեռավոր մի հուշ:
Ինձ տեսնեիր երազիդ մեջ
Դալուկ ու տխուր,
Ինձ կանչեիր, բայց գնայի,
Ինչպես ուրու, հեռու...
Երբ լսեիր իմ երգը
Սրտիցս բղխած,
Թախծեիր, լացեիր.
Սերըդ մեռած...

1957 Հոկտեմբերի 16

ՍԵՎԱԳԻՐ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

Էս սարերից հիմա արտուտը կուգա
Ձենը ինչպես զանգի խորքից
Անուշ կզնգա.
Գարնան գովքը կասե աշխարհին:
Ես դուրս եկա դաշտը
Իմ ընկերիս ման եկած տեղերը.
Ա՛խ, հեռու գարնան
Անգին ընկեր ջան.
Միասին շրջում էինք,
Ու դու երգում էիր
Սերն ու ազատությունը
Ու գարնան գալը:
Բայց հիմա չկաս,
Ու ես մնացի մենակ.
Դու ընկար, ու ով գիտե,
Ո՞ր քարի տակ սուրբ հայրենիքի ծոցում
Հանգչում է հիմա
Սրբազան արև-սիրտդ
Սիրուն, ծով աչերդ
Ձեն տեսնում էլ զուլալ երկինքը.
Ու քնքուշ սիրտդ
Չի լսում երգը արտուտի
Դու սիրուն, նազելի,
Գեղեցիկ և ազնավուր.
Ընկար հայրերի սուրբ հողի վրա.
Քնիր, ընկեր ջան, այդ հողերու տակ.
Եվ թող ծանր չլինի
Այդ նվիրական հողը վրադ,
Թող մատաղ սրտիդ վերա

Ծանր չթվա այդ հողը,
Որն այնպես անհուն
Դու սիրում էիր,
Որի համար զոհ բերիր
Արև-կյանքդ...

1904, ապրիլի 18
Ս. Պետերբուրգ

ԿՈՒԶԵԻ ԱՊՐԵԼ

Սերս նման էր. –
Վառ արշալույսի նորաբաց վարդին,
Բայց մարդիկ անցան, կոխեցին նրան:
Սերս նման էր. –
Անուշ երազով նիրհող մանուկին,
Բայց օրոցքի մեջ խեղդեցին նրան...
Սերս նման էր.-
[Ա՛խ, մատաղ կյանքս խորտակվեց, անցավ...]

<1900-ական թթ. առաջին կես>

* * *

Դու քնքուշ տերև հողմերի առաջ,
Ի՞նչ ես կորցնում աշխարհից –
Ո՛չ ոք մի կրակ չվառեց օջախիդ մեջ:

<1910-ական թթ. առաջին կես>

* * *

Ա՛յ իմ չոր գլուխ՝ դարդոտ ու մենակ,
Դուռդ սև շարիր, ցուպդ ա՛ռ, գնա՛,
Գնա՛ անապատ տխուր, վերանա:

<1910-ական թթ. առաջին կես>

* * *

Հոգիս գերված կամավոր,
Քո աչերում զինավառ,
Թարթիչներով, նետերով,
Պատսպարած է հոգիս ցավի, մահի դեմ:

<1910-ական թթ. առաջին կես>

* * *

Մի քիչ ժամանակ ինձ էլ լսեցեք,
Սրտիս դարդերը պատմեմ, իմացեք,
Աշխարհի բանը ոչ ոք չիմացավ:

<1938>

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԵՎ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՓԼԱՏԱԿԱՑ ՄԵՋ ԱՑՆ ՈՎ Է ՆՍՏԱԾ...» (էջ 8)

20 Ինչպես որ իմ հարց, եղբարց տվեցիր:

ՀԱՅՈՒՀՎՈ ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳԸ (էջ 9)

27 Ս. Հայրենիքի համար մեռնիլ.
34 Եվ ժառանգես անմահ անուն՝
54 Երկար օր<եր> շատ օրեր,

«ՈՍԿԻ ԱՆՈՒՐՋՔ... ՇԻՐՄԻ ՎԵՐԱ...» (էջ 12)

5 Ահա [կրկին] դարձյալ երևեցավ,

ՏԱՐԲԵՐԱԿ

[Իր սև] Ոսկի անուրջք... շիրմի վերա [նստած]
[Այսօր] նստած տեսա ես «Նորան».
Ձեռքս մեկնեցի, որ բռնեմ՝
Կորավ ինչպես ուրվական:
Ահա՛ կրկին երևեցավ
Ժպիտն երեսի վերա.
Եվ մ'օդային համբույր տալով՝
Ձքացավ իր շիրմում «Նա»:
Եվ մի կարմիր վարդ իբր ընծա
Շիրմի վերա թողեց «Նա».
Առա վարդը, ուրախացա,
Բայց երազ էր ափսո՛ս սա:

ԵՐԿՈՒ ՀԱՄԲՈՒՅՐ (էջ 13)

Առաջին քառատողի դիմաց՝ լուսանցքում՝
Հիշիր ուխտը: Երբ բացօթյա

Երկնից ներքո և մատռան
Ինձ իբր [նշան] սիրո առհավատչյա
Տվիր համբույր միացման:

2 Դու իմ գրկումը տարածված

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ (էջ 15)

52 Եվ առ՝ջի բարևը

ՀՐԱՎԵՐ (էջ 18)
(ՆՎԵՐ...)

1 Ե՛կ, աչագեղ, կո՛ւյս փարելի,
15 Որ հյուսել եմ աստղալուսի
16 Վառ չերտերից երկնառաք:

ՆՎԵՐ... (էջ 20)
«ՊԱՐԳԵՎԻ՛Ր ԻՆՁ, ՀԱ՛ՅՐ ԱՊՈԼԼՈՆ...»

5-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(Կուզեմ)*:
7 Միայն նոցա տեղ երգել կուսիդ

ԱՆՈՒՐՋ (էջ 23)

40 Ստրուկ կնիքը
43 Լուծը անարգական
46 [Շղթան<երով>] Կուռ շղթաներով
48 Կապ[ում է շու<տով>]ոտում շուտով...
56 [Փրկարար] Կենսունակ ոգին
68 [Զար] Մութ արգելանի
69 [Լու<սամուտից>] Նեղ լուսամուտից
96 [Նե<նգ>] Կեղծ ու չարամիտ

101 Անդորը էր թվում
124 Նայեց իմ վերա
175 Կանգնեցա անսուտ

ՃԳՆԱԺԱՄԻ ՀՐԱԺԵՇՏ (էջ 32)

4 Երգում եմ ես տենչակեզ:
9 Առ այս վարդը քեզ հիշատակ
11 Սիրո վերջին այս սպեղակ

«ՊԱՏՌԵՑ ԵՐԿՐԻ ԿՈՒՐԾՔԸ ԱՌՈՒՑԳ...» (էջ 34)

Ա ՏԱՐԲԵՐԱԿ

Երկրի կուրծքը անվախ պատռեց
Երկնի ահեղ կայծակը:
Հեզ կրծքիս տակ ծածուկ սողաց
Սիրուդ նսեմ, մեղմ կայծը:

Հուր ու կրակ այն կայծակը
Հանգավ երկրում - սառն, խսպառ.
Բայց սիրուդ մեղմ, նսեմ կայծը
Սրտումս մնաց վա՜ռ, պայծառ...

Բ ՏԱՐԲԵՐԱԿ

Վառ-կայծակը [ահեղ] երկնից ժայթքեց,
Պատռեց երկրի կուռ-կուրծքը.
Սիրուդ կայծը սուրաց, նազեց,
Ծածուկ ծորեց իմ կուրծքը:

[Հուր կայծակը մարավ, հանգչեց
Դարձավ մոխիր երկրի տակ.

Սակայն սիրուդ կայծը վառվեց
Սրտումս դարձավ բոց-կրակ]:

Հուր կայծակը երկրում հանգչեց,
Դարձավ մոխիր սառն, իսպառ,
Սակայն սիրուդ կայծը վառվեց,
Սրտումս ցոլաց վա՜ռ, պայծառ...

(էջ 38)
«Ա՜խ, ՀՈ՛ՒՐ, ՓԱՅԼԱ՛Կ, ՇԱՀԹ ԻՄ ԳԼԽՈՒՆ...»

14 Հայի միջոցը մեռավ,
16 Ռազմի դաշտը դժնդակ.
18 Անկա մարտում փրկանակ.

13-16-րդ տողերի դիմաց՝ լուսանցքում՝
Եվ կենսատու ազատության
Միակ միջոցը հայի,
Եվ արյունռուշտ, նվիրական
Ռազմի դաշտը ցանկալի:

ԻՄ ԸՆԿԵՐ Ե. ՀԻՇԱՏԱԿԻՆ... (էջ 39)

2-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ (*մամռազարդ, անշուք ու պարզ*):
43 Անջինջ կմնա իմ սրտում, անդորր.

ՆՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ (էջ 41)
«ԿՈՒԶԵ՞Ս ՏԵՄՆԵԼ ՋԻՆՋ, ԹՌՉՆԱԼԻՑ...»

Բ ԻՆՔՆԱԳԻՐ

1 [Ցանկա՞ս] Կուզե՞ս տեսնել ջինջ, թռչնալից
5 Ցանկա՞ս տեսնել [նվիրական] սրբանվեր

7 [Նախնյաց չիրիմ] Կոթող, արձան, սուրբ չիրիմներ,
9 Ցանկա՞ս տեսնել բերրի, առատ
13 Ցանկա՞ս տեսնել հեզիկ կուսին,
15 Առույգ, արի պատանյակին՝

ՆՎԵՐ...
«ԵՎ ՄԱՆ-ՏԱՇԻ ԵՐԱՆԱՎԵՏ...» (էջ 42)

29 «Սեր», «Գեղոն» և «Գործուն կյանք»:

Բ ԻՆՔՆԱԳՐԻ ԲՆԱԳՐԱՑԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Եվ Մանթաչի երանավետ,
11 Ուրա՛խ, զվարթ և սիգաճեմ

ՕՐԱԳԻՐ.... (էջ 44)
«ԻՄ ՎԱՌ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՈՍԿԻ ԵՐԱՋՆԵՐ...»

5 Իսկ այժմ ընկած մահվան մահիճում,
16 Անջինջ կմնա քո սիրող-սրտում:

ՆՎԵՐ...
«ՍԻՐՈՒՑԴ ՍՈՒՐԸ ԱՆԱԳՈՐՈՒՑՆ...» (էջ 45)

1 Սիրույդ նետը անագորույն
2 Պատռեց կուրծքըս աղեկեզ.
4 [Մի] վերք անբույժ, սիրակեզ:
5 Սիրույդ վերքը հրաբորբոք
Կրծեց սիրտս վշտահար.

ՏԱՐԲԵՐԱԿ

Ինձ մոտ եկար անուշ տենչով,

Ջերմ սիրեցիր ինձ, ընկեր,
Եվ հագեցած սիրուս բույրով՝
Դարձրիր սիրտս սառն, ավեր:
Ա՛խ, նենգ սիրո վերքը անբույժ
Կրծեց սիրտս վշտահար,
Ինչո՞ւ, ինչո՞ւ. անողոք կո՛ւյս,
Զոհիդ շուտով մոռացար:

ՆՎԵՐ... (էջ 47)
«ՎԵՀ» ՎՍԵՄ, ԱՋՆԻՎ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՎ...»

1 Վեհ, մաքուր, վսեմ գաղափարներով
6 [Սիրո, ճշմարտի], անձնազոհության
7 Գաղափարները, խորտակեց խարդախ,
8 Փողապաշտ ոգին ստրուկ մարդկության:

ՆՎԵՐ (էջ 48)
«ՍԻՐԻ՛Ր ԵՐԳՋԻՍ ԱՆԲԻԾ ՍՐՏՈՎ...»

2 Կույս նազելի, հրաշագեղ,
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(ով նազելի)*
3 Փայփայի՛ր ինձ վառ զգվանք<ով>
4 Հոգի անմեղ, հրաշագեղ:
5 Սիրի՛ր անկե՛ղծ, սիրի՛ր մաքո՛ւր,
11 Ա՛խ... չմոռնաս, կույս մրահոն,

«ԵՍ ԳՈՀ ԺՊՏՈՎ ԻՄ ՎԱՂԵՄԻ...» (էջ 49)

6 Վարդի մեջ մի որդ զազիր...
5-8-րդ տողերի դիմաց՝ լուսանցքում՝ *Սոնետ:*

ՀԵՌՈՒ... (էջ 51)

1 Հեռու ինձնից, դու ժանգակեր
2 Ժանտ մամոնի[ց] մահալի,

«Ա՛Խ, ՆԱՋԵԼԻ՛Ս, ԴՈՒ ՋԳԻՏԵՍ...» (էջ 52)

14 Նրան ապական աղբարան
15 Իսկ ինքըն էլ նորա մեջը
16 Եղել է որդ զեխության:

«ՎԻՇՏՍ ՓՈՒՆՋ Է ԱՐՏԱՍՎԱԼԻՑ...» (էջ 53)

1 Վիշտս փունջ է, փունջ մի բոլոր,
9 Այս ծաղիկը, իմ սիրելի,
13 Տե՛ս, տե՛ս, հոգիս, այս շուշանը,
16 Վեհանձ զոհին անարատ:
17 Նայի՛ր, սեր իմ, այդ հասմիկը
18 Ինչ համեստ է, բայց գունատ,
19 Սա տիպարն է պարկեշտության
20 Նահատակին անարատ:

«ԵՍ ՋՈՒՆԻՄ ԿԱՄՔ, ՋՈՒՆԻՄ ՀԱՎԱՏ...» (էջ 55)

Բ ԻՆՔՆԱԳԻՐ

3 Ես ստրկի հոգով վհատ
16 Բիրտ բռնության և կեղծի:

ՕՐԱԳԻՐ... (էջ 56)
«ԼԻ Է ՍԻՐՏՍ ՎՍԵՄ, ՄԱՔՈՒՐ...»

4 Երգեր հնչեմ բազմաթիվ:
8 Կեղծ, սուտ հոգի՛ք, ե՛ս դաժան:
12 Հոգ չէ, խաչին կանխակալ:
16 Իր կրքերի գար<չ> զոհեր:

ԵՍ ՈՒՆԵԻ... (էջ 57)

2 Թավ պուրակում գեղեցիկ
3 Բայց ցուրտ հողմը անկարեկիր
4 Զորցուց նորան վաղանցուկ:
10 Սառն աղբյուր վես ժայռի տակ,

«ԴՈՒՔ, ՄՈԼԱՐ ԿՅԱՆՔ<Ի> ՀԼՈՒ ՍՏՐՈՒԿՆԵՐ...» (էջ 59)

1 Դուք, [ունայն] մոլար կյանք<ի> հլու ստրուկներ,

ՕՐԱԳԻՐ (էջ 60)
«ԲԻՐՏ-ԲՈՒՆԱԿԱԼ ԶՄԵՌՆ ԱՆՑԱՎ...»

3 [Ժպտաց] Փայլեց երկինք և վառ արև.
19 Եկավ գարուն - բայց ինձ բերավ
20-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ (վշտեր ու <ցավեր>):
22-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ [(վառվռուն)]:

«ԱՌԱՎՈՏՅԱՆ ՍՏՎԵՐԱՐԿՈՒ...» (էջ 61)

9 Եվ սիրուհուս հեզ աչքերում
11 Եվ իմ վշտոտ, հեգ աչքերում

«ԼՈՒՌ, ՄԵՂՄԱՍԱՀ ԵՎ ԿԱՇԿԱՆԴՎԱԾ...» (էջ 62)

1 Եվ մեղմասահ, և կաշկանդված

«ՎԱՌ ԼՈՒՍԻՆԸ ԱՐԾԱԹԱԳՈՒՑՆ...» (էջ 64)

Բ ԻՆՔՆԱԳԻՐ

7 Նա անվհատ կրծքով ուժեղ
8 Հաղթեց նրանց քաջի պես:

11 Սիրո անվերջ համբույրներ լուռ

ՕՐԱԳԻՐ... (էջ 65)
«ՀՈՐԻԶՈՆՍ ԱՄՊԱԾԱԾՈՒԿ...»

14 Բախե, սիրտ իմ, սիրտ ազնիվ,
17 Հասի՛ր, կյանքիս նորոգ գարուն,

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ (էջ 67)
ՕՐԱԳԻՐ...

1 Լուանյակ գիշեր... Զվարթաղեմ
2-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *զովուտին:*
4-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝
ա. (Ծնոտս հենած ձեռքիս վրա):
բ. (Ծնոտս հենած իմ ձեռքին):
6 Սիրտը հուզում էր խորին,
9-րդ և 13-րդ տողերի *հիշեցի* բառի - *եցի* բաղադրիչի վերևում՝ *ում եմ:*
12 Մատաղ ուռին տնկեցի:
17 Եվ հիշ[եցի]ում եմ՝ այն ծառն հիմա,

ՏԱՐԲԵՐԱԿ

Հով գիշերին, լուանու շողին
Ուռենու տակ նստեր եմ,
Գլուխս առած ձեռքերիս մեջ,
Մենակ, տխուր նստեր եմ:

Հովը կուգա - դալար ուռին
Մեղմիկ, մարմանդ կխշշա,
Միտքս կերթա հեռո՛ւ, հեռո՛ւ,
Սիրտս տխո՛ւր կծփփա:

Միտքդ կուգա՞, դալար ուռի,
Ես դեռ մանուկ, դեռ կրակ,
Քո ճյուղերից հյուսեր արի,
Մատաղ ճակտիս թարմ պսակ:

Միտքդ կուգա՞ այն գիշերը,
Աստղն ու Շուշան (աղջիկ) իմ գրկում,
Ես հայտնեցի սրտիս սերը (ես լացեցի)
Ու երգեցի կյանք, գարուն...

[Արդյոք, ուռի, գիտես հիմա]
Ուռի, գիտե՞ս արդյոք հիմա,
Որ կխշշաս ինձ օրոր-
Էգուց կընկիս շիրմիս վրա
Շվաք ձգող սև-սգավոր:

Արդյոք կզգաս, որ դու հիմա
Այս տողի *կզգաս* բառի վերևում՝ *գիտես:*
Կմրմնջաս ինձ օրոր.
Էգուց կլինես շիրմիս վրա
Շվաք ձգող սև-սգվոր:

1894. 10 նոյեմբերի
Leipzig

«ԶՎԱՐԹ ԳԻՇԵՐ... ԽՈՐԻՆ ՁՈՐՈՒՄ...» (էջ 68)

1 Զվարթ գիշեր... Խոր ձորակում
12 [Ժեռ-քարերին] Քարափներին լերկ ու վես:
16 Ալիքները օրորում:
17 Նույնպես և իմ դեմքին [վրա] անզգա
19 Երբ իմ [մատաղ] սիրտս անխնա
20 Հուզում, [կրծում] մաշում դառը վիշտ
17 Նույնպես և իմ դեմքս անզգա

19 [Եվ իմ մատաղ] սիրտս անխնա
20 Հուզում [կրծում] մաշում դառը վիշտ:

ՕՐԱԳԻՐ... (էջ 69)
«ԱՆԶՈՐ ՀՈԳՈՒՍ ՄՌԱՑԼ ԺԱՄՈՒՄ...»

1 Հզոր հոգուս մռայլ ժամում,
3 Եվ աչքերիցս ցայտեց անհուն
9-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(գույժ):*
11-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(արշալույս):*
12 Հանգչեց տրտունջ, լաց, մորմոք:
13 Ես [լռեցի] ննջեցի. իմ թաց շիրիմ

ԱՂՈԹՔ ԱՍՏՎԱԾԱԾՆԱ ՊԱՏԿԵՐԻ ԱՌՋԵՎ (էջ 70)

6 Անկեղծ սիրո ջերմություն
15 Երգեմ վսեմ, մեծափառ հիմն

«ԱՌ ՔՆԱՐԴ, ՄԱՏԱՂ ՊՈԵՏ...» (էջ 71)

8 Սեր և գեղոն, կռիվ, կյանք:
8-րդ տողի *կռիվ* բառի վերևում՝ *[պարտք]:*

ՆՎԵՐ... (էջ 72)
ՕՐԱԳԻՐ...
«ԵՍ ԻՆՁ ԵՐԳԵՄ, ԵՐԲ ՀԵԳ ԵՐԳՋԻՍ...»

3-րդ տողի *ավեր* բառի վերևում՝ *անհույս:*
5-րդ տողի *տառապյալ* բառի վերևում՝ *չարատանջ:*
Նույն տողի վերևում՝ *[Երբ իմ Մուս<աս>...]:*
7 Թելադրում է [երգել] ինձ հանապազ
12 Եվ վշտակեզ ողբ ու լաց:

ՕՐԱԳԻՐ... (էջ 73)
«ՍԻՐՈ ՀՐԵՇՏԱԿ, ՔՈ ՋԵՐՄ ՍՐՏՈՒՄ ...»

14 Աչքերիցդ գեղանի
18 Մատաղ կուրծքդ կուսական
23 Անցնեն օրեր [տարիք], խեղճ պոետից

«ԼՈՒՌ ԳԻՇԵՐ ԷՐ, ՊԱՑԾԱՌ, ԽԱՂԱՂ...» (էջ 74)

22-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(հեզաշարժ):*

ՆՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ (էջ 75)
«ԵԹԵ ՏԵՄՆԵՍ ՄԻ ԹԱԽԾԱԼԻ...»

4 Այն դժբախտս եմ վշտունակ:
10 Կուրծքս սեղմած երգում եմ:

«ՏԱՂՏՈՒԿ ՑՆՈՐՔ, ՀԵՌՈՒ ԻՆՁՆԻՑ...» (էջ 76)

3 Հավատում եմ [ինք<ս>] ես քեզ նորից,
4 Կուսական սիրտ կենսածիր:
8 Մի սիրտ սիրող, մտերիմ,
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *Տրոփող սիրտ:*
9 Փույթ չէ, երգչիս ատիր անհուն,
10 Ով քարասիրտ դիցուհի,
12 Սերն <է> կյանքը ցանկալի:

«ՈՍԿԵՆՇՈՒՑԼ ԱՐՇԱԼՈՒՍԻՆ...» (էջ 77)

3 Ժպտաց զեփյուռն՝ այն թովչուհին,
7 Զովացր[եց]ուց երեսն շարմաղ.
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *Մաքրեց երեսն անշամա<...>:*

«ԵՍ ԼԱԼԻՍ ԵՄ... ԹՈՂ ԱՐՑՈՒՆՔՍ...» (էջ 78)

1 Ես լսում եմ... Թող արցունքս
2 Որպես հլունք (շիթեր) հըրաշեկ,
3 Այրե, կիզե մաշվ<ած>, փշոտ սի<րտս>՝
6 Կայծ ու նշույլ սրտիս մեջ
8 [Վսեմ կրքերս] (զգացմունքներս) վառ, անշեջ:
13 Որ հավատով կար[ողանամ]եկցաբար
15 Զար մարդերի (հոգու) խղճի համար
20 Անխոնջ սիրե սուրբ, ազնիվ:
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *Սիրե անխոնջ, <անկոիվ>:*

ՕՐԱԳԻՐ (էջ 79)
«ԿՈՒԶԵՄ ԱՊՐԵԼ, ԿՈՒԶԵՄ ԵՎ ԿՑԱՆՔ...»

7 Ուր մեր առաջ կա անարգել
9 Եվ ի՞նչ. կյանքը չունի գոնե
11 Մի նպատակ, ուր մենք գոնե
12 Դիմենք սիրով աննսեմ.
Այս տողից հետո՝
[-Ի՞նչ նպատակ վեհ, սրբազան
Աշխարհն է մի տարտարոս,
Եվ նկատմամբ չար բնության
Մարդն է ծաղր ու միմոս:]
Այս քառատողի դիմաց՝ լուսանցքում՝
(Իսկ մարդկությունն չար բնության
առջև՝ ծաղր ու միմոս):

[ՕՐԻՈՐԴ-Ի ՏՈՆԻ ԱՌԹԻՎ] (էջ 80)

2 Խոխոջում ես դու, աղբյուր,
11 Խորին վերքս քո հոգեզմայլ
15 Արի, որպես կայծակ ցոլուն
16 Սիրակարոտ կույս անբիծ:
18-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ (*անհարմար*):

19 ա Եվ կենսունակ անմեղ համբույր
բ Եվ սիրակարոտ, մեղույշ համբույր
20 Բուժե վերքս խորազգյաց:

(Հ-ՑԱՆԻ ԱԼԲՈՄՈՒՄ) (էջ 81)
ՆՎԵՐ...

1-ին տողի դիմաց՝ լուսանցքում՝ *լուսափայլ:*
3 ա Ուր վառ սիրո վիշտը մռայլ,
բ Ուր մահավետ վիշտը մռայլ,
5 Թափանցում եմ քո վաղավեր
7 Ուր կա աղոթք, [փափագ], վիշտ, արցունք, սեր,
10 Ոգևորված իդեալով. (գեղեցկով):
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(Ոգևորված հույսերով):*
11 Մաշված սրտումս մաքուր, վսեմ

«ԱՐԵՎՆ ՀԱՆԳՉԵՑ ԻՐ ՄՈՐ ԳՐԿՈՒՄ...» (էջ)

1 Արևն հանգչեց իր մոր [կրծ<քում>] գրկում,
10 [Դյութեց] Լուռ մրափեց ահեղ ծով,

ՕՐԱԳԻՐ... (էջ 83)
«ՈՐՊԵՍ ԵՐԱԶ ՆԱՋԵԼԱՇՈՒՔ...»

11 Չի բռնկվում այն երկնակիր
3-րդ քառատողի փոխարեն՝ լուսանցքում՝
Ես խաբվեցա. քո ցուրտ սրտում,
Ուր չկա ցող կարեկիր.
Չի բռնկվի սիրո [անհուն] (գեղուն)
Փոթորիկը երկնակիր:

«ԵՐԲ ՄԱՆԳԱՂԸ ԴԱՌՆ ՕՐՀԱՍԻ...» (էջ 84)

14 Կույսի [մրմունջ] խոստում, լաց, գորով,
16 Գերել կուզե ինձ չուտով:

21 Սակայն հուսա՛, սիրուն ընկեր,
23 Հույսն է տալիս մեզ եռանդ, սեր,
24 Ույժ, խրախույս, չողչողուն:
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ (Մեզ ույժ, խր<ախույս>]):

«ԵՍ ԳՆՈՒՄ ԵՄ.... ԹՈՂ ԱՐՑՈՒՆՔՈՎ...» (էջ 85)

1-ին տողի դիմաց՝ *(հավատ):*
5 Քեզ հիշատակ այս վարդենի
14ա Բայց միշտ հիշիր քո երգչին.
բ Բայց մի մոռնար քո երգչին.
17 Սակայն [սիրիր] և ինձ սիրիր անվերջ
18 Հիշիր ինձ քո աղոթքում:

ՕՐԱԳԻՐ (էջ 86)
«ԵՍ ԱՂՈԹՈՒՄ ԵՄ ... ԵՎ ԻՄ ԱՉԵՐԻՑ...»

1 Դու աղոթում ես... և քո աչերից
3 Եվ քո վրդովված դեմքից երերուն
4 Ջքանում է մի հուսահատ ստվեր:
5 Ոգևորվում ես հույսի բուրմունքով,
6 Երկնային ժպիտ ծաղկում է դեմքիդ,
7 Ուզում ես ապրել, ապրել անխռով՝
9 Եվ քո դրոշը փայլուն հավատով
10 Պարզում ես կյանքի մրրկի դիմաց,
11 Որքա՜ն տանջվում ես, որքա՜ն ինքնագով
12 Թռիչք ես գործում կորստյան առաջ:
13 Դու ընկա՛ր... ինչ փույթ. մենք դեռ ապրում ենք
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(Դու կընկնիս):*
15 Դառն ոչնչության մենք լուռ նայում ենք
16-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *աներեր:*

ՕՐԱԳԻՐ... (էջ 88)
«ՔԵԶ ՊԻՏ ՍԻՐԵՄ, ԿՈ՛ՒՑՍ ԱՆՆՄԱՆ...»

Առաջին քառատողի դիմաց՝ լուսանցքում՝ *Նամակ:*
4-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(սիրավառ)*

7 Արցունք, մորմոք, զրկանք, թախիծ
9 Ա՛խ, [բայց] ինձ սիրիր, թերևս սրտիս
13 Բայց պատրաստ կաց. կյանքի ահեղ

«ԴԱՐՁՅԱԼ ԱՐՑՈՒՆՔ ՍՐՏԻՍ ԽՈՐՔԻՑ...» (էջ 89)

5 [Սակայն,] Ա՛խ, ի՞նչ, քուրիկ, իզո՛ւր տանջանք.)

«ՕՐՀՆՅԱԼ ԳԻՇԵՐ... ՓԵՏՐԻ ՆՄԱՆ...» (էջ 90)

5-րդ տողից առաջ՝

[Ուր ալիքը այն լ<ճակի>]
6 Համբուրվելով մակույկին,
17 Ա՛խ, հիշո՞ւմ ես, անգին ընկե՛ր,

20-րդ տողից հետո՝

[Եվ հիշո՞ւմ ես քո խոստումը.
Սիրել երգչիս հավիտյան...
Ո՛հ, զգում եմ, որ հավիտյան
Սիրել երգչիս ուխտեցիր...]:
21 Եվ հիշո՞ւմ ես, որ հավիտյան
22 Սիրել երգչիս խոստացա՛ր,
23 Ես զգում եմ առհավատչյան
24 Մանուկ սիրույդ խանդավառ [կենարար]:
25 Անցան օրեր... խաբված սիրո

«ԼՌԻՐ, ՔՆԱՐ... ՔՈ ԼԱՐԵՐԻՑ...» (էջ 92)

Նույն էջի աջ կողմում գրի է առնված բանաստեղծության երրորդ քառատողի երկու տարբերակ.

I Կուզեմ վշտի այրող արցունք,
[Լքյալ] սրտի հառաչներ,
Կուզեմ զրկանք, խղճի հուզմունք
[Կոծ ու կսկիծ մահաբեր:]

Անբույժ վերքի մորմոքներ:

II ա Կուզեմ այրող, առատ արցունք,
բ Կուզեմ վշտի այրող արցունք,
Լքյալ սրտի հառաչներ,
Կուզեմ զրկանք, [վշտի] խղճի հուզմունք,
Կոծ ու կսկիծ մահաբեր:

5 Ձեմ ուզում այս զավեշտ կյանքի
9 Ես ուզում եմ այրող արցունք,
11 Ես ուզում եմ զրկանք, հուզմունք,

12-րդ տողից հետո՝

[Կուզեմ, այո՛, թող չարակամ
Այս աշխարհը կործանվի,
Կուզեմ մի նոր, [նվիրական] մի սրբազան
Աշխարհ, աշխարհ ցանկալի:]

ՓՈՔՐԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 93)

1 Որպես վարդը նորափթիթ
2 Առավոտուն մայիսյան
3 Ցողերու հետ կյանքի ժպիտ
4 Կուտա տոթին կորստյան
8 Տվիր նվեր [գեղեցիկ] [չքնաղիկ]:
9 Երանի քեզ, սիրուն մանուկ,
11ա Տե՛ս, ապրում եմ ես ի՞նչ ծերուկ...
բ Տե՛ս, ապրում եմ, տես, ես ծերուկ...
12 Ի՞նչ վշտերի մատնված...

ՕՐԱԳԻՐ... (էջ 94)
«ԵՍ ԼՍԵՑԻ ՄԻ ԵՐԳ ՈՒՐԱԽ...»

3 Քնքուշ ժպիտ, նվագ ու խինդ,

5-րդ տողի վերևում՝

Այս ձայնն անուշ

8 Ցայտքեց թոթվանք բերկրանքի:

«ԵՍ ՀՑՈՒՍԵՑԻ ՔՈ ԱՆՈՒՆՈՎ...» (էջ 95)

2 [Թախ<ծոտ>] Մանուկ սիրո բյուր երգեր
3 Ես իմ ագատ արցունքներով
7 Բայց դու, անգութ, մաքուր սրտով
8 Ջեղար անկեղծ ինձ ընկեր:
9 Ես տանջվեցի [դա<ժան>] խորին վշտից.
10 Որպես սոխակ ապրեցա,

ՏԱՐԲԵՐԱԿ

Ես հյուսեցի քու անունով
Սիրո քնքուշ, ճոխ երգեր.
Ու կարոտիս արցունքներով
Բուացրի անուշ ծաղիկներ:
Ես բերեցի սեր հուսալով
Երգս ու փունջս քեզ նվեր,
Որ քու սիրտդ գթով լցվի-
Լինիս սրտիս սիրտ-ընկեր...
Դուն ծաղրեցիր [սեր<ս>] երգս ու սերս,
[Իսկ] Եվ ես դառն տանջվեցա-
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ - *եցի*:
Հիմա հզոր տերդ եմ դարձեր,
ա Իսկ դուն՝ ստրուկ [տարփալի] տռփալի...
բ Իսկ դուն՝ կեղծ ու անզգա...

1897 հուլիս
Հաղիճ

«ՀՈՐՁՈՒՏ ԳԵՏԻ ԴԱԼԱՐ ԱՓՈՒՄ...» (էջ 96)

1-ին տողի դիմաց՝ լուսանցքում՝
Թավ անտառի հեռու ծ<ոցում>

3-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ (*խնդրում*):
4 Ալիքներից անվեհեր:
7 Գթոտ հայացք, համբույր, ժպիտ,

«ԽԵՂՃ ԾԱՂԻԿԸ ԺԱՅՌԻ ԿՐԾՔԻՆ...» (էջ 97)

1ա Ջքնաղ ծաղիկ ժայռի կրծքին,
բ Պերճ ծաղիկը ժայռի կրծքին,
3 Աչերն հառում դեպի երկնին,
5ա Տխուր սիրտս այրված վշտի
բ Եվ իմ սիրտըս այրված վշտի

ՕՐԱԳԻՐ... (էջ 98)
«ԵՍ ՀԻՎԱՆԴ ԵՄ, ՍԻՐՈՒՆ ՄԱՆՈՒԿ...»

5-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ (*քու ջերմ*)
12-րդ տողից հետո.
[Տե՛ս, չմոռնաս այց ելնելու
Տխուր չիրմիս, իմ ընկեր
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(իմ մանկիկ)*:
Եվ երգչիս տեղ համբուրելու
Մամ[ռուտ]ուռներս թավշահեր:]

«ՄԻ՛ ԿԱՇԱՌՎԻՐ, ՄԱՆՈՒԿ ՍԻՐՈՒՆ...» (էջ 99)

4-րդ տողից հետո՝ *[Կգա խավար]*:
5 Վարդը չքնաղ, [ա՛խ] վարդը անուշ,
6 Ա՛խ, տե՛ս կրծքում նազելի
11 Կյանքը տանջանք է մեզ համար,
12 Արցունք [այնտեղ, բյուր], պատիժ ու զրկանք:
16 Կթառամին մանուշակ:
17 Կանցնի ամենն, տխուր վախճան,

«ՎՐԴՈՎՄՈՒՆՔԻ ՊՂՏՈՐ ԾՈՎՈՒՄ...» (էջ 100)

1 Վրդովմունքի մռայլ ծովում
6 Թող վշտերս դուրս ցատկեն

9 Արցունք, ցողե կուրծքս ցված
2-րդ քառատողի փոխարեն՝
[Ցայտի՛ր, արցունք, ծփփանքի մեջ
[Շուտ պղտորիր, արցո՛ւնք, անսեր]
Իմ հայացքը տիրական,
Թող [իմ] վշտերս դուրս ցայտկեն,
Նսեմացրո՛ւ աչերս ցոլուն,
Հեռո՛ւ, ստվեր խոլական (դիվա<կան>):]

ԸՆԿԵՐԻՆ (էջ 101)

3 Ես դժգոհ եմ, կյանք չեմ ուզում,
6 Սիրո անուշ արցունքով.
7 Թող խավարի մանուկ կյանքս
8 ա Ես հանգչում եմ գոհ սրտով:
բ Քեզ սիրում եմ լի սրտով:

ՏԱՐԲԵՐԱԿ
ԸՆԿԵՐԻՆ

ա [Ես լալիս եմ, ես հեծեծում
բ Ես հեծեծում եմ, ա՜խ
Ի՜նչ տանջանքի անձնատո՛ւր,
Ես դժգոհ եմ, կյանք չեմ ուզում.
Ա՜խ, ընկեր իմ, [ընկեր,] ո՞ւր ես, ո՞ւր:
ա Արի, հոգյակ, տանջած կուրծքս
բ Արի, [արի], ցողիր տանջած կուրծքս
[Ցողիր] Սիրո անուշ արցունքով.
Թող խավարի մանուկ կյանքս,
Ես հանգչում եմ գոհ սրտով...]:

ՕՐԱԳԻՐ... (էջ 102)
«ԿԱՄ ՏՈ՛ՒՐ, ԸՆԿԵ՛Ր, ՍՈՒՐԸ ՓԱՅԼՈՒՆ...»

11 Տո՛ւր, որ նայեմ կյանքին
12 Ես անկասկած աչերով:
13-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *Կամքող:*

«ԼՈՒՌ ԳԻՇԵՐ Է, ՕԴԸ ՄԱՔՈՒՐ...» (էջ 104)

21 Նա աղոթում է, խղճի խայթում

ՄԱՐԴԿԱՆՑ (էջ 106)
ՕՐԱԳԻՐ...

1-ին տողից առաջ՝ *[Ինձ տվեք]:*

ՕՐԱԳԻՐ... (էջ 107)
«ԱՆՄԽԻԹԱՐ, ԱՆՀՈՒՅՍ ՍՐՏԻՍ...» (էջ 108)

5 Ես պիտ երգեմ կյանքն...

[«ԴԱՇՏԸ ՇՔԵ՛Ղ ՈՒ ՈՍԿԵԳԵՂ...»]

1 Դաշտը շքե՛ղ, [դալագ<եղ>] ու ոսկեգե՛ղ
Ա Դաշտը - փարթամ, դալարագեղ,
Բ Դաշտը շքե՛ղ, դալագեղ
2 Ա Դաշտն ոսկեզօծ, ծփծփուն-
4 Ա Արդար վաստակ գյուղացուն:
7 Ա Գուշակում է մատաղ հոգույս
8 Սիրո այրող փոթորիկ:
Բ տարբերակի 2-րդ քառյակի դիմաց՝ լուսանցքում՝
Անուշ փոթորիկ,
Գարուն ծաղիկ,
Երկինք-աստղիկ.

8-րդ տողի փոխարեն՝ լուսանցքում՝

Սիրո զեփյուռ ու ծաղիկ.
Սիրո անձրև, ցողեր-

«ՄԵՌԱԾ ՍԻՐՈ ՇԻՐՄԻ ՔԱՐԸ...» (էջ 109)

1-ին 2 տողերի դիմաց՝ լուսանցքում՝ *Նամակ:*

1 *Շիրմիս քարը մամռոտ, դժգույն,*
4 *Մեռած կուրծքս ճնշվի:*

ՕՐԱԳԻՐ (էջ 111)
«Ա՛Խ, ՎԱՂՈՒՑ Է՝ ԻՄ ՔՆԱՐԸ...»

1-ին 2 տողերի դիմաց՝ լուսանցքում՝ *Նամակ:*

2 *Լքյալ վշտեր չէ երգել,*

ՕՐԱԳԻՐ (էջ 112)
«ԻՄ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԹԻԼԸ ՄԱՔՈՒՐ...»

14 *Առհավատչյա են [վսեմ] քո վեհ ըղձերին.*
16 *Սիրո, գեղեցկի անմահ [հերո<սին>]*
դյուցազնին:

ՕՐԱԳԻՐ (էջ 113)
«ԲՈՑԱԿԵԶ ՀՈԳԻՍ ԿՑԱՆՔԻ ԽԱՎԱՐՈՒՄ...»

5 *Ես հառաչում եմ - խորին կնճիռներ*
12 *Ա՛խ, ի՞նչ է կյանքը - հույսերի չղթա:*

«ԵՐԲ ԵՍ ՍԼԱՑԱԾ ՈՍԿԻ ԵԹԵՐՈՒՄ...» (էջ 115)

10 *Մարդիկ անմիտ են և անկատարյալ.*

Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(ինքնագոհ) [և աղքատա<միտ>]:*

12 *Օ՛, ես մենակ եմ, անհույս ու լքյալ:*

ՕՐԱԳԻՐ (էջ 116)
«ՇՈՒՐՋՍ ԽԱՎԱՐ ՈՒ ՍԱՌՑԱԾՈՎ...»

5 *Իմ [առա<ջը>] դիմացը խոնարհվում են*
6 *Խոչընդոտներ դիվական.*
8 *Վառ փարոսին հաղթական:*
10 *[Զքնա<ղ>] Անուշ կուսի մի պատկեր:*

«ԱՐՏԱՍՎԻ՛Ր, ՀՈԳՑԱ՛Կ, ԵՍ ԷԼ ԿԱՐՏԱՍՎԻՄ...» (էջ 117)

2 *Թող մեր արցունքը [վերանա երկ<ինք>],*
որպես ջինջ ցողեր,

Բ ԻՆՔՆԱԳԻՐ

1-ին տողի դիմաց՝ լուսանցքում՝ *Նամակ.*

2 *Թող մեր արցունքը, որպես վառ ցողեր,*

Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *ոչինչ:*

3-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *լուսինն, աստղեր:*

5 *Եվ երկնից որպես անձրև մեզ վերա*
8 *Նվիրե պսակ, պսակ [Հավիտյան] անթառամ*
9 *Նրան, որ բախտը չժպտիլ երբեք,*
11 *Օ՛, թող նա՛ որպես կայծեր հրաղեն*
12 *Բռնկե սուրը սուրբ երանության:*
14 *Կարոտ են [նոքա] կարոտ ջերմ սփոփանքի...*
15 *Արտասվինք [անվերջ], ընկեր, և ինձ*
հավատա՛,
11 նոյեմբերի 91,
Վաղարշ<ապատ>

«ԱՂՈԹԻ՛Ր, ՀՈԳՑԱ՛Կ, ՔԱՆԻ ՔՈ ՍՐՏՈՒՄ...» (էջ 118)

9 *«Եվ ինչո՞ւ, ինչու» - Հավատա՛, ընկե՛ր,*

Բ ԻՆՔՆԱԳԻՐ

4 Ցոլում են արցունք վշտի ու [անկման]
զղջման:
5 Աղոթիր անվերջ գիշեր ու ցերեկ
13 Չէ՞ որ աղոթքն է [մի] հոգեզմայլություն
15 Չէ՞ որ աղոթքն է լի արբեցումն

«ԾՓԱ՛, ՍԻՐՏ ԻՄ, ՀՈՒԶՄՈՒՆՔՆԵՐԻ...» (էջ 119)

1 Ծփա՛, իմ սիրտ, հուզմունքի
3 Փչրե՛, սիրտ իմ, կուրծքս ամեհի,

4-5-րդ տողերի միջև՝
Ա՛խ, անձուկ է, նեղ ու խարխուլ
Վայրը սրտիս կայտռուն:
Դաժան կուրծքս՝ որպես մամուլ,
Ճնշում նորան անդադրում:

5 Պատռե կուրծքս, շուտ խորտակիր
7 Թռի՛ր, թռի՛ր, եթերն անծիր,
19 Ուր կատաղի ալիքը վես

Բ ԻՆՔՆԱԳԻՐ
ՕՐԱԳԻՐ...

1 Հուզվի՛ր, իմ սիրտ, երազների
2-րդ տողից հետո՝
[Փշրե կուրծքըս այս երկաթի (ամեհի)
Անձուկ բանտը - փշրե՛ կուրծքս նա ամենի]
Այս տողերի դիմաց՝ լուսանցքում՝
Հուզմունքների մրրիկներից
Ծփա՛, սիրտ իմ սիրավառ,
Փշրիր, [սիրտ իմ,] ջարդի՛ր, նեղլիկ կուրծքս
5 Ա՛խ, շատ անձուկ, նեղ է, խարխուլ;

6 Վայրը սրտիս բաբախուն, աննկուն:
8 Նորան խեղդում ու ճնշում
11 Թռի՛ր, սիրտ իմ, եթերն անվերջ,
13 Թռի՛ր այնտեղ, ուր մշտավառ
23ա Ուր ալիքները երերուն
բ Ուր երերուն ալիքը վես

(ԱԼԲՈՄՈՒՄ) (էջ 120)

3 Ուր մահավետ վիշտը մռայլ

ՕՐԱԳԻՐ... (էջ 121)
«ԴԱՐՁՑԱԼ «ՆՈՐ ՏԱՐԻ»... ԽՈՐԻՆ ԿՆՃԻՌՆԵՐ...»

12-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ (*դառնաքույն*):

ՕՐԱԳԻՐ... (էջ 122)
«ՆԱԶԵԼԻ ԸՆԿԵՐ, ԽՈՐԱԳԻՆ ԱԿՈՍ...»

2 Թո՛ղ ձևակերպվի այտերիս վրա,

«ԲԱԽՏԻ ԱՍՏՂԸ ԱՅՍ ԵՐԵԿՈ...» (էջ 123)

7 Ես դիմում եմ [դեպ ո՞ւր]
8 [Իմ] Նավահանգիստս ապահով:

ՕՐԱԳԻՐ... (էջ 127)
«ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս ԱՐԴՅՈ՛Ք, ԹԵ ՀՈԳԻՍ ՈՐՔԱՀՆ...»

1-ին տողի *դու* բառի վերևում՝ *Ա՛խ.*
6 Ջերմ կարեկցանքի կարոտ մարդկության

ՕՐԱԳԻՐ... (էջ 128)
«ՈՒԶՈՒՄ ԵՄ ԵՐԳԵԼ, ԲԱՅՑ Ո՛Չ ՎԱՌ ԵՐԿԻՆՔ...»

4 Ոչ արցունք, տանջանք, սեր և հույս:
10 Քեզ չէ վիճակված ապրել աշխարհում,
12 Դատարկ տեղ աշխարհը, և սիրտս տրտում՝

ՕՐԱԳԻՐ... (էջ 130)
«ԴԱՐՁՅԱԼ ԳԱՐՈՒՆ, ԲԱՅՑ ՎՇՏԱՀԱՐ...»

11 [Բայց թոքախտը՝ որպես մի ցեց,]
12 [Օ՛, ծաղկում է (աճում է) իմ կրծքում]
15 Գարունն եկավ, անե՛ծք գարնան,

ՕՐԱԳԻՐ... (էջ 131)
«ՊԻՏԻ ԱՂՈԹԵՄ, ՀԱՎԱՏԱՄ ԱՆՎԵՐՋ...»

5 Ասա՛, ո՞վ խորին մռայլը տարածեց,
11 Շուտ հիասթափվի՛ր, ձայնը բնության

ՕՐԱԳԻՐ... (էջ 132)
«ՈՍԿԻ ԱՐԵՎԸ ՀԻԱՍՔԱՆՋ ԳԱՐՆԱՆ...»

13 [Կորս<տյան>] Զէության մատնող սիրտս
չծակեց...

ՕՐԱԳԻՐ... (էջ 133)
«ԱՆՄԽԻԹԱՐ ՍԻՐՏՍ, Ո՛Վ ԿՈՒՑՍ...»

1 Արյունաքամ սիրտս, ով կույս, -
1-ին 2 տողերի դիմաց՝ լուսանցքում՝ *Նամակ:*
3-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *Եվ:*
13 Եվ կրում եմ տոկունությամբ
15-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *[(Եվ հեծում եմ ժպտալով)]:*

«ԲՑՈՒՐ ՀՈՒՑՍԵՐՈՎ ԵՍ ԲԵՐԵՑԻ...» (էջ 134)

4-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ (*սուրբ*):
11 Դո՛ւ, [նա<զելիս>] սիրելիս, դու փչրեցիր
13 Դո՛ւ և տոթը, տոթը դաժան
14 Զորցուց վարդըս [նազելի] [գեղանի],
նազանի,

ՕՐԱԳԻՐ... (էջ 135)
«ՈՐՊԵՍ ԴԺՈԽՔ ԱՇԽԱՐՀԱՎԵՐ...»

Վերնագրի դիմաց՝ լուսանցքում՝ *Առավոտյան:*
5 Երջանկության պսակ- երբե՛ք,
7 Գոնե մի ցող... ո՛չ, [ա՛խ,] վշտաբեկ
(հուսաբեկ)

«ՔՆՈ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՍ ԵՐԱՋ ՏԵՍԱ...» (էջ 136)

4 Մի պայծառ ժպիտ փայլեց ճակատիս:
11 Եղբայրս էր այնտեղ... հեռացե՛ք, հեշտանք,
12 Զէ՞ որ սիրեցի տանջանք ու արցունք....

ՕՐԱԳԻՐ... (էջ 137)
«ԴՈՒ ԻՆՉ ԳԻՏԵՍ, ԹԵ ԻՄ ՍՐՏՈՒՄ...»

Վերնագրի դիմաց՝ լուսանցքում՝ *Ճաշին:*
6 Համ նա ծով է, համ օվկիան,
8 Աստված [Աստված] անմահ հավիտյան:
9 Ա՛խ, ինչ, մի՞թե դու չես սիրում
10 Արցունք ու վիշտ, կյանքի փունջ
11 Հեռո՛ւ, թող նա դատարկության
12 Լինի, այո՛, լաց, մրմունջ:

ՕՐԱԳԻՐ... (էջ 138, 422)
«ՁԷ՛, ՁՄՈՌՆԱՍ, ԲԵԱՏՐԻՁԵ...»

Վերնագրի դիմաց՝ լուսանցքում՝ *Երեկոյան:*

Սակայն հիշի՛ր ինձ՝ որպես թե

4-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ (*խեղճ ստվեր*):

5 Մի ուրվական, որի գրկ[ից][ում]ից

7 Մի խեղճ ստվեր, որի սրտում

15-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(անտեր, մենակ, անհույս):*

«ՏԱՂՏՈՒԿ ՑՆՈՐՔՆԵՐ, Ի՞ՆՉ ԵՔ ԽՌՆՎՈՒՄ...» (էջ 141)

3 Կաչկանդել միտքս - նորից երկնքում

10 Ապրե՞լ, թե՞ մեռնել... Ասացե՛ք, աստղեր

12 Անհույսիս հույս տո՛ւր, ընկե՛ր իմ, ընկե՛ր:

«ՔԱՆԻ ԿԱՍԿԱԾԸ ԴԵՌ ՁԷ ՎԱՐԱԿԵԼ...» (էջ 142)

11 Ձքնաղ ցնորքներ՝ վարդի գույներով,

Այս տողից հետո՝

[Կյանքն ունի ինձ համար խաբելու]

«ԱՐԴՅՈՔ ԼՍԵ՞Լ ԵՍ ՎԱՍՏԱԿԱԾ ՀՈԳՈՎ...» (էջ 146)

8 Առուն մրմնջում, [թովիչ] կայտառ զեփյուռը

12-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *?:*

ՆՎԵՐ ՍԻՐԵԼԻ ՔՈՒՅՐ-ՇՈՒՇԻԿԻՆ ԻՐ ԵՂԲԱՅՐ-ԱՎԵՏԻՔԻՑ (էջ 149)

2 Լիճ են լինում աչքերս,

«[ԻՆՉ ՍԻՐՈՒՆ ԵՍ, ԳԱՐՆԱՆ ՎԱՐԴ ԵՍ...» (էջ 154)

4 Ջանիդ մեռնիմ, ջա՛ն աղջի՛կ:

Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *մարալ:*

12 Ոտքերիդ տակ, նազիկ ջա՛ն...

«[- Ա՛խ, ՄԱՐԱԼՍ, Ա՛խ, Ո՞ՒՐ ԳՆԱՑ...»] (էջ 156)

7 Էնոր ծամերն ծովի նման

«ԵՂԵԳՆԵՐԻ ՄՌԱՅԼ ԽՈՐՔԻՑ...» (էջ 160)

1 Եղեգների մռայլ խորք[են]ից

2 Վայրի բադը դուրս [ելավ] [սողաց] ելավ

3 [Նայեց] ինձի տեսավ - թռավ մեկեն

4 [Ժայռին թ<ռավ>] Քարփին թռավ ու թառավ:

«ԵՍ ԿՑԱՆՔ ԳՐԿԵՑԻ...» (էջ 161)

19 Վառվեց ու հանգավ...

«ՍԻՐՏՍ ԼԻ՛Ճ ԷՐ - ՁԻՆՁ ՈՒ ԼՌԻԿ...» (էջ 164)

1 Սիրտս լիճ էր - խաղաղ, անդորր,

10 Սիրտս տաքցավ կայծակով,

Լուսանցքում՝ *Հետո կուղղեմ:*

«ՍԵ՛Վ ՎՇՏԵՐԸ ՄՇՈՒՇԻ ՊԵՍ....» (էջ 165)

5 [Երգերը ա՛ռ] Աշուղ, սազդ առ ու երգի՛ր -

6 [Իրենք] Երգը երկնի զեփյուռն է,

7 Աշուղ, երգիր - երկնի հովեր՝ [երգը (հովը)]

«Ի՞ՆՁ,- ՍԵՐ ՄՈՒՐԱԼՈՒ ՆՈՐԻ՞Ց ԹԱՓԱՌԵՄ...» (էջ 167)

2 Բախելով [կարծր սրտերը] մեռած սրտերը մարդկանց.

3-րդ տողի *երազ* բառի վերևում՝ *ծայն:*

8 Եվ [Թռ<իչքներս>] ցնորքներս ճոխ, ոսկեփրփուր:

«Ա՛խ, ԵՍ ԻՆՁՔԱՀ ԲԱԽՏԱՎՈՐ ԵՄ...» (էջ 168)

2 Որ քեզ ճամփիս [հանդի<պա>] պատահա

5-րդ տողի փոխարեն՝

[Ինչքա՜ն սեր կա իմ սրտի մեջ]

5-րդ տողից հետո՝

[Ինչքան ճամփիդ մնացի...]

«ԴԱՐԴԻ ՍԱՐԸ ՍՐՏԻՍ ՎՐԱ...» (էջ 169)

6-րդ տողի ներքևում՝

Քեզի իրենց կանչում են:

«ԲԱԽՏԻ ՈՒՐՈՒՐԸ ԵՏԵՎԵՍ Է ԸՆԿԵԼ...» (էջ 170)
ՏԱՐԲԵՐԱԿ

Բախտի ուրուրը ետևս է ընկել, իմ անուշ
քույրիկ,
Ու զոր ու գիշեր փախչում եմ կյանքի ափերը
հեռո՛ւ -
Գլխիս են թափվում տերևները աշնան, իմ քնքուշ
քույրիկ,
[Ոչ մի նազելի ձեռք չի կանչում ինձ
վերադառնալու]
Զոր տերևները քայլերն են ծածկում, ճամփեքս
հեռո՛ւ...
Իմ հոգում մարան [իմ] վառ երազներիս աստղերը
բոլոր-
[Ան<հուն>] Քնքուշ աչերդ են իմ սիրտը [մենակ]
հիմա լցնում ճաճանչով.
[Բայց] Ա՛խ, շուշան ձեռքդ ինձ հետ չի կանչում
ճամփեքից մոլոր -

Ո՞ւր տանեմ սիրտս՝ խոցված քո սիրով, քո ծով
կարոտով:
[Ա՛խ,] Ինչպես կուզե[մ]ի քո շեմքի վրա գլուխս դնել,
[Եվ] Հուր արտասունքով սուրբ ոտքերիդ տակ
սերս վառեի.
[Ա՛խ,] Ինչպես կուզե[մ]ի [քո] սուրբ ոտքերիդ տակ
հավիտյան քնել-
Եվ երջանկությամբ իմ հոգին արբած՝ էլ
չզարթնեի..

«ՀԵԶ ՈՒ ՏԽՈՒՐ, ՍԵՎ ԱՉԵՐԻՑ...» (էջ 171)

Բանաստեղծության դիմաց՝ լուսանցքում՝ *«Նվեր օր. Շ.»:*

2 Արցունք մ'ընկավ սրտիս մեջ.
4 Էն խոց փորեց սրտիս մեջ:
5 Ու քաշ կուգամ աշխարհն ամեն,

6 և 8-րդ տողերի դիմաց՝ լուսանցքում՝ *դեղ ու ծար:*

10-րդ տողի *Սիրունիկիս* բառն ընդգծված է և տակը գրված՝ *Շուշանիկիս:*

«ԴՈՒՔ ԻՆՁ ԱՍՈՒՄ ԵՔ - «ՏՈԿԱ՛Լ ՍՈՎՈՐԻՐ...» (էջ 173)
ՏԱՐԲԵՐԱԿ

Դուք ինձ ասում եք - «Տոկալ սովորիր,
Ու կյանքի [բեռը] խաչը լուռ, անտրտունջ
տար.
Եվ սուրբ պարտքերի սեղանի առաջ
Դու խոնարհ սրտով ծունկ չոքիր»:
Դուք [սրբությանն] հնության եք անհուն
հավատում
Ու նրա անվամբ դուք կամենում եք
Ինձ լռեցնել - ձեր կյանքից տալ ինձ.
Օ՜, ես չեմ ուզում ձեր անմիտ կյանքը,
Ձեր [սրբու<թյունը>] [սրբ<ությունը>] վաղուց
բոց չունի:

Ա՛խ, թողեք թռնեմ, թևերս տվեք ինձ.
Մութն անապատը փռեք ոտքիս տակ.
Կատաղած ջրվեժի վայրենի երգը
Ես կուզեմ լսել.
Եվ թող իմ սրտում ջրվեժի նման
Զայրույթս շաչե, սիրտս դղրդա, վրեժս գոչե:
Ես կուզեմ լինել կատաղի - Ոգի՝
Կայծակե սուրը ձեռքումս բռնած,
Ես կուզեմ կրծքիցս փնչել հողմ կրակ.
Ես կուզեմ՝ կյանքը նիրհե ոտքիս տակ:
Կայծակե սուրը ձեռքումս բռնած՝
Կպատռեմ մարդկանց քարե սրտերը,
Ոտքի տակ ձգեմ մարդկանց սրտերը.
Թող իմ հայացքը սրտերի արյան
Կարմիր ցոլքերով մի լույս ստանա,
Ես կուզեմ ժպտալ վայրենի ժպտով,
Ու իմ աչերում արցունքը չողա.
Վայրենի, բոցոտ արցունքը...

ՏՂԱՅԻ ՏԱՂԸ (էջ 174)

ՏԱՐԲԵՐԱԿ

ՏՂԱՅԻ ՏԱՂԸ

Ցա՛ր, հոնքերդ զույգ-թևեր են
Հրաշք հավքի դըրախտի.
Հոգիս (սիրտս) թռավ քու թևերով
Զառ երկինքներն հեքիաթի:

[Թևերդ առար սրտ<ես>]
Ա՛խ, աղջիկ, արտի միջին,
Ջան աղջիկ, վարդի միջին,
Յոթ տարի քեզ սիրել եմ
Սրտիս սև դարդի միջին:

Թևերդ առար սրտես հիմի
Ու զարկեցիր ինձ գետին,
Ոնց ոտքի տակ չար որսկանի
Սրտեն զարկված աղավնին:

Փչե, քամի, զով քամի,
Սիրտս դարդի ծով, քամի,
[Սիրտս մտք<...>]
Ես վառվում եմ, հով արա,
Սրտիս, մտքիս զով արա...

«ԳԻՇԵՐՆ ԵԿԱՎ, ԱՍՏՂԵՐՆ ԵԼԱՆ...» (էջ 175)

1 Թոչնավ ցերեկն, աստղունք ծաղկան.
3 -Ձեռքս ծոցիս ինձի թողի՛ր,
4 Ո՞ւր գնացիր, շուխիկս,
6 Սիրտս կոտրիր, դուխի՛կս...

«ՍԻՐՏՍ ՅՈՂՎԱԾ ՔՆՔՈՒՇ ԹԱԽԾՈՎ...» (էջ 176)

1 Սիրտս ցողված [անհուն] քնքուշ թախծով
2 Ես սիրում եմ քեզ անչահ.
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝«:
4 Ես թախծում եմ քո վերա...
6 Երբեք մարդ չի հասկանա...

[«ԱՐԵՎԻ ՏԱԿ, ԾՈՎԻ ԱՓԻՆ...»] (էջ 178)

13 Ես եմ ոգին [վե<հ>] մեծ բնության.
14 Ես եմ [ապր<ում>] խորհում ու զգում...

Ա.<Մ.-ի> ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 180)

9 Ա՛խ, [ձյունոտ] հողմերն, ընկեր, բուռն
մռնչյունով

[ԻՄ ՎԵՀՈՒԹՅՈՒՆԸ] (էջ 183)

13 Այնպես, ինչպես որ մարդկային Ոգին
14 Ամայի երկնքում կառուց սուրբ սեղան,

ՀԻՆ ԳՐՎԱԾՔՆԵՐԻՑ (էջ 184)

6-րդ տողի փոխարեն՝ լուսանցքում՝
Ինչո՞ւ կրքիս միշտ ներքեւ,
14 Խոզերն, բոզերն են միշտ կուշտ,

ՏԱՐԲԵՐԱԿ

Գլուխդ՝ վեր, ճակատդ՝ բաց,
Հպարտ [եղիր,] գնա՛ [ախպեր ջան,]
կյանքի մեջ,
Կամքդ ազատ, ճակատ<դ> բաց,
Վեհանձն կանգնիր մարդկանց մեջ:

5 Շատ ամոթ է, [ու դուն] չէ՞ որ մարդ չես,
Որ հարուստի ոտաց տակ
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *ոտաց ներքև:*
Սողաս, դողաս սողունի պես.
ա Բարձր կանգնիր <իրենց> տակ:
բ Միշտ վեհ նայիր, միշտ վերև:

Զէ՞ որ ամեն բանից առաջ
10 Դու քու գլխիդ իշխանն ես-
ա Մեկ էլ ուրիշ տիրոջ առաջ
բ Ինչո՞ւ ուրիշ տիրոջ առաջ
գ [Միշտ] Իշխան էլ կա՛ց մարդկանց առաջ,

Գլուխդ սկի չծռես:

Նշան չունի, աղքատ մարդ ես.
ա Հոգիդ լինի թո՛ղ հարուստ.
բ Խոզեր, բոզերն են միշտ կուշտ.
15 Հերիք է՝ դու հոգով լինես
Հպարտ, ազատ ու հարուստ...

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԱՆԳ
(Նրա ղողանջները) (էջ 185)

ՏԱՐԲԵՐԱԿ

Եվ գիտեմ, գիտեմ, կյանքն է անցավոր,
Աշխարհը ունայն, վայելքը վաղանց,
Եվ մարդիկ չնչին, եւ կգա մի օր,
Կցնդի երկիրն անհուն ծավալում...
Ինչո՞ւ ենք ապրում [և ո՞ւր ենք գն<ում>] և
կուզենք ապրել.
Ինչ դառն խաչեր, ինչ դաժան ծաղրեր,
Որ աշխարհ եկանք և պիտի գնանք...
Օ՜, կուզեմ փշրել երկինք ու երկիր,
Ստեղծող ուժից լինել վրեժխնդիր...
Բայց ես անզոր եմ, և հոգիս լքյալ...
Եվ ծանր մտքեր, և անհույս, մռայլ...
Բայց ահա [ուժգին] [զգում] [տեսնում] լսում
եմ ահա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ թրթռում է հոգիս հիասքանչ -
Եվ հոգիս՝ լեզվակ վեհ, վսեմական,
Իմ էության մեջ երգեր է վառում,
Հրեղեն երգեր, որ թևեր ունին...
Եվ ես ճախրում եմ, ես ծավալվում եմ,
Եվ ես տեսնում եմ խորախոր գաղտնիք,

Խոկման անդունդներ, ուժ գերահրաշ,
Եվ ես բովանդակ ոգված ու շնչած
Տիեզերական անճառ ցնորքով՝
Ուզում եմ [ապրել] [խորհել] երգել, ուզում եմ
սիրել -
Ընդգրկել հոգումս [երկիրն ու մարդիկ]
աշխարհն ու մարդիկ,
Եվ ոգի դարձած հեռուներ թռչել...
Եվ հավերժ խորհել ու հավերժ ապրել
Եվ ես տեսնում եմ խորախոր գաղտնիք
Խոկման անդունդներ, ուժ գերահրաշ,
Որով զգում եմ և ըմբռնում եմ,
Որ տիեզերքն է մի [անհայտ] անվերջ երազ,
Մի [անճառ] անանց ցնորք, չքնաղ և վսեմ...

6/19 հուլիս

Բանաստեղծության տակ՝
[Որն իմ հոգու մեջ հրեղեն դարձած]
Որն իմ հոգումն էլ [դարձել] դարձած հրեղեն,
Ցնորք-գաղափար մարգարեական:

«ԽՈՐ ՔՆԻՍ ՄԵՋ ԵՐԱԶ ՏԵՍԱ...» (էջ 189)

14 Ուրտից (գլխից) զվարթ թռել էր.
18 Որ ննջել են իր [ափեր<ում>] ափում -

[«ՔՈՒ ՏՆԱԿԴ ԲԱՂԻ ՄԻՋԻՆ...»] (էջ 190)

22 Քնած էիր [մչմ]<ալեն> մչչալեն.
32 Ալ-վարդերը քաղեցիր.-

«Ա՛Խ, ԴԵՊԻ ՔԵԶ ՎՐԵԺ ՈՒՆԻՄ...» (էջ 195)

6 [Ալ արունդ] Դուն գնացիր - իմ գարունս էլ

«ՍՐՏՈՒՄՍ ԽՈՐՈՒՆԿ ՎՇՏԵՐ ԿԱՆ...» (էջ 197)

7-8-րդ տողերի դիմաց՝ լուսանցքում՝ *մլար* [է] *ու մութ:*
Մի՞թե կարող ես երկրի երեսից
Իմ երգերիս հետ ողջ մարդկանց ջնջել...

«ԼԱՑՆԱԼԻՔ ԾՈՎՈՒՄ - ՀԶՈՐ, ԾԼՓԾԼՓՈՒՆ...» (էջ 198)

3 Եկ ընկեր լինինք, ազատ, անմեկին,
7 Ուրիշի կամքին ուշք չդրած՝
20 Դեպի վարդ-ամպերն թռնենք միասին -
27 Եվ [հաղթանակով] ազատության վեհ
հաղթանակով

«ՈՎ ԿՏԱ ԻՆՁ ՈՒԺ՝ ՀԶՈՐ ՈՒ ԱՀԵՂ...» (էջ 202)

3 Հրեղեն բազուկ՝ անխոնջ [ջարդել<ու>]
փշրելու
4-րդ տողի *Թշնամիներիս* բառի վերևում՝ *Լիրը <...>:*
5 Արնոտ, հոշոտված սուրբ հայրենիքիս

«ԵՍ ՍԻՐԵՑԻ ԵՎ ԱՑՐՎԵՑԻ...» (էջ 205)

4-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝
Մոխիր դառա սիրելով...
6-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(չորացա):*

2-րդ քառատողի տարբերակ

Ես տանջվեցի և քամվեցի
Եվ քարացա տանջվելով...
Դե՛՛հ, կռավե, զալում ա<գ>ռավ
(Էլ մի երգե, քնքուշ բլբուլ,)
Ես քար դառա տանջվելով...

«ՁԵՐ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՁԵՐ ՍՐՏԵՐԻ ՊԵՍ...» (էջ 208)

1-ին տողի վերևում՝

[Դուք, քարե զանգեր, դուք,] քարե զանգեր
(Դուք, քարե զանգեր, դուք, քարե զանգեր-)
5 Օ՜, ես կպայթեմ և [կայծա<կի պես>] և ինչպես
կայծակ

«ՎԱՂՈՒՑ ԷՐ ՆԻՐՀԱԾ, ՀԻԱՍԹԱՓ ՈԳԻՍ...» (էջ 209)

2-րդ տողից հետո՝

[Օ՜, կույս, վիթխարի, սրբազան ոգի,]
3 Նորից թև տվիր իմ հոգնած հոգուն.
4 Քու վիթի չքնաղ աչերը քնքուշ
5-րդ տողի *հոգումս* բառի վերևում՝ *սրտիս մեջ:*
6 Եվ ճաճանչները քու մաքուր Ոգու.
13 Որ մեռնել կուզեմ աշխարհի (ամենքի)
համար...

«< ... > ԸՄԲՌՆԵԼԻ...» (էջ 210)

23 Փոքր են ինձ համար և երկիր, և ծով
25 Իմ սրտի խորքից սկիզբ են առնում
27 Կամքիս սլաքը ուղիղ է թռչում.-

«ԻՆՁՊԵՍ ԱՂԲՅՈՒՐԸ ՄԱՔՈՒՐ, ԿԱՐԿԱՁՈՒՆ...» (էջ 212)

4-րդ տողի փոխարեն՝ բանաստեղծության վերջում՝

Թափանցե մարդկանց մեռած սրտերով.

«ՔԵԶ ԵՐԱՁԵԼՈՎ՝ ԵՍ ՃԱՄՓԱ ԸՆԿԱ...» (էջ 213)

6 Շարվել են շուրջս - [լուռ ու] այնպես լուռ,
լազուր,

7 Գարունն է [չնչ<ում>] բուրում այնտեղ
վարդերով
9 Աստղերն են երգում հոգուս խորքերում,
10ա Հոգիս բացվում է երկնքի նման.
բ Հոգիս բացվում է վեհ տարածությամբ...
գ Հոգիս լցվում է մեծ տիեզերքով.

11-րդ տողի *կուրծքս է զարկում* բառերի փոխարեն՝ էջի ներքևի ազատ մասում՝ *քեզի եմ թռչում:*

«Է՜Ց ՎԱԽ, ԱՆՑԱՆ ՕՐԵՐՍ, ԱՆՑԱՆ...» (էջ 214)

2 Առանց [ծաղի<կ>] արև օրերս անցան.-

«ԴԱՐԴԸ ՍՐՏԻՍ՝ ԿՑԱՆՔՍ ԵՄ ՄԱՇՈՒՄ...» (էջ 215)

3 Մոլորվեր եմ լեն աշխարհում,

«ՃՇՄԱՐՏՈՒԹՑՈՒՆԸ ՄԻ ՀԱՏ Է ՄԻԱՑՆ....» (էջ 217)

Բնաբան.
«Ճշմարտությունը խոսի՛ր այս աշխարհիս հզորների
առաջ»:
[Զորոաստր] Զենդ-Ավեստա

10 Կանգնի՛ր աշխարհիս հզորի առջև
12 Սուրբ ճշմարտության բոցով հրաթև:
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *թույնով բոցաթև:*
16 Կատարելության մեծ ճամփի վերա...

ՏԱՐԲԵՐԱԿ

Բնաբան.
«Ճշմարտությունը խոսիր այս աշխարհիս հզորների առաջ»:
Զորաստր (Զենդ-Ավեստ)

2 Եվ նա իմ մեջն է - անոթն եմ նրա-
3-4-րդ տողերի միջև՝

[Իմ մեջն է հնչում, բարբառն եմ նորա.
Այլևս չկա մի ուրիշ աշխ<արհ>]
8 *[Եվ] Դու, ճշմարտության քարոզ աննկուն:*
Այս տողի *ճշմարտության* վերևում՝ *արդարության:*
9 *Հրեղեն խոսքով, ինչպես սուր [հզոր] սայրի,*
10 *Կանգնիր աշխարհիս հզորի դիմաց,*
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *[առաջ] առջև:*
12 *Սուրբ ճշմարտության հրով...*
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝
(Բոցը հրաթև,
Հուրը հրաթև):
13 *Եվ խրոխտ ձայնով ահեղադղորդ*
Այս տողի փոխարեն՝ էջի ներքևի ազատ մասում՝
Եվ արիասիրտ, և ձայնով խրոխտ
14 *Գեղեցկի, բարվ<ույն>ո պատգամներն*
15 *Եվ մի՛ երկնչիր, մեռիր անհողդողդ*
16 *Կատարելության մեծ ճամփի վերա...*

31 հունվ<արի>

«ՍՐՏԵՐԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՊԱՌԱԺ ՈՒ ՔԱՐ...» (էջ 218)

4 *Ծանր ու հեղձիչ սրտիս է չոքած (իջած).*
5 *Եվ որ մեռելի բաց-պաղ աչքի (բաց աչքերի պես) պես*
7 *Աշխարհն է ընկել /խև, մռայլատես./*
8 *Եվ բյուրալեզու չարիքն է այնտեղ*
14 *Լույսով հրեղեն... [Բայց նեղ է ուղիս] /Բայց խոլ է ուղիս,/*
17 *Բայց ծարավ, նոթի, անքուն, վաստակած (վաստաբեկ)*
19 *Խայթված ուժգին (սաստիկ) խեղդվում է հիմա.*
20 *[Գնա՛], Առա՛ջ, անհողդողդ և գոտեպնդվի՛ր-*

«ԱՉՔԵՐՍ՝ ՊՂՏՈՐ, ԱՉՔԵՐՍ՝ ԽԱՎԱՐ...» (էջ 219)

4 *[Որն] [Եվ] անջատված է մի անջրպետով*
13-րդ տողից հետո՝
[Ռամիկ ձայներին]

«ՑՈՒՐՏ Է ՈՒ ՁՄԵՌ...» (էջ 222)

5 *Ձյունի տակ ծածկվան,*
6ա *Ինչպես ծմակում*
բ *Ինչպես անտառում*

«ԵՐԱՋԻՍ ՏԵՍԱ, ՈՐ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ ԺԱՅՌՈՏ ԱՓԵՐՈՒՄ...» (էջ 223)

6-րդ տողի փոխարեն՝
[Շուրջս լուռ էր. խոր, մեծ լռու<թյուն>]
7 *Ոչ զեփյուռ չնչում, ոչ օդը երերում.*

«ՄԱՐԴԿԱՆՑ ԺՊԻՏԻՆ ԴՈՒ ՄԻ՛ ՀԱՎԱՏԱ...»(էջ 225)

6-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(«):*
13-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(կարենա):*
20-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(սիրված):*

«ՎԻՇՏՍ ԾԱՆՐ Է, ՍՐՏԻՍ ՎԵՐՔԸ՝ ԱՆԴԱՐՄԱՆ...» (էջ 226)

6 *Թող Արազը դարդս տանի ծովերուն,*
7 *(Ու) թո՛ղ [և] ծովերը վիշտս (ցավս, դարդս) պատմեն աշխարհին:*
14 *(Թո՛ղ) Ու աստղերը վիշտս պատմեն աշխարհին:*
Բանաստեղծության վերջում՝ էջի ազատ մասում, 2-րդ տողի փոխարեն՝
(Մեր սարերի կռունկի-աչք աղբյուրներ).

«ՍԵՎ ԱՐԾԻՎՆ ԱՀԱ ԳԼԽԻՍ ՎԵՐԱՅՈՎ....» (էջ 227)

8-րդ տողից հետո՝

[Իմ սերն ու տենչը, արևն ու աստղերը...]

9 *Փչրի՛ր շղթաներդ, իմ վայրի հոգի.-*

15-րդ տողի *շրթնից* բառի վերևում՝ *բերնից:*

23-րդ տողից հետո՝

[Աշխարհակործան ժանտախտ մրրիկ...]

30 *Բազմի՛ր [ամպեղեն] ժայռեղեն գահույքի*

վերա՝

32 *Երազի՛ր քո վեհ ցնորքդ վսեմ...*

34 *Եվ տիեզերքի [եզերքներն] ափերն անեզր*

35 *Եվ անմահությունն քո աստվածության,*

36 *Արարչագործող, վեհապանծ մտքի,-*

37 *Եվ աստվածությունն - քո սերը լինի...*

ՆԱՊՈԼԵՈՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԻ ԱՌԱՋ (էջ 229)

Բանաստեղծության 1-ին էջի լուսանցքում՝

Իշխաններ[ը] բռնում էին ասպանդակը [ձին]
[հեծնելիս] [նստելիս], և կայսերներ ամպհովանին
նրա,
Եվ նորա սրունքների տակ հառաչում էր
սանձահարված նժույգը ժամանակի:

1-ին տողից առաջ՝

[Երկյուղած, [խոնարհ] խոհուն կանգնած են

լռիկ]

1 *Մեծն Կեսարի վեհ դամբարանի*

2 *Մարմարիոն եզրին, [ինչպես]*

6 *Թե՞ մի այլ աշխարհ՝ մեծ գերբնական.-*

8 *Հանգչում է մեծը բոլոր մարդկանցից*

9 *Հանգչում է այնտեղ երկիրը ցնցող*

10 *Փոթորիկն անհաղթ, (կայծակը երկնից).*

14 *Անապատների այն հազարամյա*

17 *Ասպետ Իսպանիան, չքեղ Իտալիան*

19 *Եվ Ռուսաստանը լայն, անծայրածիր...*

23-րդ տողից հետո՝

[Եվ ժամանակի, և տարածության
[Իշխ<...>] Տեր և հրամայող, մեծ օրենսդիր,
անմահ Նապոլեոն,
Դու աստվածային հզոր խարազան,]

24 *[Անմահ Նա<պոլեոն>] Մեծ օրենսդիր և*

միահեծան

26 *Մի՞թե մեռել ես, ինչպես մեռնում են*

33-րդ տողից հետո՝

[Այժմ նիզակցած և ստրկամիտ
Այն արյունարբու, մարդակեր ցարի]

39 *Ո՛վ դու մարգարե և դո՛ւ, գերամարդ,*

40 *Տիեզերական անսահման ոգի...*

45 *Թմրող (նիրհող) մարդկության ձայն տա*

աշխարհին՝

31-34-ՐԴ ՏՈՂԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Ա

[Սուրբ հայրենիքդ պարտված, անարգված
[Այն ստրկամիտ], [անմարդա<...>]

[մարդակեր]

Դաժան, մլար խոլ Տևտոններից
Այժմ նիզակցած, բարեկամ դարձած
Արյունարուշտ, բռնակալ <ցարին>.
Սուրբ հայրենիքդ աշխարհի ջահն էր,
Առաջամարտիկ, նախակարապետ -]

Բ

Սուրբ հայրենիքդ ազգերի ջահն էր,
Առաջամարտիկ, նախակարապետ.
Այժմ պարտված, այժմ անարգված
Դաժան, [մարդակեր] բռնակալ խոլ Տևտոններից.

[Այժմ նիզակցած և ստրկամիտ՝
Այն արյունարբու, բռնակալ <ցարին> <...>]

42-45-ՐԴ ՏՈՂԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Եվ սակայն արդյոք [ժամը] [օրը] օրը պիտի գա՞,
Երբ գալլիական աքաղաղը վեհ
Նորից թափհարե հսկա թևերը
Եվ [զո<րեղ>] հզոր ձայնով քունը վրդովե
Թմրող մարդկության, ձայն տա աշխարհին,

5-6-րդ տողերի միջև՝ լուսանցքում՝

Ընդդեմ բռնության, չարին և ստին
Եվ ստրկության, կեղեքման ընդդեմ
Սրբազան ռազմի... համար մրրկող զարթոնը երգե.
Նոր արշալույսի, վեհ առավոտի
[Եվ նա մեծ [<1 անընթ.>] գալը ավետե.]
Հոգետանջ խավարն հալածող լույսի
[Գալը] Գալուստն հռչակե. և եղբայրության
Եվ ազատության մեծ օրն ավետե...

16 մայիս. Մոսկով

«ՍԻՐՏՍ՝ ԴԱՐԴԻ ԾՈՎ, ՍԻՐՏՍ՝ ՎԻՐԱՎՈՐ ...» (էջ 233)

3 Ձեր գիրկը կուգամ, անուշ սար ու ձոր.-
8 Մենակ [աշխարհը] թափառեմ աշխարհը բոլոր՝
9 Արտասունք թափեմ, թրջեմ [քար ու] սար ու ձոր...

Վերջին քառատողի դիմաց՝ լուսանցքում՝

Ինչպես մի ծիծեռ,
Հետևում են ինձ
Հուշերը սիրո...

«ԱՅՐՎՈՒՄ ԵՄ ԵՍ ԱՐԵՎԻ ՊԵՍ...» (էջ 234)

1 [Ա՜խ], ես այրվում եմ արևի պես,

«ԼՍՈՒՄ ԵՄ ՈՐՈՇ՝ ԱՆՈՒՇ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ...» (էջ 236)

10 Ես բուռն սիրելուց զզվել եմ սաստիկ,
14 Եվ [վսեմ] որ հիասքանչ անհունություն է

Բանաստեղծության վերջում նշված է. «Բայերի ժամանակը կանոնավորել և մշակել»:

«ԽՈՐ ՎՇՏԵՐԻ ՄԵՋ ԼԵԶՈՒ ՋՈՒՆԵՑԱ...» (էջ 237)

6 Նոր ցնորքների աշխարհ գտնելու,
9 Եվ ամենուրեք չոր ու ամայի,

«ԱՎԱ՜Ղ, ՑՆԴՎԵՑ, ԻՆՁՊԵՍ ԵՐԱՋԱՆՔ...» (էջ 238)

2 Հավատս պայծառ՝ մարդիկը դեպի.-
5 Շատերի [համար] նման ես հացի համար
6 Գլուխ չքերի ուրիշի առաջ.-
8 Ես այրվեցի սրբության առա<ջ>.

20-րդ տողի *հետ* բառի վերևում՝ *(մեջ):*

«ՀՈԳԻՍ ԹՌՉՈՒՄ Է ՄՈԼՈՐ ՈՒ ԽՈՏՈՐ...» (էջ 239)

1 Հոգիս թռչում է ճանապարհներով
3 Ու աշխարհի ուղին մեծ է, ստոր,

ՏԱՐԲԵՐԱԿ

Աշխարհի ուղին [մեծ ու հանցավոր,] մեծ է ու խոտոր,
Որով հոսում է նենգ ու անմաքուր
Ոհմակը մարդկանց - լպիրշ ու ստոր.

Իսկ հոգիս [մոլոր՝ թռնում է խոտոր] այս
վճիտ և չգիտեմ ո՞ւր -
Ճանապարհներով [և չգիտեմ ուր] թռնում է
անբիծ.
Դաժան փշերից և արյունոտվան
Ոտներս տկար, և կուրծքս տապից
Խեղդվում է հիմա...

«ԴՈՒ ԻՆՁ ՍԻՐՈՒՄ ԵՍ. ՔՈՒ ՄԱՔՈՒՐ ՀՈԳԻՆ...» (էջ 240)

5 Եվ չես սասանվում. [կրծքի] մեղքի օվկիաններ
7 Նույնիսկ անպարտ, այդպես անվեհեր,
9-րդ տողի *սիրում եմ* բառի վերևում՝ *պաշտում եմ:*
10 Նվեր եմ բերում մաքուր ձեռներիդ
12-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *«:*
13 Ասա՛, և թռնեմ աշխարհից պոկեմ

<ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ> (էջ 241)

8 Եվ խոսքդ արդար բխում էր ազատ,
11 Զարկված ու զրկված [ժողովրդ<ի>]
հազարների հետ՝

«ԱՂՋԻ՛Կ ՆԱԶԵԼԻ, ԱՂՋԻ՛Կ ԳԵՂԵՑԻԿ...» (էջ 242)

4 Պայծառ ու գարուն աչերիդ գարուն...

«Ո՛Վ ԱԶԱՏՈՒԹՅՈ՛ՒՆ, ԱՇԽԱՐՀԻ ԱՐԵՎ...» (էջ 243)

3 Թիթեռ[ի նման]ների պես՝ վեհ, սավառնաթև

Ա ՏԱՐԲԵՐԱԿ

Ո՛վ ազատություն, դու տիեզերքի,
Արև կենարար, [սուրբ ու] վեհ
ազատությո՛ւն-
Ոգիներն ամեն ըմբոստ ու հզոր
Թիթեռների պես՝ չքնաղ, զվարթուն
Ճախրում են, սուզվում քո մեջ սիրավառ
Եվ բորբոքում են հուրդ նորինոր
Իրենց այրումով - ոգիներն հզոր...
Հարգանք ձեզ հավերժ, անմահ հերոսներ,
Հարգանք ձեր արյան վեհ տանջանքներին,
[Ձեր չիրիմներից սուրբ ու անվեհեր
[Ազատությունը] ամենից բարձր, ամենից վսեմ

Ոգին աշխարհի թևավորեց մեզ -
Արեգակները վառվեցին բոլոր...]
Եվ փառք հավիտյան, ձեր անուններին -
Ձեր չիրիմները՝ սուրբ ու կենսատու,
Ազատությունը հաղթական ու վեհ
Արծվի թռիչքով թևավորի մեզ,
[Արեգակները] Եվ արևները - վառվեցին
բոլոր....

Բ ՏԱՐԲԵՐԱԿ

Երգս բխում է բոլոր սրտերից -
Բոլոր սրտերը երգս են երգում -
Երգս վառված է հզոր չանթերից,
Եվ փոթորիկ է իմ երգը ծնում:

Սրբեցե՛ք փոշոտ, լուռ քնարների
Լարերը ժանգոտ և բարձր հնչեցե՛ք,
Եվ թնդացրեք գովն [արեգակի] ազատության,

Վեհ ազատության ներբող հնչեցե՛ք...

Մեր երգն է բխում բոլոր սրտ<եր>ից,
Բոլոր սրտերը մեր երգն են երգում.
Մեր երգն է վառված հզոր շանթերից,
Եվ փոթորիկ է մեր երգը ծնում...

Փշրեցի՛ք շղթան - ելավ բանտերեն
Ազատությունը [արեգակի] արևների պես -
[Գերի, բայց հպարտ ստրուկ դարևոր
Ազատությունը հաղթական ու վեհ
Արյան համբույրով ողջագուրեց մեզ-
Ամենից բարձր, ամենից վսեմ
Ոգին աշխարհի թևավորեց մեզ.
[Արեգակները] Եվ արևները վառվեցին
բոլոր -

Ազատությունը հաղթական ու վեհ -
[Ամենից բարձր] Գերի, բայց հզոր, ստրուկ,
[դարևոր] բայց ըմբոստ,
Արյան համբույրով ողջագուրեց մեզ -
[Արեգակները] Եվ արևները վառվեցին բոլոր...

Բանաստեղծության դիմաց՝ լուսանցքում՝
Արծվի թևերով թևավորեց մեզ....

«ՄԱՍԻՍԻ ՄՌԱՅԼ, ԽՈԺՈՌ ԺԱՅՌԵՐԻ...» (էջ 244)

7 [Այսքան] Արյան հեղեղներ, նահատակություն՝
15 Աղբ ու կղկղանք՝ [մարդիկ<ը>] ազգերը
բոլոր.
18 Է՛լ քար չմնաց այս [պերճ] աշխարհի մեջ,
22 Մասիսի [բոլոր] մռայլ, խոժոռ ժայռերի

29 Ինչպե՞ս պիտ դարձնես կորուստ<դ> անծայր...
30 Դուրս եկ, մոլեգին և չղթայազերծ,
31 Աստված ու երկինք ոտքի տակ տված,
35 [Նրանց] Բոլորին, որոնք մարդու են նման-
36 Աստղերը հանգան, երկինքը [ավեր<...>]
42 Լինին բոլորը, և դու [<փուլ...>]

ՏԱՐԲԵՐԱԿ

Մասիսի դաժան, կիզող ժայռերի
Բոլոր իժերը թափեցին իմ մեջ
Իրենց թույները ցասման, վրեժի -
Եվ սիրտս այրվում է վրեժով անչեջ:
5 Այսքան տառապանք, անարդարություն՝
Մարդկության կողմից դարերով նյութած
Մի ազգի գլխին - էլ չկա սահման
Մեր համբերության, մեր տառապանաց.
Ես դուրս եմ գալիս խայթելու անհագ
10 Անվերջ, անխնա բոլոր [վատերին,] գայլերին,
Որոնք մարդկության պատկերն են կրում -
Եվ դուրս եկ ինձ հետ, դու, հայ ժողովուրդ,
Զինված ռումբերով, [հրով] մահով, կայծակով,
Խփիր, հարվածիր, ջախիր, ջախջախիր
15 Բոլորին, որոնք մարդ են անվանվում -
Կործանի՛ր աշխարհ, երկրներ, բանտեր,
Քար քարի վրա մի թո՛ղ, ավերի՛ր -
Ու մարդ-գայլերի հետ միատեղ ընկիր -
Մահվան տագնապում և հոշոտելով
20 Նրանց կոկորդը և ջախջախելով
Գանգերը նրանց - միատեղ ընկիր
Երկնքի, երկրի ավերակների տակ...

ՎԵ՛Ր ԿԱՑ, ԺՈՂՈՎՈ՛ՒՐԴ (էջ 246)

5 Իմ սուրբ հայրենիք, մի՞թե չես [տեսն<ում>]
լսում
20 Տե՛ս աչքիդ [առջև] առաջ և՛ հոհոռում են,
22 Վե՛ր կաց, ժողովո՛ւրդ, [եթե] վե՛ր կաց
միհամուռ,
28 Եվ ընկիր լպիրշ թշնամուդ վերա.

30-31-րդ տողերի միջև՝

[Խփիր թագակիր թշնամուդ գլխին՝]

«ՆԱ ՍՈՒՐԲ Է, ԲԱՐՁՐ, ԱՄԵՆՔԻՑ ՎՍԵՄ...» (էջ 248)

9-րդ տողի փոխարեն՝

(Եվ ո՞վ գիտե արդ, նրա սուրբ փոշին)

«ՆՈՒՅՆ ԴԱՇՏԵՐԸ՝ ԴԱՎԱՐ, ԱՆԴՈՐՐ_...» (էջ 249)

12-րդ տողի *ինձ անտարբեր* բառերի փոխարեն՝ բանաստեղծության վերջում՝ *ինձ անսեր:*

«ՎԱՐԴԵՐԻ ՄԵՋ ՄԱՏԱՂ ԳԱՐՆԱՆ...» (էջ 250)

1-ին տողից վերև՝

[Հնչյունները անուշ երգի
Ցող-ցող իջան սրտիս մեջ.]

եւ՝

[Վարդերի մեջ վերջալույսի
Լեռներն անուշ նիրհում են...]

1 Վարդերի մեջ [անու<շ>] մատաղ գարնան -
4 Անհույս - տխուր, տխուր եմ:
7 Վառ թևերս հողմ<ը> տարավ.

«ՍՐՏԵՍ ԿՈՒՑ-ԿՈՒՑ ԱՐՈՒՆ ԿՈՒԳԱ...» (էջ 251)

2 Ջեմ դիմանա էս դարդին -
3 Ծիծեռ-ծաղկի գարուն կուգա...
4 Ճար չի անե իմ դարդին:
6 Արևն ինձի մեգ ու մութ է.

Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *մլար* [է] *ու մութ:*

8-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *կեղծ է ու սուտ:*

10 Քան թե սերը ընկերի,
12 Սիրուն [չմ<նամ>] չըլնեմ էլ գերի...

Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝

էլ չմնամ սիրուն գերի:

14 Գնա, քեզի մարդ չտեսնի-

Այս տողի *գնա* բառի վերևում՝ *Չքվի:*

15 Սիրտդ թաղիր [հողերի] փչերի տակ -

«ԱՆԳՈՒԹ ԱՂՋԻԿ, ԹՇՆԱՄՈՒ ՊԵՍ...» (էջ 254)

1 Սուրդ բացիր՝ թշնամու պես

Այս տողի *սուրդ* բառի վերևում՝ *Թուրդ:*

2 Խոր խոցեցիր իմ հոգին.
3 Ոչ կհանես սուրդ սրտես,
4 Ոչ ճար կանես իմ վերքին
11 Թո՛ղ գելերին լինիմ ճարակ,
12ա Սրեդ-սերեդ գտնիմ մի ճար:
բ Սերեդ-թրեդ [մի ճար գտնիմ]:

«ԵՍ ՍԻՐԵՑԻ, ՍԻՐԵՑԻ ՔԵԶ...» (էջ 255)

1 Ես սիրեցի, [քեզ] սիրեցի քեզ

«ՔՈ ՍԻՐՏԸ ԱՑՐԻՐ, ՈՐ ՆՐԱ ԼՈՒՅՍՈՎ...» (էջ 256)

1-ին տողի վերևում՝

[Ամբոխը կգա քո ետքից,

Ամբոխը]
[Սակայն ամբոխը]
Բանաստեղծության վերջում՝ էջի ազատ մասում՝
Բայց նա փոքրոգի հալածանքի հանդեպ.
Քեզ կհոշոտե, քեզ նա կուրանա:

«Ա՜խ, թե շա՜տ ապրեմ, շա՜տ սև պիտ տեսնենք» (էջ 258)

1 *Ա՜խ, թե չա՜տ ապրենք, չա՜տ սև պիտ տեսնենք՝*
2 *Մեկ-մեկ պիտ [թաղենք] թաղես սիրելիներիդ,*

«ԲՅՈՒՐ ԵՎ ԲՅՈՒՐ ԱՆԳԱՄ ՆԸՋՈՎՈՒՄ ԵՄ ՔԵԶ...» (էջ 260)

6 *[Ման<ում>] Փչրում ու մանրում,*
Բանաստեղծության տակ՝ էջի 2-րդ կեսին՝ - *Ո՞վ է ծվլում մեր սիրտը և այսպես, հավերժապես:*

«ՄՈՎ ԵՐԿՆՔԻՑ ՊԱՅԾԱՌ ԳԱՐՆԱՆ...» (էջ 261)

3 *Տխուր կհնչեն զանգերը թաղման,*
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *Ու:*
4-5-րդ տողերի միջև՝
[Սրտիս վերքերը մեկ-մեկ ցույց տալով՝
Թափորը կանցնի սիրուհուս դռնով].
[Կարծես թե մեկը վերքերս բացեց՝]
5 *Կարծես լսեցի հեռ[ավոր]ու տեղերեն*
9 *Պայծառ երկնքից ծաղկաբույր գարնան*

Առաջին քառատողի տարբերակ
Գարնան պայծառ մով երկնքից
Հավքերն անուշ սեր կերգեն.
- Տխուր հնչում են զանգերը թաղման,
Ինձ թաղելու կտանեն:

ՏԱՐԲԵՐԱԿ

Ա՜խ, հավքերն են, սեր կերգեն.
Ինձ թաղելու կտանեն:
Էն ձորի պես, խոր ձորի պես
Սրտիս վերքը սև-մթին,
Ցող-ցող արյուն կերթա սրտես,-
Ինձ թաղելու կտանեն:

«ՁԵՐ ՇԱՐՔԵՐԻ ՄԵՋ, ԿՏՐԻՃ ԸՆԿԵՐՆԵՐ...» (էջ 262)

10 *Ջարդեք ու փչրեք նամարդ թշնամուն,*
12 *Փախչի, կգտնի նամարդ թշնամուն:*
13-14-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *Սա ժողովուրդն է ասում:*
16-րդ տողի փոխարեն՝
[Ու մեկիդ տեղը [ընկնելով] տասը [հազար] կկանգնի.]
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *[(դուրս կելնի).] կկանգնի:*

«ԳԱՐՈՒՆՆ ԵԿԱՎ ԿԱՐՄԻՐ ՈՒ ԶԱՌ...» (էջ 263)

1-ին քառատողի դիմաց՝
Ու երգեցին հարս ու աղջիկ
Ճախրակի ու խնցու կշտին -

«Ա՜խ, Ո՛Չ ՄԻ ԱՐԺԻՎ ՉԻ ՄՆՈՒՄ...» (էջ 264)

1 *Եվ ո՛չ մի արժիվ ավա՜ղ չի մնում*
3 *Ամեն ինչ դեպի մահն է սլանում -*
4-րդ տողի *մշտնջենավոր* բառի վերևում՝ *Հավերժ ու անմահ:*
1-ին քառատողի դիմաց՝ լուսանցքում՝
Ամեն ինչ անցնում, թոշնում է, մեռնում,
Միայն մահը կա, [միայ<ն>] սոսկ նա է անմահ:
6 *Ամեն օր կամաց դառնում ենք դիակ:*

8 Աշխարհի <բախտը> անհույս ու անել...
13 Մենք մահն ենք ատում և կյանքի սիրուց
14 Մենք մահն գրկում՝ կյանքը ատելով....
17 Թող նրա [այս աշխարհի] մռայլ, չարաթույն
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *մահաշունչ:*
18 Բեկորների տակ մենք ընկնենք անահ -

«ՍԻՐՏ ԻՄ, ԻՆՁՈՒ ՀԻՆ ԴԱՐԴԻԴ ՀԵՏ...» (էջ 267)

5 Ա՜խ, քարվանը բախտի, սիրո
6 Եկավ անցավ իմ առաջով-
9-րդ տողի *անչափ* բառի վերևում՝ *ծով-ծով:*
10-րդ տողի փոխարեն՝
[Ինձ աղքատի փայ էլ, վայ, ինձ չը հասավ,]
14 Բախտավորներն իմ առ[աջից][ջևով]
առջևից.

ՍԱՔՈՅԻ ԳԵՂԵՑԻԿ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 268)

Վերնագրի դիմաց՝ *Սևքարեցի. + 1908:*
9 Սուրբ իրավունքի, արդար ցասումի
19 Եվ ազատախոս [վառ] ծով սրտիդ լեզուն՝
25 Աննկուն զինվոր վեհ ազատության,
28 Աչքդ չ[ած]գցիր ուրիշի հացին:
Այս տողի *ուրիշի հացին* բառերի վերևում՝ *գովքին ու փայլին:*

«ՏԵՄՆՈՒՄ ԵՄ ՄՈՐՍ ԵՐԿԱԹԵ ՁՈՂԵՐԻ ԵՏԵՎԻՑ...» (էջ 272)

4 Մեր թշնամին [մոր] լացը մայրերի -
11 Թե որքա՜ն ծանր է արցունքը [իմ] մի մոր:

«ԲԱՇԵՐՆ ԱԼԵԾՈՒՓ, ԲԱՇԵՐՆ ՀՈՂՄԱԿՈԾ...» (էջ 273)

1-ին տողի վերևում՝
[Ծուփ-ծուփ բաշերը արձակ, հողմակոծ՝

Սլանում է ձիս ազատ դաշտերով.]
1-ին քառատողից հետո՝
(Ազատամարտի հրդեհից կգամ,
Ուր չար ոսոխի թիկունքն եմ [պա<տռել>]
ճեղքել.
Դրոշն է ձեռքիս սուրբ ազատության.
Սուրբ ազատության համբավն եմ բերել):
9 Արյուն է կաթում սրես հրեղեն-
17 Այս շղթաներն են չառաչում ուժգին,
18-րդ տողի փոխարեն՝
<1 անընթ.> պարիսպներից թռչիր սանձարձակ,

ՏԱՐԲԵՐԱԿ

Բաշերն ալեծուփ, բաշերն հողմակոծ-
[Ազատ դաշ<տերով>] Անսփ դաշտերով
նժույգս է թռչում,
Եվ սմբակները բխում են հուր-բոց,
Դաշտերն են թնդում, վախ առած փախչում:

Ուր կուրծք եմ դրել բռնավորի դեմ,
Վեհ ազատության դրոշն է ձեռքիս
Եվ հաղթանակի երգերով վսեմ:

Նժույգս է թռչում բաշերն հողմակոծ,
Եվ չառաչում են սանձ ու ասպանդակ,
Զրահս է շաչում՝ ցայտելով հուր-բոց,
Զի՛լ չառաչում են սանձ ու ասպանդակ:

Այս շղթաներն են չառաչում ոտքիս,
Օ՜, թռիր, նժույգ, այս քարե պարկից,
Այս մռայլ բանտի կամարն է կրծքիս
Օ՜, տար ինձ, նժույգս, կռվի դաշտ նորից:

«ՍՏՎԵՐՆԵՐՆ ԸՆԿԱՆ ԻՐԱՐՈՒ ՎՐԱ...» (էջ 274)

1 Ստվերներն ընկան մեղմիկ ու անդորը
4 Ես մի մութ ալիք՝ լացած աչերով,
9-րդ տողից հետո՝
[Շեմքդ եմ ընկել]

«ՈՒ ՔԱՐ ԿՍՂՄԵՄ ՏԱՌԱՊԱԾ ՍՐՏԻՍ...» (էջ 277)

7 [Գլուխդ խփես] Թեկուզ գլուխդ [խ<փես>]
զարնես քար-քոի -

«ՇՐՋՈՒՄ ԷԻ ԼՈՒՌ ԳԱՐՆԱՆ ԴԱՇՏԵՐՈՎ...» (էջ 278)

3 Անցավ ճախրելով, երգեց քաղցրաբույր,
7 [Որք<ան>] Ինչքան սիրեցի, լաց եղա ինչքան
8 Հոգուս երկնքում խավար է հիմա:
Այս տողից հետո՝
[Էլ չեմ հա<վատում>]...

ՏԱՐԲԵՐԱԿ

Շրջում եմ դաշտերով.
Գլխիս վրայով անցավ ամպը հավքերի,
Ու անուշ երգեց.
Եվ սիրտս լցվեց անո՛ւշ հուշերով:
Իմ վառ սերերը աստղերի նման
Իրար ետևից շողալով անցան -
Որքան սիրեցի, որքան լացեցի.
Խավար <է> հիմա հոգուս երկնքում:
[Բարութ<յանն>]
Բարուն և սիրուն էլ չեմ հավատում.
Ատել, արհամարհել մարդուն սորվեցի.
Ժպիտը երկնքի չկա ինձ համար:

Հայացքը կույսի համը է ինձ համար:
Գարուն պայծառ, համբույրով մաքուր
[Համբ<ուրիր>] Գուրգուրիր սիրտս վիրավոր,
Եվ մոռացության դալար մամուտով
Վերքերս գոցի՛ր, գարուն:

«Ա՜հ, ԵՍ ՉԵՄ ԽՈՍՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ԵՐԲԵՔ...» (էջ 279)

1 Ես չեմ խոսում [չեմ] մարդկանց հետ բնավ
3 Դահիճ է մարդը, մանկամորթ, տեսե՛ք,
5 Իմ հոգին խելագար, խոլական ուրուր,
8 Ո՞ւր [գնամ] նայեմ, ասե՛ք, ո՞ւր նայեմ, ո՞ւր...

ՏԱՐԲԵՐԱԿ

Բորենիները աշխարհի բոլոր
Նախանձում են մեր [անխիղճ] վատթար
ոսոխին
Նայում եմ անհույս, անհույս ու մոլոր
Մեր նահատակված, մեր անմեղ հային...
1-ին տողի վերևում՝ *մորկալի,*
Հարազատներիս արյուններով լի:

«ԱՆՀՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՌԱՅԼ, ԱՆՍԱՀՄԱՆ...» (էջ 280)

2 Ինչպես իմ հոգին մռայլ, անսահման -
4 Ուր աննպատակ անդուլ, անդադար -
9 Որպես օվկիանի մի քնքուշ [չնչին] ալիք՝
10 Որ պիտի հալվի [տարած<ության>]
անհունության մեջ՝

«ՀՈՂԻՑ ԵՆ ՄԱՐԴ ՈՒ ԿՆԻԿ...» (էջ 284)

1-ին տողի դիմաց՝ լուսանցքում՝
Հողեղեն են մարդ ու կնիկ.

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Հողից են, հողի ծնունդ
Թե՛ մարդ, թե՛ կին, գանձ ու գահ.
Հողը առավ հողեր[ու]ին....
Կամ
Հողից են թե՛ մարդ ու կին:
Ու շաղկապի վերևում՝ *թե:*
Թե՛ թագավոր, գանձ ու գահ.
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *ու:*
Հողը առավ հողերին.
Մի կպեք էդքան ագահ
Հող աշխարհի խաղերին.
Կյանքն է երազ, վերջը՝ մահ:

«ԵՍ ՔԵԶ ՍԻՐԵՑԻ ԱՍՏՂԵՐԻ ՍԻՐՈՎ...» (էջ 285)

3 *Բայց դու մոտեցար [ինձ] պագչոտ խորհրդով*
4 *[Իմ] սուրբ շրթունքներիս, դու, գարշելի կին:*
6 *Եվ երազեցի [մի] անապակ սիրո,*

7-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(հոգիս):*
8 *Սուրբ հիացքներով (հմայք<ներով>) թեավոր սիրո....*

ՏԱՐԲԵՐԱԿ

Ես քեզ սիրեցի աստղերի սիրով,
Խնկեցի քո մոտ իմ այրվող հոգին.
Բայց դու մոտեցար պագչոտ խորհրդով
Իմ սուրբ շրթունքին, ով գարշելի կին:

Աշխարհում չկա, չկա սրբություն,
Մարդիկ զեռում են, եռում են՝
Պոռնիկի արցունք վավաշ աչքերում,
Լրբենի ժպիտ. զազիր.
Ես բաց եմ արել սիրտ<ս> երկնի դեմ
Եվ երազում եմ մի մաքուր սիրո,
Որ բարձունքից իջներ, ողողեր սիրտս
Թեավոր սիրո սուրբ հիացքներով:

«ԻՄ ՔՆՔՈՒՇ ԴԱՐԴՍ ԽՈՑՎԱԾ ՍՐՏԻՍ ՄԵՋ...» (էջ 286)

4 *Տալիս եմ նրան, որ դարդս քնի:*
6 *Նանիկ եմ ասում, որ հանգիստ քնի,*
8 *Օրորում եմ ես դարդս, որ քնի:*

Ա. ՏԱՐԲԵՐԱԿ

Իմ վիրավոր սրտում դարդս քուն եմ դրել
որբ մնացած տղի պես,
[Արցունքներով, սև կաթ եմ] Արցունքներս
կաթի տեղ եմ տալիս, որ քնի,
Իմ երգելով նանիկ եմ ասում, որ քնի,
Սար ու ձոր ման եմ գալիս՝ օրորելով դարդս
սրտիս մեջ, որ քնի...

Բայց երբ մենակ ման գալիս լճափում,
Ուր ալիներն արևի վառ շողերով ոսկեզօծված՝
Համբուրում են ափերն ու իրար,
Դարդս զարթնում է քնից.
Երբ մշուշն եմ տեսնում սարերի գլխին
Եվ արծվի հզոր թռիչքը մշուշոտ <1 անընթ.>,
Դարդս զարթնում է քնից...

Բ ՏԱՐԲԵՐԱԿ

Դարդս շատ է ու պես-պես, ծայր չունի ու
վերջ չունի...
Ա՜խ, մանկուց, շա՜տ կանուխ ես վիրավորվեցա,
Ջարդած, կոտրած, քանդած է սիրտս.-
Ո՞վ ավերեց իմ չեն, գեղեցիկ, ճոխ, հպարտ
սիրտս.
Աշխարհի օրենքները, մարդիկ, իմ մտքերը...

«ՄԻ՛ ՀԱՎԱՏԱ ՄԱՐԴՈՒ ԽՈՍՔԻՆ...» (էջ 287)

5 Դու ճախրում ես աշխարհից վերև
7 Ու չես տեսնում ոտներիդ տակ՝
11 Ցուրտ է, բորան - վա՛յ քեզ, թռչուն,

«ԳԻՏԵՄ ԼՑՎԱԾ Է ՍԻՐՏԴ ԱՐՑՈՒՆՔՈՎ...» (էջ 290)

10 ա [Մեղմիկ քայլում ես մեր դաշտերի վրա,]
10 բ [Եւ] Հետս քայլում ես մեր դաշտերի վրա,
14 Ուզում եմ քեզ [մի] բան ասել,

«ԳԻՇԵՐ Է ՄԹԻՆ...» (էջ 291)

2-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *հառաչում:*
4-րդ տողից հետո՝

[Սոսափում տխուր.
Նա ունայնության]
[Զարթուն եմ անքուն,
Ականջ եմ դնում-]

11-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ (*ցավի, վերքի*):

{ ՄԻ ՕՐ ԿԳԱ, ԱՄԵՆ ՄԻ ՇՈՒՆՉ, ՄԱՐԴ-ԱՐԱՐԱԾ ԿՄԵՌՆԻՆ...»] (էջ 292)

1-ին տողի *դարեր հետո* բառերի վերևում՝ *Մի օր կգա:*

8 Ինչո՞ւ [ծնանք] ծնան մարդ ու տենչանք, սեր
ու երգեր ու հանգան.-

10-րդ տողի *ոչ ծար գիտեմ, ոչ հնար* բառերի փոխարեն՝ թղթի ազատ մասում՝ *ոչ հնար կա և ոչ ծար:*]

«ԷՍ ԱՍՏՂՈՏ ԳԻՇԵՐԻՍ ԻՋԱ ՊԱՐՏԵՋ...» (էջ 293)

8 Ու [վառ] զառ աստղերին
11 Այնպես [քա<ղցր>] անուշ ու նազելի.-

«ՄԱՂՈՒՄ Է ԱՆՁՐԵՎ...» (էջ 294)

7-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ (*մթում*):

Բանաստեղծության լուսանցքում ավելացված է ևս մեկ քառատող.

Հոգուս մեջ դարձար
Դու մի այրող վերք,
Ես քեզ մոռանալ
Չեմ կարող երբեք:

ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

[Դու սիրտս այրող
Վառ վերքի նման՝
Ես քեզ չեմ կարող
Մոռնալ հավիտյան:]

[Հոգուս մեջ հավեժ

Լուսանցքում՝ *հավերժ-հավեժ:*

Դու մի այրող երգ.
Ես չեմ կարող քեզ
Մոռանալ երբեք:]

[Դու միշտ հոգուս մեջ
Այրող վերքի պես,
Ջեմ կարող հավեժ-
Մոռանալ ես քեզ:]

«ԳԻՇԵՐԸ ԵԿԱՎ...» (էջ 295)

3-րդ տողից հետո՝

(Լուռ է ու անդորը)
10 *Զգվում է անդուլ (անծեր).*

«ԻՄ ՏԽՈՒՐ ՍՐՏՈՒՄԳԻՇԵՐ ՈՒ ՑԵՐԵԿ...» (էջ 297)

ՏԱՐԲԵՐԱԿ

Մի տխուր թռչնակ՝ թևերը բեկ-բեկ,
Երգում է տրտում, արտասունք թափում
Իմ ավեր սրտում գիշեր ու ցերեկ.

Նա սուգն է ողբում սուրբ ընկերներիս,
Հայրենյաց սիրուն որ ընկան, մեռան,
Վառ երազների կորուստն է լալիս.
Վառ երազների վեհ ազատության.

Եվ լալիս է նա անհույս, դառնագին,
Ա՜խ, ոչ մի գարուն էլ չկա, չի գա՝
Մխիթարելու տխուր թռչնակին...

«ԱՅՍ ՀՈՎԸ ՄԵՂՄԻԿ...» (էջ 302)

1 *Այս հովը մեղմիկ, (քնքուշ)*

«ԴՈՒՐՍԸ ԳԻՇԵՐ Է ԱՇՆԱՆ...» (էջ 306)

1-ին տողի վերևում՝

[Դուրսը գիշեր է հիմա,]

ՎԱՀԱՆ ՏԵՐՑԱՆԻ ԱՆՈՒՇ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 308)

3 *Առաջին էջը նոր էի [գրած,] սկսած,*

ՏԱՐԲԵՐԱԿ

Մի գնացող կար դեպի Մոսկվա,
Ասի, քեզ մի նամակ գրեմ, տանի,
Առաջին էջը նոր էի գրել, երբ
Հյուրեր եկան, և խանգարվեցա:
Սակայն առավոտ թերթը ձեռքս առած՝
Կարդացի սոսկումով քո մահվան բոթը...
Դու մեռա՞ծ միթե, մի՞թե դու մեռած.
Ո՞վ հանգցրեց հանճարդ շքեղ.
Ո՞վ մարեց հոգուդ աստղերն անհամար
Անմահ գեղեցիկի տիրող սիրահար:
Դու իմ սիրած ընկեր, իմ հոգու ընկեր,
Առաջին օրից ես սիրեցի քեզ.-
Ես գիտեմ, որ դու էլ սիրեցիր ինձ.
Գիրքդ քո խորունկ, խորազգաց հոգու
Ցոլքերը տխուր, սեղանի վրա է միշտ բաց դրած,
Կարդում եմ միշտ, և քո շքեղ տողերի
մարգարտի շարի միջով
Ձայնդ եմ լսում, համբուրում եմ քեզ.
Պատկերդ է կանգնում աչքերիս առաջ.
Ա՜խ, ինչքա՜ն բաներ ուն[եմ]ի քեզ ասելու,
Վաղուց չէ՞ որ իրար չ[էի]ենք տեսած,
Ասա, երբ ես դու ինձ մոտ գալու.
Մի՞թե հավիտյան էլ չենք տեսնվելու.
Օ՜, կյանք՝ հավիտյան լալու...

«ԲԱԽՏՆ ԻՆՁ ԱՆՁԱՏԵՑ ՀԱՑՐԵՆԻ ԵՐԿՐԻՑ....» (էջ 310)

2-րդ և 3-րդ տողերի միջև՝

[Երբ ամեն անգամ բախտն անագորույն
Հարվածում էր ինձ - քեզ էր հարվածում,]
[Քույր իմ սիրելի...]

«ԷՍ ԱՇԽԱՐՔԸ ԷՐԿՈՒ ՕՐ Է...» (էջ 311)

3 *Կարմիրդ անցավ, ով մարդ,*

«ԿԵՍ ԳԻՇԵՐ Է... ԿԱՐԿՈՒՏԻ ՊԵՍ...» (էջ 312)

1 *Կես գիշեր է... ջրվեժի պես*
9 *Մեր տանջված ծեր ընկերը*
10 *Մեր ալեզարդ երկիրը -*
17 *Ոտք էր դրել լուռ ու <մունջ>:*

«ՍԵՐԵՐՍ ՔՆՔՈՒՇ...» (էջ 315)

ՏԱՐԲԵՐԱԿ

* * *

[Դու վարդամա<տ>]
Վարդամատ, ոսկի
Մանկության արև,
Դու նորեն ծագի՛,
Իմ գլխի վերև:
Սերերս քնքուշ
Դարձեր են ցավեր.
Երազներս անուշ՝
Խուսափուվ ստվեր:
Հոգիս դառնացավ
Կյանքից իմ զզված,

Սիրտս՝ վերք ու ցավ,
Սիրտս՝ գազազված:
Ատում եմ, ատում
Աշխարհը բոլոր
Ու անապատում
Փնտրում եմ անդորը:
Ուզում եմ լինիմ
Թունալից իժ-օձ,
Խայթեմ ամենքին
Ու բոլոր մարդոց:
Մանկության արև,
Վառիր նոր հույսեր
Իմ գլխի վերև...

1-ին երկու քառատողերի դիմաց՝ լուսանցքում՝
կորով, տագնապ, սարսափ.
գորով, փափագ,
ավյուն, իղձ,
տենչ:

46 ՏԱՐԵԼԻՑԻՍ (էջ 316)

5 *Այն վայրկյանին, երբ ծնվեցի, շողդ ծորեց*
[անհունի] անդունդի մեջ,
6 *[Հասավ] Եվ հասավ ինձ, երբ բոլորեց*
տարիս [4<6>] քառասունը վեց...

«ԱՍԱ՛ ՄԵԶ, ԵՎՐՈՊ, ՈՐԻՐ ԵՍ ՇՏԱՊՈՒՄ...» (էջ 317)

3 *Դու հոշոտեցիր [Մայր] Սուրբ Հայաստանը,*
12-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(ծեռներդ):*

«ՆՍՏԵԼ ԵՄ ՄԵՆԱԿ ԾՈՎԻ ԲԵՐԱՆԸ...» (էջ 318)

5-րդ տողի *բյուր* բառի վերևում՝ *շատ:*

8 Որ ինձ ինձանից (իմ եսից) հեռացնում է ահա:

Բանաստեղծության տակ՝ էջի ազատ մասում՝

Ծովն իր հին երգն է երգում,
Որ երգել է հազար դարեր:

«ԻՄ ՀԱԶԱՐ ՍԻՐԱԾ ՀԱՅՐԵՆԻ ԴԱՇՏՈՒՄ...» (էջ 319)

5 Եվ այս ճպուռը, որ գիշերն անքուն
6 Կխոսի [անք<ուն>] անդուլ.
14 Երգը հնչեցնե նոր ազգերի [նմ<ան>] համար,

«ԵՍ ԼՈՒՌ ԳԻՇԵՐԻՆ ԱՆՀՈՒՅՍ ԼԱՅԵՑԻ...» (էջ 321)

5 Աստղե՛ր, ամպի պես օրերս [անցան]
[թոչնան] անցան

6-րդ տողից հետո՝

[Նրան փնտրելով՝ աչերս հանգան -]
15 [Խորհուր<դն>] Վերքն է տվել մեզ
բանականության
21 Նրա արժեքի, նրա [արժեքի] էության

25-րդ տողից հետո՝

[Աշխարհը չարժե]

28-րդ տողից հետո՝

[Չարժե [նրան] նրա մի օրվան...]

«ՀՐԵՇ ԲՌՆԱԿԱԼ, ԹԱԹԵՐԴ ՁԱՁԻՐ...» (էջ 323)

2 Վաղ ես ներկեր [հայ<ի>] արյունով հայի,
11 Նորից [խփեց<իր>] խրեցիր թաթերդ արնոտ
20 Ո՞ւր պիտի [թաղես] թաքցնես թաթերդ արնոտ:

«ՏԱՐԻՆԵՐ ՀԵՏՈ ԴԱՐՁԱ ՀԱՅՐԵՆԻՔ...» (էջ 324)

8-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(լերկ):*

17-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *(արդեն և հիմա):*

18-րդ տողի *սիրելիներս* բառի վրա * է դրված և տողատակում գրված. *«Քույրեր, եղբայրներ, հարազատներս և բոլորը չկան»:*

20-րդ տողի *բեկորներին* բառի վրա * է դրված և տողատակում գրված. «փլատակներին»:

ՄՈՐՍ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԱՇՆԱՆԸ (էջ 325)

7-րդ տողի փոխարեն՝

Ու մի դեղին, դեղին <...>

«ՊԱՑՔԱՐ, ՄԱՔԱՌՈՒՄ ԴԱԺԱՆ, ԱՆՀԱՇՏ...» (էջ 326)

1 Պայքար, [կռիվ], մաքառում՝ դաժան, անհաշտ,

Այս տողի *դաժան* բառի վերևում՝ *հավերժ:*

3-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *հավերժ:*

8 Գոյության կռիվ՝ [մահվան համար կյանքի]
ողջ տիեզերքում -
10 Իմ կյանքի (ապրած) օրերից մթին, թանձր
դիզվար իմ հոգում:
16 [Ի՞նչ] Ո՞ւր փախչեմ տիեզերքից, ամենուր
տիեզերք,
17 Ո՞ւր փախչեմ ինձնից - [իմ] ամենուր իմ
հոգին:

«ԻՄ ԿՑԱՆՔԸ ԼՈՒՌ ԱՆՑԱՎ...» (էջ 327)

4 Մի [օրվա] ժամվա պես անցավ:

«Ա՛Խ, ՄԵՐ ԿՑԱՆՔԸ ՈՒՆԱՑՆ ԽԱՂ Է ՈՒ ԵՐԱԶ....» (էջ 330)

4-րդ տողի *մեռնող* բառի տակ՝ *մեռել:*

«ՄԱՀՍ ՄՈՏԻԿ Է, ՄՈՏ Է ԱՑՆՔԱՆ...» (էջ 332)

3-րդ տողից հետո՝

[Որ գիշեր ժամին
Բերում է քամին]
[Որ լսում եմ միշտ-]
Ինքնագրի վերևում՝ նույն թերթիկի վրա՝
Գիշերվա ժամին
Բերում է քամին
Հեռու անտառից
Սոսափյունները
Կաղնիների:
Այս հատվածի դիմաց՝ լուսանցքում՝ *տեմչադալուկ:*

«ՄԱՀՍ ԱՌԱՋՍ Է ԿԱՆԳՆԱԾ...» (էջ 333)

15 *Եվ [ծով] լեռները դաշտ պիտի դառնան,*

«ՎԵՐՋԻՆ ՁԱՅ, ՎԵՐՋԻՆ ՁԱՅ...» (էջ 335)

4 *Վերջին չայ, վերջին չայ,*
6ա *Լցված սիրով ու չայով,*
բ *Լցված սիրող ձեռներով,*
8-րդ տողից հետո՝
[Շրթունքներդ քաղցրաբույր,
Որ խնայում ես ինձ[նից]են,
Գիտեմ, որդերը մի օր
Անհագաբար պիտ կրծեն:]
10 *Նստած էինք [պե<չկի>] փեչքի մոտ,*
15 *Համեղ չայն էի խմում,*
17 *Անցավ սերը բախտավոր,*
18-րդ տողից հետո՝
[Եվ այն չայնիկը մի օր]

«ԽՈՐՏԱԿՎԱԾ ԵՆ ԻՄ ԲԵՐԿՐՈՒԹՅԱՆ...» (էջ 339)

4-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *Իմ շուրջ:*
9 *Հետ եմ նայում չփոթ մտքով*

10 *Մեռած սրտեր, կոտրած թևեր*
12 *Միայն մահի, մահի ստվեր...*

ԱՌԱՋԻՆ ՔԱՌԱՏՈՂԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Խորտակված են երջանկության
Սանդուխտները արդեն վաղուց.
Մահն է հավերժ, կյանքը՝ վայրկյան.
Աշխարհը ողջ՝ ունայն զրույց:

«ՄԻ ՈՍԿԵ ԹՌՉՈՒՆ ԱՆՑԱՎ ԵՐԳԵԼՈՎ...» (էջ 341)

6 *[Սրտիս մեջ վառեց] չնորհեց հոգուս....*

«ԿՈՒՉԵՒ ՀԻՄԱ ԼԻՆԵՒ ՀԵՌՈՒ...» (էջ 345)

10 *Սառնորակ [աղբյուրի] [առվակի] գետակի*
ափին:
12 *Եվ ցողը [իջներ] պարուրեր ինձ,*
12-րդ տողից հետո՝
[Թռչունները երգեն երազիս մեջ,]
13 *Երբ գիշերը գար, աստղերը*
13-րդ տողից հետո՝
[Աստղերի մեջ նիրհ մտնեի,
Եվ կարկաչը
Հավքերդ երազ հյուսեին,
Աստղերի մեջ օրորվեի,]
14-րդ տողից հետո՝
[Եվ հովն ու
Եվ հովի չչունջն ու
Առվի կարկաչը] կարկաչը
[Տանեին]
Այս տողերի փոխարեն՝ լուսանցքում՝
Հովի չչունջը և աստղերը տանեին մտքերս,
Հոգուս <...>

«ԶԳԻՏԵՄ, ԻՆՉՊԵ՞Ս ՏԱՐԻՆԵՐՆ ԱՆՑԱՆ...» (էջ 347)
ՏԱՐԲԵՐԱԿ

Օրերս անցան թեև
Ծուխի նման ունայն,
Բայց նրանց հետքը ծանր մի բեռի պես
Կոտրեց իմ մեջքը:

Նստել եմ հիմա տխուր՝
Օջախիս առաջ,
Կտրում եմ նորից
Իմ անցած ուղին:
(իմ ուղին անցած):
Հույսեր միայն սին, երազ ու տենչեր,
Ոսկի գավաթներ կյանքի լիությամբ,
Առանց որ շրթներս դիպչեր,

Այս տողի *շրթներս դիպչեր* բառերի վերևում՝ *դիպչելու շրթներիս:*

Նրանց շրթին -
Անցան անվերադարձ:
Դատարկ մի գավաթ մնաց իմ
առաջ,
Հանգչում է հուրը
Իմ օջախիս մեջ,
Եվ մութն է դիզվում
Իմ ցուրտ սենյակում և իմ
Հեգ սրտում:

«ՍՐՏՈՒՄՍ ՍԻՐՈ...» (էջ 356)

4 [Այրում մր<կում>] Այրում ու մրկում:

«ՀՈԳՆԱԾ ՔԱՅԼԵՐՈՎ ՄՏԵԼ ԵՄ ԱՆՏԱՌ...» (էջ 358)

1-ին տողի վերևում՝

[Մթին անտառում նստել եմ մենակ
Ու միտք եմ անում.]

3-4-րդ տողերի միջև՝

[Ապրած իմ կյանքից
Մնաց միմիայն, իբրև դիրտ,
Զղջում, դառնություն և թախիծ
Եվ ձանձրույթ-]

«ԵՎ Ո՞Վ ԿՈՒՏԱ ԻՆՁ ԱՐՑՈՒՆՔ ԳԵՏԵՐՈՎ....» (էջ 359)

8-րդ տողի փոխարեն՝

[Եվ ո՞վ կուտա ինձ արցունք գետերով:]
10 [Դու] Հարևան, օտար ազգերի նման

«ՈՎ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՑԱՆ...» (էջ 365)

11-12-րդ տողերի միջև՝

Նրա [նորա] հետքերը պիղծ

ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԴՈՒՄԸ (էջ 366)

Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *սուրը, զենքը, մահը, գործը:*
4-րդ և 5-րդ տողերի միջև՝

Որ հավատարիմ մնանք մեր ուխտին,
Զարկենք թշնամուն, քշենք մեր երկրից:
Տե՛ս, քաջ Դավիթ Բեկ, գալիս են վառված
Կտրիճներ խումբ-խումբ մեր սեգ սարերից:
11ա Օրհնիր մեր երթ<ը>, ով սուրբ նահատակ,

Այս տողի *երթ<ը>* բառի վերևում՝ *սուրը:*

11բ Տար մեզ կռվի դաշտ, տար մեզ կռվի դաշտ,
12 Պատրաստ ենք մեռնել ի սեր հայրենյաց:

«ԻՐԵՐԸ ԲՈԼՈՐ ՄԵԿԸ ՄՅՈՒՍԻ ԴԵՄ...» (էջ 367)

13 Եվ չունեն փրկություն, փրկություն բնավ:

ՀԻՄՆ (էջ 368)

12-րդ տողի *դարավոր* բառի վերևում՝ *երազանքներին:*

ՄԵՐ ՍՊԱՆՎԱԾ ԴԻՑՈՒՀԻՆ (էջ 369)
Ա ՏԱՐԲԵՐԱԿ

Հայոց սեգ լեռների
Կանաչ գրկում-
Սպանեցին, հոշոտեցին
Իմ ոսկեհեր, կապուտաչյա,
Աստղաժպիտ, լուսակարկաչ
Հոգեհատոր իմ նազելուն,
Իմ գեղուհուն...
Էլ չեմ լսելու, ավա՜ղ, ավա՜ղ,
Քաղցր ձայնը, անուշ շունչը
Իմ լուսավոր գեղուհու,
Էլ չեմ տեսնելու
Աստղաժպիտ, կապուտաչյա
Իմ նազելուն
Սեգ լեռների կանաչ (զմրուխտ) գրկում...
Երբ ես մի օր գնամ այցի
Գերեզմանին իմ նազելու,
Խոր վերքի պես՝ հավերժ անբույժ,
Հայոց սեգ լեռների զմրուխտ գրկում,
Պիտ կուրանան աչքերը իմ,
Երբ որ տեսնեմ քար ու ծերպերն,
Ուր մորթեցին, հոշոտեցին իմ նազելուն -
Ավա՜ղ, ավա՜ղ, վա՜յ ինձ, վա՜յ ինձ...

Բ ՏԱՐԲԵՐԱԿ
ՍԵՎԱՆ

22 օգոստ<ոսի>. 1937

Ջրհեղեղից մնացած սրբազան ջրեր,
Հազար, հազար տարիներ
Արևն ու աստղերը ցոլացել են քո
[ալիք<ների>] հայելու մեջ,
Նոր աստղեր են տեսել իրենց պատկերը
Քո հայելու մեջ.
Ալպերից և Հիմալայից եկած ամպերը
Որոտացել են քո ալիքների հետ,
Հրաբուխներ [հանգչել] մարել են քո ջրերի մեջ,
Դու լեռների հսկա բաժակի մեջ
Անհուն անցյալից ապրող կապույտ երազ,
Ես՝ մի վաղանցուկ հյուրե,
Նստել եմ քո խոժոռ ժայռին,
Նայում եմ քեզ և մտորում.-
Ալիքներդ [փշրվում են] դողում են ափերիդ վրա,
Եվ մրմնջում ես և շշնջում:
Լսում եմ քո ձայնդ [և հասկանում եմ քո լեզուն:]
Եվ ուզում եմ հասկանալ քո զրույցը:
Նախամարդը կանգնել է զարմացած,
Կանգնել է վախեցած, երկյուղած
Քո ափին՝ քո՛ շառաչին ունկնդիր:
Խարույկ է վառել քո ափին
Եվ ձուկ է բռնել ու խորովել:
Այստեղ խորհրդավոր մի ժողովուրդ՝
Խուռ անունով, քո ժայռերի մեջ
Սանդուխներ է փորել և բերդեր շինել,
Նայել է քեզ և ասել է. «Իմս ես,
Իմ չքնա՛ղ ծովակ, իմ հայրենիք»:
Արշավել են դեպի քո ափերը

Հզոր խալդեր, վտարել, կոտորել են խուռերին
Եվ քո լազուր ջրերը ներկել արյունով:
Շինել են քաղաքներ ու բուրգեր
Եվ իրենց հաղթանակները քանդակել են
Քո կարծր, մռայլ ապառաժների վրա:
Դարեր, դարեր ալիքները փրփրել են
Նրա տակ, չեն կարողացել ջնջել նրան:
Բայց [<ե>կան] եկել են արմենները քաջ,
Խորտակել են խալդերին, ջնջել են նրանց,
Արմենները քո կղզու վրա
Շինել են ատրուշան և ներբողել են
Արև-Աստծուն և ատրուշանի
ծուխը ցրել են քո ալիքների վրա...
Ահեղ կռիվներ են պայթել քո ափերին,
Հաղթական գոչերը լռեցրել են քո ալիքների շառաչը,
և արմենները երգել են.
«Իմս ես դու, իմ չքնաղ ծովակ»:

Հրով ու սրով զինված՝ արշավել են արաբներ և փշրվել են քո ժայռերի վրա և չքացել: Խուժել են [մոնղոլ] թուրք ու մոնղոլ՝ վայրագ ու ժանտ, գազանների ոհմակ: Եկել են, կործանել են քո քաղաքներն ու ավանները, ջնջել են քո ափերն ու լեռները զարդարող սոճիներն ու կաղնիները, սոսիները, ամայի են դարձրել քո դարաստանները:

Բայց վերստին մխացել են մեր ակութները, և մեր հոտերը մակաղել են քո վճիտ ջրերի եզրին:

Նորից մեր սրինգները հնչել են քո մրմունջի հետ, և մեր աղջիկները պարել են քո մարգերի վրա...

Ինչքա՜ն սիրտ է բաբախել քո հիացքով, ինչքա՜ն սերեր են ծաղկել քո ափերին, և ինչքա՜ն կյանքեր [են] է հնձել դաժան թշնամին...

Քո կախարդական կղզու վրա կանգնել են հավատով ու հույսով վանքեր՝ համեստ, խոնարհ գմբեթներով, վսեմ ոճով, մթին

ու մռայլ՝ ներքուստ և արտաքուստ խորհրդով, իմաստով լցված, ուր տառապած հայը աղոթել է և հուսացել, հավատացել է և ապրել:

Նրա մեղեդիները՝ հոգու խորքից բխած, մաքուր ու ջինջ, ինչպես [քո ջրերը] քո ալիքները:

Ո՛վ ջրհեղեղից մնացած սուրբ ջրեր, սլացել են<ք> վեր, անհունի մեջ...

Ժողովուրդը մեր լացել է [քո կղզյակ<ի>] քո վանքերի մեջ, հառաչել իր բախտը, զինվել է հոգով իր վայրագ թշնամիների դեմ, կռվել է և ապրել:

Մռայլ, համեստ վանքեր՝ կքած հայության վշտի ծանրության տակ:

Դու զինել ես ժողովուրդը և ապրեցրել ես...

Հիմա հայը հպարտ կանգնած է քո ափին և ասում է. «Դու իմն ես, ով չքնաղ ծովակ, իմ հայրենիք»:-

Երգում է քո ափին, աշխատում է, վարում է իր արտը, ջրում է իր հոտը, կառուցում է նոր առուներ, [նոր] տնկում է նոր անտառներ, ամրացնում է իր նոր կյանքը...

Եվ խորհում է քեզ օգտագործելու:- Ի՞նչ է սպասում քեզ ապագայում, ի՞նչ է բերելու քեզ քո նոր որդին՝ «մա՞հ, թե՞ հավերժություն», ով ջրհեղեղից մնացած սրբազան ջրեր...

Գ. ՏԱՐԲԵՐԱԿ
ՍԵՎԱՆԻ ԼԻՃԸ

Երկնքի պատկերը ցոլում է Սևանի մեջ, Սևանը լույս է տալիս մեր երկնքին:

Եթե ցամաքի Սևանը, երկնքի պատկերը չենք ունենա մեր երկրում, և շատ խիստ կմռայլվի ու կխավարի, կմթնի մեր երկիրը:

Գնալ, սուզվել Սևանի մեջ, մեռնել նրա հետ միասին:

«ՄԻՏՔՍ ԹԵԵՎ ՇԱՏ ԹԱՓԱՌԵՑ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ...»
(էջ 370)

3 Իմ մտքի մեջ շատ արևներ են շողշողում,

«ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ, ԱՆՀՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՍԱՀՄԱՆ...»
(էջ 371)

4 Ուր [հանգչում են] մեռնում են Ծիր
կաթիններ անհամար.

ՏԱՐԲԵՐԱԿ

Հավերժություն [անվախճան],
Անհունություն անսահման.
Տիեզերքներ, տիեզերքներ անհամար.
[Ուր ծնվում են Ծիր կաթիններ անհամար.
Ծիր կաթիններ՝ արևներով անհամար].
Ուր ծնվում են Ծիր կաթիններ անհամար,
Ուր հանգում են Ծիր կաթիններ անհամար,
[Նորից ծնվում, նորից հանգչում]
[Ծիր կաթիններ] Անդուլ ծնվող, անդուլ մեռնող
Ծիր կաթիններ անհամար,
Ողջը ունայն, ողջը անմիտ, անիմաստ,
Ոչնչություն՝ աննպատակ, անխորհուրդ...

«ԵՐԲ ԴԵՌ ՉԷԻ ԵՍ ՏԵՍԵԼ ՔԵԶ...» (էջ 375)
Ա ՏԱՐԲԵՐԱԿ

Երբ տեսա քեզ,
Պայծառ էի գարունքվա պես:
Եվ գնացի հեռու-հեռուն
Հողմամռունչ անտառներում
Եվ սրտաբուխ լաց եղա ես,

Որ տեսա քեզ....

Բ ՏԱՐԲԵՐԱԿ

Երբ տեսա քեզ,
Պայծառ էի
Գարունքվա պես:
Եվ գնացի
Հեռու-հեռուն
Հողմաշառաչ
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *հողմամռունչ:*
Անտառներում
Լալահառաչ
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *և սրտառուչ:*
[Եվ լաց] Ողբացի ես
Այս տողի դիմաց՝ լուսանցքում՝ *լաց եղա ես:*
Որ տեսա քեզ....

Գ ՏԱՐԲԵՐԱԿ

Ես երբ քեզ տեսա,
Գարունքվա պես պայծառ էի ես,
Ու երբ քեզ տեսա,
Հոգիս մռայլվեց.

Գնացի հեռու, ավելի հեռու,
Ուր հողմն է շաչում ավազների վրա
Եվ մենակ, մենակ,
Ու լաց եղա հողմի մեջ,
Լաց եղա ես, որ քեզ տեսա...

Դ ՏԱՐԲԵՐԱԿ

Երբ քեզ տեսա,

Նժույգդ նստած, [անցար]
Անցնում էիր քաջերիդ գլուխն անցած-
Սիրտս հաղթված ընկավ
Այս տողի *հաղթված* բառի վերևում՝ *վառված:*
Նժույգիդ սմբակների տակ:

Բայց սերս ծածկեցի
Կուռ վահանի տակ-
Եվ [ժողովրդի] քաջերիդ մեջ
Ես զինվոր [եղած] եղա-
Քաջերի<ց>դ մեկը...

Երբ աչքդ դիտում էր ինձ,
Կրակ էի դառնում կռվի պահին-
Անվախ, անվեհեր...
Բայց մի՞թե չէիր տեսնում
Իմ գերի սիրտը իմ հայացքի մեջ-
Ա՛խ, ուզում էի դեն ձգել
Կուռ վահանը, բանալ կուրծքս,
Մազերս փռել ձիուդ ոտների տակ-
Եվ բախտավոր մեռնել,
Եվ պարտված ընկնել-
Քո գրկում, քո նժույգիդ ոտների տակ...

«ՕՐԵՐՍ ՇՔԵՂ ԿՈՐԱՆ ՀԱՎԻՏՅԱՆ....» (էջ 377)

1-ին տողի վերևում՝
Դու ժամանակից ավելի հզոր,
Քո կախարդ գրկում միայն մի վայրկյան.
(Ժամանակներս կորած Հավիտյան:)
1-ին տողի *Օրերս շքեղ* բառերի վերևում՝ *Գանձերս բոլոր:*
2 *Բայց ժամանակից ավելի հզոր,*
3 *Մի վայրկյանը լոկ քո կախարդ գրկում*
4-րդ տողի *կորուստս* բառի տակ՝ *կորուստը, գանձերս բոլոր:*

«ԿՈՒԶԵԻ ԼԻՆԵՐ ԿՅԱՆՔԸ ՀԱՎԻՏՅԱՆ...» (էջ 381)

1 *Կուզեմ լիներ կյանքը հավիտյան*
3 *Կուզեմ լիներ սերը անվախճան,*

«ՄԵՆՔ ՏԻԵԶԵՐՔՈՒՄ, ՏԻԵԶԵՐՔԻ ԶԱՓ...» (էջ 382)

Ա ՏԱՐԲԵՐԱԿ

Տիեզերքի մեջ անհուն, անսահման
Մի գանձ ունենք մենք [միակ] հատուկ սեփական
[Մի գանձ, բայց անբավ,
Սակայն բյուր ավաղ,]
Մի գանձ թանկագին անկշիռ, անբավ,
Բայց որը, սակայն, մերը չէ բնավ.
Մահինն է դաժան:
21/V 1956 թ.
Երևան

Բ ՏԱՐԲԵՐԱԿ

Այս մեծ աշխարհում՝ հարուստ ու անբավ
Մի գանձ ունենք մենք [այնքան թանկագին]
հատուկ սեփական,
Այնքան թանկագին, բայց նա, բյուր ավաղ,
Մերը չէ բնավ,-
Մահինն է դաժան:

«ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ՄԱՀՎԱՆ ԴԺԽԵՄ...» (էջ 383)

1 *Մենք ապրում ենք մահի դժխեմ*
մահի բառի *-ի* բաղադրիչի վերևում՝ *-վան:*
5 *Սակայն կյանքը չգիտենք [մենք որ] որ,*

6 [Որ] Հետաձգված մահ է միայն:

«ՀՈԳԻՍ ԳԵՐՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ...» (էջ 392)

1-ին տողի դիմաց՝ լուսանցքում՝ *սիրահոժար, սիրակամ, բանտված:*

2-րդ տողի դիմաց՝ լուսանցքում՝ *զինավառ:*

«ՄԻ ՔԻՉ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՁ ԷԼ ԼՍԵՑԵՔ...» (էջ 392)

3-րդ տողի *բանը* բառի տակ՝ *դարդերը:*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՎԵՐ ՐԱՖՖՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 7)

Գրել է, ըստ ինքնագրի, «1888, 29 ապրիլի, Ղազարապատ»: Ինչպես հայտնի է, Ռաֆֆին վախճանվել է 1888 թ. ապրիլի 25-ին, թաղումը տեղի է ունեցել ապրիլի 29-ին. այնպես որ բանաստեղծությունը գրված է մեծ գրողի թաղման օրը: Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Տպագրվել է հետմահու՝ Ալբերտ Մուշեղյանի «Ավետիք Իսահակյանի պատանեկան բանաստեղծությունները» հոդվածի տեքստում (ՍԳ, 1980, N6, էջ 116-117), այնուհետև՝ «Գրական թերթ», 1982, թիվ 35, օգոստոսի 27 (հրապարակումը՝ Եղիշե Պետրոսյանի), Ամ, 172, ԱԻԳԿ, 82: Իսահակյանի Երկերի ժողովածուներում բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվել է Ավիկ Իսահակյանի կազմած և ծանոթագրած «Հայդուկի երգեր» գրքում, Երևան, «Արևիկ» հրատ., 1990, էջ 112:

Իսահակյանի առաջին բանաստեղծական քայլերից է՝ գրված տակավին 13 տարեկան հասակում: Ա. Մուշեղյանը և Ե. Պետրոսյանը որպես հիմք են ընդունել Ավ. Իսահակյանի երևանյան տուն-թանգարանում պահվող բանաստեղծության ընագիրը (ֆոնդային N47): ԳԱԹ, ԱԻՖ, 1-III ֆոնդային համարի տակ պահվում են Ավ. Իսահակյանի վաղ շրջանի բանաստեղծությունների 1889–1892 թթ. ընագրերի երկու տետրի լուսապատճենները. ներկա հատորի մի շարք անտիպ բանաստեղծություններ բերվում են հիշյալ լուսապատճեններից: Բնագրերը պահպանվում են 1962 թ. Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի տնօրեն աշխատած Նվարդ Բաղդասարյանի որդու՝ Գուրգեն Գաղաչիկի արխիվում: «Նվեր Ռաֆֆու հիշատակին» բանաստեղծության ինքնագրի պատճենը ևս պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 47: Տպագրվում է ՀԵ-ից:

Հայրիր (Հայրել)– (կրն.) վեր հառնել, հարություն առնել, հայտնվել:

«ՓԼԱՏԱԿԱՑ ՄԵՋ ԱՑՆ ՈՐՎ Է ՆՍՏԱԾ...» (էջ 8, 395)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Հառիճում. <18>89. 23 մայիսի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 46: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրի լուսանպատճենից: Այսուհետև ծանոթագրություններում բերում ենք համառոտված՝ ինքնագրից:

ՀԱՑՈՒՀՎՈ ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳԸ (էջ 9,395)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիածին. 1889. 28 հոկտեմ<բերի>»: Վերնագրի վերևում գրված է՝ «(Նմանողություն)»: Իսահակյանի Երկերի ժողովածուների մեջ առաջին անգամ տպագրվել է Ավիկ Իսահակյանի կազմած և ծանոթագրած «Հայդուկի երգեր» գրքում (էջ 220): Պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 47-50: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՈՍԿԻ ԱՆՈՒՐՋՔ... ՇԻՐՄԻ ՎԵՐԱ...» (էջ 12, 395)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս.Էջմիածին. <18>89 թ. 21 դեկտեմ<բերի>»: Էջի առաջին կեսին գրի է առնված բանաստեղծության մի տարբերակ: Գրության թվականը նշված չէ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 3: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԵՐԿՈՒ ՀԱՄԲՈՒՅՐ (էջ 13, 395)

Գրել է, ըստ ինքնագրի, «1889. դեկտեմբերի 23, Ս.Էջմիածին»: Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Առաջին անգամ տպագրվել է՝ ՍԳ, 1980, N 6, էջ 117 (Ա. Մուշեղյանի «Ավետիք Իսահակյանի պատանեկան բանաստեղծությունները» հոդվածի տեքստում), այնուհետև՝ ԱՄ, 86: Իսահակյանի Երկերի ժողովածուներում առաջին անգամ «Հայդուկի երգեր» գրքում (էջ 220): Իսահակյանը «Հովհաննես Հովհաննիսյան» հուշագրությունում թողել է վկայություն իր անդրանիկ բանաստեղծական փորձերի մասին. «Մի օր, 1890 թվի գարնանը... սրտի ուժգին բաբախումով մոտեցա նրան և տվի իմ նոր գրած ոտանավորը և խնդրեցի, որ կարդա... Ոտանավորիս խորագիրն էր «Երկու համբույր»: Դասընկերներս հավանել էին, որով ես սիրտ էի առել այն ցույց տալու վարպետիս: Երկու համբույր: Առաջին համբույրը որպես թե իմ սիրած աղջիկն է տալիս ինձ՝ վարդագույն, բոցավառ շրթներով, իսկ երկրորդ համբույրը մահն է տալիս՝ դժգույն, սառը շրթներով: Կարդաց և իրեն ասաց. «Սեր և մահ. բանաստեղծության մշտական նյութը», հետո դարձավ դեպի ինձ. «Իհարկե, այս գրածդ երևակայություն է: Վաղահաս: Գրի՛ր քո զգացած բաների մասին: Բավական սահուն ես գրել... Երևում է՝ վաղուց ես սկսել գրել, վարժ ես... Վանկեր, հանգեր տեղին են, վատ չեն...»:

– Այո՛, վաղուց եմ գրում, մի քանի տարի կա,- պատասխանեցի ես:

– Շատ լավ, մեկ-մեկ ինձ ցույց տուր գրածներդ: Շարունակիր գրել, բայց շատ կարդա, զարգացիր և հայերեն լավ սովորիր» (V, 46):

Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 22: Տպագրվում է ՀԵ-ից:

ՀՈՒՅՍ (էջ 14)

(ՆՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիածին. <18>90. 14 հունվար»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 20: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ (էջ 15, 396)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիածին. <18>90. 21 մայիսի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 11-14: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՀՐԱՎԵՐ (էջ 18, 396)

ՆՎԵՐ...

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>90. 5 հունիս. Վաղարշապատ»: Տետրի այս և հետագա մի շարք բանաստեղծությունների վերնագրի «Նվեր» բառից հետո եղած գրառումն այնպես է ջնջված, որ հնարավոր չէ վերականգնել, թե ում են հղված բանաստեղծությունները, ուստի ջնջված բառերի փոխարեն այսուհետև կդրվեն կախման կետեր: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 20-21: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՀՈՒՇԻԿ (էջ 19)

ՆՎԵՐ...

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Կումայրի. <18>90. 19 հունիսի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 8: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՎԵՐ... («ՊԱՐԳԵՎԻ՛Ր ԻՆՁ, ՀԱ՛ՅՐ ԱՊՈԼԼՈՆ...») (էջ 20, 396)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Կարս. <18>90. 14 հուլիսի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 10: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՎԵՐ... («ԵՎ ՊՈՒՐԱԿՈՒՄ ԵՐԵԿ ՆՍՏԱԾ...») (էջ 21)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Արգինա. <18>90. 18 հուլիս»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 7: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԹՈ՛Ղ, ՀԱՎԵՐԺԱՀԱՐՍ ԻՄ ԱՆՄԵԿԻՆ...» (էջ 22)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Աղեքսանդրապ<ոլ>. <18>90. 23 օգոստոս»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 23: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԱՆՈՒՐՋ (էջ 23, 396)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «12 սեպտեմ<բերի>. <18>90. Ս. Էջմի<ածին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 72-79: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

Տիո *– (հնց.) ժամանակ:*

ԱՌԱՋԻՆ ՎԻՇՏԸ (էջ 31)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1890. 21 սեպտեմբերի. Ս. Էջմիածնում»: Առաջին անգամ տպագրվել է ՀՀ, 2000, հոկտեմբերի 31 (հրապարակումը՝ Մ. Զաքարյանի):

Այս, ինչպես նաև մի շարք այլ բանաստեղծություններ գրի են առնված 1892 թ. տետրում՝ ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ-ում, որի առաջին էջին բանաստեղծի ձեռքով նշված է. «Ավ. Իսահակյան. Բանաստեղծություններ. Տետր Ա»: Նույն էջին կա բնաբան՝ «Զար մարդիկ երգ չունին». Շիլլեր», էջի ներքևի ձախ անկյունում թվագրված է. «1892. 15 մայիսի. Աղեքսանդրոպոլ»: ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 19-ում գրի է առնված այս բանաստեղծության մեկ այլ բնագիր: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-II, էջ 8: Տպագրվում է ինքնագրից:

ՃԳՆԱԺԱՄԻ ՀՐԱԺԵՇՏ (էջ 32, 397)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիածին. <18>90. 23 սեպտեմբ<երի>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 8-9: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

Ավաղիկ *(ավաղուկ, ավաղելի) – ողբալի, վշտալի:*

«ԱՇՈՒՆԸ ԵԿԱՎ... ՄԵՐԿԱՑԱՎ ԱՆՏԱՌ...» (էջ 33)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիած<ին>. 26 սեպտեմբ<երի>. <18>90»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 25-26: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՊԱՏՌԵՑ ԵՐԿՐԻ ԿՈՒՐԾՔԸ ԱՌՈՒՑԳ...» (էջ 34, 397)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1890. 4 հոկտեմբեր. Էջմիածին»: Առաջին անգամ տպագրվել է Ալբերտ Մուշեղյանի մենագրությունում (էջ 89), իսկ առաջին տարբերակը՝ նույն տեղում, 89-90: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 16, իսկ ԱԻՖ, 1-IIբ, 23-24-ում գրառված է երկու տարբերակ (Ա և Բ): Տպագրվում է ԱՄ-ից:

ՀՈՎՎՈՒՀԻՆ (էջ 35)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Էջմիածին. <18>90. 6 հոկտեմբ<երի>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 17-18: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՐԲԵՔ ԵՐԳՋԻՍ ՁԵՆ ԳՐԱՎՈՒՄ...» (էջ 37)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիածին. <18>90. 7 հոկտեմ<բերի>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 6: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՀ, ՀՈ՛ՒՐ, ՓԱՅԼԱԿ, ՇԱՆԹ ԻՄ ԳԼԽՈՒՆ...» (էջ 38, 398)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիածին. <18>90. 14 հոկտեմ<բերի>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 5: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԻՄ ԸՆԿԵՐ Ե. ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 39, 398)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «27 հոկտեմբեր. <18>90. Ս. Էջմիածին»: Էջ 82-ի լուսանցքում շեղակի գրված է. «Նվեր օր. Զավահիր Դ-յանին»: Բնաբանի աղբյուրը՝ Ժողովողի գիրք. ըստ երևույթին բերված է հիշողությամբ (հմմտ. «Ով մահ, իբրեւ զի դառն է յիշատակ քոյ՝ մարդոյ խաղաղացելոյ յինչս իւր» - Սիրաք. ԽԱ. 1): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 80-82: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ («ԿՈՒԶԵ՞Ս ՏԵՄՆԵԼ ՁԻՆՁ, ԹՌՁՆԱԼԻՑ...») (էջ41, 398)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1890. 3 նոյեմբերի. Էջմիածին»: Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1980, N 6, էջ 115 (Ա. Մուշեղյանի «Ավետիք Իսահակյանի պատանեկան բանաստեղծությունները» հոդվածի տեքստում), այնուհետև՝ ԱԻԳԿ 81՝ մեկ (14-րդ տողի) ճշտմամբ: Ըստ գրականագետ Ա. Մուշեղյանի՝ բանաստեղծությունը «ներշնչված է գուսանական երգերից և հենց կոչվում է «Նմանողություն»: Հարկ է նշել, որ այն գրված է Ալ. Ծատուրյանի «Սոխակին» բանաստեղծության նմանողությամբ (1889 թ. մարտի 20-ին).

Ուզո՞ւմ ես դու, սիրո՛ւն սոխակ,
Տեսնել եղեմ ծաղկավառ,
Շնչել վարդի բույրն անուշակ -
Թռի՛ր դեպի հայ աշխարհ:

ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 24-25-ում գրի է առնված բանաստեղծության մի տարբերակ (Բ ինքնագիր) բնագրային աննշան տարբերություններով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 13: Տպագրվում է ինքնագրից:

ՆՎԵՐ... («ԵՎ ՄԱՆ-ՏԱՇԻ ԵՐԱՆԱՎԵՏ...») (էջ 42, 399)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «Ս. Էջմիածին. <18>90 թ. 9 նոյեմբ<երի>», որի տակ ավելացված է՝ «(Ս. Հա....ին. 12 օգոստ<ոսի>. <18>90)» և (<18>90. 12 օգոստ<ոսի>. Ս. Աստվածածնա տոնին)»: ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 12-ում պահվում է այս բանաստեղծության կարճ տարբերակը (1-20 տողեր)՝ թվագրված «1890. 12 օգոստոսի. Ս. Հաւին»: Առաջին անգամ 1-8 և 13-16-րդ տողերը տպագրվել են ՍԳ, 1980, N 6, էջ 117 (Ա. Մուշեղյանի «Ավետիք Իսահակյանի պատանեկան բանաստեղծությունները» հոդվածի տեքստում), իսկ 1-4-րդ և 13-20-րդ տողերը՝ ԱՄ, 20: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 1-2: Տպագրվում է ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԻՄ ՎԱՌ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՈՍԿԻ ԵՐԱԶՆԵՐ...») (էջ 44, 399)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիածին. <18>90. 9 դեկտեմ<բերի>»: Տետրի այս և հետագա մի շարք բանաստեղծություններ վերնագրված են՝ «Օրագիր - <1 անընթ.> ոճ»: Հիմնական տեքստում իբրև վերնագիր թողնում ենք միայն «Օրագիր...»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 9-10: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՎԵՐ... («ՍԻՐՈՒՑԴ ՍՈՒՐԸ ԱՆԱԳՈՐՈՒՑՆ...») (էջ 45, 399)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիածին. <18>91 թ. 9 փետրվ<արի>»: Էջի երկրորդ կեսին գրի է առնված բանաստեղծության մի տարբերակ՝ առանց թվագրության: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 4: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՎԱՐԴ ՍԻՐՈՒՀՎՈ ՇԻՐՄԻՑ (էջ 46)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիածին. <18>91. 13 փետրվար»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 23-24: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՎԵՐ... («ՎԵՀ, ՎՍԵՄ, ԱԶՆԻՎ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՎ...») (էջ 48, 400)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Էջմիածին. 4 մարտի. <18>91»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 21-22: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՎԵՐ... («ՍԻՐԻՐ ԵՐԳՋԻՍ ԱՆԲԻԾ ՍՐՏՈՎ...») (էջ 54)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Գյումրի. 16 մարտի. <18>91»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 15: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՍ ԳՈՀ ԺՊՏՈՎ ԻՄ ՎԱՂԵՄԻ...» (էջ 49, 400)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Կումայրի. <18>91. 22 մարտի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 26-27: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՇԱՆԹԱՋԻԳ ԱՄՊԵՐ, ԱՄՊԵՐ ՍԵՎԱԹՈՒՑՐ...») (էջ 50)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Գյումրի. 23 մարտի. <18>91»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 27: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՀԵՌՈՒ... (էջ 51, 400)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Գյումրի. <18>91. 28 մարտ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 28: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«Ա՛Խ, ՆԱԶԵԼԻ՛Ս, ԴՈՒ ԶԳԻՏԵՍ...» (էջ 52, 401)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Կումայրի. 30 մարտի. <18>91»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 28-29: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՎԻՇՏՍ ՓՈՒՆՋ Է ԱՐՏԱՍՎԱԼԻՑ...» (էջ 53, 401)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1891. 1 ապրիլի. Աղեքսանդ<ոլ>»: ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 30-31-ում գրի է առնված այս բանաստեղծության մի տարբերակ՝ «Իմ վիշտը» վերնագրով: Բանաստեղծության բնաբանը քաղված է 1870-ական թթ. լայն տարածում ստացած ռուսական ազատասիրական երգերից մեկի՝ Ս.Սինեգուբի «Доля» *բանաստեղծությունից (տե՛ս* **Шилов А. А.**, Руководство по публикации документов XIX в. и начала XX в.*): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 9-10: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:*

«ԵՐԲ ԼԻՆՈՒՄ ԵՄ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ...» (էջ 54)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Գյումրի. <18>91. 4 ապրիլի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 29-30: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՍ ՁՈՒՆԻՄ ԿԱՄՔ, ՁՈՒՆԻՄ ՀԱՎԱՏ....» (էջ 55, 401)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1891. 6 ապրիլի. Աղեքսան<դրապոլ>»: ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 32-ում գրի է առնված այս բանաստեղծության մի տարբերակ՝ թվագրված «Գյումրի. <18>91. 6 ապրիլի»: Առաջին անգամ տպագրել է Ավագ Խաչատրյանը իր «Ավետիք Իսահակյան» գրքում, էջ 311-312: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 15-16: Տպագրվում է ԱԽ II-ից:

ՕՐԱԳԻՐ... («ԼԻ Է ՍԻՐՏՍ ՎՍԵՄ, ՄԱՔՈՒՐ...») (էջ 56, 401)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Կումայրի. 6 ապրիլի. <18>91»: Բնաբանը Ջ. Բայրոնի “Еврейская мелодия” *բանաստեղծության առաջին տողն է՝* “Душа моя мрачна. Скорей, певец, скорей!”՝ *բերված Ցու. Լերմոնտովի թարգմանությամբ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 33: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:*

Բայրոնյան բնաբանը թերևս համահունչ է Իսահակյանի «Հոգիս մըռայլ էր մըրրկի նման...» համանուն բանաստեղծության տողին:

ԵՍ ՈՒՆԵԻ (էջ 57, 402)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Աղեքսան<դրապոլ>. <18>91. 11 ապրիլի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 34: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ... (էջ 58)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Արգինա. <18>91. 16 ապրիլի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 34-35: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒՔ, ՄՈԼԱՐ ԿՑԱՆՔ<Ի> ՀԼՈՒ ՍՏՐՈՒԿՆԵՐ...» (էջ 59, 402)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Գյումրի. <18>91. 24 ապրիլի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 35: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԲԻՐՏ-ԲՌՆԱԿԱԼ ՁՄԵՌՆ ԱՆՑԱՎ...») (էջ 60, 402)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Աղեքս<անդրապոլ>. <18>91. 24 ապրիլի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 36: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՌԱՎՈՏՑԱՆ ՍՏՎԵՐԱՐԿՈՒ...» (էջ 61, 402)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Աղեք<սանդրապոլ>. <18>91. 25 ապրիլի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 37: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԼՈՒՌ, ՄԵՂՄԱՍԱՀ ԵՎ ԿԱՇԿԱՆԴՎԱԾ...» (էջ 62, 402)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Գյումրի. <18>91. 25 ապրիլի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 38: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԽԵՂՃ ՍՈԽԱԿԸ ԱՄԵՆ ԳԻՇԵՐ...» (էջ 63)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Կումայրի. <18>91. 3 մայիս»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 40: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՎԱՌ ԼՈՒՍԻՆԸ ԱՐԾԱԹԱԳՈՒՅՑ...» (էջ 64, 402)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1891 թ. 5 մայիսի. Աղեքսանպոլ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 10: ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 41-ում գրի է առնված այս բանաստեղծության մի տարբերակ՝ թվագրված «Գյումրի. 5 մայիսի. <18>91»: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ...(«ՀՈՐԻԶՈՆՍ ԱՄՊԱԾԱԾՈՒԿ...») (էջ 65, 403)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Աղեքսան<դրապոլ>. 12 մայիսի. <18>91»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 41-42: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՎԵՐ... ՕՐԱԳԻՐ...(«ՔՆՔՈՒՇ ՍԻՐՏՍ, ԿՈՒՅՍ ԱՆՄԵԿԻՆ...») (էջ 66)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ղազարապատ. <18>91 թ. 6 հունիսի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 42-43: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ (էջ 67, 403)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Աղեքսանդրապոլ. <18>91. 24 հունիսի»: Նույն ինքնագրի աջ կեսին գրի է առնված բանաստեղծության մի տարբերակ՝ թվագրված «1894. 10 նոյեմբերի. Leipzig»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 44: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՁՎԱՐԹ ԳԻՇԵՐ... ԽՈՐԻՆ ՁՈՐՈՒՄ...» (էջ 68, 404)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Ս. Հաուիճո վանքում. <18>91. 30 հունիսի»: Էջի ներքևի ազատ մասում գրի է առնված բանաստեղծության վերջին քառատողը՝ ավարտուն տեսքով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 45: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԱՆՁՈՐ ՀՈԳՈՒՍ ՄՌԱՑԼ ԺԱՄՈՒՄ...») (էջ 69, 405)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Աղեքսան<դրապոլ>. 18 օգոստոսի. <18>91»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 52-53: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԱՂՈԹՔ ԱՍՏՎԱԾԱԾՆԱ ՊԱՏԿԵՐԻ ԱՌՋԵՎ (էջ 70, 405)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Աղեքսանդ<րապոլ>. <18>91 թ. 18 օգոստոսի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 53-54:

Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՌ ՔՆԱՐԴ, ՄԱՏԱՂ ՊՈԵՏ...» (էջ 71, 405)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Աղեքսան<դրապոլ>. <18>91 թ. 21 օգոստ<ոսի>»: Բնաբանը կրկին Մ. Յու. Լերմոնտովի թարգմանությամբ Ջ. Բայրոնի "Еврейская мелодия" բանաստեղծության առաջին տողն է. "Душа моя мрачна. Скорей, певец, скорей!": Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 54: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՎԵՐ... ՕՐԱԳԻՐ... («ԵՍ ԻՆՁ ԵՐԳԵՄ, ԵՐԲ ՀԵԳ ԵՐԳՋԻՍ...») (էջ 72, 405)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Աղեքսան<դրապոլ>. <18>91. 25 օգոստոսի»: Ինքնագրի ձախ կեսին երկայնակի գրի է առնված մի քառատող.

Безумный прах, не должен ты роптать!
Не для утех, веселья, ликованья;
Ты создан в мире, чтоб плакать и страдать,
Ты в нем живешь для испытанья.

Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 55: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՍԻՐՈ ՀՐԵՇՏԱԿ, ՔՈ ՁԵՐՄ ՍՐՏՈՒՄ...») (էջ 73, 406)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Վաղարշապատ. օգոստոս. <18>91»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 51-52: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԼՈՒՌ ԳԻՇԵՐ ԷՐ, ՊԱՑԾԱՌ, ԽԱՂԱՂ...» (էջ 74, 406)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91 թ. 8 սեպտեմ<բերի>. Վաղարշապատ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 56: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ («ԵԹԵ ՏԵՄՆԵՍ ՄԻ ԹԱԽԾԱԼԻ...») (էջ 75, 406)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 9 սեպտեմբերի. Վաղարշապատ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 57: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՏԱՂՏՈՒԿ ՑՆՈՐՔ, ՀԵՌՈՒ ԻՆՁՆԻՑ...» (էջ 76, 406)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «10 օրն սեպտեմբերի. <18>91. Վաղարշապատ»: Ստորագրված է՝ Պայ-Ազատ (նման գրական կեղծանունը Իսահակյանը ընտրել է՝ հավանաբար նկատի ունենալով իր մեծ պապի՝ Նիկողայոսի ծագումը Բայազետ քաղաքից): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 58: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՈՍԿԵՆՇՈՒՑԼ ԱՐՇԱԼՈՒՍԻՆ...» (էջ 77, 406)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 12 սեպտեմբերի. Վաղարշապատ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 59: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՍ ԼԱԼԻՍ ԵՄ... ԹՈՂ ԱՐՑՈՒՆՔՍ...» (էջ 78, 407)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «20 սեպտեմբերի. <18>91 թ. Վաղարշապատ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 60: Բանաստեղծությունը նախապես կազմված է եղել չորս քառատողից, այնուհետև Իսահակյանը ջնջել է գրության տարեթիվը և վայրը և ավելացրել ևս երկու քառատող: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԿՈՒԶԵՄ ԱՊՐԵԼ, ԿՈՒԶԵՄ ԵՎ ԿՑԱՆՔ...») (էջ 79, 407)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 22 սեպտեմբերի. Վաղարշապատ»: Բանաստեղծության ընաբանը Ա. Ս. Պուշկինի "О, нет, мне жизнь не надоела..." բանաստեղծության երկրորդ տողն է՝ "Я жить люблю, я жить хочу...", որ, ամենայն հավանականությամբ, վերարտադրված է հիշողությամբ: Ի դեպ, Վ. Ցա. Բրյուսովը 1911 թ. գրած իր "Идут года, но с прежней страстью..." բանաստեղծության ընաբան է ընտրել Պուշկինի վերոհիշյալ բանաստեղծության առաջին երկու տողը՝ երկրորդ տողում արած շրջասությամբ, որ զուգադիպում է Իսահակյանի օգտագործած ընաբանին՝ "Я жить хочу, я жизнь люблю...": Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 70: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

[ՕՐ <ԻՈՐԴ>-Ի ՏՈՆԻ ԱՌԹԻՎ](էջ 80, 407)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Վաղարշապատ. 24 սեպտեմբերի. <18>91»: Ինքնագրի ներքևի ազատ մասում գրված է. «Սիրելի [օր<իորդ> <1 անընթ.>]-ի տոնախմբության առթիվ: Ավետիք Իսահակյան: Սերը = Աստված է»: Բանաստեղծությունն ուղղված է Իսահակյանի մեծ սեր Շուշանիկ Մատակյանին, որը ծնվել է 1876 թվ. սեպտեմբերի 24-ին (նոր տոմարով՝ հոկտեմբերի 6-ին) Ալեքսանդրապոլում: 1891 թվին լրացել է Շուշանիկի ծննդյան 15-ամյակը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 61: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

(Հ-ՑԱՆԻ ԱԼԲՈՄՈՒՄ) ՆՎԵՐ... (էջ 81, 408)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91 թ. 4 հոկտեմբ<երի>. Վաղարշապատ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 62: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՐԵՎՆ ՀԱՆԳՋԵՑ ԻՐ ՄՈՐ ԳՐԿՈՒՄ...» (էջ 82)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝

«<18>91. հոկտեմբերի 7. Վաղարշապատ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 64: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՈՐՊԵՍ ԵՐԱԶ ՆԱԶԵԼԱՇՈՒՔ...») (էջ 83, 408)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 10 հոկտեմբերի. Վաղարշապատ»: Ստորագրված է՝ Պայ-Ազատ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 64-65: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՐԲ ՄԱՆԳԱՂԸ ԴԱՌՆ ՕՐՀԱՍԻ...» (էջ 84, 408)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 11 հոկտեմբերի. Վաղար<չապատ>»: Էջի ներքևի ազատ մասում տրված է 6-րդ քառատողի վերջնական մշակումը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 65-66: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՍ ԳՆՈՒՄ ԵՄ... ԹՈՂ ԱՐՑՈՒՆՔՈՎ...» (էջ 85, 409)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 11 հոկտեմբեր. Վաղարշապ<ատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 67: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԵՍ ԱՂՈԹՈՒՄ ԵՄ... ԵՎ ԻՄ ԱՉԵՐԻՑ...») (էջ 86, 409)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 18 հոկտեմբերի. Վաղարշապ<ատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 68: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՔԵԶ ՉԵՄ ՉՄՈՌՈՒՄ, ՔՈՒՑՐ - ԻՄ ԸՆԿԵՐ...» (էջ 87)

Բանաստեղծության գրության թվականն ինքնագրում նշված չէ. հավանաբար գրված է 1891 թ. հոկտեմբերին Վաղարշապատում, քանի որ տեսրի նախորդ և հաջորդ բանաստեղծությունները («Ես աղոթում եմ... և իմ աչերից...», «Քեզ պիտ սիրեմ, կու՛յս աննման...») ևս գրված են նույն ժամանակաշրջանում Վաղարշապատում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 69: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՔԵԶ ՊԻՏ ՍԻՐԵՄ, ԿՈՒՑՍ ԱՆՆՄԱՆ...») (էջ 88, 409)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 19 հոկտեմբերի. Վաղարշապ<ատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 69-70: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴԱՐՁՅԱԼ ԱՐՑՈՒՆՔ ՍՐՏԻՍ ԽՈՐՔԻՑ...» (էջ 89, 410)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 20 հոկտեմբ<երի>. Վաղարշապատ»: Ստորագրված է՝ Պայ-Ազատ: Քառատողերը համարակալված են՝ I, II, III, IV: Էջի ներքևի ազատ մասում կա գրություն.

«Սիրելի <[1 անընթ.]!>

Ընդունիր քո անվամբ հյուսած երգս, բաց ննջարանիդ լուսամուտը և ահա՛ կլսես դժբախտ բյուլբյուլից այս տխուր երգը. նա սովոր էր, երբ ես հուզված ժամերում երգում էի մեր պարտեզի վարդենիների տակ: Նա լսում էր սիրով, և երևի նրան դյուր էր գալիս այս. նա սովորեց... Նա երգում էր իմ <բացակա> եղած ժամանակ...»: Գրության վերջին տողը կիսատ է լուսանկարված և ընթեռնելի չէ: Հավանաբար գրությունը և բանաստեղծությունն ուղղված են Շուշանիկ Մատակյանին:

Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 71: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՕՐՀՆՅԱԼ ԳԻՇԵՐ... ՓԵՏՐԻ ՆՄԱՆ...» (էջ 90, 410)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «23 [սեպտեմ<բերի>] հոկտեմբերի. <18>91. Վաղարշա<պատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 82: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԼՌԻՐ, ՔՆԱՐ... ՔՈ ԼԱՐԵՐԻՑ...» (էջ 92, 410)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91թ. 24 հոկտեմ<բերի>. Ղազար<ապատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 80: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՓՈՔՐԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 93, 411)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 26 հոկտեմբ<երի>. Վաղարշապատ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 85: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԵՍ ԼՍԵՑԻ ՄԻ ԵՐԳ ՈՒՐԱԽ...») (էջ 94, 411)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 26 հոկտեմ<բերի>. Վաղարշ<ապատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 85-86: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՍ ՀՑՈՒՍԵՑԻ ՔՈ ԱՆՈՒՆՈՎ...» (էջ 95, 412)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «31 հոկտեմբերի. <18>91. Վաղարշ<ապատ>»: ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 34-ում գրի է առնված այս բանաստեղծության մի տարբերակ: Ստորագրված է Պայ-Ազատ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 87: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՀՈՐՁՈՒՏ ԳԵՏԻ ԴԱՎԱՐ ԱՓՈՒՄ...» (էջ 96, 412)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 31 հոկտեմբերի. Վաղարշապ<ատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 88: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԽԵՂՃ ԾԱՂԻԿԸ ԺԱՅՌԻ ԿՐԾՔԻՆ...» (էջ 97, 413)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 31 հոկտեմբերի. Վաղա<րշապատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 88: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԵՍ ՀԻՎԱՆԴ ԵՄ, ՍԻՐՈՒՆ ՄԱՆՈՒԿ...») (էջ 98, 413)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 1 նոյեմբերի. Վարդգեսի ավան»: 12-րդ տողից հետո գրի է առնված բանաստեղծության 3-րդ քառատողի սևագիր մշակումը: Ստորագրված է Պայ-Ազատ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 88-89: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԻ՛ ԿԱՇԱՌՎԻՐ, ՄԱՆՈՒԿ ՍԻՐՈՒՆ...» (էջ 99, 413)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 7 նոյեմբերի. Վաղարշապ<ատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 89-90: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՎՐԴՈՎՄՈՒՆՔԻ ՊՂՏՈՐ ԾՈՎՈՒՄ...» (էջ 100, 413)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 11 նոյեմբերի. Վաղար<շապատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 91: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԸՆԿԵՐԻՆ (էջ 101, 414)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 11 նոյեմբերի. Վաղարշ<ապատ>»: Նույն տետրի 92-րդ էջին գրի է

առնված այս բանաստեղծության մի սևագիր մշակում՝թվագրված՝ «<18>91. 11 նոյեմբ<երի>. Վաղարշ<ապատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 97: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԿԱՄ ՏՈ՛ՒՐ, ԸՆԿԵ՛Ր, ՍՈՒՐԸ ՓԱՅԼՈՒՆ...») (էջ 102, 415)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 15 նոյեմբերի. Վաղար<շապատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 93: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԻՆՁ ՄԻ՛ ՍԻՐԻՐ, ԱՆՄԵ՛Ղ ՄԱՆԿԻԿ...») (էջ 103)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Վաղար<շապատ>. <18>91 թ. 15 նոյեմբ<երի>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 94: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԼՈՒՌ ԳԻՇԵՐ Է, ՕԴԸ ՄԱՔՈՒՐ...» (էջ 104, 415)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Վաղարշապատ. 16 նոյեմբերի. <18>91»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 95: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՄԱՐԴԿԱՆՑ. ՕՐԱԳԻՐ... (էջ 106, 415)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «17 նոյեմբերի. <18>91»: Գրության վայրը Վաղարշապատն է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 96: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԱՆՄԽԻԹԱՐ, ԱՆՀՈՒՑՍ ՍՐՏԻՍ...») (էջ 107, 415)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. 17 նոյեմբերի. Վաղարշ<ապատ>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 96-97: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

[«ԴԱՇՏԸ ՇՔԵ՛Ղ ՈՒ ՈՍԿԵԳԵՂ...»] (էջ 108, 415)

Իսահակյանի «Բանաստեղծություններ» Տետր Ա (1892, Ալեքսանդրապոլ) 14-րդ էջում զետեղված է «Դաշտը փարթամ դալարագեղ...» բանաստեղծությունը՝ թվագրված «1891. 29 նոյեմբեր. Էջմ<իածին>», Տետրի 24-րդ էջում զետեղված է նույն բանաստեղծության սևագիր տարբերակը՝ «Դաշտը շքեղ, դալարագեղ...»: Հետագայում սկզբնատողը դարձել է «Դաշտը շքեղ ու ոսկեգեղ...» (ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 80): Իսահակյանի վաղ շրջանի «Իմ օրագրից:

Կոկոններ» [1890] շարքի երրորդ բանաստեղծությունն է, խմբագրված օրինակն առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 221: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 80: Տպագրվում է Հե-ից:

«ՄԵՌԱԾ ՍԻՐՈ ՇԻՐՄԻ ՔԱՐԸ...» (էջ 109, 416)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1 դեկտեմբերի. <18>91. Էջմի<ածին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 107-108: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«Ա՛Խ, ԸՆԿԵՐ ԻՄ, ԻՆՁ ԵՍ ՊՏՐՈՒՄ...» (էջ 110)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «3 դեկտեմբերի. <18>91. Էջմի<ածին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 108: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («Ա՛Խ, ՎԱՂՈՒՑ Է՝ ԻՄ ՔՆԱՐԸ...») (էջ 111, 416)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «8 դեկտեմբ<երի>. <18>91. Էջմի<ածին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 110: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԻՄ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԹԻԼԸ ՄԱՔՈՒՐ...») (էջ 112, 416)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «13 դեկտեմբ<երի>. <18>91. Ս. Էջմի<ածին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 111: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԲՈՑԱԿԵԶ ՀՈԳԻՍ ԿՑԱՆՔԻ ԽԱՎԱՐՈՒՄ...») (էջ 113, 416)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «20 դեկտեմբ<երի>. <18>91»: Գրության վայրը Էջմիածինն է: Ստորագրված է Պ-Ա: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 114: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԼՌԻ՛Ր, ԵՐԳԻ՛Զ, ՔՈ ՄԵՂԵԴԻՆ...» (էջ 114)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «22 դեկտեմբերի. <18>91 թ.»: Գրության վայրը Էջմիածինն է: Արտագրված է ուրիշի ձեռագրով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 112: Տպագրվում է առաջին անգամ:

«ԵՐԲ ԵՍ ՍԼԱՑԱԾ ՈՍԿԻ ԵԹԵՐՈՒՄ...» (էջ 115, 416)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «26 դեկտեմբ<երի>. <18>91 թ.»: Գրության վայրը էջմիածինն է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 113: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՇՈՒՐՋՍ ԽԱՎԱՐ ՈՒ ՍԱՌՑԱԾՈՎ...») (էջ 116, 417)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «27 դեկտեմբ<երի>. <18>91. Ս. էջ<միածին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 105: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՐՏԱՍՎԻՐ, ՀՈԳՑԱԿ, ԵՍ ԷԼ ԿԱՐՏԱՍՎԻՄ...» (էջ 117, 417)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. էջմիածին»: Այս բանաստեղծության մեկ այլ տարբերակ՝ «Օրագիր...» վերնագրով, պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 90 (Բ ինքնագիր)՝ թվագրված «11 նոյեմբերի, <18>91. Վաղարշապատ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-I, 5-6: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՂՈԹԻՐ, ՀՈԳՑԱԿ, ՔԱՆԻ ՔՈ ՍՐՏՈՒՄ...» (էջ 118, 417)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. էջմիածին»:

Այս բանաստեղծության մեկ այլ մշակում (Բ ինքնագիր) պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 108-109՝ թվագրված՝ «6 դեկտեմբերի. <18>91»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-I, 4: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՇՓԱ՛, ՍԻՐՏ ԻՄ, ՀՈՒԶՄՈՒՆՔՆԵՐԻ...» (էջ 119, 418)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>91. էջմիած<ին>»: ԱԻՖ, 1-III, 86-87-ում պահպանվում է այս բանաստեղծության նախնական տարբերակը՝ «Շփա՛, իմ սիրտ, հուզմունքի...» սկսվածքով, որը վերամշակվել է և մեկ քառատողով կրճատվել: Վերջին տարբերակը, որը ներկայումս հրատարակվում է, պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-I, 8: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

(ԱԼԲՈՄՈՒՄ) (էջ 120, 419)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է հավանաբար 1891-1892 թթ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-I, 7: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԴԱՐՁՑԱԼ «ՆՈՐ ՏԱՐԻ»... ԽՈՐԻՆ ԿՆՃԻՌՆԵՐ...)(էջ 121, 419)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «3 հունվարի. 1892 թ. էջմիածին»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 115: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՆԱԶԵԼԻ ԸՆԿԵՐ, ԽՈՐԱԳԻՆ ԱԿՈՍ...») (էջ122, 419)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «8 հունվ<արի>. 1892. Ս. էջ<միածին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 111-112: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԲԱԽՏԻ ԱՍՏՂԸ ԱՑՍ ԵՐԵԿՈ...» (էջ 123, 419)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «12 հունվարի. <18>92 թ. ի գյուղն Բլուր»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 101: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

[ՕՐԱԳԻՐ...] «ԳՈՆԵ ՄԻ ԹՌԻՋՔ, ԵՎ ԱՀԱ՛ ԲԱԽՏԻ...» (էջ 124)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության ամսաթիվը և վայրը՝ «14 հունվարի. Ս. էջ<միածին>»: Գրված է 1892թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 103-104: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԻՆՉ Է ՍԻՐՏՍ - ՄԻ ԱՊԱՌԱԺ...» (էջ 125)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «17 հունվարի. <18>92. էջմի<ածին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 101-102: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՁԷ՛, ԵՍ ՁԵՄ ԺՊՏՈՒՄ, ԻՄ ԺՊՏԻՑ ՄԻՆՁԴԵՌ...») (էջ 126)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1892. 18 հունվարի. էջմիածին»: ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 102-ում պահվում է այս բանաստեղծության արտագրությունը՝ թվագրված «18 հունվարի. <18>92»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 14: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԴՈՒ ԳԻՏԵ՞Ս ԱՐԴՅՈ՛Ք, ԹԵ ՀՈԳԻՍ ՈՐՔԱՀ...») (էջ 127, 419)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>92. էջմիածին»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-I, 3-4: Այս բանաստեղծության մեկ այլ տարբերակը՝ «Ա՜խ, գիտե՞ս արդյոք, թե հոգիս որքան...»

սկսվածքով՝ գրված «25 հունվարի <18>92. Ս. Էջմիածին-Իգդիր», պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 103: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՈՒԶՈՒՄ ԵՄ ԵՐԳԵԼ, ԲԱՅՑ Ո՛Չ ՎԱՌ ԵՐԿԻՆՔ...») (էջ 128, 419)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «4 փետրվարի. <18>92. Ս. Էջմիածին> : Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 100: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՎԵՐ... («ԵՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ, ԿՈ՛ՒՅՍ ՆԱՉԵԼԻ...») (էջ 129)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «6 փետրվ<արի>.<18>92. Էջմիած<ին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 99: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԴԱՐՁՑԱՂ ԳԱՐՈՒՆ, ԲԱՅՑ ՎՇՏԱՀԱՐ...») (էջ 130, 420)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «8 փետրվարի. <18>92. Էջմիած<ին>»: Նույն էջի աջ կողմում հեղինակն ավելի ուշ շրջանում գրի է առել հետևյալ խոստովանությունը. «Իմ սիրո <մեծ> շրջանը եղել է 1891 թ. օգոստոսի սկզբից մինչև 1892 թ. վերջերը - այնուհետև կամա՛ց-կամա՛ց մարել եմ. իսկ 1895, 6, 7 թվերին կիսա<մեռ> վեր եմ ընկել... Ավետիք Իսահակյան, Գյումրի. 1897. 25 հոկտեմբ<երի>»: Բանաստեղծը նկատի ունի իր և Շուշանիկ Մատակյանի փոխհարաբերությունները: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 98: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՊԻՏԻ ԱՂՈԹԵՄ, ՀԱՎԱՏԱՄ ԱՆՎԵՐՋ...») (էջ 131, 420)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «20 փետրվարի. <18>92. Էջ<միածին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 115: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՈՍԿԻ ԱՐԵՎԸ ՀԻԱՍՔԱՆՋ ԳԱՐՆԱՆ...») (էջ 132, 420)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «22 փետրվարի. <18>92. Ս. Էջ<միածին>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 117: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԱՆՄԽԻԹԱՐ ՍԻՐՏՍ, ՈՎ ԿՈՒՅՍ...») (էջ 133, 420)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «8 փետրվար. <18>92»: Գրության վայրը Էջմիածինն է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 118: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԲՅՈՒՐ ՀՈՒՅՍԵՐՈՎ ԵՍ ԲԵՐԵՑԻ...» (էջ 134, 421)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «29 փետրվարի. <18>92. կյուրակե»: Գրության վայրը Էջմիածինն է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 116: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՈՐՊԵՍ ԴԺՈԽՔ ԱՇԽԱՐՀԱՎԵՐ...») (էջ 135, 421)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «29 փետրվարի. <18>92»: Գրության վայրը Էջմիածինն է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 119: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՔՆՈ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՍ ԵՐԱՋ ՏԵՍԱ...» (էջ 136, 421)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, հավանաբար գրված է 1892 թ. փետրվարի վերջերին Էջմիածնում, քանի որ նույն էջում գրի է առնված նախորդ «Որպես դժոխք աշխարհավեր...» բանաստեղծությունը՝ թվագրված՝«29 փետրվարի. <18>92»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 119: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ԴՈՒ ԻՆՁ ԳԻՏԵՍ, ԹԵ ԻՄ ՍՐՏՈՒՄ...») (էջ 137, 421)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության ամսաթիվը՝ «5 մարտի»: Գրված է, հավանաբար, 1892 թ. Էջմիածնում (տե՛ս նախորդ ծանոթագրությունը): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 120: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՕՐԱԳԻՐ... («ՁԷ՛, ՁՄՈՌՆԱՍ, ԲԵԱՏՐԻՋԵ...») (էջ 138, 422)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «11 մարտի. <18>92»: Գրության վայրը Էջմիածինն է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-III, 120: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՍ ՉԵՄ ԿԱՍԿԱԾՈՒՄ: ՄԻ՞ԹԵ ԿՐԾՔԻԴ ՏԱԿ...» (էջ 139)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1892, 10 ապրիլի. Աղեքսանպոլ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 7: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԸՆԿԵ՛Ր, ՄԻ ԱՍԱ՛ - ՄԻ՞ԹԵ ԿԱՐՈՂ ԵՍ...» (էջ 140)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1892. 12 ապրիլի. Աղեքսանպոլ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 11: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՏԱՂՏՈՒԿ ՃՆՈՐՔՆԵՐ, ԻՆՉ ԵՔ ԽՈՒՆՎՈՒՄ...» (էջ 141, 422)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1892. 16 մայիսի. Աղեքսան<պոլ>»: Առաջին անգամ տպագրվել է ԱՄ, 117: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 5:

Տպագրվում է ինքնագրից:

«ՔԱՆԻ ԿԱՍԿԱԾԸ ԴԵՌ ՉԷ ՎԱՐԱԿԵԼ...» (էջ 142, 422)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1892. 16 մայիսի. Աղեքսանպոլ»:

Բանաստեղծությունից մի հատված՝ 8-13 տողերը, ընդամին՝ մեկ տողի բացթողումով և ոչ ճիշտ տարեթվով ու գրության վայրով: Հրապարակել է Մ. Զաքարյանը՝ ՀՀ, 2000, հոկտեմբերի 31: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-II բ, 7-8: Բանաստեղծությունն ամբողջական տեսքով տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՀՈԳՈՒՍ ԼԱՐԵՐԸ ԷԼ ՉԵՆ ՄՐՄՆՋՈՒՄ...» (էջ 143)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1892. 17 մայիսի. Աղեքսանպոլ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 5: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՐՈՒՄ

(Х<Ի> ՊԱՏԿԵՐԻ ԴԻՄԱՑ) (էջ 144)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1892. 22 մայիսի. Աղեքսան<դրապոլ>»: «Դավաճանության օրերում» է կոչել Իսահակյանը դեռևս 1892 թ. մայիսին Շուշանիկ Մատակյանի հետ ընդհարումի շրջանը: Ե՛վ «Х<-ի> պատկերի դիմաց», և՛ հաջորդ՝ «Х<-ի> հասցեին» բանաստեղծություններն ուղղված են Շուշանիկին: Այս հանգամանքը վկայում է, որ սիրո պատմությունն իրականում երբեք հաշտ ու խաղաղ չի եղել՝ հասնելով կիզակետին, հանձին «Մեծ դավաճանության» - այն է՝ Հովհ. Տեր-Միրաքյանի հետ Շուշանիկի ամուսնությանը (1893 թվական, օգոստոս): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 15: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՐՈՒՄ

(Х<Ի> ՀԱՍՑԵԻՆ) (էջ 145)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1892. 25 մայիսի. Աղեքսան<դրապոլ>»: Առաջին անգամ տպագրվել է անվերնագիր և առանց տարեթվի նշման՝ ՀՀ, 2000, հոկտեմբերի 31 (հրապարակումը՝ Մ. Զաքարյանի): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 16-17: Տպագրվում է ինքնագրից:

«ԱՐԴՅՈՔ ԼՍԵՂ ԵՍ ՎԱՍՏԱԿԱԾ ՀՈԳՈՎ ...» (էջ 146, 422)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «<18>92. Հառիճ»:

Բանաստեղծությունը զետեղված է ԳԱԹ, ԱԻՖ, 1-I-ում պահպանված տետրում, որի անվանաթերթին բանաստեղծի ձեռքով գրված է. «Առաջին տետրակ, Ավետիք Իսահակյան»: Բանաստեղծությունը գրի է առնված տետրի 6-7-րդ էջերում (ԳԱԹ, ԱԻՖ, 1-I, 6-7): Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՆՈՒՇ ՎԱՅՐԵ՛Ր, ՄՆԱՔ ԲԱՐԵՎ...» (էջ 147)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1892. Աղեքսանդրապոլ»: 1-6-րդ տողերն առաջին անգամ տպագրվել են՝ ՍԳ, 1980, N 6, էջ 117 (Ա. Մուշեղյանի «Ավետիք Իսահակյանի պատանեկան բանաստեղծությունները» հոդված): Ակնհայտ է ազդեցությունը Հովհ. Հովհաննիսյանի «Մընաք բարով, արև, գարուն» բանաստեղծության: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-I, 5: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՍԻՐԻ՛Ր ԹՇՎԱՌԻՍ...» (էջ 148)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1892. Աղեքսանդրապոլ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-I, 3: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆՎԵՐ ՍԻՐԵԼԻ ՔՈՒՑՐ-ՇՈՒՇԻԿԻՆ ԻՐ ԵՂԲԱՑՐ-ԱՎԵՏԻՔԻՑ (էջ 149, 422)

Բանաստեղծությունն անթվակիր է, գրված է, հավանաբար, 1892 թ.: Առաջին անգամ տպագրվել է Ա. Մուշեղյանի մենագրությունում (էջ 91-92), այնուհետև՝ ՀՀ, 2000, հոկտեմբերի 31 (հրապարակումը՝ Մ. Զաքարյանի): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 3: Տպագրվում է ինքնագրից:

ՊԱՏԱՆՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԸ

(ԱԼԵԳՈՐԻԱ ՇՈՒՇԻԿԻ «ԿՈՒՅՍԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ»-Ն) (էջ 150)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1892 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ ՀՀ, 2000, հոկտեմբերի 31 (հրապարակումը՝ Մ. Զաքարյանի): Շ. Մատակյանի «Զափածո և արձակ երկեր» ժողովածուում (Երևան, 1975, կազմող՝ Մ. Նարյան) «Կույսի գերեզմանին» բանաստեղծությունը չի հրատարակվել: Ըստ գրականագետ Ա. Մուշեղյանի՝ Իսահակյանի բանաստեղծությունը կարող է առնչվել նաև Շ. Մատակյանի «Էլ քեզ չեմ սիրի...» բանաստեղծությանը (ԱՄ, 92-93): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 4: Տպագրվում է ինքնագրից:

«ՄԵՆԱԿ ԱՊՐԵՑԱ, ՈՐՔԱՆ ՏԱՆՋՎԵՑԻ...» (էջ 152)

Գրել է, ըստ ինքնագրի, «27 փետրվարի. 1893. Ալեքսանդրապոլ»: Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Տպագրվել է առաջին անգամ «Գրական թերթ», 1959, հոկտեմբերի 16, թիվ 42, բանաստեղծությանը հաջորդել է Արամ Ինճիկյանի «Ավ. Իսահակյանի ձեռագրերի աշխարհում» հոդվածը, այնուհետև՝ ՀԵ, 120, ԱԻԳԿ, 169: Հեղինակի անկեղծ խոստովանությունը Շուշանիկ Մատակյանին՝ «Քեզ նվեր բերի սիրտս վշտահար» և, միաժամանակ, Շուշանիկի սառը վերաբերմունքը՝ «Բայց ցված սիրտս չսիրվեց երբեք», այս երկում ի հայտ է գալիս մինչև բանաստեղծի Գերմանիա մեկնելը և մինչ Շուշանիկի ամուսնությունը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 11- II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԵՍ ՈՒԶԵՑԱ ԼԱԼԵՆ ՔԱՂԵՄ...» (էջ 153)

Գրել է, ըստ ինքնագրի, «1893 թ. 8 մայիսի. Ղազարապատ գյուղ»: Բանաստեղծի կենդանության օրոք չի հրատարակվել: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը՝ «Հայդուկի երգեր», էջ 220: Գրված է բանահյուսական երգերի մոտիվներով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 11- II: Տպագրվում է ՀԵ-ից:

[«ԻՆՁ ՍԻՐՈՒՆ ԵՍ, ԳԱՐՆԱՆ ՎԱՐԴ ԵՍ...»](էջ 154, 422)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1893 թիվ. 8 մայիսի. Աղեքսանդրապոլ»: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 223: «Դատարկյուն աչուղի խաղերից ու բայաթիներից» շարքի 11-րդ բանաստեղծությունն է: Շարքը սկսվում է հետևյալ բնաբանով.

«ա Դադրած ճամփորդ - խեղճ աչուղ եմ.

բ Դադրած, մենակ, խեղճ ճամփորդ եմ.
Բլբուլ եմ, վարդս ման կուգամ.
Հազար տեղից վիրավոր եմ.
ա Գիտեք, թե ո՞ղջ ման կուգամ...»:
բ Գիտեն, թե ողջ ման կուգամ...»:

Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 69: Տպագրվում է ՀԵ-ից:

[«ԹՈՂ ԱՆՇԱՅՐ ՇՈՎԸ ԵՌԱ, ՓՐՓՐԻ...»](էջ 155)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1893 թ. 7 օգոստոսի. Վիեննա»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 88-89: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

[«-ԱՀ, ՄԱՐԱԼՍ, ԱՀ, ՈՒՐ ԳՆԱՑ...»] (էջ 156, 423)

Գրել է, ըստ ինքնագրի, «1893 թ. 3 սեպտեմբերի. Պրագա»: Բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել: «Դատարկյուն աչուղի խաղերից ու բայաթիներից» շարքի 15-րդ բանաստեղծությունն է, որը, ըստ Իսահակյանի առաջնային մտահղացման, պիտի վերաբերեր «Ալագյազի մանիներ» շարքին, սակայն հետագայում դրան այլևս չի անդրադարձել: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 224: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 72-73: Տպագրվում է ՀԵ-ից:

ՆՎԵՐ ՏԻԿԻՆ Շ.<-Ի>Ն (էջ 157)

Գրել է, ըստ ինքնագրի, «Լայպցիգ. 1893. սեպտեմբերի 21»: Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Տպագրվել է առաջին անգամ՝ «Սովետական գրականություն», 1958, թիվ 19, էջ 99, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Ա. Ինճիկյանի), այնուհետև՝ ՀԵ, 121): Բանաստեղծությունը գրված է Շուշանիկի ամուսնության լուրն առնելու շրջանում, ուստիև վերնագրված է «Նվեր Տիկին Շ.-ին»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՀՈՎԸ ՓՋՈՒՄ Է ԼԵՌՆԵՐԻ ԼԱՆՋԻՑ...» (էջ 158)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1893 թ. Oberlong. Գերմանիա»: Առաջին անգամ տպագրվել է Ա. Մուշեղյանի մենագրությունում, էջ 232, այնուհետև՝ ԱԻԳԿ, 300: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 21: Տպագրվում է ինքնագրից:

ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐԻՍ (էջ 159)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1893 թ. ամռանը Վիեննայում, քանի որ նույն էջից սկսված «Մենակ, անընկեր ձեր գիրկն եմ ընկել...» բանաստեղծությունը թվագրված է՝ «1893թ. օգոստոսի 7, Վիեննա»: Վերնագրի դիմաց՝ լուսանցքում, նշում կա. «87 (տպել «Իմ օրագրից» բաժ<նում>)»: Խոսքը [«Իմ վեհությունը»] բանաստեղծության մասին է, որն ունի նույն համարանիշը): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 87-88: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՂԵԳՆԵՐԻ ՄՌԱՑԼ ԽՈՐՔԻՑ...» (էջ 160, 423)

Քառյակն անթվակիր է: Գրված է, հավանաբար, 1893-95 թթ., քանի որ բանաստեղծությունների տետրը, որտեղ գտեղված է այս երկը, վերաբերում է 1892-1895 թթ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 23: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՍ ԿՑԱՆՔ ԳՐԿԵՑԻ...» (էջ 161, 423)

Գրի է առնված Իսահակյանի «Բանաստեղծություններ», Ա տետրում – 1892 թ. Ալեքսանդրապոլ, էջ 29: Նույն տետրում նաև կան 1897-1898 թթ. գրված երկեր: Ուստի գրության հավանական ժամանակաշրջանը պետք է համարել 1893 թվականը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 29: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԼԵԶՎԱԿՆ ԱՆՈՒՇ ԵՐԳ ԿՀՆՉԵ...» (էջ 162)

Գրի է առնված Իսահակյանի 1892 թ. (15 մայիս, Ալեքսանդրապոլ) բանաստեղծությունների տետրում, էջ 22: Վերջինիս նախորդած բանաստեղծությունը՝ «Սիրտս ցողված է քնքուշ թախիծով», թվագրած է 1893 թ., իսկ հաջորդը, ուր նշված է տարեթիվը՝ 1897: Հետևաբար ծանոթագրվող բանաստեղծությունը գրված է 1893-1897 թթ. ժամանակահատվածում: Ինքնագիր է, տետրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 22-23: Տետրի վրա կա բնաբան Շիլլերից՝ «Չար մարդիկ երգ չունեն...»: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՇՈՒՇԱՆ ԾԱՂԻԿ, ՔՈՒ ԲՈՂԲՈՋՈՒՄ...» (էջ 163)

Գրել է, ըստ ինքնագրի, «1894 թ. 21 մայիսի. Լայպցիգ»: Ձեռագրի լուսանցքում Իսահակյանի ձեռքով նշված է «Նվեր օր. Շ.» (այսինքն՝ Շուշանիկ Մատակյանին): Բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 227: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՍԻՐՏՍ ԼԻ՛Ճ ԷՐ - ՋԻՆՋ ՈՒ ԼՌԻԿ...» (էջ 164, 423)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «9 դեկտ<եմբերի>. 1894. Leipzig»: Առաջին անգամ տպագրվել է՝ ԱՄ, 227-228: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 14-II, 2: Տպագրվում է ինքնագրից:

«ՍԵ՛Վ ՎՇՏԵՐԸ ՄՇՈՒՇԻ ՊԵՍ...» (էջ 165, 423)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «[10] 9 դեկ<տեմբերի>. 1894. Leipzig»: Առաջին անգամ տպագրվել է՝ ԱՄ, 235: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 14-II, 3: Տպագրվում է ինքնագրից:

«ԵՍ ՁԵԶ ԱՏՈՒՄ ԵՄ, ԱՄԵՆՔԻԴ ԱՏՈՒՄ...» (էջ 166)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, երկի ստեղծման մոտավոր ժամանակաշրջանը կարելի է համարել 1893-1895 թվականները: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 225: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 130-II: Տպագրվում է ինքնագրից:

«ԻՆՉ,- ՍԵՐ ՄՈՒՐԱԼՈՒ ՆՈՐԻ՞Ց ԹԱՓԱՌԵՄ...» (էջ 167, 423)

Բանաստեղծությունը, դատելով ըստ բնագրի, ստեղծված է 1895 թ.: Գրված է սև թանաքով, մի դեղնած թերթիկի վրա: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 16-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«Ա՜Խ, ԵՍ ԻՆՁՔԱՀ ԲԱԽՏԱՎՈՐ ԵՄ...» (էջ 168, 423)

Բանաստեղծության ստույգ թվականը նշված չէ: Հիշյալ ինքնագրի վրա գրի է առնված նաև «Նույն դաշտերը դալար, անդորր...» սկսվածքով բանաստեղծությունը: Ստեղծվել է մոտավորապես 1890-ական թթ. առաջին կեսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 196-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴԱՐԴԻ ՍԱՐԸ ՍՐՏԻՍ ՎՐԱ...» (էջ 169, 424)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Հավանաբար գրված է 1890-ական թթ. առաջին կեսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 140-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԲԱԽՏԻ ՈՒՐՈՒՐԸ ԵՏԵՎԵՍ Է ԸՆԿԵԼ...» (էջ 170, 424)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Հավանաբար գրված է 1890-ական թթ. առաջին կեսին: Ինքնագրի հաջորդ էջին սև թանաքով գրի է առնված բանաստեղծության մի սևագիր տարբերակ: Ուղղված է Շուշանիկ Մատակյանին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 111-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՀԵԶ ՈՒ ՏԽՈՒՐ, ՍԵՎ ԱՉԵՐԻՑ ...» (էջ 171, 425)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1896. 18 մարտի. Թիֆլիս»: «Աստղիկ ու ծաղիկ» շարքի 8-րդ բանաստեղծությունն է, որն ակնարկում է հեղինակի և Շուշանիկ Մատակյանի սիրո տխուր պատմությունը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 41: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

[«ԵՎ ԵՐԲ ՍԱՌԸ ՁՅՈՒՆՈՎ ԾԱԾԿՎԻՆ...»] (էջ 172)

Գրել է, ըստ ինքնագրի, «1896 թ. 13 դեկտեմբերի. Երևան»: «Իմ օրագրից (Կցկտուր թերթեր)» շարքի երկրորդ բանաստեղծությունն է: Շարքն սկսվում է հետևյալ բնաբանով.

Երկրային չեն այն հիմարի կեր ու խումն.
Նրան մղում է հուզմունքը դեպ հեռուն.
Նա համարյա անտեղյակ է իր հիմարությանը.
Նա երկնքից պահանջում է ամենից չքնաղ աստղերը.
Եվ երկրից էլ այն ամենայն վեհ ու վսեմ հաճույքները:
Եվ այն ամեն մոտիկը, և այն ամեն հեռուն.
Նրա խորն հուզվող կուրծքը չի բավակա<նա> ցնում...
Գյոթե. «Ֆաուստ». (Մեֆիստոֆելի խոսքերը):

Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 230: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 47: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԴՈՒՔ ԻՆՁ ԱՍՈՒՄ ԵՔ - «ՏՈԿԱՎ ՍՈՎՈՐԻՐ...» (էջ 173, 425)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1897. Ալեքսանդրապոլ»: ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 31-32-ում այս բանաստեղծության սևագիր տարբերակն է՝ գրված, հավանաբար, 1897 թ. ամռանը Հառիճում, քանի որ ինքնագրի հաջորդ թերթին գրառված է «Ես հյուսեցի քու անունով...» սկսված-

քով բանաստեղծությունը՝ թվագրված՝ «Հառիճ. 1897. հուլիս»: Ի դեպ, դրանից ուղիղ մեկ տարի առաջ՝ 1896 թ. հուլիսին, իր առաջին բանտարկության ժամանակ, Իսահակյանը գրի է առել բանաստեղծության՝ ներքին հանգավորում ունեցող արձակ տարբերակը (ԳԱԹ, ԱԻՖ, 8-I, 5-6): Առաջին անգամ տպագրվել է՝ ԳՀ, 2006, Ա (Ե), 239-240 (Ա. Վարդանյան, Ավ. Իսահակյանի անտիպ էջերից): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 3-II, 32: Տպագրվում է ինքնագրից:

ՏՂԱՅԻ ՏԱՂԸ (էջ 174, 426)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1897 թ. Ալեքսանդրապոլում, քանի որ երրորդ քառատողը «Թե՛ մարդ, թե՛ հավք ընկեր ունի...» բանաստեղծության (1897 թ. նոյեմբերի 26) երկրորդ քառատողի տարբերակն է: ԳԱԹ, ԱԻՖ, 36-I, 45-ում պահվում են նույն երկի առաջին երկու քառատողերը, իսկ 48-րդ էջում գրի է առնված նրա սևագիր մի տարբերակ, որի երկրորդ քառատողը, իր հերթին, համընկնում է «Ալագյազի մանիներ» պոեմի «Տղայի տաղը» երգի երրորդ քառատողին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 9-II, 4: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԳԻՇԵՐՆ ԵԿԱՎ, ԱՍՏՂԵՐՆ ԵԼԱՆ...» (էջ 175, 427)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «29 հունվարի. 1898 թ. Ղազարապատ գյուղ»: Այն «Աստղիկ ու ծաղիկ» շարքի 3-րդ բանաստեղծությունն է՝ նվիրված Շուշանիկ Մատակյանին: Բանաստեղծական այս շարքն սկսվում է հետևյալ բնաբանով.

Վարդը, շուշանը, արևը, աղավնին -
Վառ սիրով ես առաջ կսիրեի բոլորին:
Էլ նրանց չեմ սիրում.- միայն հիմի կսիրեմ
Քնքուշին, այն Սրբին, Նազելուն, այն Մեկին.
Նա ինքն է աղբուրը սիրո այն ամե՛ն.
Ինքն է վարդը, շուշանը, արևը, աղավնին:

Հ.Հայնե:

Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 38: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՍԻՐՏՍ ՑՈՂՎԱԾ ՔՆՔՈՒՇ ԹԱԽՏՈՎ...» (էջ 176, 427)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝

«<18>98 թիվ. 9 փետր<վարի>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 20: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԸՆԿԵ՛Ր ԻՄ, ԸՆԿԵ՛Ր, ՄԻ՛ ԱՍԱ ԱՑԴՊԵՍ...»(էջ 177)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1898 թ. փետրվարին, քանի որ ինքնագրի նույն էջում գրի առնված «Սիրտս ցողված քնքուշ թախծով...» բանաստեղծությունը թվագրված է՝ «<18>98 թիվ. 9 փետր<վարի>»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 20: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

[«ԱՐԵՎԻ ՏԱԿ, ԾՈՎԻ ԱՓԻՆ...»] (էջ 178, 427)

Գրել է, ըստ ինքնագրի, «1898 թ. 16 մայիսի, Օդեսա»: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 232: Ավետիք Իսահակյանը ցարական Ռուսաստանի կառավարության որոշմամբ 1898 թվականի ապրիլից մինչև 1898 թվականի դեկտեմբերը, որպես հայ ազգային-ազատագրական պայքարի անվանի գործիչ, աքսորվել է Օդեսա: Օդեսյան բանաստեղծություններից չատերում արտահայտված են Իսահակյանի մտորումները՝ առնչվող ծովի հավիտենական կերպարին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 54-55: Տպագրվում է ՀԵ-ից:

[«ԴՈՒՄԱՆ ՍԱՐԻՑ ՋՈ՛ՒՐ ԿՈՒԳԱ...»] (էջ 179)

Գրել է, ըստ ինքնագրի, «1898 թ. 7 օգոստոսի. Օդեսա», բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 232: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 37: Տպագրվում է ՀԵ-ից:

Ա. <Մ.-Ի> ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 180, 427)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1898 թ. Օդեսա»:

Բանաստեղծությունը նվիրված է Իսահակյանի մտերիմ ընկեր, հայ կամավորական, մարտական խմբերի կազմակերպիչ Ավետիք Մալոյանի (1864-1896) հիշատակին, որը գազանաբար սպանվել է հայ-թուրքական սահմանն անցնելիս Կարսի մերձակայքում 1896 թ. աշնանը: Իսահակյանին խորապես հուզել է ընկերոջ ողբերգական մահը: «Ավոն մեռավ բնության կատաղի ճիրանների տակ,- գրում է նա իր օրագրում,- անհայտ երկնի տակ, անհայտ շիրմում - մեզնից շա՜տ հեռու, հեռո՛ւ...» (Հ, 238): Իր գրառումներում բանաստեղծը շարունակ հիշում և սգում

է Ավոյի՝ այդ «սուրբ մարդու» անդառնալի կորուստը: «Մենակ, ամայի դաշտում ընկած է քու շիրիմը, իմ ընկեր,- մտորում է նա,- աղքատ, անխաչ. վայրի բաթաթն է գրկել քեզ - սիրտս է գրկել քեզ, սիրտս է գրկել քեզ...» (Հ, 233): Իսահակյանը Ավետիք Մալոյանի հիշատակին ձոնել է նաև այլ բանաստեղծություն: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-II, 4-5: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՄՊԵՐՆ ԸՆԿԱՆ ԾՈՎԻ ՎՐԵՆ...» (էջ 181)

Գրել է, ըստ ինքնագրի, «1898 թ. Օդեսա»: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 234: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 4: Տպագրվում է ինքնագրից:

«ՔԱՐ ԳՑԵՑԻՐ, ԾԱՌԻՍ ԴԻՊԱՎ...» (էջ 182)

Գրել է, ըստ ինքնագրի, 1898 թ.: Ըստ նախնական մտահղացման՝ երկը պիտի վերաբերեր «Ալագյազի մանիներ» շարքին. ինքնագրի լուսանցքում գրված է՝ «Ալագյազի մանիներ», սակայն հետագայում չի ընդգրկվել պոեմի տեքստի մեջ: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 231: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 9: Տպագրվում է ՀԵ-ից:

[ԻՄ ՎԵՀՈՒԹՑՈՒՆԸ] (էջ 183, 428)

Գրել է, ըստ ինքնագրի, «1899 թ. 14 մարտի»: Բանաստեղծի վաղ շրջանի խոհափիլիսոփայական բնույթի առաջին գործերից է: Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 226: «Իմ օրագրից (Կցկտուր թերթեր)» շարքի 19-րդ բանաստեղծությունն է: Ձեռագրում վերնագրից վերև նշված է «Տե՛ս երես 87, տպել այստեղ» (խոսքը «Նամակ ընկերիս» բանաստեղծության մասին է): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 58: Տպագրվում է ՀԵ-ից:

ՀԻՆ ԳՐՎԱԾՔՆԵՐԻՑ (էջ 184, 428)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1899. Հունիս. Սարիղամիշ»: ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 35-ում գրի է առնված այս բանաստեղծության մի տարբերակ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 3-IIբ, 30: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՁԱՆԳ (էջ 185, 429)

(ՆՐԱ ՂՈՂԱՆՋՆԵՐԸ)

Ինքնագրում երկի գրության թվականը նշված է հետևյալ կերպ. «9/19

հուլիս». Հավանաբար դա 1899 թ. հուլիսի 19-ն է: Բանաստեղծությունն ունի ենթախորագիր (Նրա ղողանջները): Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Ինքնագիրը պահպանվել է «Մուրճի» արխիվում, ի թիվս այն նյութերի, որոնք ցարական գրաքննությունն արգելել է տպագրել: ԳԱԹ, ԱԻՖ, 133-II-ում պահպանվում է բանաստեղծության մի տարբերակը՝ առանց վերնագրի և թվագրված՝ «1919, հուլիսի 6»: Կյանքի և մահի փոխհարաբերության փիլիսոփայական խնդրի բանաստեղծի անդրանիկ մեկնաբանումներից մեկն է: Հրապարակվել է առաջին անգամ «Սովետական գրականություն», 1958, թիվ 10, էջ 99-100, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր վերնագրի տակ (հրապարակումը՝ Ա. Ինճիկյանի), այնուհետև՝ ՀԵ, էջ 154-155: «Տիեզերական Զանգ» վերնագրի ներքո Իսահակյանն ունի ևս մի բանաստեղծություն՝ գրված 1899 թ. սեպտեմբերին, Ալեքսանդրապոլում, սակայն սրանք բոլորովին տարբեր բանաստեղծություններ են: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԴՈՒՆ ՀՈԳԻՍ ԵՍ, ՀՈԳԻՍ ԿՈՒԶԵՍ...» (էջ 186)

Ինքնագրում նշված են քառյակի գրության տարեթիվը և վայրը՝ «1899. 21 հոկտեմբեր. Բաքու»: Իսահակյանի երկերի հատորներում չի գտնվել: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 13-I, 1: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՆՄԱՀԱԿԱՆ ԳԻՆԻ ԵՍ, ՑԱ՛Ր...» (էջ 187)

Ինքնագրում նշված են քառյակի գրության տարեթիվը և վայրը՝ «1899թ. 21 հոկտեմբ<երի>. Բաքու»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 13-I, 2: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱԶԻԶ ՑԱՐ ՋԱՆ, ՔԵԶԻ ՄԱՏԱՂ...» (էջ 188)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1899 թ. հոկտեմբերի երկրորդ կեսին Բաքվում, քանի որ ինքնագրի նույն էջին գրի առնված «Ինչ օրի հասա, սև օրի հասա...» բանաստեղծության տարբերակը թվագրված է՝ «14-ին հոկտեմբ<երի>. 1899. Բաքու»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 18-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԽՈՐ ՔՆԻՍ ՄԵՋ ԵՐԱԶ ՏԵՍԱ...» (էջ 189, 430)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1899 թ., քանի որ ինքնագրի նույն էջում «Աղբյուրի մեջ մի մարալ...» բանաստեղծության տարբերակն է՝ գրի առնված 1899 թ. Հառիճում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 19-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

[«ՔՈՒ ՏՆԱԿԴ ԲԱՂԻ ՄԻՋԻՆ...»] (էջ 190, 430)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1899 թ., քանի որ նույն էջի նախորդ բանաստեղծությունը՝ «Տեսա յարս ալ ու վալա...», գրված է 1899 թվականին: Երկը «Աստղիկ ու ծաղիկ» շարքի 13-րդ բանաստեղծությունն է: Վերնագրի փոխարեն դրված XIII թվահամարը ջնջված է և կողքին ավելացված՝ **հավելվածում**: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-III, 84-86: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԻՄ ՄԱՆՈՒԿ ԸՆԿԵՐ (էջ 192)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Դատելով ձեռագրի բնույթից՝ կարելի է ասել, որ բանաստեղծությունը գրված է 1890-ական թթ. երկրորդ կեսին: Ամենայն հավանականությամբ բանաստեղծությունը վերաբերում է Իսահակյանի առաջին սիրուն՝ ղազարապատցի դեռատի գեղեցկուհի Զարոյին: Հենց Զարոյին են ուղղված Իսահակյանի հետևյալ խոսքերը 40-ական թթ. ծոցատետրում. «Զարոյի պատկերը լուսապսակի պես միշտ գլխուս վերևն է»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 33-I: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒ ՊՍԱԿ ԿԵՐԹԱՍ ՑԱՐԻԴ ՀԵՏ ՔՈ ՆՈՐ...» (էջ 193)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Ստեղծման հավանական ժամանակաշրջանն է 1890-ական թթ. երկրորդ կեսը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 124-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

. «ԴՈՒ ՄԻ՛ ՀԱՎԱՏԱ, ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐ...» (էջ 194)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Հավանաբար գրված է 1895-1898 թթ.: Նույն ինքնագրի վրա գրի է առնված «Եվ հրաշագործ քո խոսքը արդար...» բանաստեղծությունը: Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 134-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«Ա՜խ, ԴԵՊԻ ՔԵԶ ՎՐԵԺ ՈՒՆԻՄ...» (էջ 195, 430)

Դատելով ինքնագրի բնույթից՝ կարելի է ենթադրել, որ գրել է 1890-ական թթ. երկրորդ կեսին: Նույն ինքնագրի 1-4-րդ էջերում մտքեր, խոհեր, անուններ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 17-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«...ՈՒ ԱՉԵՐՍ ՀԱՌԱԾ ԱՍՏՂԻՆ...» (էջ 196)

Ինքնագիրը գրի է առնված Իսահակյանի «Բանաստեղծություններ» Ա

Տետրում, 1892, 15 մայիսի, Ալեքսանդրապոլ, էջ 19: Տետրում զետեղված բանաստեղծությունները ստեղծվել են 1892-1898 թթ.: Հետևաբար ծանոթագրվող բանաստեղծության գրության ժամանակը կարելի է համարել 1890-ական թթ. երկրորդ կեսը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 19: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՍՐՏՈՒՄՍ ԽՈՐՈՒՆԿ ՎՇՏԵՐ ԿԱՆ...» (էջ 197, 431)

Գրության ստույգ թվականն ինքնագրում նշված չէ, դատելով բնագրից՝ գրության մոտավոր ժամանակը կարելի է համարել 1895-1897 թթ.: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 228: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 1-IIբ, 18: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԼԱՑՆԱԼԻՔ ԾՈՎՈՒՄ - ՀԶՈՐ, ԾԼՔԾԼՔՈՒՆ...» (էջ 198, 431)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1890-ական թթ. երկրորդ կեսին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը, ի թիվս այլ անտիպ բանաստեղծությունների՝ «Նորք», Երևան, 1992, N 3-4, էջ 99-100, «Անտիպներ Վարպետից» ընդհանուր խորագրով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 149ա-II: Տպագրվում է «Նորք»-ից:

«ՈՎ ԿՏԱ ԻՆՁ ՈՒԺ՝ ՀԶՈՐ ՈՒ ԱՀԵՂ...» (էջ 202, 431)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության ամսաթիվը՝ «10 հուլիս», տարեթիվը նշված չէ: Անմիջական կապվածություն ունի «Այսպիսի դառն, դաժան օրերում...» բանաստեղծության հետ (ՄՃ, 1904, N 8, էջ 13) (ընդհանուր տրամադրության շեշտադրումներ), կարելի է ենթադրել, որ այն նույնպես գրված է 1904 թ.: Ինքնագիրը՝ երկու թերթիկ, հեղինակային ուղղումներով, պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 198-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒ ԱՂԲՅՈՒՐԻ ՊԵՍ ԿԱՐԿԱԶՈՒՄ ԷԻՐ...» (էջ 204)

Ինքնագրում նշված են ստեղծման ամսաթիվը և վայրը. «1902. 19 հուլիս. Կարս»: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 237: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 26-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԵՍ ՍԻՐԵՑԻ ԵՎ ԱՑՐՎԵՑԻ...» (էջ 205, 431)

Գրի է առնված Իսահակյանի «Բանաստեղծությունների» (1898-1902 թթ.) անկազմ տետրում, էջ 2: Ստեղծման հավանական տարեթիվը 1902 թվականն

է: Մատիտագիր բնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-II, 2: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՍ ԿԵՐԹԱՄ, ՃԱՄՓԵՍ ՍԵՎ Է...» (էջ 206)

Գրի է առնված «Բանաստեղծություններ» (1898-1902 թթ.) անկազմ տետրում, էջ 3, ուստիև ստեղծման հավանական տարեթիվը 1898-1902 թթ. է: Բնագրի նույն էջի աջ կողմում գրված է. «Դնել Բուղուրլոց պատմության մեջ»:

Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-II, 3: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՈՂՋ ԵՐԿԻՆՔԸ ՍԱՌՆ ՈՒ ՓԱՑԼՈՒՆ ...» (էջ 207)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Գրված է, հավանաբար, 1902 թ. Բալախանիում: ԳԱԹ, ԱԻՖ, 164-II-ում պահվում է քառյակի տարբերակը: Նույն մոտիվը կրկնվում է նաև ԳԱԹ, ԱԻՖ, 122-II- ի ձեռագրում «Դուրսը գիշեր...» բանաստեղծության մեջ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-II, 12: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՁԵՐ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՁԵՐ ՍՐՏԵՐԻ ՊԵՍ...» (էջ 208, 432)

Ինքնագիրն Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների (1898-1902 թթ.) անկազմ տետրում է, էջ 11: Այս երկին նախորդող «Պսակ. Որսկան Ախպեր» բանաստեղծությունը թվագրված է 1902 թ.: Ուստիև ծանոթագրվող բանաստեղծության ստեղծման թիվը նույնպես 1902 թ. է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 2-II, 11: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՎԱՂՈՒՑ ԷՐ ՆԻՐՀԱԾ, ՀԻԱՍԹԱՓ ՈԳԻՍ...» (էջ 209, 432)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «17 փետրվ<արի>. 1903. Բաքու»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 27-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«< ... > ԸՄԲՌՆԵԼԻ...» (էջ 210, 132)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ 1903 թ.: Այս, ինչպես և 1903 թվականին գրած Իսահակյանի մի շարք բանաստեղծություններ զետեղված են ԳԱԹ, ԱԻՖ, 5-II-ում պահվող փոքրաչափ տետրում: Բանաստեղծությունը գրի է առնված տետրի 1-4-րդ էջերին (ԳԱԹ, ԱԻՖ, 5-II, 1-4): Տետրի առաջին էջի անկյունը պատռված է, ուստի բանաստեղծության առաջին և չորրորդ քառատողերը հնարավոր չէ լրիվ վերականգնել: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԻՆՉՊԵՍ ԱՂԲՅՈՒՐԸ ՄԱՔՈՒՐ, ԿԱՐԿԱՋՈՒՆ...» (էջ 212, 432)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ 1903 թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 5-II, 9: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՔԵԶ ԵՐԱՋԵԼՈՎ՝ ԵՍ ՃԱՄՓԱ ԸՆԿԱ...» (էջ 213, 432)

Ինքնագիրը գրի է առնված Իսահակյանի «Բանաստեղծությունների» (փոքրագիր) տետրում 1903 թ., էջ 16: Երկին նախորդած «Օտար, ամայի ճամփեքի վրա...» բանաստեղծությունը թվագրված է «1903. 31 հուլիս. Ղազարապատ», այնպես որ ծանոթագրվող բանաստեղծությունը հավանաբար գրված է 1903 թ. Ղազարապատում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 5-II, 16: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԷՑ ՎԱ՛Խ, ԱՆՑԱՆ ՕՐԵՐՍ, ԱՆՑԱՆ...» (էջ 214, 433)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1903 թ., քանի որ ինքնագրի նույն էջին գրի է առնված «Ա՛խ, սիրտս անմեր ու սիրտս անմեր...» (1903) բանաստեղծության մի տարբերակ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 32-II, 1: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴԱՐԴԸ ՍՐՏԻՍ՝ ԿՑԱՆՔՍ ԵՄ ՄԱՇՈՒՄ...» (էջ 215, 433)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1903 թ., քանի որ ինքնագրում նախորդ բանաստեղծությունը («Եվ սերըդ սիրտըս կարեվեր խոցեց...») գրված է 1903 թվականին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 5-II, 6: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԷՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՄԵՆԱԿ ԵՄ...» (էջ 216)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1903 թ., քանի որ ինքնագրի նույն էջին գրի առնված «Իմ աղոթքը» բանաստեղծության տարբերակը թվագրված է՝ 1903 թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 5-II, 7: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՀԱՏ Է ՄԻԱՑՆ...» (էջ 217, 433)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության ամսաթիվը՝ «31 հունվարի»: Գրված է 1904 թ., քանի որ ինքնագրի նույն և հաջորդ էջերին գրի առնված «Դու անցորդի պես քեզ միայն զգա...» բանաստեղծությունը գրված է 1904 թ. նույն օրը՝ «31 հունվար»: Արձագանքում է «Տիեզերական զանգ» («Տիեզերքը ողջ – մի մեծ, անհուն զանգ, /Եվ հոգիս – նրա լեզվակը վսեմ») և «Այսպիսի դառն, դաժան օրերում...» («Սուրբ ճշմարտության ուղին վեհության») (Մճ, 1904, N 8, էջ 13) բանաստեղծությունների ընդհանուր ոգուն և պոետական պատկերներին: Առաջին անգամ տպագրվել է՝ ԳՀ, 2008-2009, Ա-Բ (Թ-Ժ), էջ 169 (հրապարակումը՝ Ա. Վարդանյանի): Այս, ինչպես նաև տպագրված և անտիպ մի շարք այլ բանաստեղծություններ զետեղված են ԳԱԹ, ԱԻՖ, 7-II-ում պահվող կապույտ կազմով մի տետրում, որի շապիկին գրված է. «Մուզա. Ավ. Իսահակյան. Թիֆլիզ. Հոկտեմբ<եր>. 1904»: Բանաստեղծությունը գրի է առնված տետրի 14-րդ էջում (ԳԱԹ, ԱԻՖ, 7-II, 14): Բանաստեղծությունն ունի բնաբան՝ «ճշմարտությունը խոսի՛ր այս աշխարհի հզորների առջև» Զենդ - Ավեստա»: Վերցված է հին պարսկական կրոնական ուսմունքի՝ զրադաշտության «Ավեստա» սուրբ գրքից (1-ին հազարամյակ, մ.թ.ա.), որի հիմքում Զրադաշտ կամ Զորոաստր մարգարեի քարոզներն են: Զրադաշտության ուսմունքի յուրովի արձագանքը հանդիսացավ Նիցշեի «Այսպես է խոսում Զրադաշտը» կոթողային աշխատանքը, որը մեծ ազդեցություն է թողել երիտասարդ Իսահակյանի վրա: ԳԱԹ, ԱԻՖ, 177-II-ում գրի է առնված այս բանաստեղծության մի տարբերակ: Տպագրվում է ինքնագրից:

«ՍՐՏԵՐԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՊԱՌԱԺ ՈՒ ՔԱՐ...» (էջ 218, 434)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության ամսաթիվը՝ «4 փետրվ<արի>»: Գրված է 1904 թ. (տե՛ս նախորդ ծանոթագրությունը): Առաջին անգամ տպագրվել է՝ ԳՀ, 2006, Ա (Ե), էջ 237-238 (**Ա. Վարդանյան**, Ավ. Իսահակյանի անտիպ էջերից): Իսահակյանը բանաստեղծության բնաբան է ընտրել պարսիկ հանճարեղ բանաստեղծ Ֆիրդուսիի (մոտ 940-1020 կամ 1030 թթ.) հետևյալ տողը՝ «Նույնիսկ խավար Ահրիմանը վերջը պիտի հալվի լույսի մեջ»: Բանաստեղծության մեջ օգտագործված ուղիղ փակագծերը՝ //, հեղինակինն են: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 7-II, 15-16: Տպագրվում է ԳՀ-ից:

«ԱՋՔԵՐՍ ՊՂՏՈՐ, ԱՋՔԵՐՍ ԽԱՎԱՐ...» (էջ 219, 435)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Նոր Նախիջևան. 1904 թ. փետրվ<ար>-մարտ»: Ինքնագրի նույն էջում գրի են առնված ևս երկու բանաստեղծություն՝ «Արազի ծնունդ» և «Մի մարալ աղջի՛կ...», որոնք ունեն մեկ ընդհանուր խորագիր՝ «Երգեր ու վերքեր». Բ հատոր (Նոր ներշնչմունք - Նոր Շուշիկ)»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 38-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԱՐԱԶԻ ԾՆՈՒՆԴԸ (էջ 220)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Նոր Նախիջևան. 1904 թ. փետրվ<ար>-մարտ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 38-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԻ ՄԱՐԱԼ ԱՂՋԻԿ...» (էջ 221)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության վայրը և տարեթիվը՝ «Նոր Նախիջևան. 1904 թ. փետրվ<ար>-մարտ»: Առաջին անգամ տպագրվել է Ավագ Խաչատրյանի «Ավետիք Իսահակյան» գրքում (էջ 81), ինչպես նշում է գրականագետը, այս բանաստեղծությունը «գրված է նոր սիրով լցված, «Նոր ներշնչման - նոր Շուշիկի»՝ Աննիկի սիրո ազդեցությամբ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 38-II: Տպագրվում է ԱԽ-ից:

«ՑՈՒՐՏ Է ՈՒ ՁՄԵՌ...» (էջ 222, 435)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝«30 ապրի<լի>.<1>904. Մոսկով»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 49-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՐԱԶԻՍ ՏԵՍԱ, ՈՐ ՄՈՌԱՑՈՒԹՑԱՆ ԺԱՅՌՈՏ ԱՓԵՐՈՒՄ...» (էջ 223, 435)

Գրել է, ըստ ինքնագրի, «1904. 30 ապրիլ. Մոսկվա»: Նույն էջի վրա է նաև «Ցուրտ է ու ձմեռ...» բանաստեղծությունը: Բնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 49-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԱՆՈՒԿ ՕՐԵՐԻՑ ԲԱԽՏԻ ԵՏԵՎԻՑ...» (էջ 224)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1904 թ. մայիսին Մոսկվայում, քանի որ նույն ինքնագրում գրի առնված նախորդ և հաջորդ բանաստեղծությունները («Վիշտս ծանր է, սրտիս վերքը՝ անդարման...» և «Մարդկանց ժպիտին դու մի՛ հավատա...») թվագրված են՝ «4 մայի<սի>. 1904. Մոսկով» և «1 մայիս. 1904, Մոսկով»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 50-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԱՐԴԿԱՆՑ ԺՊԻՏԻՆ ԴՈՒ ՄԻ՛ ՀԱՎԱՏԱ...» (էջ 225, 435)

Ինքնագրում նշված են բանաստեղծության ստեղծման տարեթիվը և վայրը՝ «1 մայիս. 1904. Մոսկվա»: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 238: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 50-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՎԻՇՏՍ ԾԱՆՐ Է, ՍՐՏԻՍ ՎԵՐՔԸ՝ ԱՆԴԱՐՄԱՆ ...» (էջ 226, 435)

Գրել է, ըստ ինքնագրի, «4 մայիս, 1904, Մոսկվա»: Առաջին անգամ տպագրվել է ի թիվս այլ անտիպ բանաստեղծությունների՝ «Նորք», 1990, N 3, էջ 121-122, հրապարակումը՝ Ավիկ Իսահակյանի, այնուհետև՝ ՀԵ, 239, ԱԽ, 240-241: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 50-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՍԵՎ ԱՐԾԻՎՆ ԱՀԱ ԳԼԽԻՍ ՎԵՐԱՑՈՎ...» (էջ 227, 436)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության ամսաթիվը և վայրը՝ «16 մայիսի. Մոսկով»: Գրված է 1904 թ., քանի որ Իսահակյանը Մոսկվայում եղել է 1904 թ. ապրիլ-մայիսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 36-II, 1-2: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՆԱՊՈԼԵՈՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԻ ԱՌԱՋ (էջ 229, 436)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «16 մայիս. 1904. Մոսկով»: Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտի (1769-1821) դամբարանը գտնվում է Փարիզի Հաշմանդամների տան (Hotel des Invalides) հարակից Հաշմանդամների տաճարում (Eglise du Dome): Նապոլեոնի դին փոխադրվել է այս տաճար 1840 թ. Սուրբ Հելինե կղզուց, որտեղ 1821 թվականին իր մահկանացուն կնքեց Նապոլեոնը: Ուղիղ եկեղեցու գմբեթի ներքո՝ կլոր սրահում, տեղադրված է Նապոլեոնի՝ մուգ կարմիր գրանիտե սարկոֆագը (քարադամբարանը): Ի դեպ նույն թեմայով բանաստեղծություններ են գրել Պուշկինը, Լերմոնտովը («Последнее новоселье», 1841), Տյուտչևը («Могила Наполеона»), Հայնեն և ուրիշներ: Իսահակյանն իր երկում բարձր գնահատական է տալիս Նապոլեոնին, անվանում նրան «Գերամարդ», «Աստվածային հզոր խարազան»: Երիտասարդ Իսահակյանի համար Նապոլեոնը գերմարդու կատարյալ խորհրդանիշ էր: Իսահակյանը տեսել է Նապոլեոնի դամբարանը 1900 թ. օգոստոսին, երբ եղել է Փարիզում: Այս, ինչպես նաև մի շարք այլ բանաստեղծություններ զետեղված են ԳԱԹ, ԱԻՖ, 6-II-ում պահպանվող անկազմ տետրում: Բանաստեղծությունը գրի է առնված տետրի 2-4-րդ էջերում (ԳԱԹ, ԱԻՖ, 6-II, 2-4):

Տետրի առաջին էջում պահպանվել են բանաստեղծության որոշ հատվածների սևագիր մշակումներ: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒ ՍԻՐՈՒՆ ԷԻՐ, ԳԵՂԵՑԻԿ ԷԻՐ...» (էջ 231)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, հավանաբար գրված է 1904 թ. Մոսկվայում, քանի որ տետրի նախորդ էջում գրի առած («Վարդի շրթունքըդ, աղջի՛կ աչագեղ...» և «-Սիրո՛ւն աղջիկ, երկիր լինիմ...» բանաստեղծությունների տարբերակները թվագրված են «17 մայիսի. 1904» և «18 մայիս. 1904» և գրված են Մոսկվայում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 6-II, 6-7: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՎԵՀ ԸՆԿԵՐՆԵՐՍ ԿՌՎԻ ԴԱՇՏ ԹՌԱՆ ...» (էջ 232)

Գրել է, ըստ ինքնագրի, «Բաքու. 1904. հունիսի 30»: Բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել: Տպագրել է առաջին անգամ Ավիկ Իսահակյանը, ի թիվս այլ անտիպների, «Գրական թերթ», 1985, հոկտեմբերի 25, «Նոր չիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից» ներածականով, այնուհետև՝ ՀԵ, 172-173: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 37-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՍԻՐՏՄ ԴԱՐԴԻ ՇՈՎ, ՍԻՐՏՄ ՎԻՐԱՎՈՐ...» (էջ 233, 438)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, հավանաբար գրված է 1904 թ. հոկտեմբերին Թիֆլիսում, քանի որ ինքնագրի հաջորդ էջում գրի առնված «Մարդկանց արցունքներն թափվում են անվերջ...» բանաստեղծությունը գրված է 1904 թ. հոկտեմբերի 7-ին Թիֆլիսում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 7-II, 1: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՑՐՎՈՒՄ ԵՄ ԵՍ ԱՐԵՎԻ ՊԵՍ...» (էջ 234, 439)

Հեղինակի կողմից ինքնագրում նշված են քառյակի արտագրության տարեթիվը և վայրը [հոկտեմբ<եր>. 1929. Երևան]: Երկը գրված է եղել ավելի վաղ շրջանում, և նույն ինքնագրում Իսահակյանը նշել է բանաստեղծության ստեղծման իսկական տարեթիվը՝ «1904 թ.»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 40-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՋԻՆՋ ՇՈՎԱԿԻ ՄԵՋ ԿԱ ՄԻ ԼՈՒՌ ԿՂՋԻ...» (էջ 235)

Երկը գրի է առնված Իսահակյանի «Բանաստեղծություններ» կապույտ կազմով, «Մուզա» վերնագրված 24 էջանոց տետրում թվագրված՝ «Թիֆլիս. 1904. հոկտեմբեր», էջ 21: Գրության թվականն ըստ ինքնագրի՝ 1904 թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 7-II, 21: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԼՍՈՒՄ ԵՄ ՈՐՈՇ՝ ԱՆՈՒՇ ՀՆՉՑՈՒՆՆԵՐ...» (էջ 236)

Ինքնագրի առաջին էջում «Գիշերն երազով, օրը կարոտով...» բանաստեղծությունն է, որը թվագրված է «1904. հուլիս 22. Ալեքսանդրապոլ»: Ծանոթագրվող երկը բնականաբար գրված պետք է լինի 1904 թ.: Ինքնագրի վերջում հեղինակի ձեռքով գրված է՝ «կանոնավորել և մշակել»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 39-II, 2: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԽՈՐ ՎՇՏԵՐԻ ՄԵՋ ԼԵՋՈՒ ՋՈՒՆԵՑԱ...» (էջ 237, 439)

Բանաստեղծության թվականը նշված չէ, մատիտագիր է: Նույն թերթիկի հաջորդ էջում ռուս գրականագետ Ցու. Վեսելովսկուն Իսահակյանի 1904 թ. գրած պատասխան նամակի սևագիրն է: Հետևաբար բանաստեղծությունը գրված է 1904 թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 153-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՎԱ՛Ղ, ՑՆԴՎԵՑ, ԻՆՉՊԵՍ ԵՐԱԶԱՆՔ...» (էջ 238, 439)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության ամսաթիվը՝ «16 հունվ<արի>»: Գրված է, հավանաբար, 1905 թ., քանի որ ինքնագրի հաջորդ էջին գրի է առնված «Բադերը վայրի թռան չվարած...» բանաստեղծության տարբերակը, որի վերջնական տեքստը առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1905, N 4, էջ 46: Նույն՝ 1905 թվականին ստեղծված երկեր են: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 104-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՀՈԳԻՍ ԹՌՋՈՒՄ Է ՄՈԼՈՐ ՈՒ ԽՈՏՈՐ...» (էջ 239, 439)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության ամսաթիվը՝ «16 հունվ<արի>»: Գրված է, հավանաբար, 1905 թ., քանի որ ինքնագրի նույն էջին գրի են առնված «Ավա՛ղ, ցնդվեց, ինչպես երազանք...» և «Բադերը վայրի թռան չվարած...» բանաստեղծությունները, որոնց ստեղծման թվականը համարվում է 1905թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 104-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒ ԻՆՁ ՍԻՐՈՒՄ ԵՍ. ՔՈՒ ՄԱՔՈՒՐ ՀՈԳԻՆ...» (էջ 240, 440)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության ամսաթիվը՝ «16 հունվ<արի>», առանց տարեթվի: Գրված է, հավանաբար, 1905 թ., քանի որ ինքնագրի նույն թերթիկների վրա են գրված «Ավա՛ղ, ցնդվեց, ինչպես երազանք...» և երկու այլ բանաստեղծություն՝ թվագրված 1905թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 104-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

<ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ> (էջ 241, 440)

Գրության ստույգ թվականն ինքնագրում նշված չէ, գրված է, ըստ ամենայնի 1905 թ.: Նվիրված է ՀՅԴ կարկառուն գործիչ, գրականագետ, Իսահակյանի սիրելի ընկեր Նիկոլ Աղբալյանին (1875 – 1947): Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը՝ «Նորք», 1992, N 3-4, էջ 101՝ «Անտիպներ Վարպետից» խորագրով, այնուհետև՝ Աւետիք Իսահակյան «Դո՛ւ, յաւերժող իմ Հայաստան», Լոս Անճելըս, «Նոր կյանք» 1996, էջ 101 (աշխատասիրությամբ Ավիկ Իսահակյանի), ապա Ավետիք Իսահակյան, Ընտիր երկեր, Ե., 2007, էջ 298 (կազմող և առաջաբանի հեղինակ՝ Ավիկ Իսահակյան): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 125-II: Տպագրվում է ինքնագրից:

«ԱՂՋԻ՛Կ ՆԱՋԵԼԻ, ԱՂՋԻ՛Կ ԳԵՂԵՑԻԿ...» (էջ 242, 440)

Գրության տարեթիվն ինքնագրում նշված չէ, հավանաբար գրված է 1905 թ., քանի որ ինքնագրի նույն թերթիկի վրա գրված է «Հիմա հեռավոր, վեհ Հիմալայան...» բանաստեղծության սևագիրը՝ թվագրված 1905 թ.: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 243: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 177-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«Ո՛Վ ԱԶԱՏՈՒԹՅՈ՛ՒՆ, ԱՇԽԱՐՀԻ ԱՐԵՎ...» (էջ 243, 440)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, գրված է, հավանաբար, 1905 թ., քանի որ ԳԱԹ-ի նույն համարի տակ պահվող «Մենակի (Ե. Առատամյան) նվիրական ստվերին» և «Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի...» բանաստեղծությունները թվագրված են 1905 թվական: Տպագրվել է առաջին անգամ հետմահու՝ Աբաս Իսահակյանի կողմից «Գրական թերթ», 1965, հոկտեմբերի 29, ի թիվս այլ բանաստեղծությունների, «Հին տետրակներից» ընդհանուր խորագրի ներքո: Իսահակյանի Երկերի ժողովածուներում առաջին անգամ տպագրվել է՝ ՀԵ, 176, այնուհետև՝ ԱԽ, 233: «Ո՛վ ազատություն, դու տիեզերքի /Արև կենարա՛ր, վեհ ազատություն...» սկսվածքով բանաստեղծության մեկ այլ տարբերակը՝ ԳՀ, 2006 Ա (Ե), էջ 234 (Ա. Վարդանյան, Ավ. Իսահակյանի անտիպ էջերից հոդվածը): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 43-II: ԳԱԹ, ԱԻՖ, 8-II, 6-ում և 8-II, 18-ում պահպանվում են այս բանաստեղծության տարբերակները: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՄԱՍԻՍԻ ՄՌԱՅԼ, ԽՈԺՈՌ ԺԱՅՌԵՐԻ...» (էջ 244, 442)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, գրված է, հավանաբար, 1905 թ., քանի որ ԳԱԹ-ում նույն համարի տակ պահվող «Մենակի (Ե. Առատամյան) նվիրական ստվերին» և «Ո՛վ ազատություն, աշխարհի արև...»

բանաստեղծությունները թվագրված են 1905 թվական: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 88-89: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 43-II: ԳԱԹ, ԱԻՖ, 180-II-ում գրի է առնված այս բանաստեղծության մի տարբերակ, որի 1-15-րդ տողերն առաջին անգամ տպագրվել են՝ ԱԽ, 276: Տպագրվում է ՀԵ-ից:

ՎԵ՛Ր ԿԱՑ, ԺՈՂՈՎՈ՛ՒՐԴ (էջ 246, 444)

Գրության տարեթիվն ինքնագրում նշված չէ: Դարասկզբի պատմական իրողությունների յուրօրինակ արձագանքն է, գրության ժամանակը կարելի է համարել 1900-ական թվականների առաջին կեսը: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 80-81, այնուհետև՝ ԱԻԲ, 45-46: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 218-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՆԱ ՍՈՒՐԲ Է, ԲԱՐՁՐ, ԱՄԵՆՔԻՑ ՎԱՍԵՄ...» (էջ 248, 444)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Գրված է սև թանաքով, բարակ թերթի վրա: Դատելով բանաստեղծության ասելիքից՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1900-ական թթ. առաջին կեսին: Անտարակույս, Իսահակյանը երկում նկատի ունի Քրիստափոր Միքայելյանի կերպարը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 194-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՆՈՒՑՆ ԴԱՇՏԵՐԸ՝ ԴԱԼԱՐ, ԱՆԴՈՐՐ...» (էջ 249, 444)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Դատելով ձեռագրի բնույթից՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1900-ական թթ. առաջին կեսին: Ինքնագրի հաջորդ էջին «Ա՜խ, ես ինչքան բախտավոր եմ...» բանաստեղծությունն է՝ հեղինակային ուղղումներով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 196-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՎԱՐԴԵՐԻ ՄԵՋ ՄԱՏԱՂ ԳԱՐՆԱՆ...» (էջ 250, 444)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, դատելով ձեռագրի բնույթից՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1900-ական թվականների առաջին կեսին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 235: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 217-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՍՐՏԵՍ ԿՈՒՑ-ԿՈՒՑ ԱՐՈՒՆ ԿՈՒԳԱ...» (էջ 251, 445)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Ինքնագիր թերթիկի վրա կարմիր մատիտով հեղինակային ուղղումներ կան, և ռուսական մի ինչ-որ

ընկերության կնիք: Գրության հավանական ժամանակը 1900-ական թթ. առաջին կեսն է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 214-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՈՒՐՈՒՐՆ ԵԼԱՎ ՄԵԳԻ ՄԻՋԻՑ...» (էջ 252)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Գրված է մի փոքր թերթիկի վրա, մատիտագիր: Դատելով ձեռագրի բնույթից՝ գրության ժամանակը կարելի է համարել 1900-ական թթ. առաջին կեսը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 220-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԵՐ ՏԱՆԻՔԻ ՄԻ ԱՆԿՑՈՒՆՈՒՄ...» (էջ 253)

Իսահակյանի մոտ հազվադեպ պատահող մանկական բանաստեղծության նմուշ է: Հավանական է, որ գրել է Ա. Ջիլինկարյանի և Տ. Ռաշմաճյանի հետ իր կազմած «Դասընկեր» (Թիֆլիս, 1911) դասագրքի համար, սակայն տեքստում չի գտնվել: Առաջին հրատարակություն: Երկը հավանաբար գրված է 1909-1910 թթ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 184-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՆԳՈՒԹ ԱՂՋԻԿ, ԹՇՆԱՄՈՒ ՊԵՍ...» (էջ 254, 445)

Գրության տարեթիվն ինքնագրում նշված չէ, դատելով ձեռագրի բնույթից՝ կարելի է ասել, որ գրված է 1900-ական թվականների առաջին կեսին: Առաջին անգամ տպագրվել է ի թիվս այլ անտիպ բանաստեղծությունների՝ «Նորք», 1990, N 3, էջ 121, հրապարակումը՝ Ավիկ Իսահակյանի, այնուհետև՝ ՀԵ, 236: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 97-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԵՍ ՍԻՐԵՑԻ, ՍԻՐԵՑԻ ՔԵԶ...» (էջ 255, 445)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Բանաստեղծությունն, ամենայն հավանականությամբ, նվիրված է Շուշանիկ Մատակյանին և գրված է 1900-ական թթ. առաջին կեսին, ինչի մասին վկայում է բանաստեղծությանն անմիջապես հաջորդող գրառումը. «Քո մերժած սիրուց հետո հոգիս գոցվեց. քարացավ, մեռավ. գոցվեց աշխարհի հանդեպ: Դու գիտե՞ս արդյոք, թե ի՞նչ արիր ինձ: Մարդասպան. ուրիշ ի՞նչ անուն ունիս դու»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 132-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՔՈ ՍԻՐՏԸ ԱՑՐԻՐ, ՈՐ ՆՐԱ ԼՈՒՑՍՈՎ...» (էջ 256, 445)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Գրված է սև թանաքով, բարակ թերթիկի վրա, դատելով ձեռագրի բնույթից՝ կարելի է ասել, որ գրված է

1900-ական թթ. առաջին կեսին: Ինքնագրի վրա՝ հեղինակային ուղղումներ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 225-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԱՅՐ-ԵՐԿԻՐ, ԿԱՐՈՏ ԵՄ ՔԵԶԻ...» (էջ 257)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, հավանաբար գրված է 1900-ական թվականների առաջին կեսին: Իսահակյանի Երկերի ժողովածուներում առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 250, այնուհետև՝ ԱԻ II, 345: Ինքնագիրը՝ մատիտագիր, պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 178-II: Ինքնագրի հաջորդ էջին «Կուզեի լիներ կյանքը հավիտյան...» բանաստեղծությունն է: Տպագրվում է ՀԵ-ից:

«Ա՜Հ, ԹԵ ՇԱ՜Տ ԱՊՐԵՍ, ՇԱ՜Տ ՍԵՎ ՊԻՏ ՏԵՄՆԵՍ...» (էջ 258, 446)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Համաձայն ձեռագրի բնույթի՝ գրված է հավանաբար 1900-ական թթ. առաջին կեսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 88-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«Ա՜Հ, ՄԻՆՉԵՎ ՎԱԽՃԱՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ...» (էջ 259)

Ինքնագրում գրության տարեթիվը նշված չէ, հավանաբար գրված է 1900-ական թթ. երկրորդ կեսին, մինչև 1911 թվականը՝ Կովկասից հեռանալը: Բնագիրը 4 էջանոց 2 թերթ է, որտեղ բացի հիշյալ երկից, գրի են առնված «Անհունության մեջ մռայլ, անսահման...» և «Սրտումս սիրո ծով է մրրկում...» բանաստեղծությունները, որոնց գրության թվականները նույնպես նշված չեն: Տպագրել է առաջին անգամ Ավիկ Իսահակյանը, որպես մի մասը՝ «Անհունության մեջ մռայլ, անսահման...» բանաստեղծության և սույն երկի 11-րդ և 12-րդ տողերի հապավումով՝ «Նորք», 1992, N 3-4, էջ 101: Ներկա հրատարակությունում արված են որոշակի ճշտումներ: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 215-II: Տպագրվում է ինքնագրից:

«ԲՑՈՒՐ ԵՎ ԲՑՈՒՐ ԱՆԳԱՄ ՆԸՋՈՎՈՒՄ ԵՄ ՔԵԶ...» (էջ 260, 446)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Ձեռագրից կարելի է ենթադրել, որ գրված է 1900-ական թթ. առաջին կեսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 121-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄՈՎ ԵՐԿՆՔԻՑ ՊԱՑՄԱՌ ԳԱՐՆԱՆ...» (էջ 261, 446)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Ասելիքի բնույթից ելնելով՝ կարելի է կռահել, որ գրվել է 1900-ական թթ. առաջին կեսին: Ինքնագիրը մա-

տիտագիր է, ջնջումներով, ձեռագրի հաջորդ էջին գրի է առնված բանաստեղծության առաջին քառատողի մի տարբերակ: ԳԱԹ, ԱԻՖ, 168-II-ում պահպանվում է այս բանաստեղծության սեղմ տարբերակը, որի դիմաց՝ լուսանցքում, թեքությամբ գրված է. «Սարերդ ման գալուս. յայլեքդ»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 191-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՁԵՐ ՇԱՐՔԵՐԻ ՄԵՋ, ԿՏՐԻՃ ԸՆԿԵՐՆԵՐ...» (էջ 262, 447)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, հավանաբար գրված է 1900-ական թվականների երկրորդ կեսին, երբ սկսել է աշխատանքները «Ուստա Կարո» վեպի շուրջ: Տպագրել է առաջին անգամ Ավիկ Իսահակյանը ի Թիվս այլ անտիպ բանաստեղծությունների՝ «Գրական թերթ», 1985, հոկտեմբերի 25, «Նոր շիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից» ընդհանուր խորագրի տակ, այնուհետև՝ ՀԵ, 79, ԱԻԲ, 44-45, ԱԽ, 197-198:

Այս բանաստեղծությունն Իսահակյանը մտադիր է եղել զետեղել «Ուստա Կարո» վեպում, ձեռագրի լուսանցքում գրված է, «Կայծակը» (վեպի հիմնական հերոսներից մեկն է՝ Շրջիկ Կայծակը, որի կերպարի տակ հեղինակը նկատի ուներ Նիկոլ Աղբալյանին), ապա և «Կոչ»: Այսինքն՝ սա Կայծակի հայրենասիրական կոչն է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 175-II: Տպագրվում է ԱԻԲ-ից:

«ԳԱՐՈՒՆՆ ԵԿԱՎ ԿԱՐՄԻՐ ՈՒ ԶԱՌ...» (էջ 263, 447)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «8 հունվ<արի>. 1906»: Գրված է, հավանաբար, Ալեքսանդրապոլում, քանի որ հաջորդ երեք էջերին նույն օրը գրի առած «Մռավ սարերից սավառնեց քամին...» («Քաջերին») բանաստեղծության գրության վայրը Ալեքսանդրապոլն է: Այս, ինչպես նաև տպագրված և անտիպ մի շարք այլ բանաստեղծություններ զետեղված են ԳԱԹ, ԱԻՖ, 8-II-ում պահպանված անկազմ տետրում: Բանաստեղծությունը գրի է առնված տետրի 2-րդ էջում (ԳԱԹ, ԱԻՖ, 8-II, 2): Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«Ա՛Խ, Ո՛Չ ՄԻ ԱՐԾԻՎ ՁԻ ՄՆՈՒՄ...» (էջ 264, 447)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության ամսաթիվը՝ «24 դեկտեմբ<երի>»: Գրված է, հավանաբար, 1906 թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 8-II, 10: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԻՆՁԻ ՀԱՄԱՐ ՇԱՏՈՒՆՑ, ՎԱՂՈՒՆՑ...» (էջ 265)

Ինքնագրում գրության տարեթիվը նշված չէ, գրության մոտավոր տարեթիվը կարելի է համարել 1900-ական թթ. առաջին կեսը: Տպագրվում է

առաջին անգամ: Տեքստը բերվում է ինքնագրից, որը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 148-II:

«ՀՊԱՐՏ ՆԱՑՈՒՄ ԵՍ ԼՈՒՍԵՂԵՆ ՀԵՌՈՒՆ...» (էջ 266)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, հավանաբար գրել է 1907 թ., քանի որ ինքնագրի (ԳԱԹ, ԱԻՖ, 168-II) նույն թերթիկի վրա գրված մեկ այլ բանաստեղծություն՝ «Մտքիդ պես տխուր, մռայլ ու անհայտ...» սկսվածքով, Իսահակյանի անվերնագիր ներբողն է ընկերոջ հիշատակին: Քիչ ժամանակ անց ինքնագիրը՝ «Արմենակ Ալխազյանի անմոռաց հիշատակին», տպագրվել է «Ժամանակ», Թիֆլիս, 1907, փետրվարի 4: Իսկ «Հպարտ նայում եմ լուսեղեն հեռուն...» բանաստեղծությունն Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Այն առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 255: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 168-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՍԻՐՏ ԻՄ, ԻՆՁՈ՞Ի ՀԻՆ ԴԱՐԴԻԴ ՀԵՏ...» (էջ 267, 448)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «27-ին ապրիլի. Ղազարապատ. 1908.»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 48-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՍԱՔՈՅԻ ԳԵՂԵՑԻԿ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 268, 448)

Գրել է 1908 թ. հայ ազատագրական պայքարի հերոս, լեգենդար ֆիդայի Սևքարեցի Սաքոյի – Ծովանյան Սարգիս Սարիբեկի (1870-1908) մահվան առթիվ: Իսահակյանը մասնակցել է հերոսի հիշատակին մատուցած պատարագին Սևքար գյուղում, հանդես եկել սույն բանաստեղծության ընթերցմամբ: Ինչպես և գրել է թղթակցություն՝ «Հոգեհանգիստ Սև Քարում» վերնագրով, որը տպագրվել է՝ «Գործ», Թիֆլիս, 1908, նոյեմբերի 25: Բանաստեղծությունն Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել, բայց ձեռագիր վիճակում տարածում է գտել: Տպագրել է առաջին անգամ Ավիկ Իսահակյանը՝ «Գրական թերթ», 1989, թիվ 42, հոկտեմբերի 13, «Հայ ազատամարտի հերոսների իսահակյանական ներբողները» ընդհանուր խորագրի տակ: Առաջին անգամ Իսահակյանի երկերի ժողովածուներում զետեղվել է՝ «Հայդուկի երգեր», էջ 92-93: Բանաստեղծության 37-44-րդ տողերը տպագրվել են՝ ԱԽ, 207, իսկ 9-14 և 37-44-րդ տողերը՝ ԱԻԳԿ, 556-557: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 210-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՆԱՁՈՒԿ ԼՈՒՄՆԻ ՄԵՂՄ ՇԻԹԵՐԸ ԾՈՐԵՑԻՆ...» (էջ 270)

Գրության ստույգ թվականը նշված չէ, դատելով ձեռագրից՝ կարելի է համարել, որ գրված է 1908 թ.: Տպագրվել է առաջին անգամ հետմահու՝

«Հայրենիքի ձայն», 1970, հոկտեմբերի 28, «Անտիպներ Ավ. Իսահակյանից» ընդհանուր խորագրի տակ: Իսահակյանի Երկերի ժողովածուներում առաջին անգամ տպագրվել է՝ «Հայդուկի երգեր», էջ 180: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԱՄԵՆ ԲԱՆ ՊԱՏՃԱՌ ՈՒՆԻ...» (էջ 271)

Ինքնագրում քառյակի գրության թվականը նշված չէ: Գրել է հավանաբար 1908 թ., քանի որ ինքնագրի նույն թերթի հակառակ կողմին գրված է «Սիրտ իմ, ինչու՞ հին դարդիդ հետ...» բանաստեղծությունը՝ թվագրված 1908, ապրիլի 17: Բնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 48-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ՄՈՐՍ ԵՐԿԱԹԵ ՁՈՂԵՐԻ ԵՏԵՎԻՑ...» (էջ 272, 448)

ԳԱԹ-ում պահվող (ԱԻՖ, 213- II) ինքնագիր 2 էջանոց թերթիկը պարունակում է «Ստվերներն ընկան իրարու վրա...» բանաստեղծությունը՝ նշված ամսաթվով՝ «29 հուլիս» և նույն թերթիկի հաջորդ երեսին անթվակիր «Տեսնում եմ մորս...» բանաստեղծության սևագիրը՝ հեղինակային ուղղումներով: Իսահակյանը նշված ժամանակ՝ հուլիսի 29-ին, եղել է բանտում, երբ 1896 թվականի մայիսից մինչև 1897 թ. ապրիլի 17-ը բանտարկված է եղել Երևանի նահանգային բերդում: Այդ ժամանակ գրել է «Տեսնում եմ մորս երկաթե ձողերի ետևից...» բանաստեղծությունը: Տե՛ս այդ մասին նաև «Հիշատակարան», էջ 235-236: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 244: Ներկա հրատարակությունում ճշտված են գրության թվականը և վայրը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 213-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԲԱՇԵՐՆ ԱԼԵԾՈՒՓ, ԲԱՇԵՐՆ ՀՈՂՄԱԿՈԾ...» (էջ 273, 449)

Գրել է, ըստ ինքնագրի, «1909. հուլիսի 25. Ղազարապատ»: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 94, այնուհետև՝ ԱԻԲ, 67-68: Բանաստեղծության 5-12-րդ տողերը տպագրվել են՝ ԱԻԳԿ, 563-564: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 110-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՍՏՎԵՐՆԵՐՆ ԸՆԿԱՆ ԻՐԱՐՈՒ ՎՐԱ...» (էջ 274, 450)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության ամսաթիվը՝ «29 հուլիսի», թվականը նշված չէ: Բանաստեղծի կյանքի այդ շրջանի փաստից ելնելով՝ կարող ենք համարել, որ գրության թիվը 1909-ն է: Նույն ինքնագրի ետևի կողմում «Տեսնում եմ մորս երկաթե ձողերի ետևից...» բանաստեղծությունն է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 213-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«Ա՜խ, Ո՞Ր ՔԱՐԻ ՏԱԿ, Ո՞Վ ԳԻՏԵ, ՈՐՏԵ՞Ղ...» (էջ 275)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, դատելով ձեռագրի բնույթից՝ գրության մոտավոր թվականը կարելի է համարել 1909 թ.: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 245: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 180-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԱՄԵՆ ԻՆՁ ՈՒՆԱՅՆ ՊԱՏՐԱՆՔ Է ՍԱԿԱՅՆ...» (էջ 276)

Բնագրում նշված չէ գրության տարեթիվը: Ասելիքի բնույթից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ քառյակը գրվել է 1900-ական թթ. երկրորդ կեսին: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 11-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՈՒ ՔԱՐ ԿՍՂՄԵՄ ՏԱՌԱՊԱԾ ՍՐՏԻՍ...» (էջ 277, 450)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Ձեռագրից կարելի է ենթադրել գրության հավանական ժամանակը՝ 1900-ական թթ. առաջին կես: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 221-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՇՐՋՈՒՄ ԷԻ ԼՈՒՌ ԳԱՐՆԱՆ ԴԱՇՏԵՐՈՎ...» (էջ 278, 450)

Գրության ստույգ թվականը նշված չէ, դատելով ձեռագրի բնույթից՝ կարելի է ասել, որ գրված է 1900-ական թվականների երկրորդ կեսին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 241, այնուհետև՝ ՀԱ, 2007, հոկտեմբերի 20, «Ավետիք Իսահակյանի ձեռագրերի աշխարհից» ընդհանուր խորագրով: Նույն ինքնագրում գրի է առնված բանաստեղծության մի տարբերակ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 164-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«Ա՜խ, ԵՍ ՁԵՄ ԽՈՍՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ԵՐԲԵՔ...» (էջ 279, 451)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Ինքնագիրը մատիտագիր է: Համաձայն ձեռագրի՝ գրության հավանական ժամանակը 1900-ական թթ. առաջին կեսն է: Ինքնագրի նույն էջին կա մի բանաստեղծության անավարտ մշակում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 87-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՆՀՈՒՆՈՒԹՑԱՆ ՄԵՋ ՄՌԱՑԼ, ԱՆՍԱՀՄԱՆ...» (էջ 280, 451)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Դատելով ինքնագրի բնույթից և ասելիքից՝ կարելի է համարել, որ գրված է 1900-ական թթ. երկրորդ կեսին: Ձեռագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 215-II, ձեռագրի վրա կան բազում հեղինակային ուղղումներ: Իսահակյանի խոհական բնույթի ինքնատիպ երկերից

է, որն իր արժանի տեղը պետք է գտնի Վարպետի չափածոյում: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒՌԸՍ ԱՓ ԱՌԱԾ՝ ԿԸԾԵԾԵ ՔԱՄԻՆ...» (էջ 282)

Գրության տարեթիվն ինքնագրում նշված չէ, սակայն երկու տողերի առաջին սկսվածքով՝ «Դուռըս ափ արած՝ կը ծեծե քամին...» բանաստեղծությունը, համաձայն ԳԱԹ-ում պահվող ինքնագրի (ԱԻՖ, N 121- II), գրված է 1911 թ. հոկտեմբերի 24-ին Կ. Պոլսում: Հավանական է, որ երկու երկերը նույն ժամանակ են գրված: Թեև սկսվածքի նմանության, երկուսն էլ լրիվ տարբեր բանաստեղծություններ են: Ներկայիս տպագրվող բանաստեղծությունը՝ գրված սև թանաքով, հրապարակվում է առաջին անգամ: Ամենայն հավանականությամբ այստեղ ևս շոշափվում է Շուշանիկ Մատակյանի կերպարը: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 121-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՆՈՒՇ-ԱՆՈՒՇ ՔՐՔՋԱԼՈՎ...» (էջ 283)

Գրել է, ըստ ինքնագրի, «1912, 11 հունիս, Կ.Պոլիս (Ծովի վրա)»: Տպագրվել է առաջին անգամ «Հայրենիքի ձայն», 1970, հոկտեմբերի 28, թիվ 43, ի թիվս այլ բանաստեղծությունների՝ «Անտիպներ Ավ. Իսահակյանից» ընդհանուր խորագրի տակ, այնուհետև՝ Իսահակյանի երկերի ժողովածուներում առաջին անգամ՝ ՀԵ, 186: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՀՈՂԻՑ ԵՆ ՄԱՐԴ ՈՒ ԿՆԻԿ...» (էջ 284, 452)

Ինքնագրում գրության տարեթիվը նշված չէ, գրի է առնված Իսահակյանի 1912-1914 թթ. բանաստեղծությունների տետրի 3-րդ էջում: Այս երկին հաջորդող «Երեկ գարուն էր...» և «Ոսկի թիթեռներ - ոսկեհատ աստղեր» բանաստեղծությունները թվագրված են՝ 1912: Հավանաբար այս երկն էլ է գրված 1912 թ.: Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, N 10-II: Նույն էջում կա բանաստեղծության երկու մշակում: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՍ ՔԵԶ ՍԻՐԵՑԻ ԱՍՏՂԵՐԻ ՍԻՐՈՎ...» (էջ 285, 452)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1903 թ., քանի որ սևագիր օրինակի նախորդ և հաջորդ էջերում գրի է առնված «Լրսում եմ ղողանջն տիեզերական...» (1903) բանաստեղծության երկու տարբերակ: Առաջին անգամ տպագրվել է ի թիվս այլ անտիպ բանաստեղծությունների՝ «Նորք», 1992, N 3-4, էջ 102, «Անտիպներ Վարպետից» ընդհանուր խորագրով, հրապարակումը՝ Ավիկ Իսահակյանի: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 131-II, 1:

ԳԱԹ, ԱԻՖ, 5-II, 20-21-ում պահվում է այս բանաստեղծության սևագիր տարբերակը: Տպագրվում է «Նորք»-ից:

«ԻՄ ՔՆՔՈՒՇ ԴԱՐԴՍ ԽՈՑՎԱԾ ՍՐՏԻՍ ՄԵՋ...» (էջ 286, 453)

Ինքնագրի նույն թերթիկի հակառակ էջին գրված է «Ես քեզ սիրեցի աստղերի սիրով...» բանաստեղծության սևագիրը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 131-II, 2: ԳԱԹ, ԱԻՖ, 27-II-ում գրի են առնված այս բանաստեղծության ընդարձակ և սեղմ տարբերակները, որոնք թվագրված են հեղինակի կողմից «1903. փետրվար 17. Բաքու», ինչը հիմք է տալիս մտածելու, որ հիշյալ բանաստեղծությունն էլ ստեղծված է 1900-ական թթ. առաջին կեսին: Քանի որ նույն երկի տարբերակների մեջ չէին կարող լինել ժամանակային առումով մեծ տարբերություններ: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԻ՛ ՀԱՎԱՏԱ ՄԱՐԴՈՒ ԽՈՍՔԻՆ...» (էջ 287, 454)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Ելնելով ասելիքից՝ կարելի է կռահել, որ գրված է 1910-ական թթ. առաջին կեսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 188-II: Ինքնագրի վրա սև թանաքով հեղինակային ուղղում կա: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԽԱՂԱՂ, ԼՈՒՌ ԳԻՇԵՐ Է...» (էջ 288)

Բանաստեղծությունն անթվակիր է, մատիտագիր, նույն էջի վրա կան նշումներ: Դատելով երկի բնույթից՝ կարելի է համարել, որ գրված է 1910-ական թթ. առաջին կեսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 151-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԿԱՆՑՆԻ ՈՒ ԿԵՐԹԱ...» (էջ 289)

Բանաստեղծությունն անթվակիր է: Դատելով ձեռագրի բնույթից՝ կարելի է համարել, որ գրված է 1920-ական թթ. ժնևում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 155-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԳԻՏԵՄ ԼՑՎԱԾ Է ՍԻՐՏԴ ԱՐՑՈՒՆՔՈՎ...» (էջ 290, 454)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Բանաստեղծությունն ուղղված է Իսահակյանի Գևորգ եղբոր որդու՝ Իսահակ (Միսակ) Իսահակյանի հիշատակին (1893-1916): Երիտասարդ բանաստեղծ, արտակարգ ունակությունների տեր պատանի Իսահակը հեղինակն էր «Հեքիաթ արևի տակ» արձակ պոեմի, որը լույս էր տեսել առանձին գրքով՝ 1912 թվականին Ալեքսանդրապոլում: Ռուս-

թուրքական պատերազմի մասնակից սպա, մի շարք մարտական գործողություններ է իրականացրել: 1916 թվի հունվարի 31-ին Կարինի բերդի գրավման կռվում, գունդը ղեկավարելիս, ճակատից մահացու վիրավորվում է: Հետմահու պարգևատրվում է «Գեորգիևյան խաչ» մարտական չքանշանով և զինվորական մեծարանքներով թաղվում Գյումրիի «Խոլմ չեստի» («Պատվո բլուր») սպայական գերեզմանոցում: Երբ Իսահակը զոհվեց, Իսահակյանը գտնվում էր Ժնևում (Շվեյցարիա): Բանաստեղծի համար շատ ծանր էր եղբորորդու կորուստը, և նրա հիշատակին ձոնել է մի շարք բանաստեղծություններ: Այս բանաստեղծությունը գրված է 1916 թ. Ժնևում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 38-I: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԳԻՇԵՐ Է ՄԹԻՆ...» (էջ 291, 454)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, մատիտագիր, ուղղումներ սև թանաքով: Դատելով ինքնագրի բնույթից՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1916-19 թթ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 114-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

[«ՄԻ ՕՐ ԿԳԱ, ԱՄԵՆ ՄԻ ՇՈՒՆՉ, ՄԱՐԴ-ԱՐԱՐԱԾ ԿՄԵՌՆԻՆ...»]
(էջ 292, 454-455)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Ըստ ձեռագրի բնույթի՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1916-1920 թթ. Ժնևում: Բնագրի նախնական վերնագրի վրա հեղինակային ուղղում կա՝ «Դարեր հետո ամեն մի շունչ...», փոխել է՝ «Մի օր կըգա ամեն մի շունչ...»: Եռաբաժանոց բանաստեղծությունը գրված է «Էս աստղոտ գիշերիս իջա պարտեզ...» բանաստեղծության ինքնագրի հակառակ կողմում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 142-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԷՍ ԱՍՏՂՈՏ ԳԻՇԵՐԻՍ ԻՋԱ ՊԱՐՏԵԶ...» (էջ 293, 455)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Հավանաբար գրված է 1916-1920 թթ., Ժնևում, պահպանվել է այդ շրջանի բանաստեղծությունների տետրը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 142-II: Նույն ինքնագրի երկրորդ էջին «Ախ, լալ կուզեմ...» և «Մի օր կգա ամեն մի շունչ...» բանաստեղծություններն են: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԱՂՈՒՄ Է ԱՆՁՐԵՎ...» (էջ 294, 455)

Ինքնագրում նշված են գրության տարեթիվը և վայրը՝ «6 մարտի. 1917. Ժնև»: Թեև հատուկ նշում չկա, սակայն ամենայն հավանականությամբ այն

նվիրված է Իսահակ Իսահակյանի հիշատակին: ԳԱԹ, ԱԻՖ, 11-II-ում պահվում է Իսահակյանի 1915-1921 թթ. գրած բանաստեղծությունների սև կաշեկազմ ծոցատետրը, որի առաջին էջին գրված է. «Ուղղված ոտանավորներ (սրբագրումներ)»: Բանաստեղծությունը գրված է ծոցատետրի 28-րդ էջում, լուսանցքում գրի են առնված բանաստեղծության հավելյալ մի քառատող և վերջինիս մի քանի մշակում: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԳԻՇԵՐԸ ԵԿԱՎ...» (էջ 295, 456)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Դատելով մատիտագիր ինքնագրի բնույթից՝ կարելի է համարել, որ գրված է 1917 թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 59-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒ ՀԵՌԱՎՈՐ, ՄԵԿՈՒՍԻ ԱՍՏՂ...» (էջ 296)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Ստեղծման հավանական ժամանակն է 1918-1920 թթ.: Ինքնագրի ներքևի մասում գրի է առնված մի մտորում. «Ես սիրում եմ (և ձգտում) մի հեռավոր, լռիկ, անհունի մեջ առկայծող աստղի: Բայց նա ձեզ համար է փոքր ու առկայծող, իսկ ինձ համար նա մեծ է, լուսավառ, ահագին - նա իմ իդեալն է...»: Ինքնագիրը 2 թերթ է, մյուս թերթին գրի են առնված նշանավոր մարդկանց ասույթներ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 126-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԻՄ ՏԽՈՒՐ ՍՐՏՈՒՄ ԳԻՇԵՐ ՈՒ ՑԵՐԵԿ...» (էջ 297, 456)

Բանաստեղծության ստեղծման տարեթիվն ինքնագրում նշված չէ: Ըստ ձեռագրի՝ կարելի է ենթադրել, որ 1918-1920-ական թվականներին է գրված: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 247: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 226-II: Մի այլ տարբերակ՝ ԳԱԹ, ԱԻՖ, 189-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԵՐԲ ՄԱՆՈՒԿ ԷԻ, ՆՍՏԱԾ ՊԱՏԻ ՏԱԿ» (էջ 298)

Ինքնագրում նշված են գրության տարեթիվը և վայրը՝ «15 սեպտեմբերի. 1919. Բեռլին»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, N 62-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՕՏԱՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՍՏՐՈՒԿ ՈՒ ԳԵՐԻ...» (էջ 299)

Գրության ստույգ թվականը նշված չէ, հավանաբար գրված է 1919-1920 թվականներին: Բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել: Տպագրվել է

առաջին անգամ հետմահու՝ «Գրական թերթ», 1965, հոկտեմբերի 29, «Հին տետրակներից» ընդհանուր խորագրի տակ, այնուհետև՝ ՀԵ, 193: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 228-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԻՄ ՍԻՐՈՒՆ ՄԱՆԿԻԿ, ՆՆՋՈՒՄ ԵՍ ՄՈՒՇ-ՄՈՒՇ ...» (էջ 300)

Գրության ստույգ թվականը նշված չէ, հավանաբար գրված է 1910-ական թվականների վերջերին: Քառատողն առաջին անգամ տպագրվել է հետմահու՝ «Սովետական գրականություն», 1958, թիվ 10, էջ 100, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Ա. Ինճիկյանի), այնուհետև՝ ՀԵ, 188: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՀՐՃՎՈՒՄ Է ՍԻՐՏՍ, ԵՐԲ ՆԱՑՈՒՄ ԵՄ ՔԵԶ...» (էջ 301)

Ինքնագրում գրության տարեթիվը նշված չէ: Հավանաբար գրել է 1910-ական թթ. առաջին կեսին, քանի որ Իսահակյանի միակ որդին՝ Վիգենը, որին ուղղված է բանաստեղծությունը, ծնվել է 1910 թվականին, 20 նոյեմբեր: Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, N 171-II: Ներկա հատորում տպագրվում է առաջին անգամ:

«ԱՅՍ ՀՈՎԸ ՄԵՂՄԻԿ...» (էջ 302, 456)

Գրության ստույգ թվականը նշված չէ, ձեռագրի բնույթից ենթադրելով՝ հավանական ժամանակն է 1910-ական թվականների երկրորդ կեսը: Տպագրվել է առաջին անգամ հետմահու՝ «Գրական թերթ», 1958, հոկտեմբերի 22, «Հին տետրակներից» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Աբաս Իսահակյանի), այնուհետև՝ ՀԵ, 189: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 90-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՍԻՐՏՍ ՎԻՐԱՎՈՐ...» (էջ 303)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Համաձայն ասելիքի բնույթի՝ հավանաբար գրված է 1910-ական թթ. երկրորդ կեսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 211-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՀԻՆ ՕՐԵՐԻՑ...» (էջ 304)

Բանաստեղծության գրության թվականն ինքնագրում նշված չէ: Բնագիրը սև թանաքով, մեկ բարակ թերթիկ է, ասելիքի բնույթից երևում է, որ գրված է 1910-ական թթ. երկրորդ կեսին Ժնևում: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 165-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«– Է՛Ց, ԱՇՆԱՆ ՏԵՐԵՎՆԵՐ, ՄԵՌԱԾ...» (էջ 305)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, դատելով ձեռագրից՝ հավանաբար գրված է 1910-ական թթ. երկրորդ կեսին: Համահունչ է «Երեկ գարուն էր...» բանաստեղծության (1912, հոկտեմբերի 21, Ցյուրիխ) ընդհանուր տրամադրությանը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 140-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒՐՍԸ ԳԻՇԵՐ Է ԱՇՆԱՆ...» (էջ 306, 457)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Համաձայն ասելիքի և ձեռագրի բնույթի՝ գրված է 1910-ական թթ. երկրորդ կեսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 170-II: Նույն թերթիկի վրա սև թանաքով գրված «Հոգիս գերված կամավոր» բանաստեղծությունն է: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՎԱՀԱՆ ՏԵՐՑԱՆԻ ԱՆՈՒՇ ՀԻՇԱՏԱԿԻՆ» (էջ 308, 457)

Գրել է 1920 թ. մարտի 19-ին, Ժնևում: Բանաստեղծության ձեռագիրը հավանաբար գտնվելիս է եղել Պողոս Մակինցյանի արխիվում, այնուհետև անցել է նրա դուստր Անահիտ Մակինցյանին (Մոսկվա): Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Տպագրվել է առաջին անգամ «Գրական թերթ», 1959, հոկտեմբերի 16, բանաստեղծությանը հաջորդել է Արամ Ինճիկյանի «Ավ. Իսահակյանի ձեռագրերի աշխարհում» հոդվածը: Բանաստեղծությունը հրապարակել է նաև Պողոս Մակինցյանի այրին՝ դերասանուհի Եվգինե Սեբարը, «Հարազատ անուններ» հուշերի գրքում «Ավետիք Իսահակյան» հուշագրության տեքստում («Հայաստան», Երևան, 1970, էջ 53-54): Սակայն այս երկու հրապարակումների միջև կան տեքստային որոշակի տարբերություններ. Սեբարի հուշերի գրքում վերնագիրն է՝ «Վահան Տերյանի անմահ հիշատակին», կան նաև այլ տարբերություններ: Բանաստեղծության վերջին տողը՝ «Կյա՜նք, տխուր հովիտ՝ հավիտյան լալու...», բերված է Տերյանի «Մթնշաղի անուրջներ» գրքույկից. «Սենտիմենտալ երգ» բանաստեղծության եզրափակիչ տողն է: Իսահակյանի երկերի ժողովածուներում առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 194-195: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 12-II, 17-18: Նշված են գրության տարեթիվը և վայրը՝ «1920. 19 մարտ. Ժընև»: ԳԱԹ, ԱԻՖ, 205-II-ում պահպանվում է նաև բանաստեղծության սևագիր տարբերակը՝ «Մի գնացող կար դեպի Մոսկվա...» սկսվածքով: «Վ. Տերյանի հիշատակին» վերնագրով՝ «Դու մեռած միթե...» սկսվածքով, որը հրապարակվել է՝ «Գարուն», 2006, N 9-10, էջ 1: Տեքստը բերվում է Եվգինե Սեբարի հուշերի գրքից:

«ԲԱԽՏՆ ԻՆՁ ԱՆՁԱՏԵՑ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԻՑ...» (էջ 310, 458)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, հավանաբար գրել է 1920 թվականին իր սիրելի քրոջ՝ Գինովաբե Զարիֆյանի (1862-1920) մահվան կապակցությամբ: Իսահակյանը, հարկ է ասել, իր եղբայրներից և քույրերից ամենից շատ սիրել է Գինովաբեին: Այդ հայրենասեր կինը 1918 թվականին որպես կամավոր մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 252: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 137-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԷՍ ԱՇԽԱՐՔԸ ԷՐԿՈՒ ՕՐ Է...» (էջ 311, 458)

Ինքնագրում նշված չէ գրության թվականը, գրված է, հավանաբար, 1920 թ. մարտի երկրորդ կեսին Ժնևում, քանի որ ինքնագրի նույն էջին գրի է առնված Վ. Տերյանի հիշատակին ուղղված բանաստեղծության մի տարբերակ՝ «Մի գնացող կար դեպի Մոսկվա...» սկզբնատողով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 205-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԿԵՍ ԳԻՇԵՐ Է... ԿԱՐԿՈՒՏԻ ՊԵՍ...» (էջ 312, 458)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, գրված է, հավանաբար, 1920 թ. դեկտեմբերի վերջին Ժնևում: Ինքնագրի վրա կան հեղինակային ուղղումներ, վերջին տողն անընթեռնելի է: Նույն ինքնագրի հաջորդ էջին «Մենակ նստած հրեղեն ձին...» բանաստեղծությունն է, նույնպես անթվակիր: Առաջին քառատողը հիշեցնում է 1920 թ. դեկտեմբերի 31-ին Ժնևում գրած «Նոր տարու գիշերը» բանաստեղծության սկիզբը, և հավանական է՝ երկու երկերն էլ գրված են նույն ժամանակ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 183-II, 2: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԵՐ ԹՇՆԱՄԻՆ, ՀԻՆ ԲՈՐԵՆԻՆ...» (էջ 313)

Գրել է, ըստ ինքնագրի, «31 դեկտեմբեր, 1920, Ժնև»: Տարեթվի նշումից հետո բանաստեղծը գրել է. «Գիշերվա ժամը 12-1, տարվա վերջին խոհեր: Հայաստանը խորհրդային: Հայ բոլշևիկները»: XX դարի Հայոց պատմության ամենադժվարին ժամանակներում գրված բանաստեղծությունն արտահայտում է Իսահակյանի տառապալից խոհերը Հայրենիքի ճակատագրի վերաբերյալ: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Ուշ շրջանի բանաստեղծություններ» նախաբանով՝ «Հայաստանի Հանրապետություն», 2007, հոկտեմբերի 17: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, N 12-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՍԵՐԵՐՍ ՔՆՔՈՒՇ...» (էջ 315)

Ինքնագրում գրության ստույգ թվականը նշված չէ: Գրված է սև կազմով, «Ուղղված ոտանավորներ (սրբագրումներ)» վերնագրով ծոցատետրում, որտեղ զետեղված են տարբեր թվականների գործեր, այդ թվում՝ նաև բանաստեղծության տարբերակը՝ «Վարդամատ, ոսկի...» սկսվածքով (էջ 29-30): Տվյալ բանաստեղծությունը գրված է ծոցատետրում՝ անմիջապես «Նոր տարու գիշերը» (1920 թ.) երկից հետո, ուստի գրության հավանական ժամանակը կարելի է համարել 1921 թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 11-II, 44-45: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

46 ՏԱՐԵԼԻՑԻՍ (էջ 316, 459)

Գրված է իր ծննդյան 46-ամյակի նախօրեին՝ 1921 թվականի հոկտեմբերին, Վենետիկում: Իսահակյանը նկատի ունի Բևեռային աստղը (Polaris կամ Полярная звезда), որը հաճախ կոչում են Հյուսիսային արև իր մեծության պատճառով, այն երկրից գտնվում է 472 լուսային տարի հեռավորության վրա: Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 227-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՍԱ՛ ՄԵԶ, ԵՎՐՈՊ, Ո՞ՒՐ ԵՍ ՇՏԱՊՈՒՄ...» (էջ 317, 459)

Բանաստեղծության վերնագիրը չի պահպանվել, ինքնագրում պատված է թերթիկի վերին մասը, նշված չէ և գրության տարեթիվը, հավանաբար գրված է 1921 թ. Վենետիկում, այդ նույն ժամանակաշրջանում Իսահակյանի «Հիշատակարանում» կարդում ենք. «1921 թ. դեկտեմբերի 25, Վենետիկ. «Եվրոպա, ավազակների, լուսավորված սրիկաների որջ: Մեր օրորոցի կաթնակեր մանուկներից սկսած մինչև ծերերն ու պառավները արյունով վճարեցին հայկական ազատագրության գինը, բայց Եվրոպան՝ ամենքը առանց բացառության՝ յուրացրին մեր այդ արյունի գինը...» (Հ, 351): Բանաստեղծությունը գրելու դրդապատճառը եվրոպական պետությունների դավաճանական, անգութ վերաբերմունքն էր Կիլիկիայի և ընդհանրապես Հայկական հարցի վերաբերյալ: Իսահակյանի քաղաքացիական քնարերգության լավագույն գործերից է. հայրենասեր բանաստեղծն անարգանքի այունին է գամում եվրոպական գերտերությունների շահադիտական, նենգ քաղաքականության դիրքորոշումները: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 251, այնուհետև՝ «Դու՛, հավերժող իմ Հայաստան», Լոս Անջելես, 1996, էջ 81, ԱԻԲ, 75-76: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 101-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՆՍՏԵԼ ԵՄ ՄԵՆԱԿ ԾՈՎԻ ԲԵՐԱՆԸ...» (էջ 318, 460)

Ինքնագիրն Իսահակյանի մեծ սև կազմով բանաստեղծությունների ծոցատետրում է (էջ 46-47), որի կազմին բանաստեղծի ձեռքով գրված է՝ «1915-1921», «Նոր տարու գիշեր» (1921) բանաստեղծությունից հետո, հետևաբար երկը գրված է 1921 թ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 11-II, 46: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԻՄ ՀԱԶԱՐ ՍԻՐԱՏ ՀԱՅՐԵՆԻ ԴԱՇՏՈՒՄ...» (էջ 319, 460)

Գրված է բանաստեղծությունների վենետիկյան մեծ տետրում, կազմին՝ Իսահակյանի ձեռքով՝ «1911-1932», զետեղված է տետրի 9-րդ էջում, ըստ տարեթվերի հերթականության՝ պետք է գրված լինի 1922-1925 թթ. Վենետիկում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 9-II, 9: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՏԽՐՈՒԹՑՈՒՆ (էջ 320)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, ելնելով ձեռագրի բնույթից՝ կարելի է ասել, որ գրված է 1920-ական թթ. առաջին կեսին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը՝ «Գրական թերթ», 1985, հոկտեմբերի 25, «Նոր շիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից» խորագրով, այնուհետև՝ ՀԱ, 2007, հոկտեմբերի 20, «Ավետիք Իսահակյանի ձեռագրերի աշխարհից» նախաբանով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 207-II: Տպագրվում է ինքնագրից:

«ԵՍ ԼՈՒՌ ԳԻՇԵՐԻՆ ԱՆՀՈՒՅՍ ԼԱՑԵՑԻ...» (էջ 321, 460)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, դատելով ասելիքից՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1920-ական թթ. առաջին կեսին: Առաջին անգամ բանաստեղծության մի հատվածը (1-16 տողերը) տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 249: Բանաստեղծության ընդգծված փիլիսոփայական ուղղվածությունը և հոռետեսական տրամադրությունները կապված են եվրոպական դաշնակից պետությունների կողմից Հայոց Կիլիկիա երկրամասը դավաճանաբար Թուրքիային հանձնելու և Հայկական հարցի վիժման գործընթացի հետ: Նույն շրջանում՝ 1922, ապրիլի 26-ին Վենետիկում Իսահակյանը գրել է. «Այլևս գրեթե հարկ չկա, որ հավատաս մարդկայնությանը՝ Humanite-ին: Ունայն խոսքեր դուրս եկան՝ մարդասիրություն, ազատություն, եղբայրություն...» (Հ. 355):

Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 129-II: Բանաստեղծությունն ամբողջությամբ (31 տող) տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՈՎ Է ԻՋՆՈՒՄ ՆՈՒՐԲ ՔՈՂԵՐՈՎ...» (էջ 322)

Հիմքը Իսահակյանի «Իմ փերին» («Շիրակի ավանդավեպ») հայտնի բանաստեղծությունն է՝ գրված 1892 թ. հունիսի 6-ին Արգինայում: Տարիներ անց Վենետիկում 1920-ական թվականների առաջին կեսին «Աչնան ծաղիկներ» ժողովածուն կազմելիս Իսահակյանն անդրադարձել է այս բանաստեղծությանը: Ներկայացնում ենք նոր մշակումը, որը փաստորեն վերափոխվել է ինքնուրույն երկի, սակայն չի զետեղվել «Աչնան ծաղիկներ» ժողովածուում: Հիշյալ տարբերակն առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 253: Տեքստը բերվում է ինքնագրից, թերթիկի վրա դրոշմված է վենետիկյան փոստատան կնիքը: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՀՐԵՇ ԲՈՒՆԱԿԱԼ, ԹԱԹԵՐԴ ՁԱՁԻՐ...» (էջ 323, 460)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, դատելով ասելիքից՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1920-ական թթ. առաջին կեսին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը, ի թիվս այլ անտիպ բանաստեղծությունների, «Նորք», 1992, N 3-4, էջ 102, «Անտիպներ Վարպետից» ընդհանուր խորագրով, այնուհետև՝ ՀԱ, 2007, հոկտեմբերի 20, «Ավետիք Իսահակյանի ձեռագրերի աշխարհից» նախաբանով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 167-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՏԱՐԻՆԵՐ ՀԵՏՈ ԴԱՐՁԱ ՀԱՅՐԵՆԻՔ...» (էջ 324, 461)

Գրել է 1926 թ. Ղազարապատ գյուղում: Առաջին անգամ հրապարակել է Ավիկ Իսահակյանը, ի թիվս այլ անտիպ բանաստեղծությունների, «Նոր շիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից» ընդհանուր խորագրի ներքո՝ «Գրական թերթ», 1985, հոկտեմբերի 25, այնուհետև՝ ՀԵ, 208, ԱԽ, 359-360: Բանաստեղծությունը գրված է հայրենի Ղազարապատ գյուղ այցելելու տպավորության տակ. հայտնի է, որ այդ գյուղում Իսահակյաններն ունեին բավական հողեր և ջրաղաց: Այստեղ է Իսահակյանը գրել «Աբու-Լալա Մահարի» պոեմը: 1926 թվականի երկրաշարժը հիմքից քանդել է Իսահակյանների տունն ու ջրաղացը: Ներկայումս Ղազարապատ (Իսահակյան) գյուղը, ի թիվս Անիի շրջանի մի շարք գյուղերի, մնացել է ջրի տակ արհեստական ջրամբար կառուցելու պատճառով: Այնպես որ այս պատմական հողերի հետ կապված իսահակյանական Ղազարապատի վերջին նշխարքներն էլ անցան ջրերի հատակը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 203-II: Տպագրվում է ՀԵ-ից:

ՄՈՐՍ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԱՇՆԱՆԸ (էջ 325, 461)

Գրել է 1926 թ. Ալեքսանդրապոլում: Առաջին տպագրությունը՝ «Գրական թերթ», 1985, հոկտեմբերի 25, «Նոր շիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից» ընդհանուր խորագրի տակ, հրապարակումը՝ Ավիկ Իսահակյանի, այնուհետև՝ ՀԵ, 207, ԱԽ, 286-287: Գրված է մոր՝ Ալմաստ Իսահակյանի հիշատակին: Բանաստեղծը մորից բաժանվում է 1911 թ., 7 տարի անց՝ 1918-ին, ժնևում առնում է մոր մահվան բոթը, ինչը շատ ծանր է տանում, և ահա, 1926 թվականին Հայաստան գալով, նա այցի է գնում մոր շիրմին Ալեքսանդրապոլի քաղաքային գերեզմանոցում: Իսկ տարիներ հետո՝ 1950 թվականին, սև, սրբատաշ տուֆից շիրմաքար է դցում մոր գերեզմանին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 192-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՊԱՑՔԱՐ, ՄԱՔԱՌՈՒՄ ԴԱԺԱՆ, ԱՆՀԱՇՏ...» (էջ 326, 461)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ: Նույն ձեռագիր թերթիկին մատիտագիր գրառում կա՝ «На память милой Музе – Ав. Ис.», ուստի կարելի է ենթադրել, որ երկը գրված է 1926-1930 թթ.: Բանաստեղծության սկզբնական մասը (8 տող) որոշակի հապավումներով տպագրել է Անահիտ Վարդանյանը՝ «Ազգային թեման Իսահակյանի անտիպ ստեղծագործություններում» հոդվածի տեքստում (ԳՀ, Ա-Բ (Թ-Ժ), 2008-2009, էջ 169): Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 147-II: Տպագրվում է ինքնագրից:

«ԻՄ ԿՑԱՆՔԸ ԼՈՒՌ ԱՆՑԱՎ...» (էջ 327, 461)

Ինքնագրում ստեղծման թվականը նշված չէ: Քառյակը մատիտագիր է, թերթիկի վրա՝ եռանկյունի կնիք՝ «Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան»: Գրության հավանական թվականը, ենթադրելով ձեռագրի բնույթից, կարելի է համարել 1926-1930 թթ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 47-I: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒՐՍԸ ԳԻՇԵՐ...» (էջ 328)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Համաձայն ձեռագրի բնույթի՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1926 - 1930թթ.: Ինքնագրի պատռվածքի պատճառով վերջին տողը անընթեռնելի է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 170-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՑՍ ԿՑԱՆՔԸ ԱՆՑԱՎ...» (էջ 329)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Ենթադրելով ձեռագրի

բնույթից՝ կարելի է համարել, որ գրված է 1926-1930 թթ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 94-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԱՀ, ՄԵՐ ԿՑԱՆՔԸ ՈՒՆԱՑՆ ԽԱՂ Է ՈՒ ԵՐԱԶ...» (էջ 330, 461)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Քառյակը ստեղծվել է մոտավորապես 1926-1930 թթ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 91-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՐԵԿՈՑԱՆ ԵՐԿԱՐ ՍՏՎԵՐՆԵՐ...» (էջ 331)

Ինքնագրում նշված չէ գրության թվականը: Անավարտ բանաստեղծության դրվագ է: Ինքնագրի թերթիկի վրա Իսահակյանի գրառումը՝ «К. Гатуев, Зелимхан, "Совкнига" 1926», ուստի կարելի է ենթադրել, որ երկը գրված է 1926-1930 թթ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 23-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԱՀՍ ՄՈՏ Է, ՄՈՏԻԿ Է ԱՑՆՔԱՆ...» (էջ 332, 462)

Այս երկը 1928 թ. մայիսի 28-ին Իսահակյանի՝ Երևանում գրած հայտնի «Հեռու անտառում ծաղկում է հպարտ...» բանաստեղծության տարբերակներից մեկն է: Ինքնագիրը, որը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 43-I, անթվակիր է: Անտարակույս, երկու երկերն էլ ստեղծված են նույն ժամանակաշրջանում, այսինքն՝ 1928 թ. Երևանում: Մեր ներկայացրած տարբերակը, մանավանդ իր եզրափակիչ հատվածով, ունի ինքնուրույն արժեք, և տեղին է այն առանձին հրատարակել: Նույն թերթիկի վրա գրի է առնված մեկ այլ բանաստեղծության մի հատվածի մշակում: Տպագրվում է ինքնագրից:

«ՄԱՀՍ ԱՌԱՋՍ Է ԿԱՆԳՆԱԾ...» (էջ 333, 462)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Ստեղծման մոտավոր թվականը, համաձայն ձեռագրի բնույթի, կարելի է համարել 1928 թվականը: Ինքնագրի թերթիկի վրա կա եռանկյուն կնիք՝ «Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 44-I, 63: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒ ԻՄ ՍԻՐՈՒՆ ԱՂԱՎՆԻ...» (էջ 334)

Գրության ստույգ թվականը նշված չէ, գրել է, հավանաբար, 1920-ական թվականների երկրորդ կեսին: Առաջին անգամ հրապարակվել է հետմահու՝ «Սովետական գրականություն», 1958, թիվ 10, էջ 100, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Արամ Ինճիկյանի),

այնուհետև՝ ՀԵ, 201: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 98-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՎԵՐՋԻՆ ՋԱՑ, ՎԵՐՋԻՆ ՋԱՑ...» (էջ 335, 462)

Բանաստեղծությունը մատիտագիր և անթվակիր է: Իսահակյանի քնարերգության համար փոքր-ինչ անսովոր կատակային բնույթի այս երկը, ամենայն հավանականությամբ, գրված է 1926-1930 թթ. Երևանում: Այդ է վկայում նաև ինքնագրի հաջորդ էջին արված գրառումը. «Լենինի փողոց, 35. բժ. օր. Լյուսյա Բաբախանյան. Յերևան»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 99-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՋՄՐՈՒԽՏԵՂԵՆ ԹԱՍԵՐԻ ՄԵՋ...» (էջ 336)

Քառյակի գրության տարեթիվն ինքնագրում նշված չէ: Ելնելով ձեռագրի բնույթից՝ կարելի է ասել, որ գրված է 1926-1930 թթ.: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 46-I: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԻ ԹՌՋՈՒՆ ԵԼԱՎ ԾՈՎԻՑ...» (էջ 337)

Քառյակն անթվակիր է: Բնագիրը մատիտագիր փոքրիկ թերթիկ է՝ գրված, հավանաբար, 1920-ական թթ. երկրորդ կեսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 185-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՀԱՋԱՐ ՍԻՐՏ ՈՒՆԵՄ, ՄԻԱՑՆ ՄԻ ԼԵՋՈՒ...» (էջ 338)

Գրության ստույգ թվականը նշված չէ, դատելով ձեռագրից՝ կարելի է ասել, որ գրված է 1920-ական թվականների երկրորդ կեսին: Առաջին հրապարակումը՝ «Հայրենիքի ձայն», 1970, հոկտեմբերի 28, թիվ 43, «Անտիպներ Ավ. Իսահակյանից» ընդհանուր խորագրի տակ, այնուհետև՝ ՀԵ, 205: Տպագրվում է ինքնագրից:

«ԽՈՐՏԱԿՎԱԾ ԵՆ ԻՄ ԲԵՐԿՐՈՒԹՅԱՆ...» (էջ 339, 463)

Գրության ստույգ թվականն ինքնագրում նշված չէ, դատելով ձեռագրից՝ կարելի է ասել, որ գրված է 1920-ական թվականների երկրորդ կեսին: Առաջին հրապարակումը Ավիկ Իսահակյանի՝ «Գրական թերթ», 1985, հոկտեմբերի 25, «Նոր չիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից» ընդհանուր խորագրով, այնուհետև՝ ՀԵ, 206: Ինքնագրի հաջորդ էջին գրի է առնված բանաստեղծության առաջին քառատողի մի տարբերակ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 154-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«Ա՛Խ, ԱՑՆՊԵՍ ՄԵՂՄԱԳԻՆ, ԱՆԴՈՐՐԻԿ...» (էջ 340)

Գրության ստույգ թվականն ինքնագրում նշված չէ, դատելով ձեռագրից՝ կարելի է ասել, որ գրված է 1920-ական թվականների երկրորդ կեսին: Առաջին անգամ հրապարակվել է հետմահու՝ «Սովետական գրականություն», 1958, թիվ 10, էջ 101, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Արամ Ինճիկյանի), այնուհետև՝ ՀԵ, 203: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 86-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՄԻ ՈՍԿԵ ԹՌՋՈՒՆ ԱՆՑԱՎ ԵՐԳԵԼՈՎ...» (էջ 341, 463)

Գրության ստույգ թվականն ինքնագրում նշված չէ, դատելով ձեռագրից՝ կարելի է ասել, որ գրված է 1920-ական թթ. երկրորդ կեսին: Առաջին անգամ հրապարակվել է հետմահու՝ «Սովետական գրականություն», 1958, թիվ 10, էջ 101, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Արամ Ինճիկյանի), այնուհետև՝ ՀԵ, 202: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 190-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԵՎ ԱՑՆՈՒՀԵՏԵՎ ՄԵՐ ԿՑԱՆՔԻ ԾԱՌԻՑ...» (էջ 344)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, ըստ ձեռագրի բնույթի՝ կարելի է ենթադրել, որ քառյակը գրված է 1930-ական թթ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 48-I: Մեկ առանձին թերթիկ է: Թերթիկի վրա՝ եռանկյունի կնիք՝ «Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան», և համար՝ ԱԻԹ/31: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԿՈՒԶԵԻ ՀԻՄԱ ԼԻՆԵԻ ՀԵՌՈՒ...» (էջ 345, 463)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, դատելով ձեռագրից՝ կարելի է ասել, որ գրված է 1920-ական թթ. առաջին կեսին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը՝ «Նորք», 1992, N 3-4, էջ 102-103, «Անտիպներ Վարպետից» խորագրով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 159-II: Տպագրվում է «Նորք»-ից:

« ԹՈՒՑՆ ԵՄ ՇՆՉՈՒՄ ԵՍ ԱՄԵՆ ՕՐ...» (էջ 346)

Գրության ստույգ թվականը հայտնի չէ, ելնելով ասելիքից՝ գրության մոտավոր ժամանակաշրջանը կարելի է համարել 1934-36 թթ.: Տպագրվել է առաջին անգամ հետմահու՝ «Գրական թերթ», 1958, հոկտեմբերի 22, «Հին տետրակներից» ընդհանուր խորագրի տակ, այնուհետև՝ ԱԽ I, 197, ԱԽ II, 234, ՀԵ, էջ 209: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 232-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՉԳԻՏԵՄ, ԻՆՉՊԵ՞Ս ՏԱՐԻՆԵՐՆ ԱՆՑԱՆ...» (էջ 347, 464)

Բանաստեղծության ինքնագրում նշված է ստեղծման տարեթիվը՝ «Ապրիլ, 1935», գրել է, հավանաբար, Փարիզում: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 256: ԳԱԹ, ԱԻՖ, 229-II-ում գրի է առնված այս բանաստեղծության մի տարբերակ, որն առաջին անգամ տպագրվել է՝ «Նորք», 1992, N 3-4, էջ 103, «Անտիպներ Վարպետից» խորագրով, այնուհետև՝ ՀՀ, 2007, «Ուշ շրջանի բանաստեղծություններ» խորագրով, երկու հրապարակումները՝ Ավիկ Իսահակյանի: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 68-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՀԵՌԱՆԱՄ, ՓԱԽՉԵՄ ԱՆԿԱՑԱՆ...» (էջ 348)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ 1937: Նույն ինքնագրում կա նաև այս բանաստեղծության՝ Սոֆյա Իսահակյանի արտագրությունը: Առաջին անգամ տպագրվել է՝ ՀՀ, 2007, հոկտեմբերի 17, հրապարակումը՝ Ավիկ Իսահակյանի: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 70-II: Տպագրվում է ՀՀ-ից:

«ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՐԲԵՔ ՉԻ ՆԱՑՈՒՄ ԵՏ...» (էջ 349)

Գրել է 1937 թ. Երևանում: Տպագրվել է առաջին անգամ հետմահու՝ «Սովետական գրականություն», 1958, թիվ 10, էջ 102, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Ա. Ինճիկյանի), այնուհետև՝ ՀԵ, 212: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 71-II: Տպագրվում է ինքնագրից:

ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՏՆԱԿՈՒՄ (էջ 350)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ 1937: Առաջին անգամ տպագրվել է հետմահու՝ ՍԳ, 1958, N 10, էջ 102, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Ա. Ինճիկյանի): Լերմոնտովի մեկհարկանի փոքրիկ տնակը գտնվում է Պյատիգորսկում, որտեղ վարձով իր կյանքի վերջին ամիսներն ապրել է բանաստեղծը 1841 թվականի մայիսից մինչև հուլիսի 15-ը: Այստեղ է նա գրել իր վերջին բանաստեղծությունները, այստեղից է նա գնացել իր վերջին մենամարտին: Բանաստեղծի մահից հետո այն վերածվել է թանգարան-արգելանոցի: Իսահակյանը Կովկասյան հանքային ջրերում գտնվելու ժամանակ մի քանի անգամ այցելել է Լերմոնտովի տնակը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 71-II: Տպագրվում է ինքնագրից:

«ԼՈՒՑՍ ՀԱՆՃԱՐԻ ՕՐԵՐԸ ԿԱՐՃ...» (էջ 351)

Գրել է 1937 թ. Երևանում: Տպագրվել է առաջին անգամ հետմահու՝ «Սովետական գրականություն», 1958, թիվ 10, էջ 102, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Ա. Ինճիկյանի), այնուհետև՝ ՀԵ, 213: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 71-II: Տպագրվում է ինքնագրից:

ՍԵՎԱՆ (էջ 352)

Գրել է 1937 թվականի օգոստոսի 22-ին, ի թիվս մի շարք երկերի և գրառումների՝ կապված Սևանի հետ: Ինքնագիրը պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 72-II: Իսահակյանի երկերի հատորներում չի գետեղվել: Սա սոսկ մի հատված է Սևանին նվիրված մեծ մի բանաստեղծության, որը, սակայն, անավարտ է և մասամբ սևագիր: Տպագրվում է ինքնագրից:

«ԱՐԴՅՈ՞Ք ԵՂԵԼ ԵՄ ԵՍ ՋԱՀԵԼ...» (էջ 353)

Գրության տարեթիվն ինքնագրում նշված չէ, դատելով ձեռագրից՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1930-ական թվականների երկրորդ կեսին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը՝ ի թիվս այլ անտիպ բանաստեղծությունների, «Նորք», 1990, N 3, էջ 123, այնուհետև՝ ՀԵ, 254: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 105-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՍՐՏՈՒՄՍ ՍԻՐՈ ...» (էջ 356, 465)

Գրության տարեթիվն ինքնագրում նշված չէ, դատելով ձեռագրից՝ հավանաբար գրված է 1940-ական թվականների երկրորդ կեսին: Առաջին հրապարակումը Ավիկ Իսահակյանի՝ «Գրական թերթ», 1985, հոկտեմբերի 25, «Նոր շիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից» ընդհանուր խորագրի տակ, այնուհետև՝ ՀԵ, 217: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 215-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՃԻՇՏ Է ԽՈՍՔԸ ՄԵՐ ՀԻՆԱՎՈՒՐՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ...» (էջ 357)

Քառյակն անթվակիր է, գրված է, հավանաբար, 1940-ական թթ. երկրորդ կեսին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը, ի թիվս այլ անտիպ բանաստեղծությունների, «Անտիպներ Վարպետից» ընդհանուր խորագրով՝ «Նորք», 1992, N 3-4, էջ 104, այնուհետև՝ ՀՀ, 2007, հոկտեմբեր 17, «Ուշ շրջանի բանաստեղծություններ» ընդհանուր խորագրով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 176-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՀՈԳՆԱԾ ՔԱՑԼԵՐՈՎ ՄՏԵԼ ԵՄ ԱՆՏԱՌ...» (էջ 358, 465)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, դատելով ձեռագրից՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1948-1949 թվականներին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 258, այնուհետև՝ «Նորք», 1990, N 3, էջ 124: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 169-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ԵՎ ՈՐ ԿՈՒՏԱ ԻՆՁ ԱՐՑՈՒՆՔ ԳԵՏԵՐՈՎ...» (էջ 359, 465)

Ինքնագրում նշված են ստեղծագործության գրության տարեթիվը և վայրը՝ «1940, 19 օգոստոս, Սևան»: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը՝ ՀԱ, 2007, հոկտեմբերի 20, ի թիվս այլ անտիպ բանաստեղծությունների՝ «Ավետիք Իսահակյանի ձեռագրերի աշխարհից» ընդհանուր խորագրով: Խոհական մտորում է Հայոց հարցի տխուր ճակատագրի վերաբերյալ, երբ անելանելի վիճակը բանաստեղծին անհուսության է հասցնում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 29-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ՄԻՇՏ ԻՋՆՈՒՄԵՆ ՎԵՐԵՎԻՑ...» (էջ 360)

Գրել է, ըստ ինքնագրի, «1940, Երևան»: Գրված է մուգ կանաչ կազմով օրագրի մեջ, նույն էջի վրա՝ «Ուրիշների ջրերն ընկած գնացի...» քառյակը: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը՝ «Նորք», 1990, N 3, էջ 123, այնուհետև՝ ՀԵ, 257: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 219-II: Քառյակն Իսահակյանը մտադիր է եղել զետեղել 1955 թ. լույս տեսնող «Երկեր» հոբելյանական հատորյակի տեքստում, սակայն վերջին պահին գրաքննությունը տպագրությունից հանել է: Տպագրվում է ինքնագրից:

ԳՈՎՔ ՀԱՑԱՍՏԱՆԻՆ (էջ 361)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ, գրված է, հավանաբար, 1943 թվականին՝ որպես երգի տեքստ «Դավիթ Բեկ» կինոնկարի համար: Սակայն երկը չի կարելի լրիվ մշակված համարել, և այն ավելի շատ սևագիր է: Ինքնագրի մի եզրը պատռված է, ինչի հետևանքով բանաստեղծության 15-16-րդ տողերի վերջին բառերը բացակայում են և վերականգնված են սուր փակագծերով: Ինքնագրի հաջորդ էջին կան արձակ նշումներ: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 117-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԸ (էջ 362)

Գրել է 1943 թ. Երևանում, ի թիվս մի շարք բանաստեղծությունների, Համո Բեկնազարյանի նկարահանած «Դավիթ Բեկ» կինոնկարի համար՝ որպես երգերի տեքստ: Տպագրվել է առաջին անգամ հետմահու՝ «Գրական թերթ», 1958, հոկտեմբերի 22, «Հին տետրակներից» ընդհանուր խորագրի տակ, այնուհետև՝ ՀԵ, 216: Տպագրվում է ՀԵ-ից:

ՆԱԽԵՐԳ (էջ 363)

Գրել է 1943 թ. Երևանում, ի թիվս մի շարք այլ բանաստեղծությունների, Համո Բեկնազարյանի նկարահանած «Դավիթ Բեկ» կինոնկարի համար՝ որպես երգերի տեքստ: Տպագրվել է առաջին անգամ հետմահու՝ «Սովետական գրականություն», 1958, թիվ 10, էջ 102-103՝ «Պրոլոգ» վերնագրով, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Ա. Ինճիկյանի), այնուհետև՝ ՀԵ, 214: Տպագրվում է ՀԵ-ից:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՇՈՒԿԱՑՈՒՄ (էջ 364)

Գրել է 1943 թ. Երևանում «Դավիթ Բեկ» կինոնկարի համար: Տպագրվել է առաջին անգամ հետմահու՝ «Սովետական գրականություն», 1958, թիվ 10, էջ 103, «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ (հրապարակումը՝ Ա. Ինճիկյանի), այնուհետև՝ ՀԵ, 215: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 108-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՈՎ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՑԱՆ...» (էջ 365, 465)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ: Երկն ավարտված չէ, մասամբ սևագիր է, հավանաբար գրված է 1930-ական թթ. երկրորդ կեսին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 199-II: Ինքնագիրը մատիտագիր է: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԴՈՒՄԸ (էջ 366, 465)

Գրել է 1943 թ. Երևանում «Դավիթ Բեկ» կինոնկարի համար: Տեքստը մեքենագիր է, նույն էջին գրի են առնված երկրորդ և երրորդ քառատողերի ինքնագիր տարբերակները: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 145-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԻՐԵՐԸ ԲՈԼՈՐ ՄԵԿԸ ՄՑՈՒՍԻ ԴԵՄ...» (էջ 367, 466)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, գրված է, հավանաբար, 1943 թ.: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը՝ «Նորք», 1992, N 3-4, էջ 104, «Անտիպներ Վարպետից» խորագրով, այնուհետև՝ ՀԱ, 2007, հոկտեմբերի 20, «Ավետիք Իսահակյանի ձեռագրերի աշխարհից» ընդհանուր խորագրով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 212-II: Տպագրվում է ՀԱ-ից:

ՀԻՄՆ (էջ 368, 466)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «23/II. <19>44. Երևան»: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը, ի թիվս այլ անտիպ գործերի, «Նոր շիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից» ընդհանուր խորագրով, ԳԹ, 1985, հոկտեմբերի 25, այնուհետև՝ ԱԽ I, 267, ԱԽ II, 397-398: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 78-II: 1944 թ. տարեսկզբին Հայաստանի կառավարությունը մրցույթ է հայտարարել՝ գրելու ՀԽՍՀ պետական օրհներգի տեքստը: Այդ մրցույթին մասնակցել է նաև Իսահակյանը «Հիմն»-ի ներկա տարբերակով: Հարկ է ասել, որ այս գործին Իսահակյանն սկզբում մտադրություն չի ունեցել մասնակցելու, գրել է վերջին պահին՝ առանց առաջին տեղը գրավելու որևէ հավակնության: Արդյունքում ՀԽՍՀ օրհներգի մրցույթի հաղթողներ ճանաչվեցին Արամ Խաչատրյանը և բանաստեղծ Սարմենը: Տպագրվում է ԳԹ-ից:

ՄԵՐ ՍՊԱՆՎԱԾ ԴԻՑՈՒՀԻՆ (էջ 369, 466)

Ինքնագրում նշված են ստեղծման վայրն ու թվականը՝ 1948, 25 հուլիսի, Նոր Բայազետ: Վերջին խմբագրումը ըստ մի այլ ինքնագրի՝ «15 օգոստոսի, 1956»: Բանաստեղծությունը գրված է Սևանա լճի չորացման ստալինյան հակահայկական և հանցավոր ծրագրի դեմ: Իսահակյանը շատ ցավագին էր տանում Սևանի պրոբլեմը, խորհրդային կարգերի կողմից որդեգրված Սևանա լճի՝ ոչնչացման գործընթացը: Իսահակյանը դա դիտում էր որպես մի մշակված ոճրագործություն Հայաստանի և հայ ժողովրդի լինելության դեմ: Նա ասել է այդ առթիվ. «Ապրեի՝ Անին տեսնեի, մեռնեի՝ Սևանը չորացած չտեսնեի»: Լճի չորացման դեմ նա առաջինն էր մեր իրականության մեջ բողոքի ձայնը բարձրացրել, գրել «Պրավդայի» խմբագրությանը, ելույթ ունեցել Հայաստանի գիտությունների ակադեմիայում և այլուր: Սույն բանաստեղծությունը նա բազմիցս կարդացել էր իր ընկերներին և հյուրերին, այդ թվում նաև 1955 թ. Նոր տարվա օրը իր տանը հյուրընկալած Խորհրդային Հայաստանի ղեկավարներին: Հայտնի պատճառներով Իսահակյանի կենդանության օրոք բանաստեղծությունը հնարավոր չի եղել տպագրել: Առաջին անգամ տպագրվել է Իսահակյանի հարսի՝ Իզաբելլա Իսահակյանի հեղինակած «Սևանը Հայաստանի աչքն է...» հուշագրությունում. «Վերածնված Հայաստան» ամսագիր, Ե., 1990, N3, էջ 62: Իսահակյանի երկերի ժողովածուներում առաջին անգամ հրատարակել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 262, այնուհետև՝ ԱԻԲ, 94-95, ՀԱ, 2007, հոկտեմբերի 20, «Ավետիք Իսահակյանի ձեռագրերի աշխարհից» խորագրով: Ավետիք Իսահակյանի ընտանիքի արխիվում, ինչպես և ԳԱԹ-ում պահպանվում է այս բանաստեղծության չափածո և արձակ մի քանի տարբերակ: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՄԻՏՔՍ ԹԵԵՎ ՇԱՏ ԹԱՓԱՌԵՑ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ...» (էջ 370, 470)

Գրել է 1948 թ. Երևանում: Քառյակի առաջին հրապարակումը Ավիկ Իսահակյանի՝ «Գրական թերթ», 1985, հոկտեմբերի 25, «Նոր շիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից» ընդհանուր խորագրով, այնուհետև՝ ՀԵ, 218: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 186-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ, ԱՆՀՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՍԱՀՄԱՆ...» (էջ 371, 470)

Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «20/V. <19>49 թ.»: Նույն ինքնագրում կա նաև բանաստեղծության մի սևագիր մշակում: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը, ի թիվս այլ անտիպ բանաստեղծությունների՝ ՀԱ, 2007, հոկտեմբերի 20, «Ավետիք Իսահակյանի ձեռագրերի աշխարհից» ընդհանուր խորագրով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 81-II: Տպագրվում է ինքնագրից:

ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ... (էջ 374)

Ինքնագրում, որ պահպանվում է Ավ. Իսահակյանի երևանյան տուն-թանգարանում, գրության տարեթիվը նշված չէ: Հավանաբար Իսահակյանը գրել է 1952 թվականին Պյատիգորսկում՝ Լերմոնտովի մենամարտի վայրում կանգնեցրած արձանը դիտելուց հետո՝ օգոստոս ամսին: Իսահակյանը մշտական պաշտամունք է ունեցել Լերմոնտովի անձի հանդեպ, երբ 1952 թվականին Կիսլովոդսկ հանգստավայրում էր, այցի գնաց մեծ բանաստեղծի հիշատակի հետ կապված վայրերը: Պահպանվել են մի շարք լուսանկարներ, որտեղ պատկերված է Իսահակյանը Լերմոնտովի արձանի մոտ (մենամարտի վայրում և այլն): Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԵՐԲ ԴԵՌ ՉԷԻ ԵՍ ՏԵՍԵԼ ՔԵԶ...» (էջ 375)

Բանաստեղծությունն անթվակիր է, դատելով ձեռագրից՝ կարելի է ասել, որ գրված է 1950-ական թթ. առաջին կեսին: Երկն ունի երկու տարբերակ: Ա տարբերակը՝ «Երբ տեսա քեզ...» սկսվածքով (6 տողանոց), առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, էջ 259, այնուհետև՝ ՀԱ, 2007, հոկտեմբերի 20, «Ավետիք Իսահակյանի ձեռագրերի աշխարհից» խորագրով: Այն պահպանվում է՝ ԳԱԹ, ԱԻՖ, 137-II («Բախտն ինձ անջատեց...» բանաստեղծության սևագրի հարևանությամբ) և 138-II (երկու մշակում): Բ տարբերակը՝ «Երբ դեռ չէի տեսել քեզ...» սկսվածքով (8 տողանոց), մատիտագիր, սևագիր, պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 135-II: Ներկա հատորում առաջին անգամ տպագրվում է Բ տարբերակը՝ որպես ավելի ավարտուն: Տպագրվում է ինքնագրից:

«ԳՆԱ՛Ց, ԳՆԱ՛Ց...» (էջ 376)

Ինքնագրում գրության թվականը նշված չէ, հավանաբար գրված է 1950-ական թվականների առաջին կեսին, քանի որ բանաստեղծությունը գրված է աշխատանքային մի բլանկի վրա, որը թվագրված է՝ «195.... թ.»: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը «Հայդուկի երգեր» գրքում, այնուհետև՝ ՀԱ, 2007, հոկտեմբերի 20, «Ավետիք Իսահակյանի ձեռագրերի աշխարհից» խորագրով: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 82-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՕՐԵՐՍ ՇՔԵՂ ԿՈՐԱՆ ՀԱՎԻՏՑԱՆ...» (էջ 377, 472)

Քառատողն անթվակիր է, գրված է, հավանաբար, 1950-ական թթ. առաջին կեսին, երբ Իսահակյանն այցելել է Հայաստանի հեռավոր շրջանները, ինչի մասին վկայում է ինքնագիրը: Երկի հաջորդ էջին արված է գրառում. «Մալիշկայի կոլխոզի նախագահ Բաբաջանյան Հմայակ: Իմ հիշողությամբ՝ Բաբաջանյանի թոռը (<Խալխայի> թոռը)»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 120-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«Ա՜Խ, ԻՆՁՔԱՀ, ԻՆՁՔԱՀ ԿՈՒԶԵԻ ԼԻՆԵԼ...» (էջ 378)

Բանաստեղծության արձակ մտահղացումը գրի է առնվել 1952թ. փետրվարի 4-ին Երևանում: Ինքնագրում նշված է բանաստեղծության գրության տարեթիվը՝ «1955 թ. դեկտեմբերի 12»: Առաջին անգամ տպագրվել է հետմահու՝ Ե I, 386 (կազմող՝ Արամ Ինճիկյան), այնուհետև՝ ԵԺ I, 379, ՀԴԳ, 206-207, ԱԻԲ, 96, ԱԽ II, 404-405, ԵԼԺ I, 54, «Բարև՛, Վարպե՛տ», 53: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 26-I: Իսահակյանն իրեն միշտ համարել է «Անիի քաղաքացի, Անիի տոհմիկ քաղաքացի»: Հայության փառքի մայրաքաղաքի հանդեպ պաշտամունքի հասնող սեր է տածել: Տպագրվում է ԵԺ I-ից:

ՇՈՊԵՆԻ ԹԱՂՄԱՆ ՔԱՑԼԵՐԳԸ (էջ 379)

Գրել է 1956 թ. Երևանում: Տպագրվել է առաջին անգամ հետմահու՝ Ե I, 381 (կազմող՝ Արամ Ինճիկյան), այնուհետև՝ այլ ժողովածուներում: Պահպանվում է ԱԻԸԱ:

Տեքստը բերվում է Ե I-ից:

«ԴՈՒՐՍԸ ԲՈՒՔ Է ԽԻՍՏ, ԳԻՇԵՐ, ՑՈՒՐՏ ՁՄԵՌ...» (էջ 380)

Գրել է 1956 թ. դեկտեմբերի 10-ին Երևանում Դ. Դեմիրճյանի թաղման անմիջական ազդեցության տակ: Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել:

Առաջին անգամ տպագրվել է՝ Ե I, 387 (կազմող՝ Արամ Ինճիկյան): Պահպանվում է ԱԻԸԱ: Տպագրվում է Ե I-ից:

«ԿՈՒԶԵԻ ԼԻՆԵՐ ԿՑԱՆՔԸ ՀԱՎԻՏՑԱՆ...» (էջ 381, 473)

Գրության թվականը նշված չէ, դատելով ձեռագրից՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1950-ական թվականների առաջին կեսին: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը՝ «Նորք», 1990, N 3, էջ 124, այնուհետև՝ ՀԵ, 261: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 178-II: Տպագրվում է ՀԵ-ից:

«ՄԵՆՔ ՏԻԵԶԵՐՔՈՒՄ, ՏԻԵԶԵՐՔԻ ՁԱՓ...» (էջ 382, 473)

Քառատողի սկզբնական երկու սևագիր մշակում թվագրված են «21. V. <19>56 թ. Երևան», իսկ մաքրագիր օրինակն արտագրել է 1957 թ. օգոստոսին, քանի որ նույն էջին գրի առած «Մենք ապրում ենք մահվան դժխեմ...» բանաստեղծությունը թվագրված է՝ «23/VII. <19>57»: Ինքնագրերը պահպանվում են ԳԱԹ, ԱԻՖ, 83-II և 84-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ՄԱՀՎԱՆ ԴԺԽԵՄ...» (էջ 383)

Ինքնագրում կա բանաստեղծության մեկ այլ մշակում՝ չնչին փոփոխություններով, թվագրված՝ «23/VII. <19>57», իսկ մաքրագիր օրինակն արտագրել է 1957 թ. օգոստոսին, քանի որ նույն էջին գրի առած «Մարդու տենչանքն է հավիտյան ապրել...» բանաստեղծությունը թվագրված է՝ «1957. օգոստոս»: Գրված է Երևանում: Առաջին անգամ տպագրել է Ավիկ Իսահակյանը՝ ՀՀ, 2007, հոկտեմբեր 17: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 84-II: Տպագրվում է ինքնագրից:

«ՄԱՐԴՈՒ ՏԵՆՁԱՆՔՆ Է՝ ՀԱՎԻՏՑԱՆ ԱՊՐԵԼ...» (էջ 384)

Ինքնագրում նշված են բանաստեղծության գրության տարեթիվը և վայրը՝ «1957. օգոստոս»: Գրված է Երևանում: Առաջին անգամ տպագրվել է՝ Ե I, 387 (կազմող՝ Արամ Ինճիկյան), այնուհետև՝ ԵԺ I, 382, ԱՄ, 46, ՀԴԳ, 208, ԱԽ II, 311: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 84-II: Տպագրվում է Ե I-ից:

«ԻՆՁ ՍԻՐԵԻՐ ՈՐՊԵՍ ԹԵ...» (էջ 385)

Գրի է առնված Սոֆյա Իսահակյանի կողմից: Ինքնագրի վերջում Արամ Ինճիկյանի ձեռքով նշված է. «Գրել է 1957 թ. հոկտ<եմբերի> 16-ին՝ մահվան նախորդ գիշերը՝ ըստ Սոֆյա Իսահակյանի»: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 73-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ՍԵՎԱԳԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԷՍ ՍԱՐԵՐԻՑ ՀԻՄԱ ԱՐՏՈՒՏԸ ԿՈՒԳԱ...» (էջ 388)

Գրել է, ըստ ինքնագրի, «18 ապրիլ, Ս. Պետերբուրգ, 1904»: Երկու թերթ, չորս էջից ձեռագիրն է, որտեղ բացի նշված երկից գրված են «Վիշտս ծանր է, սրտիս վերքը անդարման...» (1904, մայիսի 4, Մոսկով), «Մանուկ օրերից բախտի ետևից...», «Մարդկանց ժպիտին դու մի՛ հավատա...» (1904, մայիս 1, Մոսկով) բանաստեղծությունները: Վերջին երեքը տպագրվել են «Հայդուկի երգեր» գրքում: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 50-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

ԿՈՒԶԵԻ ԱՊՐԵԼ (էջ 390)

Գրության տարեթիվն ինքնագրում նշված չէ, գրված է, հավանաբար, 1900-ական թթ. սկզբներին, քանի որ ինքնագրի հաջորդ էջին գրի առած «Այսօր ձեր տուն մեծ խնջույք կա...» և «Աշխարհը վառ էր անուշ երգերով...» բանաստեղծություններն առաջին անգամ տպագրվել են 1901 և 1903 թթ.: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 143-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ԴՈՒ ՔՆՔՈՒՇ ՏԵՐԵՎ ՀՈՂՄԵՐԻ ԱՌԱՋ...» (էջ 391)

Եռատողի ստեղծման թվականը նշված չէ: Հավանաբար գրված է 1910-ական թթ.: Ձեռագիրը մատիտագիր է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 89-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«Ա՜Ց ԻՄ ՁՈՐ ԳԼՈՒԽ՝ ԴԱՐԴՈՏ ՈՒ ՄԵՆԱԿ...» (էջ 391)

Գրության թվականն ինքնագրում նշված չէ: Դատելով ձեռագրի բնույթից՝ կարելի է ենթադրել, որ գրված է 1926-1930 թթ.: Ինքնագիրը մատիտագիր է: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 89-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՀՈԳԻՍ ԳԵՐՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ...» (էջ 392, 474)

Գրության ստույգ թվականն ինքնագրում նշված չէ: Ըստ ձեռագրի բնույթի՝ գրել է 1910-ական թթ. առաջին կեսին: Նույն ինքնագրի վրա՝ երկի խմբագրված մեկ այլ տարբերակը: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 170-II: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

«ՄԻ ՔԻՉ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՁ ԷԼ ԼՍԵՑԵՔ...» (էջ 392, 474)

Գրի է առնված ԽԳ 1938, N 10-ի անվանաթերթի վրա, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ անթվակիր այս եռատողը գրված է 1938 թ. վերջերին: Պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 51-I: Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

Ավիկ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՀԱՆՃԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հավանաբար երկար կյանքը և գրական բծախնդրությունն էին պատճառը, որ Իսահակյանը տարբեր տարիների գրած բանաստեղծություններից շատերը այդպես էլ թողեց իր ձեռագրերի գզրոցներում, անտիպ վիճակում: Նման երկերը մի ուրույն մասն են կազմում նրա չափածո ժառանգության: Այդ երկերի շարքից թերևս առանձնացնենք 1888-1892 թթ. վաղ շրջանի բանաստեղծությունների խումբը, քանզի դրանք, ըստ էության լինելով ուսումնառության շրջանի գործեր, իրենց գերակշռող մասով գրվել են Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում սովորելու տարիներին: Բնականաբար, նրանց վրա դեռ չէր ընկել հանճարի այն շողքը, որ ակնհայտ երևաց Ավետիքի՝ 1893 թվականից հետո գրած բանաստեղծությունների վրա: Որքան էլ հեղինակը հանճարեղ լինի, առավել ևս գրականության բնագավառում, նա պետք է անցած լինի որոշակի դպրոց, ստեղծագործական կայացման որոշակի ճամփա: Այդպիսի դպրոց եղան նախ ճեմարանում, ապա Գյումրիում, Արգինայում կամ Հառիճում գրած ուսումնական շրջանի բանաստեղծությունները: Ընդհանուր առմամբ, դրանք հիմնականում երկու ստվար տետրեր են կազմում, բանաստեղծություններ՝ գրված 1889-1892 թթ., գեղեցիկ ձեռագրով, սև թանաքով: Այդ ինքնագրերից արդեն զգացվում են ապագա մեծ անհատի կամքն ու նպատակասլաց խառնվածքը:

Ժամանակը բարեբախտաբար պահպանել է Իսահակյանի նաև այդ շրջանի ձեռագրերը, այնպես որ նրա պոետական հանճարի ձևավորման պրոցեսին մենք կարող ենք հետամուտ լինել շատ ստույգ ձևով: Եվ քանի որ այդ գործերն իրենց գրելաոճով, արվեստի որակով, շարադրանքի ձևով և անգամ տրամադրությամբ շատ են տարբերվում այն Իսահակյանից, որը բոլորիս համար սկսվում է «Երգեր ու վերքեր» (1897) իր առաջին,

բայց դարակազմիկ գրքով, ապա փորձենք ավելի հանգամանորեն ներկայացնել Իսահակյանի պոեզիայի ամենավաղ շրջանը:

Ներկա հատորում այդ շրջանն իր թվաքանակով կազմում է գրքի մոտավորապես մեկ երրորդը՝ շուրջ 127 բանաստեղծություն:

Այս շարքի առաջին բանաստեղծությունը Րաֆֆու մահվան առիթով գրված «Նվեր Րաֆֆու հիշատակին»-ն է: Ազնիվ, հայրենասիրական մղումներով գրված մի երկ, որի մեջ բարձր գնահատելով մեծ վիպասանի գործը և սգալով նրա վախճանը, պատանի բանաստեղծը հնչեցնում է յուրաքանչյուր հայի պարտականությունը.

Հայրի՛ր, ո՞վ տաղանդ, գրիչ ա՛ռ ձեռքդ,
Գրե՛, դրոշմե՛, գովե՛ Հայաստան,
Հարգե՛ Հայ լեզուդ, սիրե՛ Հայ ազգդ,
Որ փառք ժառանգես Մեսրոպի նման:

Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ ստեղծագործական հավատամք, ինչին ինքը հավատարիմ մնաց ողջ կյանքում: Մտորումը գալիս է հերոսի անհատականության բնույթից, ինչը քնարական պոեզիայի հիմքերից մեկն է: Ուրեմն առաջին իսկ երկը վստահաբար կարելի է համարել հայրենասիրական քնարերգության վառ օրինակ:

Հեղինակը դեռևս չէր բոլորել 13 տարին, բայց և հենց սա է Իսահակյանի ստեղծագործության ֆենոմեններից մեկը՝ ժամանակից շուտ հասունացում, որը տարիների ազդեցության տակ կվերաճի իմաստության:

Հայրենասիրական ուղղվածության տեսակետից պատանի Ավետիքի երկրորդ՝ «Փլատակաց մեջ այն ո՞վ է նստած...» («Մայրըն Հայաստան») և երրորդ՝ «Հայուհվո օրորոցի երգը» բանաստեղծությունները ոչնչով չեն զիջում Րաֆֆու հիշատակին ուղղված ձոնին:

«Մայր Հայաստանի» մեծ ճանաչում ունեցող կտավի ձեռագործ մանրակերտը կախված է եղել Գյումրիի Իսահակյանենց հայրական տանը: Ամեն հայի սրտի հետ խոսող այս կտավը քանի՛-քանի՛ անգամներ ազգասիրական մտորումներ է առաջացրել պատանի բանաստեղծի հոգում: «Փլատակաց մեջ...» երկը սոսկ նկարագիրը չէ հայրենիքի վիշտն ու վրեժը իր մեջ խտացրած Մայր Հայաստանի, այլ այստեղ

որոշակիորեն արտահայտված է պատանի հեղինակի մղումը՝ բերելու իր անձնական մասնակցությունը ժողովրդի կենաց կռվին.

Բա՛ց ինձ քո ծոցը, ծոցդ մայրական,
Գալիս է նժդեհ որդիդ տարագիր,
Տո՛ւր ինձ քո ծոցը մի հանգստարան,
Ինչպես որ իմ հարց, եղբարցը տվիր:

Օրորոցային բնույթի երկերի շարքում առաջին երգը Իսահակյանի պոեզիայում «Հայուհվո օրորոցի երգն» է՝ գրված Էջմիածնում 1889 թ. հոկտեմբերի 28-ին: Կարելի է գուշակել, թե ինչի մասին կգրեր պատանի բանաստեղծը: Երբ սկսում ես խորանալ այդ երկի մեջ, անկարելի է չհամակվել այն զգացումով, որ մենք գործ ունենք ոչ թե սովորական ոտանավոր գրողի, այլ իրապես ապագա մեծ հայրենասեր պոետի հետ, որն իրեն իրավունք է վերապահել խոսելու հայ մոր հավաքական կերպարի կողմից, այդ ի՞նչ ուժով պիտի զգար պատանին իր ազգի վրեժխնդրության գաղափարը, որ բռնկվեր ռազմի պայքարի տենչով՝ մահի ու կենաց կռվով: 14-ամյա պոետի «Հայուհվո օրորոցի երգը» վերաճում է ազգային պայքարի գաղափարախոսության յուրահատուկ մանիֆեստի: Կարդում ես (մեջբերումներ չեմ անում, քանզի ստիպված կլինենք մեջբերել ողջ բանաստեղծությունը) և հանձին Իսահակյանի՝ համակվում անհերթ հավատով ազգային պոեզիայի ապագայի հանդեպ:

Առաջին իսկ գործերից մեր դիմաց կանգնում է Իսահակյան քնարերգուն: Անդրանիկ տետրերի մի շարք բանաստեղծություններ ունեն պայմանական խորագիր՝ «Օրագիր» կամ «Նվեր»: Ինչպես հայտնի է, Շուշանիկի և Ավետիքի սիրավեպը սկսվել է 1890 թվականին: Եվ հենց այդ թվականից նրա պոետական ներկապնակը հարստանում է սիրային ուղղվածություն ունեցող երկերով: Ամեն ինչ շատ ստույգ հուշում է, որ Իսահակյանի պոետական աշխարհ ներխուժեց (և դա կտևի երկար տարիներ) ալեքսանդրապոլյան դեռատի գեղեցկուհի Շուշանիկ Մատակյանը: Հետազոտվող բանաստեղծությունները, որոնք կրում են «Նվեր» խորագիրը, վստահ կարող ենք ասել, որ ուղղված են Շուշա-

Նիկին: Ահա հենց տվյալ շարքի առաջին երկը, առաջին սիրային երազանքն ու բաղձանքը.

Ե՛կ, մրահոն կո՛ւյս փարելի,
Ուռենու տակ հովասուն,
Ե՛կ, փաղաքշե՛, իմ նազելի,
Հեգ սիրեկնիդ քաղցրասուն:

Ե՛կ, հանգչեցրո՛ւ իմ գլուխը
Կրծքիդ վերա գեղանի.
Ե՛կ զովացրո՛ւ իմ երեսը
Ստինքիդ մեջ հոլանի:

Ե՛կ, տուր համբույր ինձ մեղրաբուխ,
Ջերմ կուսական, սրբազան.
Ե՛կ, տո՛ւր ինձ կյանք, իմ կենսաբուխ,
Ապրել քեզ հետ հավիտյան:

Այս տողերը կարդալիս անկարելի է չհիշել Իսահակյանի «Քո՛ւյր իմ նազելի, նայիր քո դիմաց...» բանաստեղծությունը՝ էլի նույն կրքով ու տառապանքով ուղղված նույն քնարական հերոսուհուն.

...Ա՛խ, նվիրական ինձ քո գիրկը բաց
Եվ գուրգուրիր ինձ, ես չա՛տ եմ լացել...
Քնքուշ ձեռներով աչերըս սրբիր,
Մի՛ թող ինձ լալու - ես չա՛տ եմ լացել,
Ճակատիս մռայլ՝ մշուշը ցրիր,
Եվ գուրգուրիր ինձ, ես չա՛տ եմ լացել...

Սա գրվել է առաջինից 14 տարի անց, դարձյալ նվիրված «մրահոն կույսին», և զգացվում է, որ սիրո այս պատմությունը երջանիկ ընթացք չէր ունենալու... «Նվեր» վերնագրված բոլոր բանաստեղծությունները կարծես հուշում են, որ պատանի Ավետիքի զգացմունքը Շուշիկի հանդեպ անհասանելի տենչ էր:

Ապերջանիկ սիրո զգացումով են հագեցած և՛ «Նվեր», և՛ «Օրագիր» խորագիրը կրող համարյա բոլոր գործերը: «Օրագիրը» «...Նվերի» բնական շարունակությունն է, սակայն այն տարբերությամբ, որ այստեղ խոսքն ուղղված է հեղինակի քնարական հերոսին, այսինքն՝ իրեն: Եվ ինչպես բնորոշ է օրագրի ժանրին, այն հավաքածո է քնարական խոստովանությունների ու մտորումների՝ ուղղված, առաջին հերթին, իր ներաշխարհին: Ինքնաբնութագրումը հետագայում ևս առկա կլինի որպես նրա քնարերգության կարևոր մի հատկանիշ: Ընդհանրապես օրագրի ժանրը Իսահակյանի ստեղծագործության համակարգում ուրույն տեղ ունի: Այն հարազատ ժանր է յուրաքանչյուր քնարերգու ստեղծագործողի համար:

Քանի որ իր բնույթով օրագրությունը շատ է կապված հեղինակի ներքին աշխարհի հետ, այն իր էջերում պարփակում է մտքեր, տրամադրություններ, կրքեր, հույզեր, որ քնարերգու հեղինակը նախընտրում է հանձնել իր օրագրերին՝ լինեն դրանք չափածո բանաստեղծություն, թե արձակ գրառումներ: Ուստիև պատահական չէ, որ վաղ շրջանի որոշ գործերի Իսահակյանը ենթախորագիր է դրել օրագիր բառը: Այդ բանաստեղծությունները երբ ի մի ես բերում, տեսնում ես, որ այդ խորագրի տակ իրոք հավաքված են գործեր, որոնց խոսքը, խրատը, այսինքն՝ ասելիքը, Իսահակյանն առաջին հերթին հենց իրեն է ուղղել: Դրանք թե՛ խոստովանություններ են, թե՛ ներքին հոգեկան պրպտումի արձագանքներ, թե՛ ինքնաբացահայտման ուրույն ձև: Իսկ կան մի քանի բանաստեղծություններ էլ, որոնք Իսահակյանը միաժամանակ վերնագրել է և՛ «Նվեր», և՛ «Օրագիր» կամ հակառակը:

Մեր կողմից ուսումնասիրվող բանաստեղծությունների մի զգալի մասը, բնականաբար, չի վերաբերում հիշյալ ենթախորագրերին: Նրանք ազատ են իրենց թեմատիկայով և սակայն իրենց մոտիվներով նախաշառավիղն են բանաստեղծի՝ 1898 թվականին լույս տեսած անդրանիկ գրքի՝ «Երգեր ու վերքերի»: Այնպես որ մենք գործ ունենք մինչ «Երգեր ու վերքեր»-ի շրջանի Իսահակյանի չափածո գործերի հետ: Եվ եթե նկատի ունենանք այն, որ անդրանիկ ժողովածուն հիմնականում ներառում է 1892-1897 թթ. գրված երկերը, ապա Իսահակյանի մինչերգուվերքյան շրջանը պիտի համարել 1889-1892 թվականները: Այդ թվականներին են վերաբերում առավել քանակով այն բանաստեղծությունները, որոնք

Իսահակյանը չի զետեղել «Երգեր ու վերքեր»-ում և հետագայում էլ չի հրատարակել: Ստեղծագործական մեծ բեկումը տեղի է ունենում 1892-1893 թթ., երբ Իսահակյանն իր գրածի մեծ մասը հրապարակում է սկզբում «Երգեր ու վերքեր»-ի կազմում, ապա նաև իր հետագա պոետական ժողովածուներում:

Արդյո՞ք Իսահակյանն իրավացի էր, երբ այդ բանաստեղծությունները թողեց անտիպ: Ընտրությունն, իհարկե, միայն Իսահակյանի իրավունքն էր, և ներկայումս հրատարակելով նրա անտիպների հատորը՝ մենք թերևս փորձած կլինենք ինչ-որ չափով պատասխանել մեր իսկ հարցին: Ժողովածուում հավաքված վաղ շրջանի՝ 1888-1892 թթ. բանաստեղծությունները կարելի է անվանել Էջմիածնի Գևորգյան ճեմարանի շրջանի երկեր, այսինքն՝ ուսումնական գործեր:

Մեր ձեռքի տակ եղած երկու անտիպ տետրերից հստակ երևում է, որ արդեն 14-16 տարեկանից Իսահակյանը շատ լուրջ է զբաղվել պոեզիայով: Եվ այն իրոք դարձել էր պատանի ճեմարանականի հիմնական գործը, ոչ թե զբաղմունքը, հետաքրքրությունը, այլ կյանքի հիմնական նպատակը: Բանաստեղծությունից բանաստեղծություն ավելի է հղկվում նրա արվեստը, ավելի է լրջանում ասելիքը: Ձևավորվում է քնարական հերոսի տիպը: Դա իր տարիքից շուտ հասունացած, արարման ձիրքով օժտված երիտասարդ է, սակայն իր խառնվածքով հոռետես, սիրո զգացմունքների մեջ ավելի շուտ սիրո կործանումը, հերոսի կամ հերոսուհու մահը կանխատեսող, սիրո ոչ թե վայելքը, այլ դրամատիկ բաժանումը նախազգացող... Բացառությամբ վաղ շրջանի մի քանի բանաստեղծությունների («Աշունը եկավ... Մերկացավ անտառ...», «Հովվուհին», «Երբեք երգչիս չեն գրավում...», «Եվ Ման-Տաշի երանավետ...», «Հորիզոնս ամպածածուկ...», «Քնքուշ սիրտս, կույս անմեկին...»), սիրային քնարերգության մյուս բոլոր երկերն իրենց ընդերքում կրում են ապաբախտ ավարտի զգացումը: Եվ պատանի Իսահակյանը չէր սխալվել. այն գործերը, որոնք վերաբերում էին Շուշանիկ Մատակյանին (իսկ Իսահակյանի մի տևական շրջանի սիրային բոլոր բանաստեղծությունները, համարձակ կարող ենք ասել, ուղղված են եղել Շուշանիկին), իրենց խորքում կրում են դրամատիկ բովանդակություն և ունեն տխուր վախճան: Բնական է՝ պատանի Իսահակյանը զգացել էր, որ իր սրտի ուզածով չդասավորվեցին իր և իր պոեզիայի հերոսուհու հարաբերությունները: Եվ քանի որ դեռ շատ երիտասարդ էր, անփորձ, միամիտ ու ռոմանտիկ հույզերով տարված, որոշել էր բոլոր հարվածներն իր վրա վերցնել և՛ իր, և՛ Շուշանիկի փոխարեն և ապա տառապանքի մեջ զգալ բարոյական հաղթանակ, քանի որ ամեն զոհաբերություն իր խորքում ունի առաքինության տարրեր: Այնպես որ, Իսահակյանի սիրային պոեզիայի ընթացքն ուղեկցվել է ոչ թե վայելքով, խինդով ու խրախճանքով, այլ ցավով, տառապանքով ու վշտով: Այս ապագա մեծ ճանապարհի սկզբնամասի վրա էլ դրոշմված է «անբախտ սիրով»: Մի՞թե պատասխան ունի պատանու հարցը.

Սիրույդ վերքերն հրաբորբոք
Կրծին սիրտս վշտահար.
Ինչո՞ւ, ինչո՞ւ, կո՛ւյս անողոք,
Զոհիդ շուտով մոռացար:

16-ամյա Իսահակյանը մտաբերում է. «Ա՛խ, հիշում եմ, կար ոսկեդար, / Որ ես անվիշտ, ես անհոգ, / Երգում էի երգ սիրավառ...»: Ինչպես ռուս հայտնի բանաստեղծ Լերմոնտովն է ասել. «Я пережил свои желания» («Ես վերապրել եմ իմ ցանկությունները»):

Հար և նման խոստովանությունները ցույց են տալիս, որ դեռ երկու տարի առաջ՝ մինչ Շուշանիկի ամուսնությունը, Իսահակյանն իր պոետական բնազդով կանխատեսել էր այն, ինչը պիտի լիներ ոչ հեռու ապագայում: Սակայն հիասթափությունը չէր մարում ամենակուլ զգացմունքը, ընդհակառակը, ասես ավելի էր այն բորբոքում: Եվ արդեն պատանուն թվում էր, թե միայն իր մահով, իր անէացմամբ ինքը կգրավի սիրեցյալի ուշադրությունը, կշարժի նրա խիղճը: Եվ բազմաթիվ բանաստեղծություններ ծայրաստիճան դրամատիկ ավարտ են ունենում.

Տես չմոռնաս այց ելնելու
Տխուր շիրմիս, իմ քուրի՛կ,
Եվ կրծքիս տեղը ցողելու
Մամուռներս գեղեցիկ:

Իսահակյանը, ինչքան էլ որ պատանի, շատ է սիրում դրամատիկ

իրավիճակներ: Նա պատրաստ է հանուն սիրած էակի... Ավելի լավ է՝ խոսքը տանք պոետին.

Որ տոգորված ճշմարտության
Անհաղթ տենչով բարձրանա
Դեպ զոհվելու, սիրո օրրան
Լուսաճաճանչ Գողգոթա:

Եվ հոգնած անբաժան սիրո ինքնախարազանումից՝ իր մուսայի լարերը հնչեցնում է այլ, թերևս կրկին հոռետեսությամբ շնչող, բայց անվիճելիորեն փիլիսոփայական ուղղվածություն ունեցող տողեր: Փիլիսոփայական տարրը մտորումի, խորհրդածության, հաճախ աֆորիստիկ տողի ձևով ներս է խուժում Իսահակյանի պոեզիա. այս են վկայում և մեր կողմից հետազոտվող վաղ շրջանի անտիպ գործերը: Այնուհետև ի հայտ է գալիս աշխարհի, շրջապատի, երևույթների փիլիսոփայական մեկնաբանման Իսահակյանի հակումը: Թեև շատ պատանի, սակայն խոհը, հետևությունը, իրականության վերլուծությունը Իսահակյանի պոեզիայի անբաժան օրինաչափություններից են: Այսպիսին է պատանի ճեմարանականի ձեռագիրը. հանրությունը երկար ժամանակ պատկերացում չի ունեցել հիշյալ շրջանի բանաստեղծությունների վերաբերյալ, սակայն այդպիսին էլ մենք պատկերացնում էինք վաղ շրջանի ճեմարանական գործերը, քանզի «Երգեր ու վերքեր» գիրքը չէր կարող ստեղծվել հենց այնպես, առանց նախնական հայտերի, առանց պարարտ հողի, առանց խոհական վերլուծությունների: Եվ ինքը՝ Իսահակյանը, առաջին հավատավորն էր իր ստեղծագործության խոհական ներուժի. նախ ինքը իրեն պիտի հավատար և հետո հուչակեր իր գաղափարները: «Եթե տեսնես մի թախծալի...» բանաստեղծությունը (գրված 1891 թ. սեպտեմբերի 9-ին, Վաղարշապատում) եղավ առաջին գործը, որի մեջ Իսահակյանը կասի իր մասին.

Եթե տեսնես հպարտ երգչին՝
Քարկոծված կույր ամբոխեն
Եվ ուշաթափ ընկած գետին,
Այն ես եմ, ես - մարգարեն:

Գիտակցաբա՞ր, թե՞ պարզապես բանաստեղծական ներշնչանքի ինտերցիայով է ասված. «Ես - մարգարեն»:

Իհարկե, գիտակցաբար: Ինչքան էլ որ 16 տարեկան պատանյակի համար մարգարեի հետ համեմատվելը հեշտ չէ, սակայն նա արդեն զգացել էր ներքին մի կանչ... Մարգարե հասկացությունն իր ողջ խորությամբ Իսահակյանի համար բացահայտվեց քիչ ավելի ուշ, երբ Լայպցիգի համալսարանում նա ծանոթացավ Շոպենհաուերի, Նիցշեի փիլիսոփայական գրվածքներին, Բուդդայի ուսմունքին: Իսկ առայժմ մարգարեի ուժը իր էության մեջ նա զգաց զուտ ինտուիտիվ: Բայց կարևորը սեփական տաղանդին հավատալն էր:

Նույնպես ճեմարանում գրված «Ես լալիս եմ... Թող արցունքս...» բանաստեղծության մեջ պատանի Ավետիքը կգրի.

...Որ հավատով կարեկցաբար
Լամ, աղոթեմ, սգամ միշտ,
Ջար մարդերի խղճի համար
Կեղծ մարդկության ամբարիշտ,
Որ սիրտս ուզե բուռն ույժերով
Խավարի դեմ տալ կռիվ...

Եվ այսպես, յուրաքանչյուր նոր գործում ավելի լրջանում է ասելիքը, ավելի խորանում է փիլիսոփայական հունը: Սիրո և հայրենասիրական մոտիվների կողքին ձևավորվում են խոհափիլիսոփայական բնույթի գործեր: Եվ այս հանգամանքը օրինաչափ է դառնում վաղ շրջանի շա՛տ ու շատ գործերի համար:

1891 թ. դեկտեմբերից գրված նրա խոհական շարքի համարյա յուրաքանչյուր գործում կա աֆորիստիկ տող. «Եվ ի՞նչ է կյանքը - հույսերի շղթա», «Մարդիկ ստրուկ են չնչին կրքերի», «Սիրիր, կյանքի անապատում Սերն է միակ օազիս», «Ջարը կընկճվի - Լույսը հաղթող է»: Նույնն է պատկերը և հետագա տարիների բանաստեղծություններում, ահա՝ 1892 թ.՝ «Հույսի տաճար է հոգիս», «Մարդիկ կարոտ են սիրո զգացմանց», «Ես սիրում եմ սուրբ ազատություն», «Ես կյանք չեմ ուզում, ես մահ չեմ ուզում»:

Այս հանգամանքը բնորոշ է նաև Իսահակյանի հետագա շրջանի

բանաստեղծություններին: Արդեն վաղ գործերում հստակ է, որ Իսահակյանը հավասարապես հույզի և մտքի բանաստեղծ է: Այստեղ մենք հանդիպում ենք գեղարվեստորեն իրոք կատարյալ, Իսահակյանի հարուստ խոհաշխարհն արտացոլող մի շարք երկերի՝ «Ես չունիմ կամք, չունիմ հավատ...», «Ծփա՛, սիրտ իմ, հուզմունքների...», «Բախտի աստղը այս երեկո...», «Դու ի՞նչ գիտես, թե իմ սրտում...», «Դավաճանության օրերում (X-<ի> հասցեին)...», «Նվեր սիրելի քույր - Շուշիկին իր եղբայր – Ավետիքից»: Ինչպես և մեծն Դանթեի սիրած էակին, նրա պոեզիայի հերոսուհուն՝ Բեատրիչեին ուղղված բանաստեղծությունը՝ «Զէ՛, չմոռնաս, Բեատրիչե...»: Փակագծերում ասենք, որ Իսահակյանն այս երկում ի դեմս Բեատրիչեի նկատի ունի իր հերոսուհուն՝ Շուշանիկին: Հայ բանաստեղծին չկայացած սիրո նույն բաղձանքն է տանջում, երանության նույն կարոտը: Այն, ինչն իրական կյանքում հնարավոր չի լինում, բանաստեղծները փորձում են իրականացնել իրենց կարոտալից տողերում.

Զէ՛, չմոռնաս, Բեատրիչե,
Իմ հառաչանք, իմ վշտեր,
Սակայն հիշի՛ր երգչիս՝ որպես
Մի ուրվական, մի ստվեր:

Մի ուրվական, որի գրկից
Շնչում էիր սեր-բուրմունք,
Մի թույլ ստվեր, որի սրտում
Քաղում էինք հույս-ծաղկունք...

Ինչպես հայտնի է, Շուշանիկը ևս բանաստեղծություններ է գրել: Ցո՞ւյց է տվել պատանի Ավետիքն իր սիրեցյալին այս բանաստեղծությունը, որտեղ նրան՝ 16-ամյա ալեքսանդրապոլյան գեղեցկուհուն, նա իր հանդուգն երևակայության մեջ փորձել էր համեմատել իտալական պոեզիայի արքայի հերոսուհու հետ...

1890-1892 թթ. անտիպ տետրերն ավարտվում են «Նվեր սիրելի քույր – Շուշիկին իր եղբայր - Ավետիքից» և «Պատանու գերեզմանը (Ալեգորիա Շուշիկի «Կույսի գերեզման»-ին)» բանաստեղծություն-

ներով: Այս վերջինիս վերնագիրն արդեն հուշում է, որ Շուշանիկն իրոք բանաստեղծություններ է գրել, և նրանցից մեկի՝ «Կույսի գերեզմանը»-ի նկատմամբ Իսահակյանն իր ալեգորիկ անդրադարձն է տալիս: Ինչպես երևում է, Շուշանիկը և Ավետիքը իրենց գրվածքները միմյանց ցույց են տվել: Եվ պարզապես չենք կարող չվկայակոչել «Նվեր սիրելի քույր - Շուշիկին...» երկը. այստեղ տողեր կան, որ յուրովի բացատրություն են տալիս, թե ինչ է նշանակել Շուշանիկի սերը երիտասարդ պոետի համար, և ինչու նա չի կարողացել աղջկանից բաժանվել...

Քո սուրբ սերն էր, որպես երկնի
Սփոփարար հրեշտակ,
Ցաված սրտումս վառում էլի
Դեռ ապրելու ջերմ փափագ:

Վերոհիշյալ տետրերից հետո գրված բանաստեղծությունները տողերիս հեղինակը համախմբել է «1890-ական թվականների բանաստեղծություններ» բաժնի մեջ: Այստեղ նկատելի է երկու միտում. նախ՝ Իսահակյանի գրելիքը դառնում է ավելի սեղմ և հակիրճ, ինչը շուտով կդառնա Իսահակյանի պոեզիայի բնորոշ առանձնահատկություններից մեկը: Եվ հենց ասելիքի խտացվածությամբ, ձևերի հակիրճությամբ աչքի կընկնի Իսահակյանի բանաստեղծությունը: Ինչքան տարիները առաջ են գնում, նրա տողը կարծես դառնում է ավելի սեղմ ու լակոնիկ: Խոսքն ասվում է հակիրճ, չկա ավելորդաբանություն, երկարաբանություն: Արդեն 1890-ական թթ. Իսահակյանն սկսում է գրել քառյակներ: Նրա բանաստեղծությունների չափն է՛լ ավելի է սեղմվում, և հակիրճ տողերը մշտապես հագեցած են մաքսիմալ իմաստով:

Եվ երկրորդ միտումը. հետզհետե ժողովրդական պոեզիայի տարրը ավելի ու ավելի է մուտք գործում Իսահակյանի պոետական կառույց, որն «էն գլխից» համեմված էր բանահյուսական գանձարանի տարրերով: Էջմիածնի ճեմարանից անդին՝ հայրենի Շիրակում, պատանի Իսահակյանն ավելի է շփվում ժողովրդի առօրյային, ավանդույթներին ու բանահյուսական երգերին, բնականաբար նրա պոետական ներկապնակն է՛լ ավելի է հարստանում ժողովրդական արվեստի ոճով, լեզվական առանձնահատկություններով: Այս բնույթի գործերից հարկ է նշել «Ես ուզեցա

լալեն քաղեմ...», «Ինչ սիրուն ես, գարնան վարդ ես...», «Սև վշտերս մշուշի պես...», «Հեզ ու տխուր, սև աչերից...», «Տղայի տաղը», «Քու տնակդ բաղի միջին...», «Դուման սարից ջուր կուգա...», «Քար գցեցիր, ծառիս դիպավ...»: Վերջին բանաստեղծությունը զտարյուն ժողովրդական երգ է.

...Սարի սիրուն, նազիկ բլբուլն,
Ա՜խ, բախտ, իմս էր, ո՞ւր կորավ.
Բաղի թառվան, անուշ բլբուլն,
Է՜յ, բախտ, իմս էր, ո՞ւր թռավ:

Կամ թե «Քու տնակդ բաղի միջին...»-ը, որն ասես ժողովրդական զվարթ սիրո մի պատում է: Ցավոք, մեզ հասած ձեռագիրն ավարտված չէ, այլ երկի սոսկ սկզբնական հատվածն է: Բայց և էլի հիացմունք է պատճառում ժողովրդական խոսքի հյութեղությամբ, անբռնազբոսիկ ու պոետական պարզ պատկերներով: Բերենք միայն մեկ հատված.

Ու սուս ու փուս եկա քովդ,
Քնած էիր մշշալեն.
Ցոլք կուտային ալ-թշերդ,
Վարդեր քաղի թշերեդ:

Աչքդ բացիր առավոտուն,
Տեսար մատնիք քու մատին,
Շո՜ւտ հասկացար բանը, խանում,
Հերսդ իջավ էս հեղին:

Եվ ինչքա՜ն բնական է ժողովրդականի ու գրականի ներթափանցումը, դյուրին և սահուն, ասես կարդացածդ իրոք բանահյուսական գործ է, և ոչ հեղինակային երկ: Այս ներդաշնակությունը հատկանշական կլինի և ուշ շրջանի իսահակյանական շատ և շատ երկերի համար:

Ներկա հատորում ներառված են նաև անտիպներ՝ գրված Գերմանիայում, լայպցիգյան համալսարանի ուսման շրջանում՝ 1893-1895 թթ.:

Ընթերցողներին մինչ այժմ, բնականաբար, հայտնի են լայպցիգյան տարիների բանաստեղծություններ, որոնք Իսահակյանը զետեղել էր իր ժողովածուներում:

Եվրոպայում՝ Վիեննայում, Պրագայում և մանավանդ Լայպցիգում, 1893-1895 թթ. գրած բանաստեղծությունները թվով 14-ն են: Այս շրջանում կարծես կրկին գերիշխող են դառնում Շուշանիկի սիրո վերհուշ բանաստեղծությունները, հեռավորությունը կարծես ավելի է սաստկացրել երբեմնի ամենակուլ զգացմունքը:

Եվրոպայում ուսանելու տարիներին են գրված Շուշանիկին ուղղված սիրային խոստովանությունները՝ «Նվեր տիկին Շ.-ին», «Շուշան ծաղիկ, քու բողբոջում...», «Սիրտս լիճ էր - ջինջ ու լռիկ...», «Ես ձեզ ատում եմ, ամենքիդ ատում...»: Այս շարքում կա մի գործ՝ «Բախտի ուրուրը ետևես է ընկել...», որն իր անկեղծությամբ ու անմիջականությամբ բացահայտում է լայպցիգյան համալսարանի ուսանողի հոգեկան վիճակը.

...Գլխիս են թափվում տերևներն աշնան,
Իմ քնքուշ քույրիկ,
Ջոր տերևները քայլերս են ծածկում,
Ճամփեքս հեռու:
Իմ հոգում մարան վառ երազներիս
Աստղերը բոլոր:
Ա՜խ, շուշան ձեռքդ ինձ հետ չի կանչում
Ճամփեքից մոլոր,
Ո՞ւր տանեմ սիրտս խոցված քո սիրով,
Քո ծով կարոտով...

Մի այլ բանաստեղծության մեջ՝ «Նամակ ընկերիս» ՝ գրված կրկին Լայպցիգում, Իսահակյանը զգում է իրեն «Այդ անապատում արմավենու պես / Մենակ ու տխուր»:

Մեկ այլ բանաստեղծության մեջ՝ «Լեզվակն անուշ երգ կհնչե...», Նիցշեի 18-ամյա հետևորդը՝ վստահ իր առաքելությանը, ազդարարում է.

Լավ ուշք դրեք, Լուսի՛ն, աստղի՛կ -
Ծովե՛ր, լռե՛ք - երգ կասեմ,
Շուրջս եկեք, ոգի, մարդիկ -
Ես մեծ - ոգի Լեզուն եմ:

Այս բանաստեղծությանն անմիջականորեն ձայնակցում է 1899 թ. գրված «Հին գրվածքներից» («Գլուխըդ՝ վեր, ճակատըդ՝ բաց...») կրկին նիցշեական ոգով ստեղծված երգը.

Շա՛տ ամոթ է, չէ՞ որ մարդ ես,
Որ հարուստի ոտքի ներքև
Սողաս, դողաս սողունի պես,
Միշտ վեհ նայիր, միշտ վերև:

Չէ՞ որ ամեն բանից առաջ
Դու քո գլխիդ իշխանն ես,
Իշխան էլ կա՛ց, մարդկանց առաջ
Գլուխդ իսկի չըծռես:

Պատահական չէ, որ Իսահակյանը հատուկ իր Ոգուն ուղղված բանաստեղծություն է գրում (1899)՝ «Իմ վեհությունը» վերնագրով: Մարդկային ոգին համարելով իր վեհությունը՝ նա բանաձևում է.

Դու մի տաճար ես լուռ ու ամայի.
Այնտեղ կառուցի ես մի սուրբ սեղան,
Գահ կատարյալի, վեհ գաղափարի
Ջերմ երկրպագման:

Խոհափիլիսոփայական ոգով գրված բանաստեղծություններից թերևս լավագույնն է «Տիեզերական զանգ (Նրա ղողանջները)»: Ընթերցողներին հայտնի է նույն վերնագրով բանաստեղծություն, սակայն առանց «Նրա ղողանջները» ենթախորագրի և հետևյալ սկսվածքով.

...Եվ ես ապատում և անապատում
Լուռ թափառում եմ՝ հոգիս ծանրացած
Անլույծ խոհերով, վշտով անպատում
Եվ տենչանքներով տիեզերատարած:

Այս «Տիեզերական զանգը» գրվել է նույնպես 1899 թ.՝ մեր ներկայացրած տարբերակից երկու ամիս անց՝ սեպտեմբերին, և այն առաջին անգամ տպագրել է Արշակ Չոպանյանը իր «Անահիտ» հանդեսում (Փարիզ, 1899 թ., N 12, էջ 384): Այնուհետև տպագրվել է Իսահակյանի ժողովածուներում և վերջին անգամ՝ սույն ակադեմիականի առաջին հատորում (էջ 207):

Մինչդեռ մեր քննարկվող օրինակը գրվել է ավելի վաղ՝ 1899 թ. հուլիսի 19-ին, և բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել: Սակայն չտպագրվելու փաստը իր պատմությունն ունի. երկն ստեղծելուց հետո Իսահակյանն այն ուղարկել է «Մուրճ» հանդեսի խմբագրություն՝ Ավետիք Արասխանյանին: Վերջինս հանձնել է տպագրության, սակայն ցարական գրաքննությունը, ի թիվս մի շարք այլ նյութերի, հանել է այն համարից, որովհետև այդ ժամանակ Իսահակյանը նոր էր վերադարձել օդեսյան աքսորից: Եվ ձեռագիրն էլ հետագայում պահվել է «Մուրճի» արխիվում, որտեղից և հանձնվել է ԳԱԹ-ին: Առաջին անգամ այն տպագրվել է բանաստեղծի մահից հետո՝ «Սովետական գրականություն» ամսագրում (1958, թիվ 10, էջ 99-100, հրապարակումը՝ Արամ Ինճիկյանի), այնուհետև տպագրվել է «Հայդուկի երգեր» գրքում (Ե., 1990, էջ 154-155): Ուրեմն՝ նույն վերնագրով մեկը հայտնի է, մյուսը՝ համարյա անհայտ: Եվ անհայտ է մնացել ոչ թե հեղինակի կամքով, այլ ստեղծված իրավիճակից ելնելով: Գործը «Մուրճի» խմբագիր Ավետիք Արասխանյանին ուղարկելիս Իսահակյանն, իհարկե, չէր մտածել, որ այն կարող է բռնագրավվել, և լավ է, որ ձեռագիրը չի ոչնչացվել: Այնպես որ Իսահակյանի ձեռագրերի աշխարհում քիչ չեն գանձերը, որոնց անտիպ մնալն ունի իր օբյեկտիվ պատճառները:

Երբ համեմատում ենք երկու նույնանուն երկերը, գալիս ենք այն եզրակացության, որ դրանք փաստորեն տարբեր բանաստեղծություններ են: Եվ թեև «Տիեզերական զանգ»-ն ավելի հայտնի է և բազմիցս տպագրված Իսահակյանի ժողովածուներում, «Տիեզերական զանգ (Նրա

ղողանջները)» բանաստեղծությունը թե՛ որպես պոետական կառույց, թե՛ որպես խոհական մտորում ավելի կատարյալ երկ է: Այստեղ բարդ փիլիսոփայական ասելիքը բարձր ներդաշնակության մեջ է պոետական արվեստի հետ: Այն նաև անթաքույց կերպով բնորոշում է նաև Իսահակյանին.

...Իմ էության մեջ երգեր են վառվում,
Երգեր թևավոր, վեհ, վսեմական.
Եվ ես ճախրում եմ, ես ծավալվում եմ,
Տեսնում եմ ահա խորախոր գաղտնիք,
Խոկման անդունդներ, ուժ գերահրաշ.
Որով զգում եմ և ըմբռնում եմ,
Թե տիեզերքն է մի անվերջ երազ...
Եվ ես բովանդակ ոգված ու շնչված
Տիեզերական անճառ ցնորքով.
Եվ որն իմ հոգում դարձած հրեղեն
Մի վսեմ ցնորք մարգարեական
Ուզում եմ երգել, ուզում եմ սիրել,
Ընդգրկել հոգումս աշխարհ և մարդիկ
Եվ ոգի դարձած հեռուներ թռնել
Եվ հավերժ խորհել, և հավերժ ապրել...

Երկու ամիս անց նույն վերնագրով և մոտավորապես նույն թեմայով գրված բանաստեղծության մեջ դարձյալ անհատի և տիեզերքի փոխհարաբերության հարցն է, և այստեղ ևս իրեն հատուկ ներքին համոզումով Իսահակյանը հռչակում է.

...Եվ ղողանջում է տիեզերքն ամեն -
Եվ իմ հոգումն է, իմ ոգին է այն,
Որ ղողանջում է - ես մարգարե եմ...
...Եվ դեպի ամբոխն իջնում եմ ահա
Նո՛ր կտակներով, նո՛ր պատգամներով,
Դեպ նրա հոգին գահավիժում եմ

Նրան խայթելու, և քարոզելու,
Ե՛վ արտասվելու, և՛ այրվելու...

Տիեզերք և բանաստեղծ Իսահակյան փոխհարաբերության, առնչության, ներգործության հարցը կդառնա Իսահակյանի քնարերգության հիմնական մոտիվներից մեկը: Եվ հրապարակվող անտիպ տարբերակը, հավատացած ենք, կգրավի այն տեղը, ինչն իրեն վիճակված է...

1890-ական թվականներին գրված բանաստեղծությունների շարքը եզրափակում է «Լայնալիք ծովում - հզոր, ծլփծլփուն...» բանաստեղծությունը: Այլաբանական բնույթի համարձակ մարտահրավեր է, առաջին երկերից մեկը, որ կոչ է անում պայքարի հանուն ազատության, մի թեմա, որ արդեն հետագա շրջանի շատ բանաստեղծություններում, ինչպես և «Մասրսա Մանուկը» պոեմում, դարձավ հեղինակի ամենաառաջնային մոտիվներից մեկը: Ալեգորիկ պատկերում «ալիքն ալիքին ասաց մի անգամ».

Վառ արշալույսին լազուր մշուշում
Դեպի վարդ-ամպերն վազենք միասին...
Եվ ազատության երգը հրեղեն
Խրոխտ կրծքերով երգենք, ընկեր իմ:
Եվ սեգ ժայռերը փշրենք, խորտակենք,
Երբ մեր ճախրանքին պատնեշ կլինեն.
Եվ ազատության վեհ հաղթանակով
Մայր-ափի վրա հանգչենք միասին:

Իսահակյանի անտիպների հատորը նրա չտպագրված չափածո երկերի յուրօրինակ համահավաքն է: Ինչ թեմա, մոտիվ, պրոբլեմ ասես, որ չկա այս համահավաքում, միայն թե դրանք մնացել են անտիպ: Իսկ եթե տպագրվել են, ապա միայն մի մասով, այն էլ՝ հետմահու: Եվ շատ հաճախ թվում է, թե վաղուց կարդացել ես այս կամ այն երկը, այնքան որ այն հատկանշական է Իսահակյանին:

Տպագրելով այս հատորը՝ մենք չենք կարող ասել, թե տպագրում ենք ընդհանրապես Իսահակյանի բոլոր անտիպ չափածո երկերը. նախ՝

դա հնարավոր չէ, հաշվի առնելով թե՛ Իսահակյանի թափառ կյանքը և թե՛ երկար տարիների տարագրությունը, և երկրորդ՝ մենք տպագրելիս, բնականաբար, արել ենք որոշակի ընտրություն, սևագիր, անավարտ, չմշակված ոչ մեծ թվով երկեր ակադեմիականում չեն ընդգրկվել:

Մեկ օրինաչափություն ևս, և դա բոլոր առումներով այդպես էլ պետք է լիներ, ինչքան ժամանակներն առաջ են գնում, այնքան գեղարվեստապես ավելի մշակված, հղկված են դառնում Իսահակյանի մեր կողմից հետազոտված չափածո երկերը: Ավելի է հագեցած և ասելիքը՝ ինքնատիպ, թարմ, ուրույն խոհական ուղղվածություն ունեցող:

Ինչքան ուշ շրջան, այնքան բարձր արվեստ, հագեցած մտորում:

Բ. ՆՈՐ ԴԱՐ. ՆՈՐ ԱՆՏԻՊԵՐ

Ներկա ժողովածուում առանձին բլոկ են կազմում Իսահակյանի՝ 1900-ական թվականներին գրած բանաստեղծությունները: Նախ՝ այստեղ զգացվում են երկու հուժկու մոտիվ. առաջին՝ հայ ազգային-ազատագրական պայքարի կանչերին ընդառաջ գրված «Հայդուկի երգեր»-ի գործերը, և երկրորդ՝ խոհափիլիսոփայական բանաստեղծությունները, որտեղ պետք է հնչեին մոտիվներ, որոնց արձագանքը մենք կգտնենք Իսահակյանի՝ 1909-1910 թթ. գրած «Աբու-Լալա Մահարի» պոեմում:

Նախ՝ ազատագրական թեման. Իսահակյանը «Հայ-գուսան» ստորագրությամբ 1890-ական թթ. վերջերին և 1900-ական թվականների սկզբներին տպագրեց իր «Հայդուկի երգեր» հայրենասիրական շարքի երկերը ՀՅԴ հիմնական պարբերական «Դրոշակ» ամսագրում: Եվ դրանով իսկ առաջինը հայ գրականության մեջ հնչեցրեց հայդուկային պայքարի երգերը՝ նոր մարտական թափ հաղորդելով հայ դասական պոեզիային: Իհարկե, այդ խմբի երկերի հիմնական մասը Իսահակյանն անմիջապես տպագրության էր հանձնել պայքարի հենց ամենաթեժ շրջանում, բայց արխիվում մնացածները ևս ուրույն արժեք են ներկայացնում և այդ վսեմ շարքի անբաժան մասն են կազմում:

Հայ ժողովրդի նոր զարթոնքի շեմին՝ 1990 թվին, Իսահակյանի «Հայդուկի երգեր» գիրքը տպագրելիս ես այնտեղ՝ «Դրոշակ»-ում տպագրված և «Հայ-գուսան» ստորագրված հայտնի գործերից բացի,

ներառեցի մի շարք երկեր, որոնք անտիպ էին մնացել, բայց անտարակույս վերաբերում էին նրա հայտնի շարքին: Այդ բնույթի գործերից են հետևյալները (բերում ենք հաջորդաբար ըստ գրության ժամանակի). «Ձեր շարքերի մեջ, կտրիճ ընկերներ», «Վե՛ր կաց, ժողովուրդ», «Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի...», «Սաքոյի գեղեցիկ հիշատակին», «Բաշերն ալեծուփ, բաշերն հողմակոծ...»: Հարկ է նշել, որ այս անտիպները շատ բնականորեն ներմուծվեցին շարքի մեջ: Վերը հիշատակված գործերից բացի, շարքը համալրեցինք ևս մի քանի երկով, որոնք ըստ էության նույնպես մասն են «Հայդուկի երգերի», բայց երբեք չեն տպագրվել, այդ թվում և տողերիս հեղինակի կազմած «Հայդուկի երգեր» գրքում (1990):

Դրանցից մեկը՝ «Դու պսակ կերթաս յարիդ հետ քո նոր...»-ը, Իսահակյանի սիրած խոսքով ասած՝ հայ «Հովվուհու» երգն է՝ ուղղված ֆիդահ դարձած իր յարին: Անհնար է այս տողերը կարդալ առանց կարեկցանքի դեռատի կնոջ կրած վշտի հանդեպ.

Սև ձիս կընստեմ, սև աղջամուղջին
Ասպապս կապած՝ կերթամ յարիս մոտ,
Իմ սերս հիմի դաշտերի միջին
Ինձի կսպասե՝ սիրտը ծով-կարոտ:

Էհե՛յ, փոթորանքն է իմ հարսը,
Հրեղեն գրկում մեռնելու կերթամ...

Արդյոք չե՞նք լսում մենք այստեղ «Որսկան ախպեր» ասքի դրամատիկ ղողանջները: Այս բանաստեղծությանը գալիս շաղախվում է ֆիդայական պոեզիայի մի այլ հիասքանչ գործ՝ «Գարունն եկավ կարմիր ու զառ...».

Ֆեդահ յարս ալ ձին հեծավ,
Առավ մոսինն ու գնաց,
Ընկերներով, անուշ երգով -
Արծիվս ելավ ու գնաց:

...Ախ, երազով հերիք մնամ,
Երթամ, ընկնեմ կռվի մեջ,
Երթամ, կռվեմ իմ յարի հետ,
Մեռնեմ յարիս գրկի մեջ...

Եվ թեև այս բանաստեղծությունը տպագրված չի եղել, սակայն այն երկար տարիներ բանահյուսական երգի ձևով տարածված է եղել ժողովրդի մեջ:

Մեր ներկա ժողովածուն հաստատում է նաև մի ճշմարտություն. Իսահակյանի համար միշտ չէ, որ առաջնային է եղել երկը տպագրելը, կարևորը այն ստեղծելն էր, իսկ հետո, ինչպես ժողովուրդն է ասում՝ տաշած քարը գետնին չի մնա:

«Հայդուկային» թեմատիկային առնչվող հաջորդ երկն է «Նա սուրբ է, բարձր, ամենքից վսեմ...»-ը, որտեղ թեև նշված չէ, թե ազատագրական պայքարի նահատակված հերոսներից ում նկատի ունի հեղինակը, սակայն թե՛ երկի բովանդակությունը, թե՛ գրության ժամանակը մեզ հուշում են, որ Իսահակյանի երկն ուղղված է ՀՅԴ հիմնադիր, ազգային-ազատագրական պայքարի անձնազոհ կազմակերպիչ Քրիստափոր Միքայելյանին: Միայն Քրիստի հիշատակին կարող էր Իսահակյանն ասել հետևյալ խոսքերը.

Նա սուրբ է, բարձր, ամենքից վսեմ,
Եվ ստրուկներիս փրկության համար
Ցուր հազար սրտով բռնության ընդդեմ
Կռվեց ու ընկավ ամենքիս համար:

Ինչպես հայտնի է, Քրիստը զոհվեց ինքնաստեղծ ռումբի փորձարկման ժամանակ հեռավոր Բուլղարիայի անհայտ մի վայրում՝ Վիտոշ լեռան ստորոտներում: Այստեղից և բանաստեղծության հետևյալ տողերը.

Ո՞վ գիտե, հիմա սուրբ փոշին նորա
Որտե՞ղ է հանգչում՞ որ դաշտում, սարում...

Այնպես որ, թե՛ գրության ժամանակի և թե՛ ասելիքի տեսակետից հստակ երևում է, որ երկն ուղղված է Քրիստափոր Միքայելյանին, որը, ինչպես վկայում են Իսահակյանի նամակները, եղել է ՀՅԴ ամենասիրելի և հարգելի անձը բանաստեղծի համար:

«Հայդուկի երգեր» գրքի առաջաբանում մի առանձին հատված է հատկացված այն անձնազոհ հերոսներին, որոնք իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքի ազատագրման գործին: Համարյա բոլոր ներբողները ժամանակին տպագրվել են «Դրոշակ» ամսագրում, սակայն շարքից դուրս է մնացել մի պանծալի հերոսի՝ Սևքարեցի Սաքոյի (Ծովանյան Սարգիս, 1870-1908) հիշատակին նվիրված ներբողը: Հերոսի հայրենի Սևքար գյուղում Իսահակյանը մասնակցել է Սաքոյի հիշատակին մատուցված պատարագին և հանդես է եկել «Սաքոյի գեղեցիկ հիշատակին» ներբողի ընթերցմամբ: Այն մեծ ընդունելություն է գտել հավաքված հարյուրավոր մարդկանց կողմից: Իսահակյանը գրել է նաև թղթակցություն «Հոգեհանգիստ Սև Քարում» վերնագրով (տպագրվել է՝ «Գործ», Թիֆլիս, 1908, նոյեմբերի 25): Սակայն հիշյալ բանաստեղծությունը ժամանակին չտպագրվեց ո՛չ մամուլում, ո՛չ էլ Իսահակյանի ժողովածուներում:

Շրջանառության մեջ դնելով հայրենասիրական թեմաներով գրված Իսահակյանի անտիպները մենք նախընտրեցինք դրանք հրապարակել որպես «Հայդուկի երգեր» շարքի բնական մաս: Եվ դա այդպես էլ կար: «Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի...» բանաստեղծությունը 1905 թվականին է գրված: Մեր ժողովրդի օրհասական վիճակը ներկայացնելով՝ բանաստեղծը միաժամանակ սրբազան կռվի իր խրոխտ մարտակոչն է ուղղում ժողովրդին.

Մարդկության կողմից դարերով նյութված
Էլ սահման չկա մեր համբերության,
Էլ անուն չկա մեր տառապանաց...
Մեր գերմարդկային, մեր գերբնական:

...Դուրս եկ, դո՛ւ, վագր, դո՛ւ չղթայազերծ,
Աստված ու երկինք ոտաց տակ տալով,

Խփի՛ր, հարվածի՛ր, ջախի՛ր, ջախջախի՛ր,
Զինված ռումբերով, թույնով, կայծակով:

Սա իրապես այն գործերից չէր, որ գրվեր՝ գրասեղանի դարակում մնալու համար: Սա քաղաքացիական քնարերգության վառ օրինակ է, որը պիտի թինդ հաներ ժողովրդին հեղափոխական պայքարի, կատարեր իր արդիական կոչումը: Այս երկն իր փոթորկող մարտական ոգով առանձնահատուկ տեղ ունի Իսահակյանի դարասկզբի պոեզիայի համակարգում.

Քար քարի վրա, թո՛ղ բան չըմնա,
Փշրի՛ր գանգերը, և թող չանսատակ
Լինին բոլորը, և դու նրանց հետ -
Ընկի՛ր աշխարհի փլատակների տակ...
<1905>

Ով գիտե, թե բանաստեղծի փոթորկահույզ կյանքում ինչ հանգամանքներ խանգարեցին այս երկը հրապարակ հանելուն:

Հաջորդ մարտական ոգեկոչումը՝ «Վե՛ր կաց, ժողովո՛ւրդ»: Այս երկն ասես հենց ծնված էր իր արյունոտ իրականության բավիղներում և ծնված էր մարդկանց պայքարի տանելու առաքելությամբ: Նման երկերում գեղարվեստական կատարելությունը երկրորդական նշանակություն ունի, կարևորն ասելիքն է, մարտական ոգին, որը որպես դրոշ պետք է ծածանվեր ազատագրական պայքարի ելած հայորդիների ճանապարհին:

Զմոռանանք ասել, որ մինչ հայրենասիրական, ֆիդայական շարքը գրելը Իսահակյանն ստեղծել էր «Մասրա Մանուկը» պոեմը, մի գործ, որը համաժողովրդական ապստամբության կոչ է՝ ընդդեմ օսմանյան բռնապետության:

- Վե՛ր կաց, ժողովո՛ւրդ, վե՛ր կաց միհամուռ,
Եթե սիրտ ունիս, եթե չես ստոր,
Եթե զազիր չես դահիճներիդ պես:
Վե՛հ ազատության դրոշը կարմիր

Բարձրացրու հպարտ լեռներիդ վերա
Եվ արդարադատ քո սուրը հանի՛ր,
Գրոհ տուր լպիրշ թշնամուդ վերա,
Հորիզոններից մինչև հորիզոն
Եվ փոթորկաշունչ զայրույթով, ըմբո՛ստ
Փշրի՛ր, խորտակի՛ր գահ ու գայիսոն,

Մի անգամ մեռիր, քան հազար անգամ,
Կամ եղի՛ր ազատ, հզոր ինքնիշխան,
Կամ ընկի՛ր հպարտ, ձեռքովդ ավերակ
Բռնապետության բեկորների տակ:
<1900-ական թթ. I կես>

Այս բանաստեղծությունն իր ոճով անշուշտ փոքր-ինչ տարբերվում է «Հայդուկի երգեր» շարքի այնպիսի նշանավոր գործերից, ինչպիսիք «Սալոն ձորերում, կըռվի ձորերում...», «Ինձ տեղ տվեք, Սիփան սարեր...», «Որսկան ախպե՛ր, սարեն կուգաս...»-ը և այլն: Սրանք մաքուր «լեռնային» պոեզիա են, զտարյուն ֆիդայական երգեր, որոնք իրոք հնչել են հայ հայդուկների շուրթերից... Դեռևս կենդանության օրոք երիտասարդ Իսահակյանի անունը դարձավ լեգենդ: «Հայ – գուսան»՝ այդպես էր նրան ճանաչում ժողովուրդը:

Անտիպ մնացած երկերից «դրոշակյան» շրջանի գործերին թերևս ամենից շատ է ձայնակցում «Ձեր շարքերի մեջ, կտրիճ ընկերներ...» բանաստեղծությունը: Իսահակյանի հերոսը դուրս է եկել անձնազոհ կռվի հայության ոսոխների դեմ: Եվ նա հպարտ է, որ իր ժողովրդի հետ է.

Ձեր շարքերի մեջ, կտրիճ ընկերներ,
Կանգնած եմ հոգիս հիացքով վառված,
Դեպի կռվի դաշտ ազատ, անվեհեր
Գնում եք, թռնում փոթորիկ դառած:

...Ձեր հրացանը վրեժով լցրեք,
Ջարդեք ու փշրեք նեմարդ թշնամուն,

Ու մահը ձեզնից հեռու կփախնի՝
Փախնի, կգտնի նեմարդ թշնամուն:

...Կովե՛ք քաջի պես, քաջի պես ընկեք,
Կեցցե՛ ձեր մահը, որ կյանք կըծնի:
<1900-ական թթ. I կես>

Այս երկը Իսահակյանը 1910-ական թթ. սկզբներին ծրագրել է օգտագործել «Ուստա Կարո» վեպի առաջին տարբերակում: Բանաստեղծության ինքնագրի լուսանցքում գրված է «Կայծակը» և ապա՝ «Կոչ»: Կայծակը վեպի հիմնական հերոսներից մեկն էր՝ ՀՅԴ շրջիկ պրոպագանդիստ, որի նախատիպը Իսահակյանի սիրելի ընկեր Նիկոլ Աղբալյանն էր, որի հետ, ի դեպ, 1900-ական թթ. սկզբներին Իսահակյանը հայկական հեռավոր գյուղերում տարել է պրոպագանդիստական աշխատանք: Իսկ «Կոչ» գրառումը հուշում է, որ բանաստեղծությունը Կայծակի հայրենասիրական կոչերից մեկն էր՝ ուղղված ժողովրդին: Այսինքն՝ հեղինակի մտահղացմամբ «Ձեր շարքերի մեջ, կտրիճ ընկերներ...»-ը պիտի օգտագործվեր «Ուստա Կարո» վեպում, և այդ պատճառով էլ այն առանձին չհրատարակեց:

Բանաստեղծի 1900-ական թթ. անտիպների շարքում կան երկեր, որոնք այս կամ այն չափով առնչվում են 1909-1910 թթ. գրված նրա գլուխգործոցային պոեմ «Աբու-Լալա Մահարի» պոեմին: Այդ գործերում կարելի է որսալ մոտիվներ, տրամադրություններ, շեշտեր, որոնք արձագանքում են բանաստեղծի շեղևրին: Եվ դա բնական է, քանզի Իսահակյանի ստեղծագործական աշխարհում մի ողջ տասնամյակ այս կամ այն չափով հասունանում էր այդ զորեղ պոռթկումը: Առաջինն այն գործերից, որտեղ զգացվում է ապագա պոեմի՝ «Աբու-Լալայի» մթնոլորտը, թերևս «Սև արծիվն ահա գլխիս վերայով...» բանաստեղծությունն է՝ գրված 1904 թ., ի դեպ, Մոսկվայում: Ահա մի հատված հեղինակի խոստովանանքից.

Եվ հետ մի՛ նայիր և մի՛ ափսոսիր -
Դու ի՞նչ ես թողնում գարշահոտ հովտում,-
Ամբոխը այնտեղ կուրացած կրքով

Ուրիշի շրթնից պատառն է խլում -
Ամբոխը այնտեղ վավաշ հայացքով
Կուսական շրթնում ատամն է խրում -
Կուսական շրթո՛ւնք - արժե՞ հավատալ:
Եվ կինն ի՞նչ է որ - անսիրտ, անհոգի
Դև արյունարուշտ, որ յոթն երախով
Ողջ ուղն ու ծուծը ծծում է մարդու...
Ի՞նչ կա կնոջ մեջ - ստոր կրքերի
Դիվական ճահիճ, զազրելի հաճույք,
Կա՞ արդյոք երկրում ուրիշ մի գազան
Եվ հոգեվաճառ, նյութապաշտ, դաժան,-
Քան կինը՝ չքնաղ զանգվածն այս մսի...

Բնականաբար, այս տողերը կարդալիս մեր միտքն է գալիս «Աբու-Լալա Մահարի» պոեմի երկրորդ սուրահի այն հատվածը, որն սկսվում է «Եվ կինն ի՞նչ է որ...» պարբերությամբ: Պոեմում տողեր կան, որ ասես բնական շարունակությունը լինեն մեր հետազոտած անտիպ բանաստեղծության.

Ո՛հ, կնոջ մարմի՞ն, պագչոտ, օձեղեն, դիվական անոթ ոճիրների չար,
Դո՛ւ, որ մսեղեն դառն հաճույքով արևը հոգու դարձնում ես խավար:

«Սև արծիվն ահա գլխիս վերայով...» բանաստեղծության մեջ հանդիպում ենք տողերի, որոնք յուրովի արձագանքում են «Աբու-Լալա Մահարի» պոեմի սկզբնական և ավարտական հատվածներին:

Այդ անտիպ բանաստեղծությանը յուրահատուկ տեղ պետք է հատկացնել Իսահակյանի ստեղծագործության համակարգում՝ որպես ապագա հանճարեղ պոեմի հոգեկան տրամադրության նախնական ակորդ:

Ներկայացվող անտիպներում մենք հանդիպում ենք նաև անապատի պատկերին, մի պատկեր, որ դոմինանտային (տիրապետող) նշանակություն ունի «Աբու-Լալա Մահարի» պոեմի համար: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ անապատի կերպարը (պատկերը) շատ վաղուց եղել է Իսահակյանի մտաշխարհում: Ես նկատի ունեմ Իսա-

հակյանի «Վեհ ընկերներս կռվի դաշտ թռան...» անտիպ բանաստեղծության հետևյալ հատվածը.

Փչոտ ճանապարհ, ժեռոտ ճանապարհ,
Տար ինձ անապատ, հեռո՛ւ, ամայի
Ու անապատում թո՛ղ մնամ մենակ՝
Տխուր փայլփլող, ինչպես մի կրակ:
1904

Նույն ցանկությունն է «անապատ քաշվելու», հեռու մարդկանցից, երանելի մենության մեջ...

Իսկ «Հոգիս թռչում է մոլոր ու խոլոր...» անտիպ բանաստեղծության մեջ կրկին արտահայտում է իր ռոմանտիկ հերոսի հոգեկան տենչանքը.

...Ախ անապական
Լեցուն աղբյուրի թովչանքն եմ ուզում -
Ժպիտը աստղի հեռավոր, պայծառ.
Եվ նիրհել, մեռնել երկնքի խորքում
Անմահ, բացարձակ էության համար...
1905

Եվս մի երկ, որտեղ կան պատկերներ ու տրամադրություններ, որ մենք երեք տարի անց կհանդիպենք «Աբու-Լալա Մահարի» պոեմում: Խոսքը «Ինձի համար շատունց, վաղունց...» բանաստեղծության մասին է: Ահա նրա եզրափակիչ մասը.

Քարավանը իմ օրերի
Իմ վշտերով ծանր բեռնած,
Տխուր զանգերի ղողանջով
Կերթա հոգնած
Դեպի լռիկ իջևան,
Ուր պիտի հավերժ, անլույս գիշերեմ...

Մեր համեմատականները սպասվելիք են, քանզի անկարելի է հավիտենականությանն ուղղված գլուխգործոց կերտել և պարուրված չլինել այդ երկի խոհական դաշտով, արարչական ուժով: Կարող ենք նաև ասել, որ փոքր գետեր ու վտակներ եկան թափվեցին մեծ գետի մեջ՝ ավելի զորեղ դարձնելով նրա հունը:

Մեր դիտարկած «Սև արծիվն ահա գլխիս վերայով...» բանաստեղծությունը գրված է Մոսկվայում, 1904 թ. մայիսի 16-ին, և երևում է, Իսահակյանի մուսայի համար դա շատ արգասաբեր օր է եղել: Նույն օրը նա գրել է նաև մեկ այլ, թերևս անսպասելի թեմայով, բայց շատ ինքնատիպ բանաստեղծություն-ներբող՝ «Նապոլեոնի դամբարանի առաջ»: Ինչպես հայտնի է, Ֆրանսիայի մեծ կայսրի վախճանից 19 տարի հետո՝ 1840 թվականին, Սուրբ Հելինե կղզուց (որտեղ նա թաղված էր 1821 թ.) նրա դին բարձրագույն զինվորական պատիվներով փոխադրվել է Փարիզ՝ Հաշմանդամների տան (Hotel des Invalides) հարակից տաճար (Eglise du Dome) և տեղադրվել եկեղեցու գմբեթի ներքո՝ կլոր սրահում՝ մուգ կարմիր գրանիտե սարկոֆագի (քարադամբարանի) մեջ: Եվ այդ օրից ի վեր Նապոլեոնի դամբարանը դարձել է յուրօրինակ սրբավայր, որտեղ միլիոնավոր մարդիկ են եղել՝ հարգանքի տուրք մատուցելու մեծ զորավարին: 1900 թ. օգոստոսին, երբ Իսահակյանն առաջին անգամ լինում է Փարիզում, այցելում է Նապոլեոնի դամբարան: Ըստ ամենայնի, բանաստեղծության նախնական գրառումն արվել է հենց Փարիզում՝ զորավարի դամբարանի այցելության անմիջական տպավորության տակ, իսկ հետագայում՝ ավելի ուշ, Մոսկվայում նա մշակել է ինքնագիրը, որի տակ նշված է գրության ժամանակը՝ «16 մայիս. 1904. Մոսկով»: Այն գրի է առնված Իսահակյանի բանաստեղծությունների մի անկազմ տետրում (ԳԱԹ, ԱԻՖ, 6-II): Տետրը հենց սկսվում է այդ բանաստեղծության հատվածների մշակումով, ապա գալիս են ավելի ուշ շրջանի չափածո երկեր:

Իսահակյանի ստեղծագործություններում ձոներ, հղումներ, ներբողներ՝ ուղղված օտարազգի պատմական կամ մշակութային մեծ անհատների, շատ քիչ են պատահում: Այս տեսակետից Նապոլեոն Բոնապարտը բացառություն է կազմում: Իսահակյանը պատմության մեջ զորեղ անհատների խաղացած դերին միշտ մեծ դեր է հատկացրել: Մեզ հայտնի է նրա տևական ոգևորությունը Նիցշեի փիլիսոփայությամբ,

նրա հերոսի՝ գերմարդու կերպարով: Հենց մեծ անհատները, հերոսներն են պատմության մղիչ ուժը, և հենց նրանք պետք է ղեկավարեն, իրենց ետևից տանեն ժողովրդին: Այս տեսակետը Իսահակյանի համոզմունքն է: Եվ հենց այդպիսի հերոսի է տեսնում նա հանձին Նապոլեոնի.

Մեծին Կեսարի վեհ դամբարանի
Մարմարիոն եզրին
Կանգնած եմ ահա,
Ինչպես ահավոր անդունդի ափին,
Այս ի՞նչ է սակայն - գո՞ւբ է առյուծի,
Թե՞ մի այլ աշխարհ՝ մի գերբնական -
Եվ գրանիտյա ժայռեղեն գրկում
Հանգչում է մեծը բոլոր քաջերից...

Իսահակյանը հիշում է, որ Նապոլեոնը իր զորեղ կամքի և զորավարի հանճարի շնորհիվ հպատակեցրել է իրեն և Ֆրանսիային աշխարհի բազում երկրներ.

Նորա ոտների պատվանդանի տակ
Հլու և պարտված, ընկած են ընկճված
Ազգեր, աշխարհներ.
Անապատների բազմհազարամյա
Խրոխտ բուրգերն են խոնարհվել այնտեղ.
Եվ Լիբանանի մայրիներն ազատ,
Ասպետ Սպանիան, Իտալիան շքեղ,
Դանուբ և Էլբա, ծովերից ծովեր,
Եվ Ռուսաստանը լայն, անծայրածիր...

Եվ նրա փառապանծ անցյալը վկայակոչելով, հիշելով նրա բազում հաղթանակները, երբ նա միահեծան «իմպերատորն էր ամբողջ աշխարհի», Իսահակյանը վերստեղծում է Նապոլեոնին արդեն գահընկեց արած ժամանակների Ֆրանսիայի իրական պատկերը.

Սուրբ հայրենիքդ ազգերի ջահն էր,
Առաջամարտիկ, նախակարապետ,
Այժմ պարտված, այժմ անարգված
Դաժան, բռնակալ, խոլ Տիտաններից.
Տե՛ս, աշխարհներդ կապանքների տակ
Ընչին և տմարդ թագերի ներքո.
Տե՛ս, քո ազգերը, ժողովուրդը քո
Քեզ են ձայնարկում, քեզ են աղերսում.
Զարթիր վեհ քնից, հասիր օգնության,
Ո՛վ դու գերամարդ, անմահ Նապոլեոն,
Դու աստվածային հզոր խարազան...

Աննախադեպ վերելքից հետո, երբ Նապոլեոնը բազում ճակատամարտերում հաղթանակներ էր տարել, Ֆրանսիայի անունը բարձրացրել անմատչելի բարձունքների և պատմությունը շրջել իր ուզած հունով, գալիս են անկում, հալածանք ու անարգանք: Բայց բանաստեղծին թվում է, որ մեծ զորավարի հոգում դեռ չի մարել հավատը Ֆրանսիայի նոր վերածննդի հանդեպ.

Եվ սակայն արդյոք օրը պիտի գա՞,
Երբ գալլիական աքաղաղը վեհ
Նորից թափհարե թևերը հսկա
Եվ հուժկու ձայնով քունը վրդովե
Թմրող մարդկության.
Ձայն տա աշխարհին՝
Ընդդեմ բռնության, չարին և ստին,
Եվ ստրկության, կեղեքման ընդդեմ
Սրբազան ռազմի զարթոնքը երգե.
Հոգեմաշ խավարն հալածող լույսի,
Վեհ առավոտին, նոր արշալույսի
Գալուստն հռչակե,
Եվ եղբայրության և ազատության
Մեծ օրն ավետե...

Այս եզրափակիչ տողերը մեր առջև բացահայտում են բանաստեղծության ևս մի ասպեկտ: Կարելի է Ֆրանսիայի վերածննդի, ազգային նոր զարթոնքի ոգեշունչ մարտահրավերն առանց մի տող խմբագրելու ուղղել և Իսահակյանի հայրենիքին: Այնպես որ, «Նապոլեոնի դամբարանի առաջ» բանաստեղծությունը խորը, ներքին ազդակներով կապվում է և այն իրականության հետ, որ գտնվում էր Հայաստանը ներբողը գրելու ժամանակաշրջանում: Հայաստանը դարասկզբին թերևս ավելի ծարավ էր «սրբազան ռազմի զարթոնքի»՝ ընդդեմ ստրկության և բռնության: Այսպիսով, կապ է հաստատվում պատմության և արդիականության միջև. «գալլիական վեհ աքաղաղի» զորեղ կանչին կարոտ էր և բանաստեղծի բազմաչարչար հայրենիքը, որի որդին, կանգնած «Մեծին Կեսարի վեհ դամբարանի / Մարմարիոն եզրին», լսում էր ապագա մարտերի խրոխտ ձայները:

Արդեն 1890-ական թթ. վերջերից Իսահակյանի չափածոյում որոշակիորեն հանդիպում է քառյակի կամ թե քառատողի բանաստեղծական ժանրը: Հենց Իսահակյանին, քան որևէ այլ հայ բանաստեղծի, ավելի հատուկ է պոեզիայի, բանաստեղծական խոսքի սեղմ ու հագեցած, հակիրճ ու խտացված բնույթը: Իսահակյանը լակոնիկ խոսքի վարպետ է, և պատահական չէ, որ նա թերևս միակ հայ հեղինակն է, որ դասական աֆորիզմներ է ստեղծել:

Եվ մի հանգամանք, որ շատ հետաքրքրական է: Մենք քառյակների չենք հանդիպում Իսահակյանի 1890-1892 թթ. գործերում, որոնք կազմում են սույն հատորի երկերի ճեմարանական շրջանը: Քառյակը՝ որպես առավել մշակված, առավել հակիրճ պոետական կառույց, առավել լակոնիկ մտքի արգասիք, Իսահակյանի անտիպներում հանդիպում է քիչ ավելի ուշ, ստեղծագործական ավելի կայացած շրջանում: Իսահակյանի առաջին քառյակները՝ «Եղեգների մռայլ խորքից...», «Անմահական գինի ես, յա՛ր...», «Ազիզ յար ջան, քեզի մատաղ...», կարծես ավելի շուտ հայկական ժողովրդական հայրեններ են հիշեցնում: Նրանք ավելի հուզական են, զգացական.

Անմահական գինի ես, յա՛ր,
Քովդ նստողն կըհարբի.

Ես որ մանկուց հարբած էի,
Հիմի որ... խելքս կորցրի:

Իսկ 1900-ական թվականների քառյակներում տիրողն ավելի խոհական մտորումն է՝ համահունչ Իսահակյանի ներաշխարհին.

Էյ վա՛խ, անցան օրերս, անցան,
Առանց արև օրերս անցան.-
Սրտիս խորքից ա՛խ քերելով.-
Դալար կյանքիս օրերն անցան...

Եվ ահա իրար ետևից գալիս են ավելի ու ավելի իսահակյանական թեմաներ, գործեր, որոնք կարդացողն իսկույն կարող է ասել, թե նրանց հեղինակը Իսահակյանն է, գործեր, որոնք ունեն հստակ փիլիսոփայական ուղղվածություն, գործեր, որոնք պարփակում են մի ողջ պոեմի խորհուրդ.

Այրվում եմ ես արևի պես,
Հուր ու կրակ եմ անշեջ.
Թող գրկիդ մեջ հոգիս տամ ես,
Սերըս քամեմ հոգուդ մեջ:

Բանաստեղծական այս ձևի մեջ էլ անսքող երևում է փիլիսոփա Իսահակյանը, թեև տակավին շատ երիտասարդ, սակայն նրա հայացքն ուղղված է հավերժին.

Ամեն բան պատճառ ունի,
Բայց տիեզերքը պատճառ չունի,
Ամեն բան վերջ ունի,
Բայց տիեզերքը վերջ չունի:

Անմիջապես այս երկին է առնչվում Իսահակյանի «տիեզերական» թեմայով քառյակը.

Ամեն ինչ ունայն պատրանք է սակայն,
Եվ մահն է ստույգ իրական միայն,
Եվ ամենազոր, անմահ, հավիտյան,
Տիեզերական տեր միահեծան:

Քառյակն ասես Իսահակյանի ստեղծագործության տարերքն է, պոետական խորունկ պատկեր, զգացումների աշխարհ, հույզերի տարափ, և այս ամենը հաղորդել ընդամենը չորս տողով, և որն էլ որպես օրենք պետք է եզրափակվի իմաստուն մտորումով.

Ա՜խ, ո՞ր քարի տակ, ո՞վ գիտե, որտե՞ղ,
Ննջում է հիմի նրա սիրելին.
Ծաղկունքը վայրի, անուշ ու չքեղ
Բուրում են, թոչնում անհայտ շիրիմին:

Լինելով Իսահակյանի բանաստեղծական հայտնի կառույցի յուրովի երկվորյակը՝ նրա անտիպները, իրենց հերթին, հարստացնում են այդ կառույցը նոր թեմաներով, նոր տրամադրություններով: Ասվածը վերաբերում է նաև Իսահակյանի անտիպ քառյակներին: Թեև մինչև վերջերս նրանք անհայտ են եղել ընթերցողների լայն շրջանին, սակայն թվում է, որ նրանք հին ծանոթներ են, այնքան նրանք մոտ ու հարազատ են Իսահակյանի չափածոյի աշխարհին:

Իսահակյանի պոեզիան հենց սկզբից ընկալվել է որպես խոհական երևույթ: Այսօր այդ մասին մենք գրում ենք որպես գրական փաստի, իսկ 1890-1900-ական թթ. ինչպե՞ս էր դա ընկալվում. մի բան հստակ էր, որ հանձին Իսահակյանի՝ գրականություն էր մտնում գերմարդուն բնորոշ գծերով օժտված, փիլիսոփայական ուրույն կառույց ունեցող բանաստեղծ:

Բանաստեղծական այս բարձր որակը բնորոշ է սոսկ աստվածատուր շնորհքով օժտված ստեղծագործողին: Եվ որ հատկանշական է, Իսահակյանը բոլոր հասակներում իր մտային ներուժով, հոգեկան խորությամբ և ասելիքի թարմությամբ չի դադարում զարմացնել ընթերցողին:

«Անհունության մեջ մռայլ, անսահման...», «Շրջում էի լուռ գարնան դաշտերով...», «Հավերժություն, անհունություն անսահման...» բանաստեղծությունները մեր ասածի լավագույն վկայությունն են: Եվ նրանք կարող են դիտվել Իսահակյանի խոհափիլիսոփայական լավագույն երկերի շարքում:

Զարմանալի հագեցած, գեղեցիկ ու անսպասելի պատկերների ենք մենք հանդիպում՝ «Իմ վառ սերերը աստղերի նման / Իրար ետևից շողալով անցան», «Ժպիտն երկնքի՝ ինձ համար խավար, / Հայացքը կույսի համր է ինձ համար», «Հողե այս կույտը - երկիրը թշվառ... / Որպես կույր թռչուն անդունդի վրա՝ / Ուր է թափառում, ուր է թռչում նա»: Աֆորիզմի աստիճանի հակիրճ ու տարողունակ բնորոշումներ՝ «Ինչքան սիրեցի, ինչքան լաց եղա - / Հոգուս երկինքը դատարկ է հիմա», «Բարուն ու սիրուն էլ չեմ հավատում, / Սորվեցի զզվել ու ատել մարդուն»: Եվ իմաստուն, անհուն թախիծով լի եզրահանգումներ՝ «Եվ մոռացության մամուռով դալար / Վերքերս գոցիր...», «Այս չեն աշխարքը՝ կյանքով, ցավով լիք՝ / Որպես մի երգի մեղմ ու հեզ ալիք, / Որ պիտի հալվի անհունության մեջ՝ / Որպես մի երազ, որ դեռ չծնվեց...»:

Քիչ բանաստեղծներ կան, որ կարող են այսպիսի շռայլություն թույլ տալ՝ չտպագրելով նման բանաստեղծությունները:

Արդեն լույս էր տեսել «Երգեր ու վերքեր» երկրորդ գիրքը (1908 թ.): Սակայն մի՞թե այդ գրքի «Երկինքն հիասքանչ, շքեղ, լուսալից...», «Բաղերը վայրի թռան չվարած...», «Ա՜խ, սիրտս անմեր ու սիրտս անմեր...», «Եվ հոգիս արթնած, վառված, տոգորված...», «Է՜յ կանանչ ախպեր, դու բարով եկար...», «Օրըս տրրտում, սև է անցնում...» բանաստեղծությունների կողքին չէր կարելի հրատարակել նաև 1900-ական թթ. գրված և պահպանված փիլիսոփայական բնույթի մի շարք անտիպ բանաստեղծություններ:

Նման հարցեր, բնականաբար, շատ կարող են ծագել, և ինչքան խորանանք ներկա հատորի մեջ, առաջ գնանք դեպի ավելի ուշ տարիների գրվածքները, հար և նման հարցեր ավելի կծագեն, քանզի մենք արդեն գործ ունենք ոչ թե էջմիածինյան ճեմարանականի, այլ «Երգեր ու վերքեր» երկու գրքերի, «Աբու-Լալա Մահարի» պոեմի հեղինակի գրվածքների հետ: Շարունակենք Իսահակյանի՝ օտար ափերում գրած անտիպների պրպտումը:

Գ. ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՆՏԻՊԵՐԸ

1910-ական թթ. անտիպների շարքին, ինչպես և Իսահակյանի ողջ պոեզիային հատուկ են հոռետեսական (պեսիմիստական) բնույթի երկեր: Եվ դա բնական է. բանաստեղծն ստիպված էր լքել հայրենիքը, պարտադրված էր անհայտ, անորոշ տարիների պանդխտության, և հենց 1910-ական թթ. եղավ հայ ժողովրդի մեծագույն եղեռնը, որից հետո մի տևական ժամանակ Իսահակյանը համարյա բանաստեղծություն չէր գրում: Կան մի քանի բանաստեղծություններ՝ «Կանցնի ու կերթա...», «Գիշեր է մթին...», «Մաղում է անձրև...», «Գիշերը եկավ...», «Սիրտս վիրավոր...», որոնք ունեն ծայրահեղ հոռետեսական տրամադրություն, անսքող վիշտ և իրար շատ նման են: Ահա նրանցից մեկ-երկու հատված.

Գիշեր է մթին.
Շնչում է քամին,
Տխուր սոսափում
Ծառերի գլխին:
Նա ունայնության
Շունչն է ասես՝
Անհույս ու մռայլ
Հեծում է այսպես...

Հաջորդը.

...Ա՜խ, սիրտս կարոտ
Լույսի և հույսի՝
Ես դեգերում եմ
Եվ խոր տառապում
Մարդկային անսեր
Խոլ անապատում
Անոք, անընկեր.
Արտասվել կուզեմ

Ծովերով մռայլ,
Թափառել կուզեմ
Լեռները մռայլ...

Իսահակյանի նույն այդ շրջանի տպագիր բանաստեղծությունների համահավաքում կան երկեր (հինգ կամ չորս վանկանոց), որոնք ևս հեղինակի անկումային տրամադրությունների յուրովի արտահայտությունն են. «Երեկ գարուն էր...», «Մահը», «Աշուն է, քամի...», «Լորիների տակ...», «Գիշեր է, քամի...», «Դառն ու տրտում...»: Դրանք ժամանակային առումով 1912-1917 թթ. գործեր են, որոնք բնականաբար ավելի հոռետեսական մտքեր, դառը հույզեր ու տրամադրություններ էին արտահայտում: Այս բնույթի անտիպներն ասես նրանց բնական շարունակությունը լինեն: Եվ այս տրամադրությունները, որ հատուկ էին հետ-«Աբու-Լալա Մահարի»-ական շրջանին, ավելի ծավալվում և համապարփակ բնույթ են ստանում, և Իսահակյանը կրկին դալիս բախվում է իրեն այնքան մտատանջող տիեզերքի հավիտենականության և մարդկային կյանքի անցողիկության թեմային.

Մի օր կգա, ամեն մի շունչ, մարդ-արարած կմեռնին,
Իրենց դարդերն հետներն առած հավիտյանս կհանգչին.-
Բայց աշխարհը միշտ կմնա, ո՛չ մահ ունի, ո՛չ ծնունդ,
Ո՛չ վերջ ունի և ո՛չ սկիզբ, ո՛չ ծայր ունի, ո՛չ սահման...

Նա անընդհատ համեմատում է մարդ արարածի վիճակը տիեզերական հավերժական կատեգորիաների հետ և, բնականաբար, առաջնությունը տալիս վերջիններին:

Այդ շրջանում կան բանաստեղծություններ, որոնց մեջ կրկին վերապրվում են Շուշիկի սիրո դառն զգացմունքները, չմարող վերքի կսկիծները: Նման բանաստեղծություններից են՝ «Դուռը ափ առած կրծեցե քամին...», «Երբ մանուկ էի, նստած պատի տակ...», «Ես քեզ սիրեցի աստղերի սիրով...»: Այս երկերն էլ վկայում են, որ սիրո զգացմունքը Շուշանիկի հանդեպ չէր մարել, թեև Իսահակյանը այդքան տառապանքից հետո արդեն դառը խոսքեր է ուղղում իր երբեմնի կուռքին.

Ես քեզ սիրեցի աստղերի սիրով,
Խնկեցի քո մոտ իմ այրվող հոգին,
Բայց դու մոտեցար պագչոտ խորհրդով
Իմ սուրբ շրթունքիս, դու գարշելի կին:

Այդ տասնամյակի անտիպների շարքի մեջ կա մի երկ, որն ուղղակի արձագանքն է 1915 թվականի ազգային ողբերգության.

Այս հովը մեղմիկ
Որ քնքշաբար շոյում է, գգվում
Մազերըդ հիմա,
Չէ՞ գալիս արդյոք
Մեր հայրենիքի
Արյունոտ դաշտերից...

Կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, որ Իսահակյանի ստեղծագործության տվյալ հատվածի դոմինանտ մոտիվը պեսիմիզմն է. տարագիր կյանքը, Արևմտահայաստանի բնակչության ջարդը, Հայաստանի վտանգված, քաղաքականապես քաոսային վիճակը և այս ամենի հետ կապված ծանր առօրյան հազիվ թե անվրդով ու անհոգ կյանքի պայմանների հնարավորություն տային բանաստեղծին: Միակ լուսավոր կետը փոքրիկ որդին էր (ծնված 1910 թ.), երբ բանաստեղծի համար մի իրավիճակ էր ստեղծվել, երբ թունելի վերջում սկսել էր լույսի շող երևալ.

Հրճվում է սիրտս, երբ նայում եմ քեզ,
Որ մի չքեղ հրաշքի պես ծաղկում ես
Օրեցօր, հայացքդ լցվում է իմաստով.
Եվ հոգի է առնում մարմինդ քնքուշ...

Իսահակյանի՝ 1920-ական թվականների անտիպ բանաստեղծությունները կարելի է երկու մասի բաժանել՝ մինչև 1926 թ. Ժնևում և Վենետիկում գրված երկեր և ապա՝ 1926-1930 թթ. Խորհրդային Հայաստանում գրվածներ:

Ժնևում 1920 թ. մարտի 19-ին գրված «Վահան Տերյանի անուշ հիշատակին» բանաստեղծությունը հեղինակի մենախոսությունն է սիրելի ընկերոջ կորստի առթիվ, գրված շատ անկեղծ, անմիջականորեն, ասես Իսահակյանը մտերմիկ զրույցի է բռնվել վաղուց չտեսած հարազատի հետ և պատմում է նրան իր զգացածը, իր հիացմունքը, իր վիշտը.

Ասին՝ գնացող մեկը կա Մոսկվա,
Ու քեզ մի նամակ գրել ուզեցա,
Առաջին էջը նոր էի սկսած,
Որ հյուրեր եկան, ու կիսատ մնաց...

Բայց երբ առավոտ թերթը ձեռքս առա,
Քո մահվան բոթը սոսկումով տեսա...
Կսկծից սիրտս այրվեց շանթահար,
Մի՞թե իրավ է, մի՞թե դու մեռար:

Ահա այս պատկերի վկայությունը Տերյանի մասին Իսահակյանի հուշերից. «Բայց մի օր, մարտ ամսի մի ցուրտ, միգամած առավոտ, 1920 թվին, Ժնևում կարդացի Կ. Պոլսի մի թերթի մեջ զարհուրելի բոթը... Օրենբուրգում երիտասարդ Վահան Տերյանը... Սիրտս փղձկաց, և օրերով խորին տխրության մեջ տվայտում էի ես» (V, 120): Իսահակյանը Տերյանին չէր տեսել շուրջ 10 տարի, ահա նրանց վերջին հանդիպման տեսարանը. «Հիշում եմ, երբ ճանապարհ էի դնում նրան Ախալքալաք, թռչող տրոյկայի միջից ձայնեց.- «Ավո ջան, խոստումդ կատարիր, ձմեռը Մոսկվա եկ: Սպասում ենք» (V, 119):

Եվ այժմ Ժնևում ահազնալից բոթը, և Իսահակյանը, կարծես ինքն իրեն մխիթարելով, շարունակում է զրույցը ընկերոջ հետ՝ միաժամանակ բարձր գնահատելով նրա տաղանդը.

Այդ ո՞վ հանդգնեց, հանճարդ չքեղ,
Հանգցնել ոգուդ աստղերը բյուրեղ.
Զգացումների դո՛ւ լույս - շատրվան,
Դու, ոսկե հեքիաթ, երազ դյութական,

Մի՞թե դու չկաս, մի՞թե դու մեռար,
Անմահ գեղեցկի իշխան սիրահար:
...Իմ վաղուց սիրած հոգի մտերիմ...
Ո՛չ, դու չես մեռել, քո գիրքը ահա՝
Հրաշք երգերդ՝ իմ կրծքի վրա,
Կարդում եմ անդուլ, և մարգարտաշար
Քո սուրբ տողերից լսում անդադար
Ձայնդ անուշիկ, և պատկերդ հեզ
Առջևս է կանգնում, համբուրում եմ քեզ...

Ավարտվում է բանաստեղծությունը տերյանական «Սենտիմենտալ երգ»-ի եզրափակիչ տողով. «Կյա՜նք, տխուր հովիտ՝ հավիտյան լալու...»: Իսահակյանն առաջիններից մեկն է ողջունել Տերյանի մուտքը պոեզիա, մշտապես բարձր է գնահատել նրան և՛ հուշերում, և՛ նամակներում: Քննարկվող բանաստեղծությունը, ի դեպ, հետաքրքիր ստեղծագործական պատմություն ունի: Եթե այն չի տպագրվել, Իսահակյանի մեղքով չէ: Իսահակյանը Ժնևից այն փոստով ուղարկել է իր և Տերյանի մտերիմ ընկերոջը՝ գրականագետ և պետական գործիչ Պողոս Մակինցյանին (ընդ որում՝ Տերյանի ողբերգական վախճանից հետո բանաստեղծի ողջ արխիվը նույնպես անցել էր Պողոս Մակինցյանի ձեռքը): Տարիներ շարունակ Իսահակյանի ձեռագիրը մնում է Մակինցյանի մոտ: 1937 թ. վերջինիս ձերբակալում են և ապա գնդակահարում: Այդ շրջանում Մակինցյանի արխիվը բարեբախտաբար գտնվելիս է եղել Երևանում նրա տիկնոջ՝ դերասանուհի Եվգինե Սեբարի մոտ: Եվ Մակինցյանի այրին իր մոտ պահվող ձեռագիրը հրատարակում է իր «Հարազատ անուններ» հուշերի գրքում (Երևան, 1970, էջ 53-54):

Տերյանական ներբողին որոշ չափով արձագանքում է Իսահակյանի «Բախտն ինձ անջատեց հայրենի երկրից...» բանաստեղծությունը՝ գրված իր շատ սիրելի քրոջ՝ Գինովաբե Զարիֆյանի (1862-1920) անժամանակ մահվան կապակցությամբ: Գինովաբեն, որպես աշխարհազորային, մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին, եղել է պաշտելի անձնավորություն Իսահակյանի համար: Նա պատրաստվում էր եղբոր հրավերով մեկնել Շվեյցարիա, սակայն քաղաքական իրադրության բարդացման պատճառով մնում է Հայաստանում, այնուհետև հիվանդանում և կնքում իր մահկանացուն Ալեքսանդրապոլում: Իր հերթին, Ավետիքը եղել է Գինովաբեի կուռքը. լինել եղբոր կողքին, օգտակար լինել նրան՝ ահա Գինովաբեի կյանքի նպատակը, սակայն իրականությունն ավելի դրամատիկ եղավ, և 1911-ից ի վեր, Իսահակյանի՝ Կովկասից մեկնելուց հետո նրանք չհանդիպեցին: Եվ երբ Ավետիքն առնում է քրոջ մահվան բոթը, գրում է նրա հիշատակի բանաստեղծությունը, որը տողերիս հեղինակն առաջին անգամ տպագրեց «Հայդուկի երգեր» գրքում 1990 թվականին:

...Քույր իմ, աչերդ հավերժ փակվեցին
Անհուն կարոտով իմ վերադարձի:
Երբ ամեն անգամ բախտն անագորույն
Հարվածում էր ինձ - քեզ էր հարվածում.
Ախ, քույր իմ անգին, չկաս դու հիմա,
Քո սիրտն էր մենակ ցավում իմ վերա:

1921 թ. Նոր տարին Իսահակյանը դեռևս պետք է դիմավորեր Ժնևում, որտեղ նա 1914 թվականին տեղափոխվել էր Բեռլինից: Ժնևյան տարիները (1914-1921) թերևս Իսահակյանի կյանքի ամենադրամատիկական շրջաններից մեկն էին: 1920 թ. տարեվերջի օրը՝ դեկտեմբերի 31-ին, Իսահակյանը, կարծես ի մի բերելով իր խոհերը, մտքերը, տագնապները, գրում է իր քաղաքացիական քնարերգության լավագույն երկերից մեկը՝ «Մեր թշնամին, հին բորենին...»: Այս բանաստեղծությունն Իսահակյանի ամենապեսիմիստական երկերից է: Հրաշալի հաղորդելով Իսահակյանի տրամադրությունները՝ այն նաև հագեցած վերլուծություն է այն իրավիճակի, որի մեջ հայտնվել էր հայ ժողովուրդը մանավանդ եվրոպական մի շարք պետությունների դավաճանական, շահադիտական քաղաքականության հետևանքով: Իսկ Արևելյան Հայաստանում ընդամենը օրեր առաջ, ռուսական բանակի ներխուժման պատճառով, անկում ապրեց բանաստեղծի դարերի երազը՝ Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Վիճակն իսկապես խենթացնող էր, և այդ սրտով էլ ի՞նչ Նոր տարի: Փաստորեն աքցանի մեջ էր առնված հայրենի երկիրը. մի մասում՝ ջարդ, կոտորած, ոչնչացում, ամայացում, մյուս մասում՝ նորաբաց արշալույսի մթագնում, անհայտ ու օտար քաղա-

քական վարչակարգի բռնագրավում և ազգային անկախության կորուստ ու փոշիացում: Ահա այդ իրավիճակում է, մորմոքն ու ցավը սրտում, մեծ հայրենասերը գրում.

...Հանգցնեմ բոլոր լույս ու ճրագ,
Մարեմ հույսը բոլոր-բոլոր
Սրտերի մեջ.
Եվ ամենի - կրծքին նստեմ,
Ինչպես ահեղ, խոլ մղձավանջ,
Հանգցնեմ բոլոր աստղ ու արև՝
Ու շաղախեմ իրարու հետ -
Բյուր արևներ, ծիր-կաթիններ -
Տիեզերքի ծայրերն իրար -
Խավար, խավար, խավար լինի -
Եվ թոհ ու բոհ, և թոհ ու բոհ...

Բանաստեղծական այս «աշխարհավերիչ» տողերի վերջում Իսահակյանը շարադրում է ինչպես գնդացրի կրակահերթ.

«31 դեկտեմբերի, 1920, Ժընև.
Գիշերվա ժամը 12-1, տարվա վերջին խոհեր:
Հայաստանը խորհրդային
Հայ բոլշևիկները...»:

Նույն այդ օրերին նա իր միակ խոստովանատեղ «Հիշատակարանին» է հանձնում իր տառապագին խոհերը. «Ահավոր վիճակ, դժոխային կացություն: Խաբված՝, լկված, ջարդ ու փշուր եղած, սովալլուկ, համաճարակով ոչնչացվող մի ազգ, որ Քրիստոսի խաչի սիրուն խաչվեց՝ հավատալով իր հավատակիցների խոստումներին, որոնք Հուդա եղան, և առանց խղճի խայթի, որ Հուդան ունեցավ վերջեն...» (Հ., 349):

Իսահակյանի այս բանաստեղծությանն անմիջապես ձայնակցում է անթաքույց ցասումով գրված «Ասա՛ մեզ, Եվրոպ, ո՞ւր ես շտապում...» բողոք-հարցումը եվրոպական այն մեծ պետություններին, որոնց աչքի առաջ օրը ցերեկով կործանվեց Արևմտահայաստանը.

՝ Պատահական չէ, որ Ֆրիտյոֆ Նանսենը Հայաստանի մասին իր գիրքն անվանել է «Խաբված ժողովուրդ»:

Ասա՛ մեզ, Եվրոպ, ո՞ւր ես շտապում՞
Ձեռներդ ներկած հայի արյունով.
Դու հոչոտեցիր Սուրբ Հայաստանը,
Այժմ ո՞ւր ես փախչում արնոտ ձեռներով:

Քո խիղճը երբեք չխայթեց, Եվրոպ,
Փշրելով գանգեր բյուրավոր հայի.
Անառակ Եվրոպ, բարբարոս Եվրոպ,
Անեծք սերնդիդ՝ անեծք դարերի...

Նույն այդ օրերին՝ 1921 թ. հոկտեմբերի 22-ին Ազոլոյում, ահա ինչ է գրում «Հիշատակարանում» Իսահակյանը. «Մենք ճգտում էինք ազատության՝ կռվելով, զոհվելով հույսերս դրած քրիստոնյա, լուսավոր, քաղաքակրթված Եվրոպայի վրա. երեխայի պես հավատալով, թե Եվրոպան Հայաստանը կազատե, Թուրքին կպատժե, բայց մենք եվրոպացուն չէինք ճանաչում. Թուրքը հրաշալի է ճանաչում նրան. հայությունը ջնջեց, վստահ լինելով, թե հաշիվ ուզող չկա իրենից, վստահ լինելով եվրոպացու քարասրտության, շահամոլության, կաշառակերության վրա... Եվ չխաբվեցավ Թուրքը... Նա հայությունը կոտորեց, կողոպտեց և այդ կողոպուտով կաշառեց եվրոպացուն՝ թերթ, մամուլ, սենատորներ, նախարարներ, միսիոներներ: Ինքը սրիկա է և հույսը սրիկաների վրա է, որով լցված է Եվրոպան: ...Այսպես: Լուծեցին հայոց հարցը. իրենց երեսից միլիոն հայ մորթվեց ու կողոպտվեց՝ ողջ ազգը. իրենց դրոշակը սրբագործեցին մեր մարտիրոս ժողովրդի անունով» (Հ., 349, 352):

«Ասա՛ մեզ, Եվրոպ, ո՞ւր ես շտապում...» բանաստեղծությանն անմիջականորեն ձայնակցում է «Հրեշ բռնակալ թաթերդ զա-զի՛ր...»-ը՝ գրված Թուրք-եվրոպական-բոլշևիկյան Ռուսիա ալյանսի դեմ, մի եռյակ, որը, ինչպես ասվում է բանաստեղծության մեջ,

...Եվ քեզ հավասար, քեզ նման ստոր,
Լկտի, գարշելի թաթարը դաժան

Նորից ներկեցիք արյունով մեր սուրբ
Մեր նվիրական, խաչված Հայաստան...

...Հավիտյան անեծք, հավիտյան նզովք,
Թուք ու նախատինք ձեր լիրբ ճակատին,
Գայլերի ոհմակ, իժերի ծնունդ,
Դարերի թուքը՝ ձեր հիշատակին...

Եվ էլի նույն շրջանում գրված, ոչ այնքան քաղաքականացված, այլ իրականությունն արտացոլող խոհափիլիսոփայական բնույթի երկեր, ինչպիսիք են «Տխրություն» քառյակը կամ «Ես լուռ գիշերին անհույս լացեցի...»-ն: Այնուամենայնիվ, որքան էլ Իսահակյանը հուսահատության եզրին գտնվի, միևնույն է, չի ունենում պարտվողական տրամադրություններ:

Անե՛ծք բնության, նրա գոյության,
Որ իրեն անհուն անմտության մեջ
Վերքն է տվել մեզ բանականության,
Հոգի է դրել հյուլեներիս մեջ...
Անեզր ու անծիր տարածության մեջ
Փոշի եմ չնչին և մահվան գերի,
Բայց հոգիս վեհ է, տարածությունից մեծ,
Միակ կշեռքն է տիեզերքի,
Նրա արժեքի, նրա էության
Եվ օրենքների, և նպատակի...

Ամենադժվար պահերին էլ Իսահակյանը հավատը չի կորցնում իր «ես»-ի, իր հոգևոր ուժերի, իր կամքի հանդեպ: Եվ դա նրա թե՛ գոյատևման, թե՛ մաքառման միակ զենքն է:

Իսահակյանի չափածո երկերում իր կյանքի ստույգ շարժառիթների, իրադարձությունների հետ կապված երկեր ընթերցողը շատ չի գտնի: Բացառություններից է իր իսկ ծննդյան օրվա առթիվ գրված «46 տարելիցիս» բանաստեղծությունը, որտեղ հեղինակն ասես ուզում է որսալ ու ըմբռնել այն կախարդական կապը, որ կա «անհուն, անբավելի»

տիեզերքի և մարդ արարածի միջև: Այս հարցը մշտապես է հետաքրքրել բանաստեղծին: Իսահակյանի շատ երկեր յուրահատուկ խոհական պատասխանն են այդ հավերժական հարցի: Այս երկում «Հյուսիսային արև» հասկացության տակ Իսահակյանը նկատի ունի Հյուսիսային բևեռին ամենամոտ գտնվող հսկայական աստղը՝ Բևեռային աստղը (Polaris, ռուսերեն՝ կՏս'ՐվՈ' ջԶպջՊՈ), իր հսկայական ծավալի համար այն հաճախ անվանում են «Հյուսիսային արև», և հենց այդ անվանումն է օգտագործում Իսահակյանն իր երկում: Այդ աստղը գտնվում է Երկրից 472 լուսային տարի հեռավորության վրա, և Իսահակյանը հենց այդ հանգամանքը նկատի ունի. բանաստեղծի ծնված վայրկյանից 46 տարի պիտի անցներ, որ Բևեռային աստղի շողը գար-հասներ Երկիր մոլորակին.

Այն վայրկյանին, երբ ծնվեցի, շողդ ծորեց անդունդի մեջ,
Եվ հասավ ինձ, երբ բոլորեց տարիս քառասունը վեց...

Կրկին նա ուժ է վերցնում տիեզերքի հավերժականությունից և կրկին ամենադժվարին պահերին իր հայացքն ուղղում է դեպի հայրենի եզերք: Եվ ո՜ր հազարերորդ անգամ օտար ափերից նա դիմում է հայրենիքին («Նստել եմ մենակ ծովի բերանը...», «Իմ հազար սիրած հայրենի դաշտում...»): Վերջին բանաստեղծության մեջ այսպիսի տողեր կան.

...Վաղը նա պիտի իր հավերժական
Երգը հնչեցնե նոր ազգերի համար,
Որոնք արծաթաշող Մասիսի ոտների ներքո
Պիտի լսեն այս երգը -
Իրենց հազար սիրած հայրենիքում...

Այն վիճակը, որի մեջ հայտնվել էր Իսահակյանը, թերևս կարող էր շտկվել միայն հայրենիք գնալով, հոգեկան հավասարակշռությունը վերստին գտնելու համար նա պիտի անձամբ գար Հայաստան, տեսներ, որ, ի հեճուկս բոլոր պատերազմների և աղետների, բոլոր հեղափոխությունների և զրկանքների, հայրենիքը կա, ժողովուրդը կա...

Եվ 1926 թվականի աշնանը Իսահակյանը 15 տարվա բացա-

կայությունից հետո գալիս է հայրենիք: Եվ արդեն հայրենի հողի վրա գրում է «Տարիներ հետո դարձա հայրենիք...» անտիպ բանաստեղծությունը՝ մի հուզիչ վերհուշ ղազարապատյան հայրենի տան, պապենական ջրաղացի, հոր և մոր պաշտելի կերպարների մասին, այն պատկերների, որ օտարության մեջ հազար անգամ գծագրվել են նրա երևակայության մեջ.

...Նստում եմ տխուր մեր ավեր դռան
Այն սալաքարին, ուր նստում էին
Հայրը ու մայրը մեղմ երեկոյին:
Նստել եմ մենակ, ես հիմա արդեն
Մենակ եմ,- չկան սիրելիներս,
Եղբայրներ, քույրեր - բոլորը չկան:
Նայում եմ մեր տան լուռ բեկորներին.
Անցել է անդարձ, ամեն ինչ անցել...

Գյումրիում նա այցի է գնում աշխարհում իր համար թերևս ամենանվիրական վայրը, իր պաշտելի մոր՝ Ապլայի գերեզմանին և այդ այցի տպավորության տակ ստեղծում իր ամենատխուր ու հուզիչ բանաստեղծություններից մեկը՝ «Մորս գերեզմանը աշնանը»:

Վերադարձը հայրենիք մոգական ազդեցություն է թողնում բանաստեղծի վրա, համեմատաբար կարճ ժամանակահատվածում նա թվով երեսուն բանաստեղծություն է կերտում, որոնց մեջ՝ այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են «Հայրենի ծուխը», «Վերջին հորձանք իմ ցնորքի...», «Հեռու անտառում ծաղկում է հպարտ...», «Հայրենիքիս» («Ցորենի ծրփուն արտերի եզրին...»): Հայաստանում գրված բանաստեղծությունների մոտավորապես կեսը մնում է անտիպ: Հարկ է նկատել, որ ավելի լավատեսական ոգով գրված բանաստեղծություններն Իսահակյանը հանձնել է տպագրության: Իսկ ահա տխուր, մի տեսակ անելանելի-պեսիմիստական տրամադրությամբ գրվածները՝ «Պայքար, մաքառում՝ դաժան, անհաշտ...», «Դուրսը գիշեր...», «Այս կյանքը անցավ...», «Մահս մոտ է, մոտիկ է այնքան...», «Մահս առաջս է կանգնած...», գործեր, որոնք Իսահակյանն իր արխիվից դուրս չի հանել, ասես

դրանք գրված են եղել ի սկզբանե իր համար, և միտք չի ունեցել հրապարակել դրանք սոցիալիստական կառուցումի եռուզեռով բռնկված երկրում: Սակայն դրանք գրվել են, թեկուզ իր համար, իսկ այսօր նշանակում է բոլորիս համար:

Այդ գործերն իրենց գեղարվեստական որակով փոքր-ինչ զիջում են նույն շրջանում հրապարակվածներին: Ով ով, իսկ Իսահակյանը դա լավ էր ըմբռնում: Եվ սակայն դիտարկվող բլոկում կան գործեր, որոնք միայն մեծ պոեզիայում պիտի գտնեն իրենց տեղը՝ «Խորտակված են իմ բերկրության...», «Ա՜խ, այնպես մեղմագին, անդորրիկ...», «Մի ոսկե թռչուն անցավ երգելով...», «Իմ կյանքը լուռ անցավ...», «Դու իմ սիրուն աղավնի...»: Քիչ չեն և խոհական բնույթի քառյակները, որոնք ևս անքակտելի մասն են կազմում Իսահակյանի այդ շրջանի մտորումների: Ինչ-որ մի պահ բանաստեղծին թվում է, թե կյանքն անցավ արդեն.

Իմ կյանքը լուռ անցավ,
Լուռ անցավ ու զուր անցավ,
Հարյուր տարվա կյանքս
Մի ժամվա պես անցավ:

Եվ ավելին, նա կարծես ավելի թանձրացնում է գույները, ինքն իրեն կշտամբում.

Այս կյանքը անցավ
Սխալներով լի,
Ջարդվեց, փշրվեց,
Մոլոր ուղիներով գնաց,
Հիմարությամբ միշտ գնաց.
Կուզենայի նորից ապրել -
Որպեսզի կարողանայի
Լինել բախտավոր
Եվ իմաստուն:

Զթաքցված հակասություն կա նաև Իսահակյանի համարյա նույն շրջանում գրված «Խորտակված են իմ բերկրության...» և «Մի ոսկե

թռչուն անցավ երգելով...» բանաստեղծությունների միջև. մի դեպքում Իսահակյանն ասում է.

Խորտակված են իմ բերկրության
Սանդուխները արդեն վաղուց,
Մահն է հավերժ, կյանքը՝ վայրկյան,
Աշխարհն ամեն՝ ունայն զրույց...

Մյուս դեպքում պատկերը լրիվ հակառակն է.

Մի ոսկե թռչուն անցավ երգելով
Իմ հոգու խորքից,
Ա՜խ, ձայնը նրա այնպես հոգեթով՝
Լավ ծանոթ էր ինձ:

Ա՜խ, ձայնը նրա լազուր երազներ
Շնորհեց հոգուս...
Քեզ հազար ողջույն, իմ սուրբ, իմ նոր սեր,
Նորոգ արշալույս...

Եվ սակայն նորոգ հայրենիքի արշալույսի գաղափարը գերիշխեց նրա հոգում. ինչ էլ լիներ և ինչպես էլ լիներ, առաջնայինը այն փաստն էր, որ Արարատյան հայությունը հրաշքով փրկվել էր, կար և հերոսաբար մաքառում էր իր ճակատագրի դեմ՝ հանուն իր ազգի դարավոր երթի...

Եվ բանաստեղծը հասկացավ, որ այսուհետև իր տեղը իր ժողովրդի կողքին էր, Արարատի հայացքի ներքո:

1930-1936 թթ. Փարիզում նրա լինելը պայմանավորված էր միայն մի շարք կազմակերպչական հարցերով, հայրենիք վերջնական վերադարձի խնդրով:

Իսկ հայրենիք մշտական վերադարձի որոշումը նա ընդունել էր ոչ թե 1933-1936 թթ., այլ տակավին մեկ տասնամյակ առաջ՝ Վենետիկում, 1924-1926 թթ.: Այդ ժամանակ կայացվեց վերջնական ընտրությունը, մնացածը սոսկ ժամանակի հարց էր, ոչ թե հապաղում, այլ կամավոր ձգձգում: Դանդաղ հրաժեշտ և ոչ միայն Եվրոպային, այլև

տասնամյակներով մշակված հենց «եվրոպական» ապրելու ոճին, որը թեև հաճելի էր Իսահակյանին, սակայն երբեք իրենը չդարձավ: Նա մեկընդմիշտ ասել էր. «Պիտի փարվիմ չքնաղ լանջիդ...»:

Մինչ Խորհրդային Հայաստան վերջնական վերադարձը Իսահակյանն ընտանիքով ապրեց Փարիզում 1930-1936 թվականներին: Այդ շրջանում բանաստեղծություններ շատ չեն գրվել, տպագրվածների քանակը տասն է, անտիպներինը՝ հինգը: Եվ դրանք հայաստանյան տպավորությունների և խոհերի արձագանքներ են.

...Ա՜խ, ինչպես կուզեմ լինել հեռու
Այս մեծ քաղաքի տենդոտ ժխորից,
Շահերի, կրքերի պայքարից հեռու...
Լինեի հայրենի լեռան լանջին.
Դեզերի միջին, ժայռերի ստորոտին,
Վրանս զարկեի կարկաչուն,
Սառնորակ գետակի ափին...

Եվ օտար ափերից, արդեն վերջնականապես հոգնած, օտարությունից վերջնականապես հագեցած, նա խոստովանում է.

Թույն եմ շնչում ես ամեն օր
Օտար երկրում,
Մենակ, անոք վիշտս եմ կրում
Տարին բոլոր:

Եվ ամեն ինչ տհաճ ու խորթ
Սրտիս համար,
Ամեն ինչի հոգիս օտար
Եվ անհաղորդ:

Այս տողերը գրված են Փարիզում: Փարիզում պոետները սովորաբար ուրիշ երգեր են գրում և ուրիշ թմբուկ զարկում. մեր բանաստեղծը ոչ մի տող չի գրել Փարիզի մասին: Կոնկրետ, որպես պոետական ներշնչանք, Փարիզը նրան չի հրապուրել: Նա պարզապես այլևս չէր կարող

Հայաստանից դուրս ապրել: Եվ, բնականաբար, նրա 1940 և 1950-ական թթ. բոլոր բանաստեղծությունները գրվել են Հայրենի եզերքում: Բանաստեղծի անտիպներից վերջին երկը, որ գրել է օտար ափերում, «Զգիտեմ՝ ինչպես տարիներն անցան...» բանաստեղծությունն է, և այն հատկանշական է Իսահակյանի հոգեվիճակն ընկալելու համար, մանավանդ եզրափակիչ մասը.

...Ոսկե գավաթներ կյանքի լիությամբ,
Առանց դիպչելու շրթունքիս, անցան.
Ունայն մի գավաթ մնաց իմ կյանքին:
Հանգչում է հուրը իմ օջախիս մեջ,
Եվ մութն է իջնում դանդաղ ու տրտում,
Իմ ցուրտ սենյակում և իմ ճեք սրտում:

Դ. ՀԱՎԵՐԺԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մտատանջումները կյանքի ունայնության, հասարակության հետ անհատի մշտական գոյամարտի, ժամանակի թելադրանքի և մարդու ազատատենչ ոգու հանդեպ ի վերջո չվերացան, հօդս չցնդեցին Փարիզից Հայրենիք գալով: Ահա Իսահակյանի՝ հենց Հայրենիքում գրված առաջին բանաստեղծություններից մեկը.

Հեռանամ, փախչեմ անկյան,
Հեռանամ ինքս ինձնից -
Իմ խոհերից, հուշերից, վշտերից -
Այս երկրից, այս տեղերից հեռանամ,
Շարժումից և նյութից փախչեմ -
Ժամանակից փախչեմ, հեռանամ -
Տիեզերքից, տիեզերքից փախչեմ...

Մարդն ինքն իրենից ոչ մի տեղ չի կարող փախչել, բայց զգալ ներդաշնակությունը աշխարհի հետ, հիրավի, կարող է միայն Հայրենիքում: Ահա կանգնած իր պաշտելի Սևանի ափին՝ նա ասում է.

Լսում եմ ձեր մրմունջին,
Եվ տանում եք իմ հոգին
Դեպի անցյալն անհիշատակ,
Դեպի գալիքն դարերի:
Եվ միացնում եք, խառնում
Անհունին ու հավերժին...

Սևանն ընդհանրապես Իսահակյանի համար սրբություն էր, պաշտամունքի առարկա, Հայաստանի հավիտենականության սիմվոլ, որը մեր հայրենիքը բռնատիրած բոլշևիկյան պարագլուխները Ստալինի հրամանով ուզում էին ցամաքեցնել: Սույն գրքում երեք բանաստեղծություն կա՝ նվիրված Հայոց լեռների թագուհուն: Բայց կատարյալը պիտի համարել «Մեր սպանված դիցուհին...»՝ գրված Նոր Բայազետում, 1949 թ. հուլիսի 25-ին: Իսահակյանը Սևանի չորացման գործընթացը համարում էր Հայասպանության և Հայաստան երկրի ոչնչացման ստալինյան հանցավոր ծրագրի հիմնական օղակներից մեկը: Առաջին իսկ պահից, իսկ ծրագիրը մշակվել է 1920-ական թթ. սկզբներին, նա դրան կտրականապես դեմ է եղել և հրապարակավ հանդես է եկել: Սևանը Հայոց բնաշխարհի դարավոր գանձն ու խմելու ջրի բնական շտեմարանն է եղել, որ վիթխարի նշանակություն ունի Հայաստանի նման լեռնային, բարձրադիր ու ջրի պաշարներից համարյա զուրկ երկրի համար: Եվ իբր հայ գիտնականների կողմից մշակված Սևանի ջրերի հաշվին հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հարցը իրականում կրեմլյան դահճի կողմից լավ մշակված ծրագիր էր՝ Հայաստանում, Սևանի չորացումից հետո, ստեղծելու բնակլիմայական վիթխարի աղետ: Երկիրն առանց ջրի կվերածվեր անապատի: Այս ամենն է իր աչքի առաջ ունեցել Իսահակյանը՝ տեսնելով, թե ինչ մղձավանջի մեջ են գցել իր պաշտելի լիճը, և հոգու խոր ցավով գրում է իր երկը:

ՄԵՐ ՍՊԱՆՎԱԾ ԴԻՑՈՒՀԻՆ

Մեր հայրենի սեգ լեռների
Կանաչ գրկում անուշաբույր

Սպանեցին, հոշոտեցին
Մեր ոսկեհեր, կապուտաչյա
Գեղեցկուհուն հոգեհատոր:

Ավա՜ղ, էլ չենք տեսնելու մենք
Զքնաղ դեմքը աստղաժպիտ
Մեր նազելի գեղեցկուհու.
Ավա՜ղ, էլ չենք լսելու մենք
Զայնը քաղցր, լուսակարկաչ
Մեր սիրելի գեղեցկուհու:

Եվ երբ մի օր գնանք այցի
Գեղեցկուհուն մեր նազելի
Սեգ լեռների կանաչ գրկում,
Ուր մորթեցին, հոշոտեցին
Մեր սիրուհուն հոգեհատոր,
Պիտ կուրանան աչքերը մեր,
Երբ փոխարեն մեր դիցուհու
Կապուտաչյա, լուսակարկաչ,
Տեսնենք ժայռեր, ծերպեր մթին՝
Կարիճների, օձերի բույն
Մեր հայրենի սեգ լեռների
Հրատոչոր, մեռած գրկում:

1948 հուլիսի 25
Նոր Բայազետ

Եվ սակայն այս բանաստեղծությունը սոսկ տեսականորեն կարելի է անտիպ համարել, քանզի այն բազում և բազում անգամներ Իսահակյանն ընթերցել է Հայաստանի ղեկավարներից սկսած՝ մինչև իրեն այցի եկած երիտասարդ գրողներին: Այն տարածվել է ձեռագիր վիճակում, արտագրված օրինակներով: Բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվել է Իսահակյանի հարսի՝ Իզաբելլա Իսահակյանի հեղինակած «Սևանը Հայաստանի աչքն է...» հուշագրությունում («Վերածնված Հայաստան» ամսագիր, Ե., 1990, N 3, էջ 62): Ժողովրդի մեջ

լայն տարածում գտավ նաև Իսահակյանի թևավոր խոսքը՝ «Ապրեի՝ Անին տեսնեի, մեռնեի՝ Սևանը չորացած չտեսնեի...»:

1940-ական թվականները բանաստեղծի համար 20-րդ դարում հիրավի եղան միակ տասնամյակը, որ նա լրիվ անց է կացրել իր հայրենիքում: Տեսել է պատերազմ և զրկանքներ, բայց և համաժողովրդական սեր ու մեծարանք: Նա ընտրվել է Հայաստանի Գիտությունների նորաստեղծ ակադեմիայի հիմնադիր անդամ, Հայաստանի գրողների միության նախագահ, Գերագույն խորհրդի պատգամավոր և այլն, և այլն:

Հատուկենտ մարդիկ էին նրան դիմում անուն-ազգանունով: Նրան ժողովուրդը տվել էր իր կոչումը՝ Վարպետ, որն ամեն տիտղոսից հիրավի բարձր էր: Եվ այսօր մեզ՝ նրա պոեզիան (այդ թվում և անտիպները) ուսումնասիրողներիս համար արգասաբեր փաստ է, որ թե՛ 40-ականներին և թե՛ 50-ականներին Վարպետը շարունակել է ստեղծագործել, բանաստեղծություններ գրել: Ո՛չ զբաղվածությունը, ո՛չ տրամադրությունը, ո՛չ առաջացած տարիքը խոչընդոտ չէին կարող հանդիսանալ գրելու համար: 40-ականներին գրած իսահակյանական գլուխգործոցի կողքին՝ «Նոր տարվա առավոտյան», «Ողջույն ամենքին», «Բինգյոլ», «Ռազմակոչ», «Հայ ճարտարապետությունը», «Մեծ հաղթանակի օրը», «Իմ Նիրվանան», ստեղծվել են ոչ քիչ երկեր, որոնք մնացել են անտիպ: Մեր ներկա հատորը կծանոթացնի այդ անտիպներին և, ի թիվս դրանց, այն երկերին, որոնք գրվել են Համո Բեկ-Նազարյանի նկարահանած «Դավիթ Բեկ» կինոնկարի համար որպես երգի տեքստեր: «Գովք Հայաստանին», «Վարդավառի տոնը», «Նախերգ», «Բանաստեղծը շուկայում», «Ժողովրդի երդումը», «Ով սուրբ Վարդան Մամիկոնյան...» երկերը, որոնք բոլորը գրված են պատերազմական 1943 թվականին, աչքի են ընկնում հայրենասիրական պաթոսով, հայրենիքի ու նրա քաջ զավակների սխրանքների փառաբանմամբ.

Մեր պապերը այս սուրբ հողը դարերով
Գոռ շահերից, խանից առաջ վարել են,
Վաղն էլ խանի ջարդված գահի վրայով
Պիտի վարենք հաղթանակով հավիտյան:

Պատերազմական իրականությունը հայրենասիրության նոր,

հուժկու ալիք բարձրացրեց: Իսահակյանը Համո Բեկ-Նազարյանից առաջարկ ստացավ «Դավիթ Բեկ» կինոնկարի համար գրել մի շարք երգերի տեքստեր և սիրով գործի անցավ: Արդյունքում ստեղծվեցին մի քանի պաթետիկ հայրենասիրական երգեր, որոնք հնչեցին կինոնկարում, իսկ մի քանի տեքստեր էլ մնացին անտիպ:

Իհարկե, այս բանաստեղծությունները պետք է ընկալել հայտնի ժանրի սահմաններում, դրանք իրենց բնույթով առաջին հերթին երգի տեքստեր են և բնականաբար Իսահակյանի այլ բանաստեղծությունների հետ նույն հարթության վրա չեն կարող դիտվել:

1944 թվականին մրցույթ է հայտարարվում ստեղծելու Խորհրդային Հայաստանի օրհներգի երաժշտությունը և տեքստը: Իսահակյանը նախապես մտադրություն չի ունեցել մասնակցելու մրցույթին, սակայն որոշ ժամանակ անց, առանց որևէ խանդավառության, առավել ևս հաղթելու հույսերի, գրում է օրհներգի իր տարբերակը: Հայտնի է, որ Իսահակյանն այն բանաստեղծը չէր, որ պատվերով բանաստեղծություն գրեր: Իսկ օրհներգի համար նախատեսված պահանջներն այնքան շատ էին, որ ազատ ստեղծագործելու տեղ չէր մնում: Համենայն դեպս, մենք ունենք համայնավարական պետական օրհներգի համար (որն այդ տարիներին հիմն էր կոչվում) 1944 թվին Իսահակյանի ստեղծած բնագիրը: Ահա հիմնի կրկներգը.

Մենք լույս ենք կերտել ապառաժներից
Բռնության ծանրը շղթաների մեջ,
Պահել ենք, սակայն, մեր ազատ ոգին
Եվ ապագայի մեր հավատն անշեջ:

Արդյունքում մրցույթում հաղթող ճանաչվեց բանաստեղծ Սարմենը: Նրա տեքստը հիմք հանդիսացավ Արամ Խաչատրյանի գրած վսեմաշուք երաժշտության համար, և շուրջ 50 տարի այդ օրհներգը եղավ Խորհրդային Հայաստանի պետականության խորհրդանիշներից մեկը: Այնպես որ Իսահակյանն անարձագանք չի թողել ժամանակի հրավերները:

Պատերազմական շրջանում երկեր կան ստեղծված, որոնց մեջ սահմռկեցուցիչ իրականությանը փորձ է արվում տալ փիլիսոփայական

մեկնաբանություն. նման գործերից է «Իրերը բոլոր մեկը մյուսի դեմ...».

...Իմ սիրտ, իմ խեղճ սիրտ -
Այս ամենքը, ամենքն այս, ամենքը բոլոր -
Անցնում են քո միջով, խոցում են քեզ անբույժ,
Եվ չկա փրկություն, փրկություն բոլորին:
...Չես կարող փրկել տիեզերքը չարիքից -
Չես կարող փրկել և քեզ տանջանքից:

Ո՛չ տարիքի և ո՛չ էլ քաղաքական իրադարձությունների հետ կապված՝ Իսահակյանի բնավորությունը չի փոխվել, չի փոխվել և նրա ձեռագիրը: Նա շատ լավ գիտեր, թե ինչ են իրենից սպասում, և ինչ էր ուզում գրել, և գիտեր, թե այս երկրում ինչ կարելի է գրել, և դրա համար հիմնականում քիչ գրեց, մանավանդ պոեզիա: Համեմատելու համար ասենք, որ Իսահակյանն իր կյանքի վերջին քսանամյակում 1937-1957 թթ., գրել է 27 բանաստեղծություն, որոնք տպագրվել են, և 34 բանաստեղծություն, որոնք անտիպ են: Դա որոշ տասնամյակների համեմատ 3-4 անգամ փոքր թիվ է կազմում: Բնականաբար, կար տարիքի հանգամանքը, բայց Իսահակյանը, ժողովրդի խոսքով ասած, սիրտ չուներ գրելու: Եվ ինչ որ գրել է իր կյանքի ուշ շրջանում, դրանք էլ արդեն բարձր արվեստի ստեղծագործական պոռթկումներ էին՝ հավերժին ուղղված:

Իհարկե, մեծ հասակում թացը չորից ավելի դյուրին է տարբերել, և ուշ շրջանի նրա գրածի ընտրանին տեղ գտավ կենդանության օրոք տպագրված նրա վերջին հատորներում՝ հարստացնելով նրա պոեզիայի «ոսկե ֆոնդը»: Մնացյալները մնացին անտիպ, այդպես էր որոշել բանաստեղծը: Եվ, իհարկե, կային գործեր, որ Իսահակյանը պարզապես չհասցրեց տպագրել իր ժողովածուներում, քանզի նրա վերջին տպագիր գիրքը եղավ 1955 թ. սեպտեմբերին լույս տեսած հոբելյանական մեծադիր մեկհատորյակը: Այդպես Իսահակյանի կենդանության օրոք չտպագրվեց նրա ուշ շրջանի պոեզիայի գլուխգործոցներից մեկը՝ «Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել...» բանաստեղծությունը՝ գրված 1955 թ. դեկտեմբերի 12-ին: Իսահակյանի բանաստեղծական հանճարը կատարելապես փայլատակել էր այստեղ՝ մեկ անգամ ևս հաստատելով,

որ Իսահակյանի բնույթի ստեղծագործողի համար տարիքը նշանակություն չունի:

Սերն ու պաշտամունքը Անիի հանդեպ Իսահակյանի մեջ ձևավորվել է ամենավաղ հասակից, նրա պատանեկությունը, բառիս բուն իմաստով, անցել է Անիի պարիսպների ներքո: Անիի փառավոր անցյալին է նվիրված Իսահակյանի «Իմ կարավանը» պոեմը՝ գրված 1906 թ. Ղազարապատում:

Ավելի ուշ շրջանում էլ՝ մինչև իր տարագրությունը, տարի չի եղել, որ Իսահակյանը Անի չուղևորվեր: Բազմիցս է գրվել Հովհ. Թումանյանի հետ նրանց՝ Անի կատարած ուղևորության մասին: Իսկ առավել՝ այցելել է 1903-1906 թթ., երբ Անիում աշխատում էր հայ մեծ ճարտարապետ Թորոս Թորամանյանը: Նրան նվիրված հուշերում Իսահակյանը գրում է. «Ես հաճախ այցելում էի Անիին, համարյա ամեն տարի, երբեմն տարին մի երկու անգամ» (V, 72):

1926 թվին, երբ Իսահակյանը հայրենիք վերադարձավ, Անին արդեն սահմանային փչալարերից այն կողմ էր: Անիի բացակայությունը հայոց հանրապետության տարածքից Իսահակյանի համար անբուժելի վերք էր, ինչի հետ նա մինչև մահ չհաշտվեց: Նա Անիին նվիրված հիանալի բանաստեղծություն ունի՝ «Անի» («Այստեղ երկնել են նախնիները մեր...»): Եվ սակայն 1955-ին գրված գլուխգործոցային երկում Իսահակյանը ոչ թե Անիի ճարտարապետությունը կամ թե գեղեցկությունն է ներկայացնում, այլ հայտնում է իր՝ հին մարտիկի պատրաստակամությունը Անիի պարիսպների տակ կռվելու հայության բոլոր ոսոխների դեմ... Եվ նա փաստորեն իր հանրագումարային երկերից մեկում ոչ թե հաշտության, եղբայրության առաջարկ է անում, այլ դարեր շարունակ մեր դեմ արշաված ոսոխի դեմ զինված պայքարի բաղձանքն է հայտնում.

Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել
Զինվոր հասարակ.
Հայության բոլոր ոսոխների դեմ կռվեի անդուլ
Անիի հզոր պարիսպների տակ:
Եվ հուր վրեժով
Զարկեի դարե՛ր, զարկեի դարե՛ր,

Եվ բյուր վերքերով
Ընկնեի վսեմ պարիսպների տակ,
Սիրտս խաղաղվեր, հանգչեի հավերժ
Անիի անմահ պարիսպների տակ...

Սա կարող է դիտվել պոետական փառահեղ ավարտ: Ազգի նահապետի հայրենասիրական պատգամ՝ գալիք սերունդներին:

Հիսնական թվականների երկրորդ կեսը (1955-1957 թթ.) եղավ Իսահակյանի մոտ 70 տարվա պոետական ուղու ավարտական հատվածը: Նա իրապես հավերժի ճամփա էր ելել: «Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել...»-ից հետո գրված բոլոր բանաստեղծությունները յուրովի արձագանք են կամ պատասխան կյանքի և մահվան հավիտենական գոյամարտի...

Հատկանշական են պոետի այս շրջանի ընդհանուր տրամադրությունների համար «Շոպենի թաղման քայլերգը» բանաստեղծության եզրափակիչ տողերը.

Լացե՛ք իմ վրա,
Լացե՛ք ձեր վրա.
Ողբանք միասին
Մարդկության վրա,
Որ կա և չկա...

1956 թ. դեկտեմբերյան մի գիշեր Իսահակյանը կգրի իր ամենատխուր բանաստեղծություններից մեկը՝ կապված իր հին և սիրելի ընկերոջ՝ Դերենիկ Դեմիրճյանի հիշատակի հետ:

...Ինչ-որ մի տեղ շքեղ դահլիճում պար է ու խնդություն, իսկ ցերեկը՝ ընդամենը մի քանի ժամ առաջ, ընկերոջը հողին են հանձնել... Կյանքը շարունակվում է, շուտով Նոր տարի է գալու, «պարում են, երգում, կատակում զվարթ»... Իսկ այնտեղ՝ Թոխմախան գյուղի գերեզմանոցում...

Բայց դո՛ւ, ընկեր իմ, պառկել ես անզարդ,
Ծանր հողի տակ
Քաղաքի եզրում,

Եվ բուքն է հիմա ձյունաթաղ դաշտում
Քաղցած գայլի պես
Քո գերեզմանի վրա կաղկանձում...

Եվ ինչքան էլ ծանր է կորուստը, սակայն մի վայրկյան իսկ Իսահակյանի մտքով չի անցնում հաշտվել մահվան մտքի հետ, ճանաչել նրա զորությունը, թեև ինքն ընդունում է, որ

Մենք տիեզերքում, տիեզերքի չափ,
Հատուկ սեփական գանձ ունենք անբավ,
Սակայն բյուր ավա՜ղ, այդ գանձն անսահման
Մերը չէ բնավ, մահինն է դաժան:

Բայց ապրելու, խորհելու, երազելու, արարելու տենչը շատ ավելի զորեղ է նրա հոգում, և նա մահը չէր ընդունում, չէր ճանաչում, ընդհակառակը՝ ծառա էր լինում նրա դեմ իր ողջ ստեղծագործ էությամբ, և նրա հոգում ոչ թե հրաժեշտի, այլ հավերժության զանգեր էին ղողանջում.

Մարդու տենչանքն է հավիտյան ապրել
Եվ Աստված լինել տիեզերաշեն,
Ամենակարող, ամենահզոր
Եվ ամենատես:

Մենք ճամփորդեցինք Իսահակյանի չափածոյի մի անքակտելի մասի՝ անտիպ բանաստեղծությունների տիրույթով, տեսանք, թե ինչպես է ձևավորվում նրա բանաստեղծական հանճարը, նիցշեական գերմարդուն հատուկ ինչ կեռմաններով է անցնում և գալիս, պսակազարդվում համաշխարհային քնարական և խոհափիլիսոփայական վսեմ դափնիներով: Անտիպները հույժ կարևոր են՝ ամբողջացնելու համար հեղինակի աշխարհայացքը, և մենք վստահ ենք, որ մի ողջ պոետական կառույց, որը մինչև այսօր մեծավ մասամբ եղել է Ավետիքի հեղինակային մենաշնորհը, սույն հատորի լույսընծայմամբ կդառնա մեր ողջ ժողովրդի համար բառիս բուն իմաստով ավետիք:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԻԳԿ - Ավ. Իսահակյան, Ավետիք Իսահակյանի գիտական կենսագրություն, Երևան, 2000
Ավետիք Իսահակյան, Դո՛ւ, հավերժող իմ Հայաստան (կազմող՝ Ավ. Իսահակյան), Լոս Անջելես, 1996
Ավետիք Իսահակյան, Բանաստեղծություններ (կազմող՝ Ավ. Իսահակյան), Վենետիկ - Ս. Ղազար, 1991
ԱԽ I - Ա. Խաչատրյան, Ավ. Իսահակյանի հայրենասիրական պոեզիան, Երևան, 1990
ԱԽ II - Ա. Խաչատրյան, Ավ. Իսահակյանի պոեզիան, Երևան, 2000
ԱՄ - Ա. Մուշեղյան, Ավետիք Իսահակյան. վաղ տարիներ, 1875-1898, Երևան, 1983
Ե I - Ավետիք Իսահակյան, Երկեր չորս հատորով, հատ. 1 (կազմող և առաջաբանի հեղինակ՝ Ա. Ինճիկյան), Երևան, 1958
ԵԺ I - Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. 1 (կազմող, ծանոթագրությունների և առաջաբանների հեղինակ՝ Ա. Ինճիկյան), Երևան, 1973
ԵԼԺ I - Ավ. Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հատ. 1 (կազմող և առաջաբանի հեղինակ՝ Ավ. Իսահակյան), Երևան, 2001
Հ - Ավետիք Իսահակյան, Հիշատակարան (կազմող և ծանոթագրությունների հեղինակ՝ Ա. Ինճիկյան), Երևան, 1977
ՀԵ - Ավետիք Իսահակյան, Հայդուկի երգեր (կազմող, ծանոթագրությունների և առաջաբանի հեղինակ՝ Ավ. Իսահակյան), Երևան, 1990
ՀԴԳ - Հայ դասականներ մատենաշար, Ավետիք Իսահակյան, Երկեր (կազմող և վերջաբանի հեղինակ՝ Ավ. Իսահակյան), Երևան, 1987
ԳԱԹ, ԱԻՑ - Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ավետիք Իսահակյանի ֆոնդ
ԱԻԹ - Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի՝ Ավ. Իսահակյանի ֆոնդ
ԱԻԸԱ - Ավ. Իսահակյանի ընտանեկան արխիվ

ԳԹ - «Գրական թերթ» շաբաթաթերթ, Երևան
ԳՀ - «Գրականագիտական հանդես», Երևան
ՀԱ - «Հայոց աշխարհ» օրաթերթ, Երևան
ՀՀ - «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, Երևան
ՀՁ - «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Երևան
ՍԳ - «Սովետական գրականություն» ամսագիր, Երևան

< >-երով տրված են խմբագրական միջամտությունները:
[ ]-երով վերականգնված են հեղինակային ջնջումները:

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

«Ազիզ յար ջան, քեզի մատաղ...» 188
«Ա՛խ, այնպես մեղմագին, անդորրիկ...» 340
«Ա՛խ, դեպի քեզ վրեժ ունիմ...» 195
«Ա՛խ, ես ինչքա՜ն բախտավոր եմ...» 168
«Ա՛խ, ես չեմ խոսում մարդկանց հետ երբեք...» 279
«Ա՛խ, ընկեր իմ, ի՞նչ ես պտրում...» 110
«Ա՛խ, թե չա՜տ ապրես, չա՜տ սև պիտ տեսնես...» 258
«Ա՛խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել...» 378
«Ա՛խ, հու՛ր, փայլա՛կ, չա՜նթ իմ գլխուն...» 38
«– Ա՛խ, մարալս, ա՜խ, ու՞ր գնաց...» 156
«Ա՛խ, մեր կյանքը ունայն խաղ է ու երազ...» 330
«Ա՛խ, մինչև վախճանը համաշխարհային...» 259
«Ա՛խ, նազելի՛ս, դու չգիտես...» 52
«Ա՛խ, ոչ մի արծիվ չի մնում...» 264
«Ա՛խ, ո՞ր քարի տակ, ո՞վ գիտե, որտե՞ղ...» 275
«Ա՛խ, վաղուց է՝ իմ քնարը...» 111
(Այլբոմում) 120
«Աղոթի՛ր, հոգյա՛կ, քանի քո սրտում...» 118
Աղոթք Աստվածածնա պատկերի առջև 70
«Աղջի՛կ նազելի, աղջի՛կ գեղեցիկ...» 242
«Ամեն բան պատճառ ունի...» 271
«Ամեն ինչ ունայն պատրանք է սակայն...» 276
«Ա՛յ իմ չոր գլուխ՝ դարդոտ ու մենակ...» 391
Ա. <Մ.-ի> հիշատակին 180
«Ամպերն ընկան ծովի վրեն» 181
«Այս կյանքը անցավ...» 329
«Այս հովը մեղմիկ...» 302
«Այրվում եմ ես արևի պես...» 234
«Անգութ աղջիկ, թշնամու պես...» 254
«Անզոր հոգուս մռայլ ժամում...» 69
«Անհունության մեջ մռայլ, անսահման...» 280
«Անմահական գինի ես, յա՛ր...» 187
«Անմխիթար, անհույս սրտիս...» 107
«Անմխիթար սիրտս, ո՛վ կույս...» 133
«Անուշ-անուշ քրքջալով...» 283
«Անուշ վայրե՛ր, մնաք բարև...» 147
Անուրջ 23

«Աչունը եկավ... Մերկացավ անտառ...» 33
«Աչքերս՝ պղտոր, աչքերս՝ խավար...» 219
Առաջին վիշտը 31
Առավոտյան ստվերարկու... 61
«Առ քնարդ, մատաղ պոետ...» 71
«Ասա՛ մեզ, Եվրո՛պ, ու՞ր ես շտապում...» 317
«Ավա՛ղ, ցնդվեց, ինչպես երազանք...» 238
Արազի ծնունդը 220
«Արդյո՞ք եղել եմ ես ջահել...» 353
«Արդյոք լսե՞լ ես վաստակած հոգով...» 146
«Արտասվի՛ր, հոգյա՛կ, ես էլ կարտասվիմ...» 117
«Արևի տակ, ծովի ափին...» 178
«Արևն հանգչեց իր մոր գրկում...» 82

«Բախտի աստղը այս երեկո...» 123
«Բախտի ուրուրը ետևես է ընկել...» 170
«Բախտն ինձ անջատեց հայրենի երկրից...» 310
Բանաստեղծը շուկայում 364
«Բաշերն ալեծուփ, բաշերն հողմակոծ...» 273
«Բիրտ-բռնակալ ձմեռն անցավ...» 60
«Բյուր հույսերով ես բերեցի...» 134
«Բյուր և բյուր անգամ նրզվում եմ քեզ...» 260
«Բնությունն երբեք չի նայում ետ...» 349
«Բոցակեզ հոգիս կյանքի խավարում...» 113

Գարնանային երկու պատկեր 15
«Գարունն եկավ կարմիր ու զառ...» 263
«Գիշեր է մթին...» 291
«Գիշերը եկավ...» 295
«Գիշերն եկավ, աստղերն ելան...» 175
«Գիտեմ՝ լցված է սիրտդ արցունքով...» 290
«Գնա՛ց, գնա՛ց....» 376
«Գոնե մի թռիչք, և ահա՛ բախտի...» 124
Գովք Հայաստանին 361

«Դաշտը շքե՛ղ ու ոսկեգեղ...» 108
Դավաճանության օրերում (Χ<-ի> պատկերի դիմաց) 144
Դավաճանության օրերում (Χ-ի հասցեին) 145
«Դարդը սրտիս՝ կյանքս եմ մաշում...» 215
«Դարդի սարը սրտիս վրա...» 169

«Դարձյալ արցունք սրտիս խորքից...» 89
«Դարձյա՛լ գարուն, բայց վշտահար...» 130
«Դարձյալ «Նոր տարի»... Խորին կնճիռներ...» 121
«Դու աղբյուրի պես կարկաչում էիր...» 204
«Դու գիտե՞ս արդյո՛ք, թե հոգիս որքա՜ն...» 127
«Դու իմ սիրուն աղավնի...» 334
«Դու ինձ սիրում ես. քու մաքուր հոգին...» 240
«Դու ի՞նչ գիտես, թե իմ սրտում...» 137
Դու կարող ես... 58
«Դու հեռավոր, մեկուսի աստղ...» 296
«Դուման սարից ջո՛ւր կուգա...» 179
«Դու մի՛ հավատա, թանկագին ընկեր...» 194
«Դուն հոգիս ես, հոգիս կուգես... 186
«Դու պսակ կերթաս յարիդ հետ քո նոր...» 193
«Դուտրս ափ առած՝ կրծեծե քամին...» 282
«Դու սիրուն էիր, գեղեցիկ էիր...» 231
«Դուրսը բուք է խիստ, գիշեր, ցուրտ ձմեռ...» 380
«Դուրսը գիշեր...» 328
«Դուրսը գիշեր է աշնան...» 306
«Դուք ինձ ասում եք - «Տոկա՛լ սովորիր...» 173
«Դուք մոլար կյանք<ի> հլու ստրուկներ...» 59
«Դու քնքուշ տերև հողմերի առաջ» 391

«Եթե տեսնես մի թախծալի...» 75
«Եղեգների մռայլ խորքից...» 160
«Ես աղոթում եմ... Եվ իմ աչերից...» 86
«Ես գնում եմ... Թող արցունքով...» 85
«Ես գոհ ժպտով իմ վաղեմի...» 49
«Ես ի՞նչ երգեմ, երբ հեգ երգչիս...» 72
«Ես լալիս եմ... Թող արցունքս...» 78
«Ես լսեցի մի երգ ուրախ...» 94
«Ես լուռ գիշերին անհույս լացեցի...» 321
«Ես կերթամ, ճամփես սև է...» 206
«Ես կյանք գրկեցի...» 161
«Ես հիվանդ եմ, սիրուն մանուկ...» 98
«Ես հյուսեցի քո անունով...» 95
«Ես ձեզ ատում եմ, ամենքիդ ատում...» 166
«Ես չեմ կասկածում: Մի՞թե կրծքիդ տակ...» 139
«Ես չեմ ուզում, կու՛յս նազելի...» 129
«Ես չունիմ կամք, չունիմ հավատ...» 55

«Ես սիրեցի, սիրեցի քեզ...» 255
«Ես սիրեցի և այրվեցի...» 205
Ես ուզեցա լալեն քաղեմ 153
Ես ունեի... 57
«Ես քեզ սիրեցի աստղերի սիրով...» 285
«Եվ այնուհետև մեր կյանքի ծառից...» 344
«Եվ երբ սառը ձյունով ծածկվին...» 172
«Եվ Ման-Տաշի երանավետ...» 42
«Եվ ո՞վ կուտա ինձ արցունք գետերով...» 359
«Եվ պուրակում երեկ նստած...» 21
«Երազիս տեսա, որ մոռացության ժայռոտ ափերում...» 223
«Երբ դեռ չէի ես տեսել քեզ...» 375
«Երբեք երգչիս չեն գրավում...» 37
«Երբ ես սլացած ոսկի եթերում...» 115
«Երբ լինում եմ առանձնացած...» 54
«Երբ մանգաղը դառն օրհասի...» 84
«Երբ մանուկ էի, նստած պատի տակ...» 298
«Եթե տեսնես մի թախծալի...» 75
«Երեկոյան երկար ստվերներ...» 331
Երկու համբույր 13

«Զմրուխտեղեն թասերի մեջ...» 336
«Զվարթ գիշեր... Խորին ձորում...» 68

«– Է՛յ, աշնան տերևներ, մեռած...» 305
«Էյ վա՜խ, անցան օրերս, անցան...» 214
«Էս աշխարհում մենակ եմ...» 216
«Էս աշխարքը էրկու օր է...» 311
«Էս սարերից հիմա արտուտը կուգա...» 388
«Էս աստղոտ գիշերիս ինձ պարտեզ...» 293

«<...> ըմբռնելի...» 210
«Ընկե՛ր իմ, ընկե՛ր, մի՛ ասա այդպես...» 177
Ընկերին 101
«Ընկե՛ր, մի ասա՛ - մի՞թե կարող ես...» 140

[«Թո՛ղ անծայր ծովը եռա, փրփրի] 155
«Թո՛ղ, հավերժահարս իմ անմեկին...» 22
«Թույն եմ շնչում ես ամեն օր....» 346

Ժողովրդի երդումը 366

«Իմ արցունքների կաթիլը մաքուր...» 112
Իմ ընկեր Ե. Հիշատակին... 39
«Իմ կյանքը լուռ անցավ...» 327
«Իմ հազար սիրած հայրենի դաշտում...» 319
Իմ մանուկ ընկեր 192
«Իմ սիրուն մանկիկ, ննջում ես մուշ-մուշ...» 300
«Իմ վառ մանկության ոսկի երազներ...» 44
[Իմ վեհությունը] 183
«Իմ տխուր սրտում գիշեր ու ցերեկ...» 297
«Իմ քնքուշ դարդս խոցված սրտիս մեջ...» 286
«Ինձ մի՛ սիրիր, անմե՛ղ մանկիկ...» 103
«Ինձ սիրեիր որպես թե...» 385
«Ինձի համար չատունց, վաղունց...» 265
«Ինչ է սիրտս – մի ապառաժ...» 125
«Ինչ, - սեր մուրալու նորի՞ց թափառեմ...» 167
«Ինչ սիրուն ես, զարնան վարդ ես...» 154
«Ինչպես աղբյուրը մաքուր, կարկաչուն...» 212
«Իրերը բոլոր մեկը մյուսի դեմ...» 367

«Լայնալիք ծովում – հզոր, ծրփծրփուն...» 198
«Լեզվակն անուշ երգ կհնչե...» 162
«Լերմոնտովի արձանի առաջ...» 374
Լերմոնտովի տնակում 350
«Լի է սիրտս վսեմ, մաքուր...» 56
«Լույս հանճարի օրերը կարճ...» 351
«Լուռ գիշեր է, օդը մաքուր...» 104
«Լուռ գիշեր էր, պայծա՛ռ, խաղա՛ղ...» 74
«Լուռ, մեղմասահ և կաչկանդված...» 62
«Լռի՛ր, երգի՛չ, քո մեղեդին...» 114
«Լռիր, քնար... Քո լարերից...» 92
«Լսում եմ որոշ՝ անուշ հնչյուններ...» 236

«Խաղաղ, լուռ գիշեր է...» 288
«Խեղճ ծաղիկը ժայռի կրծքին...» 97
«Խեղճ սոխակը ամեն գիշեր...» 63
«Խոր վշտերի մեջ լեզու չունեցա...» 237
«Խորտակված են իմ բերկրության...» 339
«Խոր քնիս մեջ երազ տեսա...» 189

«Ծփա՛, սի՛րտ իմ, հուզմունքների...» 119

«Կամ տու՛ր, ընկե՛ր, սուրը փայլուն...» 102
«Կանցնի ու կերթա...» 289
«Կես գիշեր է... կարկուտի պես...» 390
Կուզեի ապրել 345
«Կուզեի հիմա լինեի հեռու...» 381
«Կուզեի լիներ կյանքը հավիտյան...» 79
«Կուզեմ ապրել, կուզեմ և կյանք...» 41
«Կուզե՞ս տեսնել ջինջ, թռչնալից...» 41

«Հազար սիրտ ունեմ, միայն մի լեզու...» 338
Հայուհվո օրորոցի երգը 9
«Հավերժություն, անհունություն անսահման...» 371
«Հեզ ու տխուր, սև աչերից...» 171
«Հեռանամ, փախչեմ անկայան...» 348
Հեռու... 51
Հիմն 368
Հին գրվածքներից 184
«Հին օրերից...» 304
Հիշողություն 67
(Հ.-յանի այբբումում). Նվեր 81
«Հոգիս գերված կամավոր...» 392
«Հոգիս թռչում է մոլոր ու խոտոր...» 239
«Հոգնած քայլերով մտել եմ անտառ...» 358
«Հոգուս լարերը էլ չեն մրմնջում...» 143
«Հողից են մարդ ու կնիկ...» 284
«Հովը փչում է լեռների լանջից...» 158
Հովվուհին 35
«Հորիզոնս ամպածածուկ...» 65
«Հորձուտ գետի դալար ափում...» 96
«Հպարտ նայում ես լուսեղեն հեռուն...» 266
«Հրամանները միշտ իջնում են վերևից...» 360
Հրավեր. (Նվեր...) 18
«Հրեշ բռնակալ, թաթերդ զգի՛ր...» 323
«Հրճվում է սիրտս, երբ նայում եմ քեզ...» 301
Հույս (Նմանողություն) 14
Հուշիկ (Նվեր...) 19

«Ձեր շարքերի մեջ, կտրիճ ընկերներ...» 262
«Ձեր օրենքները ձեր սրտերի պես...» 208

Ճգնաժամի հրաժեշտ 32
«Ճիշտ է խոսքը մեր հինավուրց բանաստեղծի...» 357
«Ճշմարտությունը մի հատ է միայն...» 217

«Մահս առաջս է կանգնած...» 333
«Մահս մոտ է...» 332
«Մաղում է անձրև...» 294
«Մայր-երկիր, կարոտ եմ քեզի...» 257
«Մանուկ օրերից բախտի ետևից...» 224
«Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի...» 244
Մարդկանց 106
«Մարդկանց ժպիտին դու մի՛ հավատա...» 225
«Մարդու տենչանքն է հավիտյան ապրել...» 384
«Մենակ ապրեցա, որքան տանջվեցի» 152
«Մենք ապրում ենք մահվան դժխեմ...» 383
«Մենք տիեզերքում, տիեզերքի չափ...» 382
«Մեռած սիրո շիրմի քարը...» 109
«Մեր սպանված դիցուհին...» 369
«Մեր Թշնամին, հին բորենին...» 313
«Մեր տանիքի մի անկյունում...» 253
«Մի թռչուն ելավ ծովից...» 337
«Մի՛ կաշառվիր, մանուկ սիրուն...» 99
«Մի՛ հավատա մարդու խոսքին...» 287
«Մի մարալ աղջի՛կ...» 221
«Մի ոսկե թռչուն անցավ երգելով...» 341
«Միտքս թեև շատ թափառեց այս աշխարհում...» 370
«Մի քիչ ժամանակ ինձ էլ լսեցեք....» 392
«Մի օր կգա, ամեն մի չունչ...» 292
«Մով երկնքից պայծառ գարնան...» 261
Մորս գերեզմանը աշնանը 325

«Նազելի ընկեր, խորագին ակոս...» 122
«Նազուկ լուանի մեղմ շիթերը ծորեցին....» 270
Նախերգ 363
Նամակ ընկերիս 159
Նապոլեոնի դամբարանի առաջ 229
«Նա սուրբ է, բարձր, ամենքից վսեմ...» 248

<Նիկոլ Աղբալյանին> 241
«Նստել եմ մենակ ծովի բերանը...» 318
Նվեր.... (Պարգևի՛ր ինձ, Հա՛յր Ապոլլոն...) 20
Նվեր՝ սիրելի քույր - Շուշիկին իր եղբայր - Ավետիքից 149
Նվեր Բաֆֆու հիշատակին 7
«Նույն դաշտերը՝ դալար, անդորր...» 249

«Շրջում էի լուռ գարնան դաշտերով...» 278
«Շանթաձիգ ամպեր, ամպեր սևաթույր...» 50
Շոպենի թաղման քայլերգը 379
«Շուշա՛ն ծաղիկ, քու բողբոջում...» 163
«Շուրջս խավար ու սառցածով...» 116

«Ողջ երկինքը սառն ու փայլուն...» 207
«Ոսկենշույլ արշալուսին...» 77
«Ոսկի անուրջք... Շիրմի վերա...» 12
«Ոսկի արևը հիասքանչ գարնան...» 132
«Ո՞վ ազատությո՛ւն, աշխարհի արև» 243
«Ո՞վ է իջնում նուրբ քողերով...» 322
«Ո՞վ կտա ինձ ուժ՝ հզոր ու ահեղ...» 202
«Ով սուրբ Վարդան Մամիկոնյան...» 365
«Որպես դժոխք աշխարհավեր...» 135
«Որպես երազ նազելաշուք...» 83

«Զգիտեմ, ինչպե՞ս տարիներն անցան...» 347
«Զէ՛, ես չեմ ժպտում, իմ ժպտից մինչդեռ...» 126
«Զէ՛, չմոռնաս, Բեատրիչե...» 138

«Պայքար, մաքառում՞ դաժան, անհաշտ...» 326
Պատանու գերեզմանը (Ալեքսորիա Շուշիկի «Կույսի գերեզմանի»-ն) 150
«Պատռեց երկրի կուրծքը առույգ...» 34
«Պիտի աղոթեմ, հավատամ անվերջ...» 131

«Ջինջ ծովակի մեջ կա մի լուռ կղզի...» 235

Սաքոյի գեղեցիկ հիշատակին 268
«Սերերս քնքուշ...» 315
«Սիրի՛ր երգչիս անբիծ սրտով...» 48
«Սիրի՛ր թշվառիս...» 148
«Սիրո հրեշտակ, քո ջերմ սրտում...» 73

«Սիրտ իմ, ինչու՞ հին դարդիդ հետ...» 267
«Սիրտս՝ դարդի ծով, սիրտս՝ վիրավոր...» 233
«Սիրտս լի՛ճ էր – ջինջ ու լռիկ...» 164
«Սիրտս վիրավոր...» 303
«Սիրտս ցողված քնքուշ թախծով...» 176
«Սիրույդ սուրը անագորույն...» 45
«Ստվերներն ընկան իրարու վրա...» 274
«Սրտերը մարդկանց ապառաժ ու քար...» 218
«Սրտես կուց-կուց արուն կուգա...» 251
«Սրտումս խորունկ վշտեր կան....» 197
«Սրտումս սիրո...» 356
Սևան... 352
«Սև արծիվն ահա գլխիս վերայով...» 227
«Սև՛ վշտերը մշուշի պես...» 165

Վահան Տերյանի անուշ հիշատակին 308
«Վաղուց էր նիրհած, հիասթափ Ոգիս...» 209
«Վառ լուսինը արծաթագույն...» 64
«Վարդավառի տոնը...» 362
«Վարդերի մեջ մատաղ գարնան...» 250
Վարդ սիրուհվո շիրմից 46
«Վեհ ընկերներս կռվի դաշտ թռան...» 232
«Վեհ, վսեմ, ազնիվ գաղափարներով...» 47
Վե՛ր կաց, ժողովու՛րդ 246
«Վերջին հայ, վերջին հայ...» 335
«Վիշտս ծանր է, սրտիս վերքը՝ անդարման...» 226
«Վիշտս փունջ է արտասվալից...» 53
«Վրդովմունքի պղտոր ծովում...» 100

«Տաղտուկ ցնորք, հեռու՛ ինձնից...» 76
«Տաղտուկ ցնորքներ, ի՞նչ եք խոնվում...» 141
«Տարիներ հետո դարձա հայրենիք...» 324
«Տարիներ հետո դարձա հայրենիք...» 272
«Տեսնում եմ մորս...» 185
Տիեզերական զանգ (Նրա ղողանջները) 320
Տխրություն 174
Տղայի տաղը ....

«Ցուրտ է ու ձմեռ...» 222
«...Ու աչերս հառած աստղին...» 196
«Ուզում եմ երգել, բայց ո՛չ վառ երկինք...» 128

«Ուրուրն ելավ մեզի միջից...» 252
«Ու քար կաղմեմ տառապած սրտիս...» 277

«Փլատակաց մեջ այն ո՞վ է նստած...» 8
Փոքրիկ Պարույրի հիշատակին 93

«Քանի կասկածը դեռ չէ վարակել...» 142
«Քար գցեցիր, ծառիս դիպավ...» 182
«Քեզ երազելով՝ ես ճամփա ընկա...» 213
«Քեզ չեմ ձոնում, քու՛յր – իմ ընկեր...» 87
«Քեզ պիտ սիրեմ, կու՛յս աննման...» 88
«Քնո աշխարհում ես երազ տեսա...» 136
«Քնքուշ սիրտս, կույս անմեկին...» 66
«Քո սիրտը այրիր, որ նրա լույսով...» 256
«Քու տնակդ բաղի միջին...» 190

«Օտար աշխարհում ստրուկ ու գերի...» 299
«Օրերս չքեղ կորան Հավիտյան...» 377
«Օրհնյա՛լ գիշեր... Փետրի նման...» 490
Օր. <խորդ>-ի տոնի առթիվ 80

46 տարելիցիս 316

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնագիր Տարբերակ Մեկնաբան.

Անտիպ և հետմահու տպագրված բանաստեղծություններ

Վաղ շրջանի բանաստեղծություններ

1888

Նվեր Ռաֆֆու հիշատակին 7, 477

1889

«Փլատակաց մեջ այն ո՞վ է նստած...» 8, 395, 477
Հայուհվո օրորոցի երգը 9, 395, 477
«Ոսկի անուրջք... Շիրմի վերա...» 12, 395, 478
Երկու համբույր 13, 395, 478

1890

Հույս (Նմանողություն) 14, 478
Գարնանային երկու պատկեր 15, 396, 479
Հրավեր. (Նվեր...) 18, 396, 479
Հուշիկ. (Նվեր...) 19, 479
Նվեր... («Պարգևի՛ր ինձ, Հա՛յր Ապոլոն...») 20, 396, 479
Նվեր... («Եվ պուրակում երեկ նստած...») 21, 479
«Թո՛ղ, հավերժահարս իմ անմեկին...» 22, 479
Անուրջ 23, 396, 480
Առաջին վիշտը 31, 480
Ճգնաժամի հրաժեշտ 32, 397, 480
«Աշունը եկավ... Մերկացավ անտառ...» 33, 480
«Պատռեց երկրի կուրծքը առույգ...» 34, 397, 480
Հովվուհին 35, 481
«Երբեք երգչիս չեն գրավում...» 37, 481
«Ա՜խ, հու՛ր, փայլա՛կ, շա՜նթ իմ գլխուն...» 38, 398, 481
Իմ ընկեր Ե. հիշատակին 39, 398, 481
Նմանողություն («Կուզե՞ս տեսնել ջինջ, թուչնալից...») 41, 398, 481

Նվեր... («Եվ Ման-Տաշի երանավետ...») 42, 399, 482
Օրագիր...(«Իմ վառ մանկության ոսկի երազներ...») 44, 399, 482

1891

Նվեր... («Սիրույդ սուրը անագորույն...») 45, 399, 482
Վարդ սիրուհվո շիրմից.....46, 482
Նվեր... («Վեհ, վսեմ, ազնիվ գաղափարներով...») 47, 400, 482
«Սիրի՛ր երգչիս անբիծ սրտով...» 48, 400, 483
«Ես գոհ ժպտով իմ վաղեմի...».....49, 400, 483
«Շանթաձիգ ամպեր, ամպեր սևաթույր...»... .....50, 483
Հեռու... .....51, 400, 483
«Ա՜խ, նազելի՛ս, դու չգիտես...» 52, 401, 483
«Վիշտս փունջ է արտասվալից...» 53, 401, 483
«Երբ լինում եմ առանձնացած...» 54, 484
«Ես չունիմ կամք, չունիմ հավատ...» 55 401, 484
Օրագիր... («Լի է սիրտս վսեմ, մաքուր...») 56, 401, 484
Ես ունեի... .....57, 402, 484
Դու կարող ես... .....58, 484
«Դուք, մոլար կյանք<ի> հլու ստրուկներ...» 59, 402, 484
Օրագիր («Բիրտ-բռնակալ ձմեռն անցավ...») 60, 402, 485
«Առավոտյան ստվերարկու...» 61, 402, 485
«Լուռ, մեղմասահ և կաչկանդված...» 62, 402, 485
«Խեղճ սոխակը ամեն գիշեր...» 63, 485
«Վառ լուսինը արծաթագույն...» 64, 402, 485
Օրագիր... («Հորիզոնս ամպածածուկ...») 65, 403, 485
Նվեր... Օրագիր.... («Քնքուշ սիրտս, կույս անմեկին...») 66, 485
Հիշողություն. Օրագիր... .....67, 403, 486
«Զվարթ գիշեր... Խորին ձորում...» 68, 404, 486
Օրագիր... («Անզոր հոգուս մռայլ ժամում...») 69, 405, 486
Աղոթք Աստվածածնա պատկերի առջև... .....70, 405, 486
«Առ քնարդ, մատաղ պոետ...» 71, 405, 486
Նվեր... Օրագիր... («Ես ի՞նչ երգեմ, երբ հեգ երգչիս...») 72, 405, 486
Օրագիր... («Սիրո հրեշտակ, քո ջերմ սրտում...») 73, 406, 487
«Լուռ գիշեր էր, պայծա՛ռ, խաղա՛ղ...» 74, 406, 487
Նմանողություն («Եթե տեսնես մի թախծալի...») 75, 406, 487
«Տաղտուկ ցնորք, հեռու՛ ինձնից...» 76, 406, 487
«Ոսկենչույլ արշալուսին...» 77, 406, 487
«Ես լալիս եմ... Թող արցունքս...» 78, 407, 488
Օրագիր («Կուզեմ ապրել, կուզեմ և կյանք...»).....79, 407, 488

[Օր<խորդ>-ի տոնի առթիվ] 80, 407, 488
(Հ-յանի ալբոմում). Նվեր....81, 408, 488
«Արևն հանգչեց իր մոր գրկում...» 82, 408, 488
Օրագիր... («Որպես երազ նազելաշուք...») 83, 408, 489
«Երբ մանգաղը դառն օրհասի...» 84, 408, 489
«Ես գնում եմ... Թող արցունքով...» 85, 409, 489
Օրագիր... («Ես աղոթում եմ... Եվ իմ աչերից...») 86, 409, 489
«Քեզ չեմ ձոնում, քու՛յր – իմ ընկեր...» 87, 489
Օրագիր... («Քեզ պիտ սիրեմ, կու՛յս աննման...») 88, 409, 489
«Դարձյալ արցունք սրտիս խորքից...» 89, 410, 490
«Օրհնյա՛լ գիշեր... Փետրի նման...» 90, 410, 490
«Լռիր, քնար... Քո լարերից...» 92, 410 490
Փոքրիկ Պարույրի հիշատակին 93, 411 490
Օրագիր... «Ես լսեցի մի երգ ուրախ...» 94, 411 490
«Ես հյուսեցի քո անունով...» 95, 412, 491
«Հորձուտ գետի դալար ափում...» 96, 412, 491
«Խեղճ ծաղիկը ժայռի կրծքին...» 97, 413, 491
(«Ես հիվանդ եմ, սիրուն մանուկ...») 98, 413, 491
«Մի՛ կաշառվիր, մանուկ սիրուն...» 99, 413, 491
«Վրդովմունքի պղտոր ծովում...» 100, 413, 491
Ընկերին 101, 414, 491
Օրագիր... («Կամ տու՛ր, ընկե՛ր, սուրը փայլուն...») 102, 415, 492
Օրագիր... («Ինձ մի՛ սիրիր, անմե՛ղ մանկի՛կ...») 103, 492
«Լուռ գիշեր է, օդը մաքուր...» 104, 415, 492
Մարդկանց. Օրագիր... ....106, 415, 492
Օրագիր... («Անմխիթար, անհույս սրտիս...») 107, 415, 492
[«Դաշտը չքե՛ղ ու ոսկեգեղ...»] 108, 415, 492
«Մեռած սիրո չիրմի քարը...» 109, 416, 493
«Ա՛խ, ընկեր իմ, ի՞նչ ես պտրում...» 110, 493
Օրագիր... («Ա՛խ, վաղուց է՝ իմ քնարը...») 111, 416, 493
Օրագիր... («Իմ արցունքների կաթիլը մաքուր...») 112, 416, 493
Օրագիր... («Բոցակեզ հոգիս կյանքի խավարում...») 113, 416, 493
«Լռի՛ր, երգի՛չ, քո մեղեդին...» 114, 493
«Երբ ես սլացած ոսկի եթերում...» 115, 416, 494
Օրագիր... («Շուրջս խավար ու սառցածով...») 116, 417, 494
«Արտասվի՛ր, հոգյա՛կ, ես էլ կարտասվիմ...» 117, 417, 494
«Աղոթի՛ր, հոգյա՛կ, քանի քո սրտում...» 118, 417, 494
«Ծփա՛, սի՛րտ իմ, հուզմունքների...» 119, 418, 494
(Ալբոմում) 120, 419, 494

1892

Օրագիր... («Դարձյալ «Նոր տարի»)... Խորին կնճիռներ...» 121, 419, 495
Օրագիր... («Նազելի ընկեր, խորագին ակոս...») 122, 419, 495
«Բախտի աստղը այս երեկո...» 123, 419, 495
[Օրագիր] «Գոնե մի թռիչք, և ահա՛ բախտի...» 124, 495
«Ի՞նչ է սիրտս – մի ապառաժ...» 125, 495
Օրագիր... («Զէ՛, ես չեմ ժպտում, իմ ժպտից մինչդեռ...») 126, 495
Օրագիր... («Դու գիտե՞ս արդյո՞ք, թե հոգիս որքա՜ն...» 127, 419, 495
Օրագիր... («Ուզում եմ երգել, բայց ո՛չ վառ երկինք...» 128, 419, 496
Նվեր... («Ես չեմ ուզում, կո՛ւյս նազելի...») 129, 496
Օրագիր... («Դարձյա՛լ գարուն, բայց վշտահար...») 130, 420, 496
Օրագիր... («Պիտի աղոթեմ, հավատամ անվերջ...») 131, 420, 496
Օրագիր... («Ոսկի արևը հիասքանչ գարնան...») 132, 420, 496
Օրագիր... («Անմխիթար սիրտս, ո՛վ կույս...») 133, 420, 496
«Բյուր հույսերով ես բերեցի...» 134, 421, 497
Օրագիր... («Որպես դժոխք աշխարհավեր...») 135, 421, 497
«Քնո աշխարհում ես երազ տեսա...» 136, 421, 497
Օրագիր... («Դու ի՞նչ գիտես, թե իմ սրտում...») 137, 421, 497
Օրագիր... («Զէ՛, չմոռնաս, Բեատրիչե...») 138, 422, 497
«Ես չեմ կասկածում: Մի՞թե կրծքիդ տակ...» 139, 497
«Ընկե՛ր, մի ասա՛ - մի՞թե կարող ես...» 140, 498
«Տաղտուկ ցնորքներ, ի՞նչ եք խռնվում...» 141, 422, 498
«Քանի կասկածը դեռ չէ վարակել...» 142, 422, 498
«Հոգուս լարերը էլ չեն մրմնջում...» 143, 498
Դավաճանության օրերում (Χ<ի> պատկերի դիմաց) 144, 498
Դավաճանության օրերում (Χ<ի> հասցեին) 145, 499
«Արդյոք լսե՞լ ես վաստակած հոգով...» 146, 422, 499
«Անուշ վայրե՛ր, մնաք բարև...» 147, 499
«Սիրի՛ր թշվառիս...» 148, 499
Նվեր սիրելի քույր - Շուշիկին իր եղբայր - Ավետիքից 149, 422, 499
Պատանու գերեզմանը (Ալեգորիա Շուշիկի «Կույսի գերեզմանի»-ն) 150, 500

1890-ական թվականների բանաստեղծություններ

«Մենակ ապրեցա, որքան տանջվեցի...» 152, 500
«Ես ուզեցա լալեն քաղեմ...» 153, 500
[«Ի՞նչ սիրուն ես, գարնան վարդ ես...»] 154, 422, 500

[«Թո՛ղ անծայր ծովը եռա, փրփրի...»] 155, 501
[«– Ա՛խ, մարալս, ա՜խ, ու՞ր գնաց...»] 156, 423, 501
Նվեր տիկին Շ. <ին> 157, 501
«Հովը փչում է լեռների լանջից...» 158, 501
Նամակ ընկերիս 159, 502
«Եղեգների մռայլ խորքից...» 160, 423, 502
«Ես կյանք գրկեցի...» 161, 502
«Լեզվակն անուշ երգ կհնչե...» 162, 502
«Շուշան ծաղիկ, քու բողբոջում...» 163, 502
«Սիրտս լի՜ճ էր - ջինջ ու լռիկ...» 164, 423, 503
«Սև՛ վշտերը մշուշի պես...» 165, 423, 503
«Ես ձեզ ատում եմ, ամենքիդ ատում...» 166, 503
«Ի՞նչ, - սեր մուրալու նորի՞ց թափառեմ...» 167, 423, 503
«Ա՛խ, ես ինչքա՜ն բախտավոր եմ...» 168, 423, 503
«Դարդի սարը սրտիս վրա...» 169, 424, 503
«Բախտի ուրուրը ետևես է ընկել...» 170, 424, 504
«Հեզ ու տխուր, սև աչերից...» 171, 425, 504
[«Եվ երբ սառը ձյունով ծածկվին...»] 172, 504
«Դուք ինձ ասում եք - «Տոկա՛լ սովորիր...» 173, 425, 504
Տղայի տաղը 174, 426, 505
«Գիշերն եկավ, աստղերն ելան...» 175, 427, 505
«Սիրտս ցողված քնքուշ թախծով...» 176, 427, 505
«Ընկե՛ր իմ, ընկե՛ր, մի՛ ասա այդպես...» 177, 506
[«Արևի տակ, ծովի ափին...»] 178, 427, 506
[«Դուման սարից ջու՛ր կուգա...»] 179, 506
Ա. <Մ.-ի> հիշատակին 180, 507
«Ամպերն ընկան ծովի վրեն...» 181, 507
«Քար գցեցիր, ծառիս դիպավ...» 182, 507
[Իմ վեհությունը] 183, 428, 507
Հին գրվածքներից 184, 428, 507
Տիեզերական Զանգ (Նրա զողանջները) 185, 429, 507
«Դուն հոգիս ես, հոգիս կուզես...» 186, 508
«Անմահական գինի ես, յա՛ր...» 187, 508
«Ազիզ յար ջան, քեզի մատաղ...» 188, 508
«Խոր քնիս մեջ երազ տեսա...» 189, 430, 508
[«Քու տնակդ բաղի միջին...»] 190, 430, 509
Իմ մանուկ ընկեր 192, 509
«Դու պսակ կերթաս յարիդ հետ քո նոր...» 193, 509
«Դու մի՛ հավատա, թանկագին ընկեր...» 194, 509

«Ա՛խ, դեպի քեզ վրեժ ունիմ...» 195, 430, 509
«...Ու աչերս հառած աստղին...» 196, 509
«Սրտումս խորունկ վշտեր կան...» 197, 431, 510
«Լայնալիք ծովում – հզոր, ծըփծըփուն...» 198, 431, 510

1900-ական թվականների բանաստեղծություններ

«Ո՞վ կտա ինձ ուժ՝ հզոր ու ահեղ...» 202, 431, 510
«Դու աղբյուրի պես կարկաչում էիր...» 204, 510
«Ես սիրեցի և այրվեցի...» 205, 431, 510
«Ես կերթամ, ճամփես սև է...» 206, 511
«Ողջ երկինքը սառն ու փայլուն...» 207, 511
«Ձեր օրենքները ձեր սրտերի պես...» 208, 432 511
«Վաղուց էր նիրհած, հիասթափ Ոգիս...» 209, 432, 511
«<...>» ըմբռնելի...» 210, 432, 511
«Ինչպես աղբյուրը մաքուր, կարկաչուն...» 212, 432, 512
«Քեզ երազելով՝ ես ճամփա ընկա...» 213, 432, 512
«Էյ վա՜խ, անցան օրերս, անցան...» 214, 433, 512
«Դարդը սրտիս՝ կյանքս եմ մաշում...» 215, 433, 512
«Էս աշխարհում մենակ եմ...» 216, 512
«Ճշմարտությունը մի հատ է միայն...» 217, 433, 512
«Սրտերը մարդկանց ապառաժ ու քար...» 218, 434, 513
«Աչքերս՝ պղտոր, աչքերս՝ խավար...» 219, 435, 513
Արազի ծնունդը 220, 514
«Մի մարալ աղջի՜կ...» 221, 514
«Ցուրտ է ու ձմեռ...» 222, 435, 514
«Երազիս տեսա, որ մոռացության ժայռոտ ափերում» 223, 435, 514
«Մանուկ օրերից բախտի ետևից...» 224, 514
«Մարդկանց ժպիտին դու մի՛ հավատա...» 225, 435, 514
«Վիշտս ծանր է, սրտիս վերքը՝ անդարման...» 226, 435, 515
«Սև արծիվն ահա գլխիս վերայով...» 227, 436, 515
Նապոլեոնի դամբարանի առաջ 229, 436, 515
«Դու սիրուն էիր, գեղեցիկ էիր...» 231, 515
«Վեհ ընկերներս կռվի դաշտ թռան...» 232, 516
«Սիրտս՝ դարդի ծով, սիրտս՝ վիրավոր...» 233, 438, 516
«Այրվում եմ ես արևի պես...» 234, 439, 516
«Ջինջ ծովակի մեջ կա մի լուռ կղզի...» 235, 516
«Լսում եմ որոշ՝ անուշ հնչյուններ...» 236, 516
«Խոր վշտերի մեջ լեզու չունեցա...» 237, 439, 517

«Ավա՜ղ, ցնդվեց, ինչպես երազանք...» 238, 439, 517
«Հոգիս թռչում է մոլոր ու խոտոր...» 239, 439, 517
«Դու ինձ սիրում ես. քու մաքուր հոգին...» 240, 440, 517
<Նիկոլ Աղբալյանին> 241, 440, 517
«Աղջի՛կ նազելի, աղջի՛կ գեղեցիկ...» 242, 440, 518
«Ո՞վ ազատություն, աշխարհի արև...» 243, 440, 518
«Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի...» 244, 442, 518
Վե՛ր կաց, ժողովո՛ւրդ... .....246, 444, 519
«Նա սուրբ է, բարձր, ամենքից վսեմ...» 248, 444, 519
«Նույն դաշտերը՝ դալար, անդորր...» 249, 444, 519
«Վարդերի մեջ մատաղ գարնան...» 250, 444, 519
«Սրտես կուց-կուց արուն կուգա...» 251, 445, 519
«Ուրուրն ելավ մեգի միջից...» 252, 520
«Մեր տանիքի մի անկյունում...» 253, 520
«Անգութ աղջիկ, թշնամու պես...» 254, 445, 520
«Ես սիրեցի, սիրեցի քեզ...» 255, 445, 520
«Քո սիրտը այրիր, որ նրա լույսով...» 256, 445, 520
«Մայր-երկիր, կարոտ եմ քեզի...» 257, 521
«Ա՜խ, թե չա՜տ ապրես, չա՜տ սև պիտ տեսնես...» 258, 446, 521
«Ա՜խ, մինչև վախճանը համաշխարհային...» 259, 521
«Բյուր և բյուր անգամ նրզովում եմ քեզ...» 260, 446, 521
«Մով երկնքից պայծառ գարնան...» 261, 446, 521
«Ձեր շարքերի մեջ, կտրիճ ընկերներ...» 262, 447, 522
«Գարունն եկավ կարմիր ու զառ...» 263, 447, 522
«Ա՜խ, ո՛չ մի արծիվ չի մնում...» 264, 447, 522
«Ինձի համար շատունց, վաղունց...» 265, 522
«Հպարտ նայում ես լուսեղեն հեռուն...» 266, 523
«Սիրտ իմ, ինչու՞ հին դարդիդ հետ...» 267, 448, 523
Սաքոյի գեղեցիկ հիշատակին 268, 448, 523
«Նազուկ լուանի մեղմ շիթերը ծորեցին...» 270, 523
«Ամեն բան պատճառ ունի...» 271, 524
«Տեսնում եմ մորս երկաթե ձողերի ետևից...» 272, 448, 524
«Բաշերն ալեծուփ, բաշերն հողմակոծ...» 273, 449, 524
«Ստվերներն ընկան իրարու վրա...» 274, 450, 524
«Ա՜խ, ո՞ր քարի տակ, ո՞վ գիտե, որտե՞ղ...» 275, 524
«Ամեն ինչ ունայն պատրանք է սակայն...» 276, 525
«Ու քար կսղմեմ տառապած սրտիս...» 277, 450, 525
«Շրջում էի լուռ գարնան դաշտերով...» 278, 450, 525
«Ա՜խ, ես չեմ խոսում մարդկանց հետ երբեք...» 279, 451, 525
«Անհունության մեջ մռայլ, անսահման...» 280, 451, 525

1910-ական թվականների բանաստեղծություններ

«Դուռդս ափ առած՝ կրծեծե քամին...» 282, 526
«Անուշ-անուշ քրքջալով...» 283, 526
«Հողից են մարդ ու կնիկ...» 284, 452, 526
«Ես քեզ սիրեցի աստղերի սիրով...» 285, 452, 526
«Իմ քնքուշ դարդս խոցված սրտիս մեջ...» 286, 453, 527
«Մի՛ հավատա մարդու խոսքին...» 287, 454, 527
«Խաղաղ, լուռ գիշեր է...» 288, 527
«Կանցնի ու կերթա...» 289, 527
«Գիտեմ լցված է սիրտդ արցունքով...» 290, 454, 527
«Գիշեր է մթին...» 291, 454, 528
[«Մի օր կգա, ամեն մի շունչ, մարդ-արարած կմեռնին...»]....292, 454-455, 528
«Էս աստղոտ գիշերիս ինչա պարտեզ...» 293, 455, 528
«Մաղում է անձրև...» 294, 455, 528
«Գիշերը եկավ...» 295, 456, 529
«Դու հեռավոր, մեկուսի աստղ...» 296, 529
«Իմ տխուր սրտում գիշեր ու ցերեկ...» 297, 456, 529
«Երբ մանուկ էի, նստած պատի տակ...» 298, 529
«Օտար աշխարհում ստրուկ ու գերի...» 299, 529
«Իմ սիրուն մանկիկ, ննջում ես մուշ-մուշ...» 300, 530
«Հրճվում է սիրտս, երբ նայում եմ քեզ...» 301, 530
«Այս հովը մեղմիկ...» 302, 456, 530
«Սիրտս վիրավոր...» 303, 530
«Հին օրերից...» 304, 530
«-Է՛յ, աշնան տերևներ, մեռած...» 305, 530
«Դուրսը գիշեր է աշնան...» 306, 457, 531

1920-ական թվականների բանաստեղծություններ

Վահան Տերյանի անուշ հիշատակին 308, 457, 531
«Բախտն ինձ անջատեց հայրենի երկրից...» 310, 458, 531
«Էս աշխարքը էրկու օր է...» 311, 458, 532
«Կես գիշեր է... կարկուտի պես...» 312, 458, 532
«Մեր թշնամին, հին բորենին...» 313, 532
«Սերերս քնքուշ...» 313, 458, 532

46 տարելիցիս 316, 459, 533
«Ասա՛ մեզ, Եվրոպ, ու՞ր ես շտապում...» 317, 459, 533
«Նստել եմ մենակ ծովի բերանը...» 318, 460, 533
«Իմ հազար սիրած հայրենի դաշտում...» 319, 460, 534
Տխրություն 320, 534
«Ես լուռ գիշերին անհույս լացեցի...» 321, 460, 534
«Ո՞վ է իջնում նուրբ քողերով...» 322, 534
«Հրեշ բռնակալ, թաթերդ զգի՛ր...» 323, 460, 535
«Տարիներ հետո դարձա հայրենիք...» 324, 461, 535
Մորս գերեզմանը աշնանը 325, 461, 535
«Պայքար, մաքառում դաժան, անհաշտ...» 326, 461, 536
«Իմ կյանքը լուռ անցավ...» 327, 461, 536
«Դուրսը գիշեր...» 328, 536
«Այս կյանքը անցավ...» 329, 536
«Ա՜խ, մեր կյանքը ունայն խաղ է ու երազ...» 330, 461, 536
«Երեկոյան երկար ստվերներ...» 331, 537
«Մահս մոտ է, մոտիկ է այնքան...» 332, 462, 537
«Մահս առաջս է կանգնած...» 333, 462, 537
«Դու իմ սիրուն աղավնի...» 334, 537
«Վերջին չայ, վերջին չայ...» 335, 462, 537
«Զմրուխտեղեն թասերի մեջ...» 336, 538
«Մի թռչուն ելավ ծովից...» 337, 538
«Հազար սիրտ ունեմ, միայն մի լեզու...» 338, 538
«Խորտակված են իմ բերկրության...» 339, 463, 538
«Ա՜խ, այնպես մեղմագին, անդորրիկ...» 340, 538
«Մի ոսկե թռչուն անցավ երգելով...» 341, 463, 539

1930-ական թվականների բանաստեղծություններ

«Եվ այնուհետև մեր կյանքի ծառից...» 344, 539
«Կուզեի հիմա լինեի հեռու...» 345, 463, 539
«Թույն եմ շնչում ես ամեն օր...» 346, 539
«Զգիտեմ, ինչպե՞ս տարիներն անցան...» 347, 464, 539
«Հեռանամ, փախչեմ անկայան...» 348, 540
«Բնությունն երբեք չի նայում ետ...» 349, 540
Լերմոնտովի տնակում 350 540
«Լույս հանճարի օրերը կարճ...» 351, 540
Սևան 352, 541

«Արդյո՞ք եղել եմ ես ջահել...» 353, 541

1940-ական թվականների բանաստեղծություններ

«Սրտումս սիրո...» 356, 465, 541
«Ճիշտ է խոսքը մեր հինավուրց բանաստեղծի...» 357, 541
«Հոգնած քայլերով մտել եմ անտառ...» 358, 465, 541
«Եվ ո՞վ կուտա ինձ արցունք գետերով...» 359, 465, 542
«Հրամանները միշտ իջնում են վերևից...» 360, 542
Գովք Հայաստանին 361, 542
Վարդավառի տոնը 362, 542
Նախերգ 363, 543
Բանաստեղծը շուկայում 364, 543
«Ով սուրբ Վարդան Մամիկոնյան...» 365, 465, 543
Ժողովրդի երդումը 366, 465, 543
«Իրերը բոլոր մեկը մյուսի դեմ...» 367, 466, 543
Հիմն 368, 466, 543
Մեր սպանված դիցուհին 369, 466, 544
«Միտքս թեև շատ թափառեց այս աշխարհում...» 370, 470, 545
«Հավերժություն, անհունություն անսահման...» 371, 470, 545

1950-ական թվականների բանաստեղծություններ

Լերմոնտովի արձանի առաջ 374, 545
«Երբ դեռ չէի ես տեսել քեզ...» 375, 470, 545
«Գնա՛ց, գնա՛ց...» 376, 546
«Օրերս շքեղ կորան հավիտյան...» 377, 472, 546
«Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն կուզեի լինել...» 378, 546
Շոպենի թաղման քայլերգը 379, 546
«Դուրսը բուք է խիստ, գիշեր, ցուրտ ձմեռ...» 380, 546
«Կուզեի լիներ կյանքը հավիտյան...» 381, 473, 547
«Մենք տիեզերքում, տիեզերքի չափ...» 382, 473, 547
«Մենք ապրում ենք մահվան դժխեմ...» 383, 473, 547
«Մարդու տենչանքն է՝ հավիտյան ապրել...» 384, 547
«Ինձ սիրեիր որպես թե...» 385, 547

Սևագիր բանաստեղծություններ

«Էս սարերից հիմա արտուտը կուգա...» 388, 548
Կուզեի ապրել 390, 548
«Դու քնքուշ տերև հողմերի առաջ...» 391, 548
«Ա՜յ իմ չոր գլուխ՝ դարդոտ ու մենակ...» 391, 548
«Հոգիս գերված կամավոր...» 392, 474, 548
«Մի քիչ ժամանակ ինձ էլ լսեցեք...» 392, 474, 549

Տարբերակներ և բնագրային տարբերություններ

Ծանոթագրություններ 475
Ավիկ Իսահակյան – Ավետիք Իսահակյանի անտիպ բանաստեղծությունները 549
Համառոտագրությունների ցանկ 605
Այբբենական ցանկ 606
Բովանդակություն 616

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆՏԻՊ ԵՎ ՀԵՏՄԱՀՈՒ ՏՊԱԳՐՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր N 318
Ստորագրված է տպագրության՝ 10.05.2011թ.
Չափը՝ 60 x 84 1/16, թուղթ N 1, օֆսեթ տպագրություն,
39.25 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ: